

Աշխատասիրությամբ՝
Հ. Վահան Ծ. Վրդ. Օհանեանի
Մխիթարեան Միաբան

Հայաստանի Դիանագիտական ներկայացուցիչ

ՖԵՐՈՒՆԱՆՈՒ ԹԱՐԹԱՃԵԱՆԻ

Փաստաթղթերը Վատիկանի արխիվում


ՓԱՍՏԱԹՐԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
(1919-1923)

Աշխատասիրութեամբ՝
Յ. Վահան Ծ. Վրդ. Օհանեանի
Մխիթարեան Միաբան

Ձեռագրում եւ էջագրում
NOSHN • «ՆՕՇՆ» ՍՊԸ

Տպագրութիւն
VELAS PRINT • «ՎԷԼԱՍ ՊՐԻՆՏ»

2023 © All rights reserved by the author.

No part of this book may be reproduced or transmitted in any form or by any means, electronic or mechanical, including photocopying, recording, or by any information storage and retrieval system, without the author's written permission. Book design, cover, and illustrations are copyrighted by "NOSHN" LLC.

Հայաստանի Դիմապատկերական Ներկայացուցիչ

ՖԵՐԴԻՆԱՆԴ ԹԱՅԹԱՃԵԱՆԻ

Փաստաթղթերը Վատիկանի արխիվում

— • ∞ • —

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

(1919–1923)

Աշխատասիրությամբ՝

Հ. Վահան Ծ. Վրդ. Օհանեանի

Մխիթարեան Միաբան

Երեւան 2023

Երկու Խօսք

Ընթերցողին է ներկայացնում Հայր Վահան Ծ. Վրդ. Օհանեանի «Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ Ֆերդինանդ Թահթաճեանի փաստաթղթերը Վատիկանի արխիւում» աշխատութիւնը: Այն իրենից ներկայացնում է Կ. Պոլսում Առաքելական պատուիրակին (Վատիկանի դիւանագիտական ներկայացուցիչ) ի պահ յանձնուած փոթորկալի այդ շրջանում նորաստեղծ հայկական դիւանագիտական միսիայի (ներկայացուցչութեան) փաստաթղթերի մի մասը:

Առհասարակ կարելորդում եմ Հայոց ցեղասպանութեան, առաջին հանրապետութեան տարիներին նախորդած եւ յաջորդած ժամանակաշրջանում Հայկական հարցի առնչութեամբ կրօնական, քաղաքական, դիւանագիտական եւ հումանիտար ոլորտներում Վատիկանի ներգրաւուածութեան մասին նիւթերի ուսումնասիրութիւնը: Մեր դեսպանութիւնը պատրաստակամ է աջակցելու նմանօրինակ նախաձեռնումներին եւ համագործակցելու հայ, օտարազգի գիտնականների ու հետազօտողների հետ՝ շարունակելու համար Վատիկանի պետական քարտուղարութեան (AAEES), Արեւելեան եկեղեցիների Սուրբ Ժողովի (CO), Հաւատաստիւնի (PF) եւ Գաղտնի արխիւներում (ASV) Հայաստանին եւ հայութեանն առնչուող մեծածաւալ ու արժեքաւոր նոր ուսումնասիրութիւնները հասարակութեան դատին յանձնելու նպատակով:

Այս համատեքստում կցանկանայի առանձնապէս շնորհակալութիւն յայտնել դոկտ. Վալենտինա Կարախանեանին՝ հրատարակութեան հեղինակին արխիւային նիւթերի բարձրորակ պատճենները տրամադրելու համար, մեծապէս օժանդակելով դժուարընթեռնելի տեքստերի վերծանման գործընթացին:

Այս հրատարակութիւնը ոչ միայն ինքնին արժեքաւոր աշխատանք է, այլ նաեւ ճանապարհ է հարթում նոր ուսումնասիրութիւնների համար: Այստեղ ներկայացուած աղբիւրագիտական նիւթը գալիս է դառնալու հետագայ ուսումնասիրութիւնների այն հարուստ հէնքը, որը, վստահ եմ, բազմաթիւ այլ հրատարակութիւնների առիթ է դառնալու:

Նկատառելի է, որ սոյն հրատարակութիւնը ներառում է նաեւ բնօրինակ տեքստերի զուգահեռ հայերէն թարգմանութիւնը: Գնահատելի է մասնաւորապէս ֆրանսերէն տեքստերի թարգմանութիւնը՝ ձեռամբ Դոկտ. Շուշանիկ Թամրազեանի, ում շնորհիւ հնարաւորութիւն է ընծեռում ընթերցողին հայերէնով ծանօթանալու հետազօտուած նիւթին:

Խորապէս շնորհակալ եմ հեղինակին՝ Մխիթարեան միաբան Հ. Վահան Ծ. Վրդ. Օհանեանին, մեծածաւալ աշխատանքի համար, ով իր նուիրումով եւ վաստակաշատ գործունեութեամբ շարունակում է նպաստել ազգային նպատակների եւ արժեքների արմատաւորմանը:

Կարէն Նազարեան

Սուրբ Աթոռում ՀՀ դեսպան

Վատիկան, յունիս 2023թ.

ԱՌԱՋԱՐԱՆ

1918թ. մայիսի 28-ին փիլնիկի նման յառնած հայկական պետականությունը, որը Հայոց պատմության հազարամեակների տարեգրության մեջ մտաւ որպէս Առաջին Հանրապետութիւն, խոր հետք թողեց սերունդների, հայ մարդու գիտակցութեան մէջ որպէս հայ ազգի վերապրումի յաւիտենական խորհուրդ եւ պատգամ, թէ ինչպէս պետք է պայքարել յանուն հայկական պետականութեան յաւիտենականութեան: Այն մաքառումների եւ երկար սպասումների պատմա-քաղաքական ընթացքի արգասիքն էր, հայկական պետականութեան յետագայ ընթացքի հիմքը եւ գրաւականը, գալիք հերոսական օրերի դրօշը, հաստատագրելով, որ Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ շարունակութիւնը մաքառումների բովով անցած Նուիրական պատմական Հայաստանի եւ որ տարբերում է հենց միայն Նրանով, որ այդ շրջադարձային պատմափոխում հաստատուեցին հանրապետական կարգեր:

Առաջին հայեացքից թւում է, թէ երկուս ու կէս տարի գոյատեւած առաջին հայկական հանրապետութեան պատմութեան ամբողջացման առումով բաւականաչափ սպառնիչ գրականութիւն է ստեղծուել, բոլոր հնարաւոր կարեւոր աղբիւրները օգտագործուել են հետազօտական աշխատանքի բազմափուլ ընթացքում: Սակայն դա թիւր կարծիք է, քանզի դեռ կան սպիտակ էջեր, մասնաւորապէս այս կամ այն գործընթացի շուրջ ընթացած ֆիւսանսական գործառնությունների պայմաններում այդքան անհրաժեշտ միջոցների յաղթահարման, հայկական զինուժի ձեւաւորման, պետականաշինական եւ անվտանգութեան համակարգի կայացման ու այլ մի շարք կարեւոր հարցերի մասին:

Ներկայացուող վաւերագրերը ինքնատիպ են, եւ գիտական շրջանառման մէջ դրուելու պարագայում եւս մէկ թանկարժեք հնարաւորութիւն կընձեռեն ամբողջացնելու Առաջին հանրապետութեան տարեգրութեան դեռեւս ոչ բաւարար լուսաբանուած էջերը եւ ստուերոտ կողմերը: Իրենցից բացառիկ կարեւորութիւն ներկայացնող եւ դեռեւս բոլորովին չհրապարակուած այս նիւթերը թոյլ կտան խորամուխ լինել 1918թ. մայիսին հռչակուած հանրապետութեան պատմութեան անյայտ ծալքերին:

Այն եզակի հնարաւորութիւն է տալիս Նաեւ հետեւել ՀՀ ձեւաւորուող դիւանագիտական կառոյցի կողմից գործադրուող անփորձ ջանքերին, որը եւս դեռեւս բաւականաչափ հետազօտուած չի, եւ դեռ շատ հարցականներ կան:

Առաջին հանրապետութեան պատմութեան հետազօտման ամբողջացման առումով առանձին դաշտ կարող է ստեղծուել այդ տարիներին արտերկրի

տարբեր անկիւններում սեփական հայրենիքի կայացմանը միտուած նուիրատուութիւնների ընթացքի արձանագրման եւ ընդհանուր պատկերի արժեւորման առումով: Դա ունի արդիական մեծ հնչեղութիւն եւ հնարաւոր է դարձնում պարզելու մայիսի 28-ի յիշատի անանց արժեքը համայն հայութեան համար, որը կանգնել էր 900-ամեայ ընդարմացումից յետոյ յառնած հայկական նորօրեայ պետականութեան ծնունդի բոլորովին չսպասուող փաստի առաջ, փորձելով ամուր կանգնել Հայոց ազատամարտի գաղափարաքաղաքական ոգեկոչողների՝ Իսրայէլ Օրու, Յովսէփ Էմինի, Շահամիր Շահամիրեանի եւ առհասարակ հայ պետականութեան երդուեալ նուիրեալների մեծ երազանքի ճամփին: Այս առումով ամէն մի նոր փաստ, վաւերագիր քայլ առ քայլ վեր է խոյացնում այն շէնքի աստիճանները, որը կոչւում է Առաջին հանրապետութեան անցած ուղիւ տարեգրութիւն: Բնականաբար, առկայ փաստաթղթերի շարքը եւս մի հնարաւորութիւն է տալիս պատկերացնելու այն համազգային ոգեւորութիւնը, որ իշխում էր 1918-1920 թթ.՝ կապուած հայութեան դարաւոր երազանքի իրողութիւն դառնալու պատմափաստի առաջ, որ նորից կարող էր դառնալ հանգրուան եւ պատուանդան Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի տեսլականի իրականացման բաղձալի նպատակի համար:

Փաստաթղթերը մէկ անգամ եւս գալիս են լրացնելու այն բացը, որ ցայսօր կայ Առաջին հանրապետութեան բանակի տարեգրութեան ամբողջացման եւ հարստացման տեսանկիւնից, բացայայտելու արտերկրում եռանդագին գործի լծուած հայ բանակի նուիրահաւաք մարմինների, հայ սպաների միութիւնների եւ այլ կառոյցների գործունեութիւնը, որը դեռ սպասում է իր հետազօտողներին եւ արժեւորողներին: Շրջանառութեան մէջ դրուող փաստաթղթերում բազմաթիւ դիտարկումներ կան դեռեւս կայացման դժուարին գործընթացներ ապրող առաջին հանրապետութեան դիւանագիտական յանձնակատարների գործունեութեան մասին, որը նպատակաւորուած էր ինչպէս հայկական պետութեան միջազգային ճանաչման ձեռք բերմանը, այնպէս էլ ՀՀ առջեւ կանգնած պարենային-տնտեսական, գաղթականական ճգնաժամի եւ սովի յաղթահարմանը, զէնք-զինամթերքի, դեղորայքի եւ այլ կենսական միջոցների հայթայթմանը:

Հեղինակի կողմից ներկայացուած վաւերագրերը լոյս են սփռում այդ ուղղութեամբ տարբեր ընկերութիւնների գործունեութեան վրայ, որոնց հետ կնքուած պայմանագրերը բխում էին ՀՀ առջեւ ծառացած տնտեսական խնդիրներից, որոնց լուծումը կենսական կարեւորութիւն ուներ հայկական նորաթուխ հանրապետութեան կայացման անշրջելիութեան ապահովման մեկնակէտից: Դրանք թոյլ են տալիս եւս մէկ անգամ նորովի ընդհանրացնելու Եգիպտոսից, Կ. Պոլսից, Իզմիրից եւ այլ հայաշատ վայրերից հայութեան գործադրած ջանքերի ընդհանուր ամբողջական նկարագիրը, տեղեկանալու համատարած շրջափակման պայմաններում եւ հարեւանների հետ անգիշում

տարածքային սահմանազատման շուրջ ծաւալուած հակամարտութեան մէջ գտնուող ՀՀ համար անհրաժեշտ ապրանքային տեսականին Հայաստան ներկրելու դժուարին գործընթացներին, որոնց մէջ կային առաջնահերթային ապրանքներ՝ ինչպէս զգեստեղէն, գրամեքենաներ, մանուֆակտուրա, այնպէս էլ հայկական զինուժի համար չափազանց կարեւոր գէնք-զինամթերք, հայ քաջարի եւ անձագոհ զինուորներին անհրաժեշտ իրեղէններ՝ հագուստ, կօշիկ, գուլպայ, թաշկինակ, ներքնագգեստ, ճերմակեղէն եւ այլն, որոնց ցուցակները պարտաճանաչօրէն կազմուում էին եւ ուղարկուում հասցեատիրոջը:

Կարեւոր տեղեկութիւններ են պարունակուում ի նպաստ Հայաստանի Հանրապետութեան կատարուող դրամահաւաքների, որոնք արտերկրում գործող ՀՀ դեսպանների ու հիւպատոսների միջոցով ուղարկուում էին Հայաստան թուրքական օսմանեան թղթադրամների՝ ոսկէ լիրաների, ռուբլու, դահեկանի, կովկասեան թղթադրամների, ոսկեդրամների եւ այլ արտաարժոյթների ձեւով՝ ինամքով կազմուած արձանագրութիւններով հանդերձ:

Մի շարք կարեւոր փաստաթղթերում էլ ներկայացուած են դիտարժան փաստեր Կ. Պոլսում գտնուող հայ քաղաքական կուսակցութիւնների եւ զանազան միութիւնների նախաձեռնութեամբ կազմուած Հայ բանակի Նուիրահաւաք Կենտրոնական մի մարմնի վերաբերեալ, որն իր գործունեութեան երկու ամսուայ ընթացքում հաւաքած գումարը եւ իրերը հասցեագրել էր ՀՀ Չինուորական նախարարութիւնը, ինչը եւս ռազմական եւ Առաջին հանրապետութեան պատմութեան հարստացման առումով զգալի արժեք է ներկայացնում:

Փաստաթղթերի մի զգալի մասը օտարալեզու են, բնագրային լեզուով, ինչը եւս մեծացնում է փաստաթղթերի այս ժողովածուի գիտաճանաչողական անանց արժեքը եւ նշանակութիւնը:

Միանգամայն դիտարժան են ներկայացուող փաստերը Երեւանում բարձրագոյն բաց առեւտրական կրթութեան եւ հաշուապահական դասընթացների բացման, ինչպէս նաեւ առեւտրային ուսումնարանների ծրագրերի մշակման եւ հայերէն լեզուով անհրաժեշտ գրականութեան ձեռքբերման կարեւորութեան առնչութեամբ: Դա մեզ, բնականաբար, թոյլ կտայ առաւելամբողջացնելու Առաջին հանրապետութիւնում կրթական գործի կազմակերպման տարեգրութիւնը:

Ակնյայտ է դառնում հայերէնի կարեւորումը առեւտրային եւ մուրհակային օրէնքի հետազօտման ոլորտում, ինչը եւս մէկ անգամ փաստում է այն ոգեւորութեան մասին, որ կար 1918թ. մայիսեան սարդարապատեան հերոսամարտերում ծնուած հայկական պետականութեան վերածննդի հետ կապուած: Այս առումով արժեւորում են Թիֆլիսում կենտրոնացած հայ մտաւորական, առեւտրական խաւի ջանքերը:

Յիրաւի հայ դիւանագիտական կառոյցի ձեւաւորման եւ նրա տարբեր օղակների գործունեութեան պատմութեան ամբողջացման տեսանկիւնից կարելոր են փաստաթղթերում պարունակուող տեղեկութիւնները Փարիզում Ա. Ահարոնեանի, Կ. Պոլսում ՀՀ դիւանագիտական ներկայացուցիչ Ֆ. Թախթաշեանի, Բաթումում ՀՀ հիւպատոս Յ. Չմշկեանի եւ այլոց մասին, որոնք որոշ վիճայարոյց գնահատումների հետ մէկտեղ, մեծ կարեւորութեան տեղեկութիւն են պարունակում: Առհասարակ, մի շարք փաստաթղթերում պարունակուող արժեքաւոր տեղեկութիւնները մասամբ լրացնում են այն բացը, որ կայ 1918-1920 թթ. հայ դիւանագիտութեան ձեւաւորման, այն ուղղորդող պետական կառոյցների գործելակերպի, դիւանագիտական ու զինուորական այրերի եւ նրանց ծաւալած օգտաշատ գործունեութեան տարբեր կողմերի մասին:

Արժեքաւոր տեղեկութիւններ կան զօրավար Ա. Դենիկինի, բրիտանական բարձրագոյն հրամանատար Ջ. Միլնի, Կ. Պոլսի հայ գաղութի եւ ՀՀ ներկայացուցիչ Ֆ. Թախթաշեանի ու ուրիշների հետ տարուող բանակցութիւնների որոշ կարելոր մանրամասներին: Դրանցում անդրադարձ կայ հայկական զօրքի համար հագուստեղէնի, դեղորայքի, վիրաբուժական գործիքների փաթեթների, բանակի կարիքների համար նախատեսուած շարժական խոհանոցների եւ այլ ունեցուածքի ձեռք բերման եւ դրանք ամերիկեան «Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց միութեան» (Near East Relief) եւ այլ կազմակերպութիւնների ջանքերով Հայաստան տեղափոխման, այդ խնդրում ծախողումների, հիասթափութիւնների մասին: Տպաւորիչ է փաստաթղթերից մէկում պարունակուող տեղեկութիւնը Ալեքսանդրիայի հայ գաղութի բժիշկների, դեղագործների եւ ատամնաբոյժների ձեռնարկի վերաբերեալ: Նրանք հանգանակութիւն էին կատարել ի նպաստ Հայ բանակին «Հայ ռազմիկներու դեղորեից առաքման միութիւն» անունով, ինչի մասին յատուկ նամակով դիմել էին ՀՀ վարչապետին:

Փաստաթղթերից մէկում դիտարժան մտահոգութիւն կայ ռազմական ունեցուածքի կամ ռազմամթերքի Դրիմից Կ. Պոլսով Անդրկովկաս փոխադրման շուրջ, որը պայմանաւորուած էր Հարաւային Ռուսաստանի Չինեալ ուժերի եւ ֆրանսիական իշխանութիւնների միջեւ ծագած տարակարծութիւններով, որոնց իրաւասութեան տակ էր ռուսական բանակի հետ եկած բոլոր ապրանքների փոխադրման հարցը: Ակնյայտ էր, նմանատիպ վաւերագրերը հնարաւոր են դարձնում աւելի իրատեսական գնահատումներ տալ ՀՀ Անտանտեան դաշնակիցների «հայանպաստ» գործունեութեան տարբեր դրսեւորումներին:

Նորոյթ կարող է լինել օրինակի համար, ժողովածուում բերուող մի փաստ, կապուած Հաբէշտանի հայ գաղութի կողմից ՀՀ բանակին օգնաւ նուիրելու հետ, ինչը այդ օրերին իր առաջին ոչ վստահ, սակայն նպատակային քայլերը կատարող Առաջին հանրապետութեան օղագնաց ջոկատի պատմութեան ամբողջացման տեսանկիւնից եւս եական է:

Արժանայիշատակ փաստեր կան տարագիր հայերի վիճակի, որբերի, տեղահանուած հայ փախստականների, նրանց ցուցաբերուող աջակցութեան վերաբերեալ, եւ այդ առումով Կ. Պոլսի բրիտանական դիւանագիտական ներկայացուցչութեան եւ ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութեան նամակագրութեան մասին:

Գնահատելի է, որ փաստաթղթերի սոյն արժեքաւոր ժողովածուն հնարաւորութիւն է տալիս նորովի արժեւորել Առաջին հանրապետութեան ժամանակաշրջանի տարաբնոյթ իրադարձութիւնները եւ պետականաշինութեանը ուղղուած բարդ ու հակասական, յաջողութիւններով եւ ցաւալի սայթաքումներով յագեցած գործընթացները:

Ժողովածուում տեղ գտած փաստաթղթերը խորհրդային իշխանութեան առաջին ամիսների իրողութիւնների մասին եւս միանգամայն դիտարժան են, քանզի լոյս են սփռում հետազօտման ենթակայ մի շարք սկզբունքային պատմապահների վրայ, այդ թւում 1921թ. սկզբներին տեղի ունեցած փետրուարեան դէպքերի, հայ ժողովրդին պատուհասած սովի սպառնալիքի, դրա հետ կապուած Հ.Օ.Մ.-ի եւ Ամերիկեան Նպաստամատոյց Կ. Պոլսի ներկայացուցչութեան բռնած դիրքորոշման եւ ձեռնարկուելիք քայլերի եւ հանգանակուող դրամի ուղղորդման նպատակայարմար լուծումների, փետրուարեան լարուած իրադարձութիւններից ու բոլշեւիկների հետ քաղաքացիական բախումներից յետոյ մեծամասնականների հալածանքներից փախած հայկական կառավարութեան անդամների, վտարանդի անձանց անցագրի յատկացման եւ Կ. Պոլսով այլ երկրներ տարհանուելու, Կ. Պոլսում հանգրուանած հայ վտարանդիներին, սովեալներին ու հայ սպաներին ֆինանսական աջակցութեան եւ այլ օգնութեան ցուցաբերման, հայրենիքից օտարուած հայ սպայակազմին նպաստ յատկացնելու, Թաւրիզում ապաստանած հարիւրաւոր հայ մտաւորականների յետագայ ճակատագրին եւ փախստականներին օգնութեան տրամադրմանը վերաբերող հարցերի վերաբերեալ:

Միանգամայն արժեքաւոր են փաստաթղթերի ժողովածուում պարունակուող նիւթերը խորհրդայնացած Հայաստանի վերակառուցմանը արտերկրի հաշուութեան, տարբեր ընկերութիւնների ու միութիւնների կողմից ցուցաբերուող ոչ միանշանակ աջակցութեան մասին, որը դրսեւորուեց ԱՄՆ-ի, Գերմանիայի եւ այլ երկրների հայ գաղութների կողմից տրամադրուող դրամի, դեղորայքի, փախստականների համար նախատեսուած հագուստի ու արժեքաւոր ապրանքների, գործիքների, սարքաւորումների, սանիտարական ապրանքների, Հայաստանի տնտեսութեան վերականգնման համար մեքենաների եւ այլնի առաքման մէջ:

1922թ. կետերին վերաբերող փաստաթղթերից մեկում դիտարժան փաստ կայ Կ. Պոլսի Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի կողմից իրենց պահեստներում առկայ արժէքաւոր սարքաւորումների եւ գործիքների մասին՝ Նախատեսուած Հայաստան առաքման համար տեղի ատաղձագործների, դարբինների, մեքենայագործների կարիքների համար: Ակնյայտ է, որ այդ ամէնի հիմնական թեման սեփական հայրենիքի ճակատագրի հարցերն են, արտաքին-քաղաքական առաջնահերթութիւնները, օրակարգային կողմնորոշումները, անկախ Նրանից, թէ դա Առաջին հանրապետութիւնն է, թէ խորհրդայնացած Հայաստանը:

Սոյն արժէքաւոր փաստաթղթերի ժողովածուի վերջին վաւերագիրը թուագրուած 1923թ. օգոստոսի 23-ով, Բեռլինի ՀՀ Ներկայացուցիչ Ջ. Գրինֆիլդի կողմից հասցեագրուած է Կ. Պոլսի Նախկին ՀՀ Ներկայացուցիչ Ֆ. Թախթաջեանին, որով ամփոփոււմ է Ներկայացուող աշխատանքը, հանդիսանալով լուրջ ներդրում 1919թ. մայիսից 1923թ. ընկած իրողութիւնների հետազօտական դաշտի ընդլայնման տեսանկիւնից, բացառիկ նուէր հայ եւ օտար պատմաբանների, միջազգայնագետների եւ յարակից ոլորտների մասնագետների համար, ամէնօրեայ սեղանի գիրք հետազօտողների համար:

ԵՊՀ պատմութեան ֆակուլտետի դեկան,
Հայոց պատմութեան ամբիոնի վարիչի պաշտօնակատար,
Պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր՝

Էդիկ Գարեգինի Մինասեան

Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ
Հայոց պատմութեան ամբիոնի պրոֆեսոր,
Պատմական գիտութիւնների դոկտոր

Վանիկ Հրանտի Վիրաբեան

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
Délégation à la Conférence de la Paix
LE PRÉSIDENT

HOTEL VOUILLEMONT
15, Rue Boissy D'ANGLAS

Paris, le
Փարիզ, Մայիս 24 1919

Յարգելի Ֆերդինանտ Պետրովիչ

Գեներալը հասաւ. Ձեր նամակները ստացայ, ինչպէս եւ եօթ հազար մի հարիւր ֆրանքը: Բժ. Դաւթեանից գրութիւն ունիմ, որով հաղորդում է թէ զբաղւած է Ձեր հետ միաբան խրիմի հայերի օգնութեան խնդրով: Ուրախ եմ, որ այդ գաղթականներն անխնամ չեն եւ լաւ է, որ Հանրապետութեան Ներկայացուցիչը նկատուի որպէս իրական հովանաւոր տեղական հայութեան:

Վիեննայի մեր Միութարեանների անախորժ արկածի առթիւ վաղը եւ եթ կը դիմեմ արտաքին գործոց նախարարութեան եւ արդիւնքը իսկոյն կը հաղորդեմ Ձեզ ու ինձ դիմող Հայր սուրբին:

Չայեանի հեռագիրն ինձ կէս մութ անախորժ անակնկալ եղաւ: Ես նրան հրաւիրել էի որպէս «խորհրդական Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան»: Նա ինձ հեռագրով պայման է դնում «իմ կողմնակցների համաձայնութիւնը» առ. այսպիսի հեռագրին պատասխան չը գտայ եւ թողեցի անպատասխան:

Խնդրում եմ հաղորդեցեք իրեն, -քանի որ պատասխան է սպասում - որ իր պայմանական հեռագիրն ինձ համար անսպասելի էր եւ անհաճոյ, եւ որ այժմ, այդ խնդիրը կարելի է փակւած նկատել, քանի որ մեր հարցի լուծումը օրերի խնդիր է:

Ձերմ ողջոյններս Ձեզ եւ խորին յարգանքներս
Աւետիս Ահարոնեան

P.S. Կովկասում եւ Հայաստանում սկսւած են պարլամենտական ընտրութիւնների պատրաստութիւններ Յունիս 21-ի համար: Յայտնեցեք խնդրում եմ Կ. Պոլսի հայութեան Վարիչ շրջաններին, որ Թիւրքիոյ հայութիւնը ամէն տեղից պետք է ջերմ մասնակցութիւն ունենայ, համազգային պարտականութիւնը եւ Միացեալ Հայաստանի Միացեալ կառավարութիւն ունենալու համար: Իմ վճռական համոզմունքը որ մենք մեծապէս կը տուժենք, թէ մանտադեր պետութեան գալուն մենք անկազմակերպ ներկայանանք: Պետք է շտապել կազմել Միացեալ Հայաստանի Միակ Կառավարութիւն ու պարլամենտ:



Ալեքսիս Ահարոնյան (1886-1948), Փարիզի խաղաղության վեհաժողովում Հայաստանի
Հանրապետության Պատուիրակության Նախագահ (1919-1920)

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
DÉLÉGATION DE PAIX

Կ. Պօլիս, 11 յունիսի 1919

N° 175

Հայաստանի Հանրապետութեան
Արտաքին գործոց նախարարութեան,

Հաստատելով իմ 26 Մարտ թուագրեալ զեկուցումը, որով յայտնում էի թէ ստացել էի «Ժողովրդի Ձայն»ի խմբագրութիւնից 443 լիրա եւ 21 դահեկան, գոյացած այդ թերթի ի նպաստ սովեալների բացած հանգանակութիւնից եւ մի երեկոյթի հասոյթից, ներկայիւս խոնարհաբար խնդրում եմ, որ բարեհաճիք ուղղել իմ միջոցով «Ժողովրդի Ձայնին» ակնկալուած գրութիւնը:

Այժմ որ իմ 22 Մայիս թիւ զեկուցումից յայտնի է Ձեզ թէ՛ ինչ տարօրինակ արկածի է հանդիպել իմ ռոճիկի հարցը, կարծեք շատ հասկանալի է թէ ինչո՞ւ համար ես այդ վերոյիշեալ գումարը ստիպուած եմ եղել գործածելու իմ պետքերի:

RÉPUBLIQUE ARMÉNIENNE

Ն. Կոչի, 12 յունիս 1919

~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~

177

Հայաստանի Հանրապետության
Արտաքին գործերի նախարարին,

Ահապես Հայաստանի Հանրապետության
Հանձնարար, յուրաքանչյուր իր փառաշինության և խաղաղության
խնդիրները քննարկելու և անհրաժեշտ
խնդիրները պարզաբանելու և խնդիրները
և անհրաժեշտ զինանոցը ընտրելու և փոխարինելու
և անհրաժեշտ խնդիրները անհրաժեշտ
անհրաժեշտ խնդիրները անհրաժեշտ
անհրաժեշտ խնդիրները անհրաժեշտ

Երբ անհրաժեշտ խնդիրները անհրաժեշտ
անհրաժեշտ խնդիրները անհրաժեշտ
անհրաժեշտ խնդիրները անհրաժեշտ
անհրաժեշտ խնդիրները անհրաժեշտ
անհրաժեշտ խնդիրները անհրաժեշտ

Ֆ. Թաթևաճեան

Յուրաքանչյուր
30/VI 1919

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
DÉLÉGATION DE PAIX

30 Յունիսի 1919

N° 199

Պ. Արմենակ Սարգիսեանին,
Աստ

Ինչպէս բացատրեցի Ձեզ սրանից 8-10 յառաջ, կասկածելի է որ ՍԵԼ Ծովու Անգլիական բանակի ընդ. Հրամանատարը կարողանայ օգնել մեր զօրքի զգեստեղենով:

Ձեզ յայտնի է նմանապէս, որ զօր. Տընքէնը, ի դիմաց զօր. Միլնի պաշտօնապէս ասաց ինձ, թէ հնարաւորութիւն չ'կայ ցոյց տալու մեզ այդ աջակցութիւնը, բայց յետոյ իւր կողմից աւելացրեց թէ, Էլի կը հետազօտէ եւ թէ միայն կարելի եղաւ կաշխատէ գէթ մասամբ կատարել մեր ցանկութիւնը: Դա եւս՝ ինչպէս ասել էի Ձեզ, մի խօսք է միայն եւ ոչ խոստում, ուստի եւ ես աւելորդ եմ համարում, որ դուք մնաք այստեղ այդ զգեստեղենի տեղափոխութեան առթիւ մեր կառավարութեան կողմից Ձեզ տրուած յանձնարարութեան համար. նամանաւանդ թէ՛ եթէ նոյն իսկ զօր. Տընքէնի յաջողուի մի մաս զգեստեղեն յատկացնել մեր զօրքի, շատ հաւանական է, որ ինչպէս ուրիշ դեղորայից համար, նրանք նախադասեն իրանց սեպհական միջոցներով ուղարկել զգեստեղենը մինչեւ Երեւան, ինչ որ եւ մեզ համար էլ վատ չլինիր:

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
DÉLÉGATION DE PAIX

Constantinople, le 19 Août 1919

Au Haut-Commissariat Britannique,

Mr. Arsène Kitour, est chargé par le Gouvernement de la République Arménienne de se rendre en Cilicie et en Mésopotamie, pour y étudier la situation des déportés arméniens, leur prêter aide et assistance matérielle, recueillir les orphelins se trouvant chez des étrangers, organiser leur rapatriement et enfin pour s'occuper de toutes les questions ayant trait aux réfugiés déportés et aux orphelins arméniens.

Je viens en conséquence prier respectueusement le Haut-Commissariat Britannique de vouloir bien délivrer à M. Arsène Kitour le document nécessaire, afin qu'il puisse voyager et séjourner librement en Cilicie et Mésopotamie et prescrire en même temps aux autorités Civiles et Militaires de ces pays de prêter à M. Arsène Kitour leur aimable concours dans l'accomplissement de sa tâche.

Je saisis cette occasion pour présenter au Haut-Commissariat Britannique les assurances de ma très haute et respectueuse considération

Représentant de la République Arménienne

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ

Կոստանդնուպոլիս,
19 օգոստոսի, 1919

Բրիտանական դիւանագիտական ներկայացուցչութեանը

Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան յատուկ յանձնարարութեամբ պարոն Արսէն Կիտուրը պետք է մեկնի Կիլիկիա եւ Միջագետք, որպէսզի ծանօթանայ տարագիր հայերի վիճակին, նիւթական օգնութիւն եւ աջակցութիւն ցուցաբերի նրանց, հաւաքագրի օտարերկրացիների մօտ օթեւանած որբերին, կազմակերպի նրանց վերադարձը հայրենիք եւ, վերջապէս, զբաղուի տեղահանուած հայազգի փախստականներին եւ որբերին առնչուող բոլոր հարցերով:

Ուստի՝ Բրիտանական դիւանագիտական ներկայացուցչութիւնից խոնարհաբար խնդրում եմ պարոն Արսէն Կիտուրին տրամադրել անհրաժեշտ փաստաթուղթը, որպէսզի վերջինս կարողանայ ճամփորդել եւ անարգել այցելել Կիլիկիա եւ Միջագետք, խնդրում եմ նաեւ կարգադրել վերոյիշեալ երկրների իշխանութիւններին իրենց սիրալիր աջակցութիւնը ցուցաբերել նրան այդ գործում:

Օգտուելով առիթից՝ ցանկանում եմ արտայայտել Բրիտանական դիւանագիտական ներկայացուցչութեան նկատմամբ ունեցած իմ խորին յարգանքն ու պատկառանքը:

Հայաստանի Հանրապետութեան
դիւանագիտական ներկայացուցիչ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

«Ժողովրդի Ձայն» թերթի
Խմբագրության Կ. ՊՕԼՍՈՒՄ
N° 81/333

22 Օգոստոսի 1919թ.
Երեւան

Թերթիդ, ի նպաստ սովետների բացած հանգանակութիւնից եւ մի երեկոյթի
հասոյթից գոյացած 443 լիրա եւ 21 դահեկան թղթադրամը, յանձնած Կ. ՊՕԼՍԻ
մեր Դիւանագիտական ներկայացուցիչ Պ. Թախթաճեանին ստացանք:

Մայր Հայրենիքի վերածնունդի օրերին, նրա բազմաչարչար տարագիր
որդիների դէպի իրենց Հայրենիքը տածած սիրոյ եւ պատրաստականութեան
զգացմունքներն են արտայայտում այսպիսի ծեռնարկների մէջ: Դրանք մեզ
ոգեւորում են: Հանրապետական Կառավարութեան կողմից ընդունեցէք մեր
շնորհակալութիւնները եւ այդպիսիքն յայտնէք Ձեր թերթի միջոցով բոլոր
նրանց, որոնք մասնակցել են այդ գեղեցիկ գործին:

Մինիստր Նախագահ եւ
Արտաքին Գործերի Մինիստր՝
Ալ[եքսանդր] Խատիսեան

Ֆինանսական Բաժնի Վարիչ՝
Խ. Ուլուբաբեան



Ալեքսանդր Խատիսեան (1874-1945), Հայաստանի Հանրապետութեան
Արտաքին գործերի նախարար (1919-1920)

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Դիւանագիտական Միսիային
Կ. Պոլսում

6 Սեպտեմբերի 1919թ.

Ի պատասխան Ձեր Օգոստոսի 10-ի Ն° 281 գրութեան, որով խնդրում էք Ձեր հաշվից 2500 ռուբ. (Ռումանովեան) տեղափոխել Եկատերինոդար Պ. Սաղաթելեանին, Պ. Սիրունեանի միջոցով Յ. Մարտիրոսեանի ընտանիքին յանձնելու համար, որպիսի գումարը Դուք ստացել էք տեղումդ Յ. Մարտիրոսեանից, - ֆինանսական Բաժանմունքս յայտնում է, որ Մինիստրութիւնս հնարաւորութիւն չունի կատարել նմանօրինակ յանձնարարութիւններ, իր տրամադրութեան տակ առանձին գումարներ չունենալու պատճառով: Ի հաշիւ Միսսիայիդ Նախահաշւի Մինիստրութիւնս Նոյնպէս հնարաւորութիւն չունի ստանալ այդպիսի գումար, որովհետեւ Միսսիայիդ հասանելիք բոլոր գումարները իրեն ժամանակին դուրս են գրել Գանձարանից եւ փոխադրել Ձեզ:

Ի նկատի ունենալով այն դժւարութիւնները, որ կապւած են նմանօրինակ յանձնարարութիւններ կատարելու հետ, յատուկ խնդրում ենք Ձեզ առաջիկայում յանձն չառնել Մինիստրութեանս միջոցով այդպիսիքն ի կատար ածելու:

Ֆինանսական Բաժնի Վարիչ՝
Խ. Ուլուբաբեան

Գործավար՝
Ա. Խաչվանքեան

Constantinople, le 24 Septembre 1919
Confidentielle

A Monsieur le Capitaine Poidebard,
Chef de la Mission Militaire Française
à Erivan

Mon capitaine,

En réponse à Votre office du 21 Août écoulé, qui m'est parvenu avec beaucoup de retard, je m'empresse de Vous remettre, ci-joint, le récépissé de Sarkissian, qu'on n'a pu dénicher que par suite d'une rencontre nocturne tout à fait fortuite. Il y a longtemps qu'il n'est plus à l'hôtel où il était descendu. On me dit que, le propriétaire de l'hôtel ne fait que courir, sans pouvoir découvrir son domicile. Et il paraît qu'il n'est pas le seul à le chercher...

Il y a plus de deux mois, Sarkissian s'est présenté un beau jour chez moi, pour me dire que, son congé avait expiré, et qu'étant à bout de ressources, il se trouvait dans l'obligation de me demander 100 Livres Turques en papier-monnaie, pour être à même de rentrer à Erivan. Jusque-là, il avait été une seule fois chez moi. Ceci pour vous dire que, je ne le connaissais pas et voyais en lui le drogman de notre Ministère de l'Extérieur.

Une fois l'argent empoché, Sarkissian ne s'est plus montré. J'ai dû écrire, plus d'une fois, à son sujet à notre Ministère. Je regrette infiniment de ne pas avoir de meilleurs renseignements à Vous donner sur son compte, mais je Vous dois la vérité.

Veuillez agréer, mon capitaine, l'assurance de ma considération la plus distinguée.

Կոստանդնուպոլիս,
24 սեպտեմբերի, 1919

Գաղտնի
340

Երեւանում ֆրանսիական ռազմական առաքելութեան ղեկավար
պարոն կապիտան Պուադըբարին

Ի պատասխան օգոստոսի 21-ի Ձեր յանձնարարութեան, որն ինձ է հասել մեծ ուշացմամբ, շտապում եմ ստորեւ կից փաստաթղթով Ձեզ առաքել վերոյիշեալ Սարգիսեանի անդորրագիրը, որ մեզ յաջողուեց յայտնաբերել լրիւ պատահական գիշերային մի հանդիպման շնորհիւ: Երկար ժամանակ է՝ ինչ նա այլեւս այն հիւրանոցում չէ, որտեղ կանգ էր առել: Ասում են՝ հիւրանոցի տէրը փնտրում է վերջինիս՝ այդպէս էլ չկարողանալով գտնել նրա բնակութեան վայրը: Եւ կարծես թէ նա միակը չէ...

Սրանից մօտաւորապէս երկու ամիս առաջ Սարգիսեանը եկաւ ինձ մօտ, որպէսզի յայտնի, որ իր արձակուրդն աւարտուած է, եւ ինքը, այլեւս ոչ մի նիւթական միջոց չունենալով, ստիպուած է ինձանից թուրքական հարկւր լիւրա խնդրել՝ թղթադրամով, որպէսզի ի վիճակի լինի վերադառնալ Երեւան:

Մինչ այդ Սարգիսեանն ընդամենը մի անգամ էր եղել ինձ մօտ: Սա գրում եմ ճշտելու համար, որ ես չէի ճանաչում այդ անձնաւորութեանն ու ի դէմս նրա՝ տեսնում էի մեր Արտաքին գործոց նախարարութեան թարգմանչին:

Փողը գրպանելուց յետոյ Սարգիսեանն այլեւս չերեւաց: Նրա վերաբերեալ մի քանի անգամ ստիպուած եմ եղել գրել նախարարութիւն: Խորապէս ցաւում եմ, որ անկարող եմ այդ անձնաւորութեանն առնչուող առաւել հանգամանալից տեղեկութիւններ հաղորդել, բայց ես պարտաւոր եմ Ձեզ ճշմարտութիւնն ասել:

Շնորհ արեք ընդունել, պարոն կապիտան, յարգանացս հաւաստիքը:

République Arménienne
Mission Diplomatique
N **381**

Constantinople,
le 22 Octobre 1919

Monsieur le Ministre-Président,

Dans le cours d'une conversation privée avec Mr. Stépan Astardjian, commerçant très avantageusement connu à Constantinople, je lui avais dit, entre autres, qu'il y avait pénurie de médicaments chez nous. Impressionné par mes paroles, Mr. Astardjian vient de me faire une agréable surprise, en mettant à ma disposition une caisse de divers médicaments, au profit des réfugiés Arméniens. Ces médicaments, dont la facture ci-jointe, en original, représentent une valeur de Ltq. 202,95.

Etant données les grosses difficultés qui existent pour le transit par la Géorgie, je me suis adressé, hier matin, à S.E. Mr. Ravndal, f; f; de Haut-Commissaire Américain, pour le prier de couvrir cette caisse de sa protection jusqu'à Erivan. Mr. Ravndal m'a dirigé chez le Major Arnold, Chef du Comité de secours Américain, tout en m'assurant que ma requête, de nature exclusivement humanitaire, aurait certes l'agrément du Major.

En effet, le Chef du Comité de secours Américain, si tôt informé du but de ma visite, s'est dit prêt à faire embarquer la caisse de médicaments sur un bateau américain qui va partir pour Batoum dans le courant de la semaine ; ce dont je l'ai bien remercié.

En vous priant de vouloir bien m'accuser réception de cet envoi, je me dis, Monsieur le Ministre-Président,

Votre très dévoué,

A Son Excellence,
Monsieur A. Khatissian, Président du Conseil et
Ministre des Affaires Etrangères de la
République Arménienne, etc. etc. etc.
à Erivan

Հայաստանի Հանրապետության
Դիվանագիտական առաքելություն
Թիվ **381**

Կոստանդնուպոլիս,
22 հոկտեմբերի, 1919

Մեծարգո՛յ պարոն Նախարար եւ Նախագահ,
Կոստանդնուպոլսում բարի համբաւ վայելող պարոն Ստեփան Աստարջեանի
հետ ունեցած իմ առանձնագրոյցի ընթացքում ես վերջինիս յայտնել էի, որ ի
թիւս մի շարք այլ խնդիրների՝ մենք նաեւ դեղամիջոցների պակաս ունենք:
Ազդուած իմ այս խօսքերից՝ պարոն Աստարջեանը ինձ հաճելի մի անակնկալ
է մատուցում՝ իմ տրամադրութեան տակ դնելով մի արկղ դեղորայք,
որը նախատեսուած է հայ փախստականների համար: Դեղամիջոցների
ապրանքագիրը, որի բնօրինակն եմ կցում այս նամակին, 202, 95 թուրքական
լիրա է կազմում:

Ելնելով Վրաստանով արուող տարանցումների ժամանակ առաջ
եկող դժուարութիւններից՝ երէկ առաւօտեան ես դիմեցի Ամերիկեան
ներկայացուցչութեան պատասխանատու Նորին Գերագանցութիւն պարոն
Ռաւնդալին, որպէսզի նա անձամբ իր հոգածութեան տակ վերցնի արկղի
տեղափոխումը Երեւան: Պարոն Ռաւնդալն ինձ ուղարկեց Ամերիկեան
օգնութեան կոմիտէի Նախագահ մայոր Առնոլդի մօտ՝ հաւաստիացնելով, որ իմ
հայցը, զուտ մարդասիրական բնոյթ ունենալով, անտարակոյս, կարժանանայ
մայորի բարեհաճ վերաբերմունքին:

Յիրաւի, այցելութեանս նպատակն իմանալուն պէս Ամերիկեան օգնութեան
կոմիտէի Նախագահն ասաց, որ յօժարաբար կը վերցնի դեղորայքի արկղը՝
ընթացիկ շաբաթուայ մէջ Բաթում մեկնող ամերիկեան նաւերից մէկի ուղեբեռի
հետ, ինչի համար ես իմ խորին շնորհակալանքը յայտնեցի մայորին:

Խնդրելով Ձեզ առաքումը ստանալուն պէս տեղեակ պահել ինձ՝ թոյլ տուէք,
մեծարգո՛յ պարոն Նախարար եւ Նախագահ, ինձ համարել Ձեր խոնարհ
ծառան:

Երեւանում Հայաստանի Հանրապետութեան Արտաքին գործոց Նախարար
եւ Խորհրդի Նախագահ
Նորին Գերագանցութիւն
պարոն Ա. Խատիսեանին, եւ այլն, եւ այլն, եւ այլն

République Arménienne
Mission Diplomatique
N 400

Constantinople, le 1 Novembre 1919
Au Ministère des Affaires Etrangères,

Me référant à ma lettre du 22 Octobre écoulé N 381, j'ai l'honneur d'informer le Ministère que les médicaments dont il était question dans ma dite lettre, ont été expédiés d'ici le 27 Octobre, par le destroyer Américain N. 125.

Ci-joint, pour l'information du Ministère, copie de l'avis donné par le major D. G. Arnold, Directeur-Administrateur du "Near East Relief" Américain, ainsi que celle de ma réponse.

J'espère que je réussirai à Vous expédier prochainement, par le même moyen, les 19 caisses de vêtements usagés, offerts par nos compatriotes de Bulgarie, au profit des réfugiés (V. ma lettre du 13 Septembre 1919 N° 324).

Հայաստանի Հանրապետության
Դիվանագիտական առաքելություն
Թիվ 400

Կոստանդնուպոլիս, 1 նոյեմբերի, 1919
Արտաքին գործոց նախարարությանը

Յղելով հոկտեմբերի 22-ի թիվ 381 իմ նամակին՝ պատիւ ունեմ տեղեկացնելու նախարարութեանը, որ նամակի մէջ յիշատակուող դեղամիջոցները Կոստանդնուպոլսից առաքուել են հոկտեմբերի 27-ին Ամերիկեան թիվ 125 բեռնանաւի միջոցով:

Նախարարութեան տեղեկատուութեան համար հարկ եմ համարում նամակիս կցել ամերիկեան «Near East Relief»-ի տնօրէն եւ վարիչ մայոր Դ. Գ. Առնոլդի տուած պաշտօնական համաձայնութեան, ինչպէս եւ իմ պատասխանի կրկնօրինակները:

Յոյս ունեմ, որ մօտ ժամանակներս ինձ կը յաջողուի նոյն եղանակով Ձեզ առաքել օգտագործուած հագուստի 19 արկղերը. Բուլղարիայի մեր հայրենակիցների նուիրատուութիւնը փախստականներին (տե՛ս 1919թ. սեպտեմբերի 13-ին առաքուած թիվ 324 իմ նամակը):

République Arménienne
Mission Diplomatique
N 403

Constantinople,
le 4 Novembre 1919

Monsieur le Ministre-Président,
L'Union des Pharmaciens Arméniens de Constantinople a, de son côté, mis à ma disposition quatre caisses de médicaments, ramassés entre eux au profit des Réfugiés se trouvant chez nous.

Ces quatre caisses de médicaments seront expédiées d'ici, vers la fin de la semaine, par les soins du "Comité de secours américain" (Near East Relief), qui les remettra directement à notre Gouvernement à Erivan.

Ci-joint, en originales, la lettre de l'Union des Pharmaciens Arméniens, ainsi que la liste des médicaments envoyés, dont je prie Votre Excellence de vouloir bien m'accuser réception.

Veillez me croire, Monsieur le Ministre-Président,
Votre très dévoué.

A Son Excellence,
Monsieur A. Khatissian, Président du Conseil et
Ministre des Affaires Etrangères de la République Arménienne, etc. etc. etc.
à Erivan

Հայաստանի Հանրապետության
Դիւանագիտական առաքելութիւն
Թիւ 403

Կոստանդնուպոլիս,
4 Նոյեմբերի, 1919

Մեծարգո՛յ պարոն Նախարար եւ Նախագահ,
Կոստանդնուպոլիսի դեղագործների միութիւնն իր հերթին ինձ չորս արկղ
դեղորայք է տրամադրել. այդ դեղամիջոցները Նրանք իրենց ուժերով հաւաքել
են փախստականների համար: Այդ չորս արկղերը կառաքուեն մօտաւորապէս
շաբաթուայ վերջին ամերիկեան «Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց
միութեան» (Near East Relief) ջանքերով, որն էլ դրանք անմիջապէս կը յանձնի
Երեւանի մեր կառավարութեանը:

Կից փաստաթղթով կը գտնէք Հայ դեղագործների միութեան Նամակը, ինչպէս
եւ առաքուած դեղամիջոցների ցուցակը. խնդրում եմ Ձերո՛ր Գերազանցութեանը
ինձ տեղեակ պահել առաքումը ստանալուն պէս:

Թոյլ տուէք Ձեզ յայտնել իմ անմնացորդ Նուիրումը, մեծարգո՛յ պարոն
Նախարար եւ Նախագահ:

Երեւանում Հայաստանի Հանրապետութեան
Արտաքին գործոց Նախարար եւ Խորհրդի Նախագահ

Նորին Գերազանցութիւն
պարոն Խատիսեանին, եւ այլն, եւ այլն, եւ այլն

Պոլիս, 10 Նոյեմբեր 1919

N° 421

Հայաստանի Հանրապետության
Թիֆլիսի դիւանագիտական
ներկայացուցչության

Ներփակելով տասը հազար ռուբլի Քըրընսքու թղթադրամ (հազարանոց)
խնդրում եմ, որ այդ գումարը յանձնէք այդտեղ Տիկին Մաքրուհի Թադեոսեանին,
որի հասցեն է Базарная N 9.

Ի պահանջել հարկին, այդ իսկ հասցեն կարող էք իմանալ եւ Թիֆլիսի
Ամերիկեան Relief Committeenւմ, Պրն. Harrison A. Maynard-ից:

Այդ փողը ուղարկողն է Պ. Նազարեթ Նալբանտեան (հասցէ : Փարմաք-քափու,
չաթալ խան, Պոլիս - (կօշկակար):

Խրկողէն կը խնդրեմ, որ յայտնէք ինձ թէ սոյն գրութիւնն եւ փողը ստացել եւ
յանձնել էք ըստ պատկանելոյն:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ

Երեւան 19 Նոյեմբերի 1919թ.

N° 4947

Դիւանագիտական Ներկայացուցիչ՝

Պ. Թախթաճեանին

Կ. Պօլսում

Կ. Պօլսի հայրենակիցներից Պ. Վ[րթանէս] Մարտիկեանը նշանակել է իմ կողմից խորհրդական Ձեր Միսիային կից:

Սոյն նշանակում Ձեզ լրացնելու համար արւած է. այլ նպատակ ունի թեթեւացնել, որոշ չափով, Ձեր ծանր աշխատանքները, եւ ես վստահ եմ որ Պ. Մարտիկեանը կարող է լինել Ձեզ համար մի գնահատելի աշխատակից:

Ի տ[եղի] Արտաքին Գործերի Մինիստր՝

Ս. Արարատեան

Ընդհանուր Քարտուղար՝

Ա. Տէր Յակոբեան

ԱՐՏԱԶԵՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ
N° 4948

Երեւան 19 Նոյեմբերի 1919թ.

Պ. Վրդանես Մարտիկեանին,

Ձեր ընկերներից եւ հայրենակիցներից լսելով, որ դուք չ'էիք մերժեր օժանդակել
Կ. Պօլսի մեր Դիւանագիտական Միսսիային, ես Ձեզ նշանակեցի Խորհրդական
Նոյն միսսիային կից:

Վստահ եմ որ ստանձնելով Ձեր պաշտօնը Դուք ոչ մի ջանք չ'էք խնայեր
օգտակար լինելու Միսսիային եւ թեթեւացնելու Պ. Դիւանագիտական
Ներկայացուցչի աշխատանքները:

Ի տ[եղի] Արտաքին Գործերի Մինիստր`
Ս. Արարատեան

Ընդհանուր Զարտուղար`
Ա. Տէր Յակոբեան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ԿԻՑ ԿԱՌԱՎԱՐՉԻ

ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ

ՀԱՐԱԻԱՅԻՆ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ

ՁԻՆԵԱԼ ՈՅԺԵՐԻ

N° 8

20 Նոյմբերի 1919թ.

Կ. Պոլսի

Հայաստանի Հանրապետության Դիւանագիտական

Ներկայացուցիչ Թիւրքիայում

Պ. Թախթաշեանի

N° 1

20 Նոյմբերի 1919թ.

Կ. Պոլսի

Մեր պետական կարեւորագոյն ապրանքի համար, որի մասին ես Ձեզ խոսել եմ, որը «Էլպիտիֆոր» նաւով յանկարծակի էւակուացիայի պատճառով խրիմից անցել է Կ. Պոլիս, Ռուսական պարենաւորման Պետի Գեներալ Ստավիցկիի կողմից գրաւոր վերահաստատութիւն ստացայ, որ յանձնելի է ինձ, համաձայն փաստաթղթերի, իբրեւ Հայաստանի Ներկայացուցչի:

Սակայն Ռուսական բանակի հետ եկած բոլոր ապրանքները գտնուում են ֆրանսիական իշխանութեան իրաւունքի տակ, հետեւաբար Ձեր Ներկայացուցչութեան սահմաններում գտնուող իշխանութեան իրաւասութեան:

Յատկապէս կիսնորէի աջակցել ինձ ստանալու մեր պետական ապրանքը, եւ նպաստել ըստ պատկանելոյն հասցնելու:

Գալով հայ սպայութեան եւ զինւորութեան, որոնք ցրիւ գտնուում են Ռուսական բանադի [sic] զանազան մասերում եւ զանազան նաւերում, նրանց թիւը եւ որակը ներկայումս անհնարին է որոշել:

Ռուսաց այս տեղի Ձինւորական Ներկայացուցիչ Գեներալ Լուկոմսկին, ինձ ասաց, որ ֆրանսիական իշխանութիւնը, ոչ մի զինւոր չի արձակելու նաւերից եւ բոլորը փոխադրուելու են Գալիպոլի:

Ուրեմն ֆրանսիական տեղիս Բարձր իշխանութիւնից է կախուած տարբեր տնօրինելու հայ զինւորութեան վիճակը:

Եթէ տեղումս բիւտջէ չկայ, միակ նպատակահարմար [sic] միջոցը այն է, որ ֆրանսիական իշխանութիւնը զատելով սրանց տեղումս, կամ Գալիպօլի, տեղափոխէր Անդրկովկաս:

Մեծայոյս [sic] եմ, որ այս գործում եւս կըկատարէք անհրաժեշտը եւ կարելորդը: Ինքս ամբողջովին լինելու եմ գործակից:

Անհրաժեշտ էր, ի հարկէ, անհապաղ [sic] խորհրդակցութիւն:

Հայաստանի Հանրապետութեան Ներկայացուցիչ

Յ. Նազարեան

Ատիս-Ապապա
8 Դեկտեմբեր 1919

Մեծապատիւ
Տիար Թահթաճեան
Ներկայացուցիչ Հայկական Հանրապետութեան
Ի Պօլիս

Մեծապատիւ Տիար,
Հաճոյքը ունիմ Ձեզի հապէշներու երկրէն գրելու եւ Հայ Գաղութն լուրեր
հաղորդելու:

Տեղւոյս Հայ Գաղութը Հանրապետութեան բանակի «կադանդէք» հանգա-
նակած եւ ուղարկած է. միայն Ատիս Ապապաէն 291 անգլ. ոսկի. իսկ Ճիպութի,
Տիրէ Տավա եւ հարուստ քաղաքներէն մօտաւորապէս 4000 \$-ը. Ուրախ
եմ նաեւ հաղորդելու Ձեզ թէ մօտ օրէն եւս հանգանակութեան մը պիտի
ծեռնարկուի, Հանրապետութեան օդանաւ մը նուիրելու համար. բնական է
արժէքը կ'ուղարկուի հանրապետութեան որպէսզի Ան իր մասնագետներու
միջոցաւ գնէ:

Հոս մեծ համակրանք կը վայելէ մեր սիրելի Հանրապետութիւնը: Ան-
հանգստօրէն կը համարձակիմ ըսելու թէ, կաշխատիմ հոս ալ Եգիպտոս
եղածին պէս միթինկ մը կազմակերպել որով համակրութիւն եւ փափաք
յայտնուի հանրապետութեան նպատակներ ճանչցնելու Հայ Գաղութը, քանի
որ ռուսական հիւպատոսարանն վերջնականապէս փակուած է եւ հիւպատոս
մեկնելու վրայ. այսպէսով տեղւոյն Գաղութը բոլորովին անպաշտպան կը մնայ:
Փափաքելի էր որ մեր հանրապետութիւն այս մասին մի քիչ ուշադրութիւն
դարձնէր:

Սպասելով այն հաճոյքին զոր պիտի ունենամ Ձեր նամակները կարդալով,
ընդունեցէք, խնդրեմ Մեծ. Տիար, խորին յարգանացս հաւաստիքը:

Մ. Այվատեան
Հասցէ: M. Ayvadian
(Abyssinie) Addis-Ababa

ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ
ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

Բերա, 16 Դեկտեմբեր 1919

Վսեմաշուք Տէր,
Ֆ. Թախթաճեան
Հայաստանի Հանրապետութեան
Ներկայացուցիչ ի Կ. Պօլիս

Հռովմէն Հաւատոյ տարածման ընկերութենէն 1919-ին Սեպտեմբեր 11-ին Սոնս. Դոլչիէն եկած է (45) ֆրանք Երեւանի անսուղ աղքատաց տալու: Նա ֆրանքը վերածելով տաճկական դրամի, փոխելով 11-20 սանդիմը 1 ոսկւոյ, բռնած է չորս հարիւր երկու դահեկանի (402) դահեկան: Սոնս. Դոլչիին մեզ խաւրած է եւ մենք ալ նոյնութեամբ Ձեզի կը խաւրենք:

Մնամք Աղօթարար
Յովսէփ Արքեպ. Ռոքոսեան
Կաթ. Պատր. Փոխանորդ

Յ. Գ. Անշուշտ ընկալագիր մը կը խաւրէք,
Յ. Վ. Սարինեան

République Arménienne
Mission Diplomatique

N 469

Constantinople, le 20 Décembre 1919

Monsieur le Consul-Général,

Je m'empresse de Vous accuser réception de votre lettre du 6 courant, ainsi que des Rb. 2500 en papier-monnaie Kerensky (en billets de 250 Rb.) destinés à Mr. Apoulian. Quant à la copie de la lettre y relative du Ministère des Affaires Etrangères (section financière), je ne l'ai pas prouvée dans Votre susdite lettre. Veuillez agréer, Monsieur le Consul-Général, l'expression de mes sentiments les plus distingués.

A Monsieur A. Tchimischkian
Consul-Général de la République Arménienne,
à Batoum

Հայաստանի Հանրապետության
Դիվանագիտական առաքելություն
Թիվ 469

Կոստանդնուպոլիս, 20 դեկտեմբերի, 1919

Պարո՛ն գլխաւոր հիւպատոս,

Շտապում եմ Ձեզ տեղեկացնել, որ ստացել եմ դեկտեմբերի 6-ին առաքուած Ձեր նամակը, ինչպէս եւ Կերենսկու թղթադրամներով ուղարկուած 2500 ռուբլին (որ համարժէք է 250 ռուբլու սովորական թղթադրամով)՝ հասցեագրուած պարոն Աբուլեանին: Ինչ վերաբերում է Արտաքին գործոց նախարարութեան (Ֆինանսական բաժնի) նամակի պատճենին, ես այն չգտայ վերոյիշեալ նամակի մէջ:

Թոյլ տուէք ինձ Ձեզ յայտնել, պարո՛ն գլխաւոր հիւպատոս, յարգանացս հաւաստիքը:

Բաթումում Հայաստանի Հանրապետութեան
գլխաւոր հիւպատոս պարոն Յ. Չմշկեանին

եկաւ որ Խիւրիկը իւրաքանչեւ Խիւրիկ
չէր առնալ իւր Խիւրիկը, կամ իւր Խիւրիկը
չէր առնալ իւր Խիւրիկը (Օրդարիկը զեւր), կեանքն ու սրտն իւր
Խիւրիկին ու, Վերջապէս, իւր Վերջապէս
երկու անգամներ թիֆլիս զեւր
դարձաւ եւ իւր Խիւրիկին հանձնարեալ
Յիւրիկին առնալ ու իւր Խիւրիկին
Խիւրիկին հայ հասարակութեան խնամքի իւր
այս կէտ իւրաքանչեւ թիֆլիս հանաւ իւր
Խիւրիկին իւր Խիւրիկին իւր Խիւրիկին
Խիւրիկին հանաւ թիֆլիս. Այս զեւր, Վերջապէս
յուր իւր Խիւրիկին հանաւ իւր Խիւրիկին, ապա իւր
Խիւրիկին իւր Խիւրիկին իւր Խիւրիկին ու 2 իւր
Վերջապէս անգամ եւ իւր Խիւրիկին

Իւրիկին առնալ իւր Խիւրիկին իւր Խիւրիկին,
այս Խիւրիկին ու իւր Խիւրիկին իւր Խիւրիկին,
իւր Խիւրիկին իւր Խիւրիկին իւր Խիւրիկին
Խիւրիկին, եւ իւր Խիւրիկին իւր Խիւրիկին
իւր Խիւրիկին, - որ Խիւրիկին իւր Խիւրիկին
եւ իւր Խիւրիկին իւր Խիւրիկին իւր Խիւրիկին:
Այս կեանքին, որ առնալ իւր Խիւրիկին
այս իւր Խիւրիկին իւր Խիւրիկին իւր Խիւրիկին,
անհանգիստութիւն ու իւր Խիւրիկին
Խիւրիկին Խիւրիկին իւր Խիւրիկին, ապա իւր
Խիւրիկին իւր Խիւրիկին իւր Խիւրիկին:

Յիւրիկին իւր Խիւրիկին Խիւրիկին

Խիւրիկին

République Arménienne
Mission Diplomatique
N 471

Constantinople, le 20 Décembre 1919

Monsieur le Consul-Général,

Je Vous remets, sous ce pli, une lettre et 10 (dix) Livres Turques destinées à Arevchad Ghi[r]agossian, natif du village Garmoundj de Bitlis, se trouvant à Batoum (stari vokzal). Il y a sur l'enveloppe l'adresse de Boghos Arabian, du village Gtzvag (Bitlis), qui connaît Ghiragossian.

Veuillez m'accuser réception de cet envoi et le faire parvenir à destination.

Agréez, Monsieur le Consul-Général, l'expression de mes sentiments les plus distingués.

A Monsieur Tchimischkian,
Consul-Général de la République Arménienne
à Batoum

Հայաստանի Հանրապետութեան
Դիւանագիտական առաքելութիւն
Թիւ 471

Կոստանդնուպոլիս, 20 դեկտեմբերի, 1919

Պարո՞ն գլխաւոր հիւպատոս,

Այս ծրարի մէջ ես Ձեզ մի նամակ եմ ուղարկում եւ 10 (տասը) թուրքական լիրա՝ հասցեագրուած Արեւշատ Կիրա[կ]ոսեանին, որը ծնունդով Բիթլիսի Կարմունջ գիւղից է եւ ներկայումս գտնւում է Բաթումում (ստարի վոկզալ/հին կայարան): Ծրարի վրայ Պօղոս Արաքեանի հասցեն է նշուած. վերջինս, որը ծնունդով Կցուակ գիւղից է (Բիթլիս), ճանաչում է Կիրակոսեանին:

Խնդրում եմ տեղեկացնել ինձ նամակը ստանալուն պէս եւ յանձնել այն հասցեատիրոջը:

Թոյլ տուէք ինձ Ձեզ յայտնել, պարո՞ն գլխաւոր հիւպատոս, յարգանացս հաւաստիքը:

Բաթումում Հայաստանի Հանրապետութեան
Գլխաւոր հիւպատոս Պարոն Չմշկեանին

République Arménienne
Mission Diplomatique
N 472

Constantinople, le 20 Décembre 1919

Monsieur le Consul-Général,
Je Vous remets, sous ce pli, une lettre et Rb. 2000 en billets de 250 Kérensky, destinés à Dono Der-Ghazarian, natif des environs de Bitlis, se trouvant à Batoum (dans les dépôts de la compagnie russe de navigation à vapeur et de commerce), qui les remettra à Apet Béghian, du village Téghoutz de Bitlis.

Veuillez m'en accuser réception et agréer, Monsieur le consul-général, l'expression de mes sentiments très distingués.

A Monsieur Tchimischkian,
Consul-Général de la République Arménienne
à Batoum

Հայաստանի Հանրապետության
Դիվանագիտական առաքելություն
Թիվ 472

Կոստանդնուպոլիս, 20 դեկտեմբերի, 1919

Պարո՛ն գլխաւոր հիւպատոս,
Այս ծրարով ես Ձեզ մի նամակ եմ ուղարկում եւ 2000 ռուբլի Կերենսկու 250 թղթադրամով, որոնց հասցեատերը Տոնո Տէր-Ղազարեանն է՝ ծնունդով Բիթլիսից, ով ներկայումս գտնւում է Բաթումում (ծառայում է շոգենաւերի ռուսական առեւտրական ընկերութեան պահեստներում). հէնց նա էլ նամակը կը յանձնի Հաբէթ Բեղեանին՝ ծնունդով Բիթլիսի Թեղուտ գիւղից:

Խնդրում եմ տեղեկացնել ինձ առաքումը ստանալուն պէս, պարո՛ն գլխաւոր հիւպատոս:

Խորին ակնածանքով

Բաթումում Հայաստանի Հանրապետութեան
գլխաւոր հիւպատոս
պարոն Չմշկեանին

République Arménienne
Mission Diplomatique
N 473

Constantinople, le 20 Décembre 1919

Au Ministère des Affaires Etrangères,
J'ai l'honneur d'informer le Ministère que j'ai remis au porteur de ma présente, Mr. Boghos Kéchichian, la trousse d'instruments chirurgicaux dont faisait mention l'un de mes précédents rapports ayant pour annexe une lettre du Dr. Torkomian, président de L'Union des Médecins Arméniens.

J'ai remis également à Mr. Kéchichian un livre de législation turque (Médjellé) et une lettre destinée à Mr. Dikranian et provenant de Mr. Aïdjian-Lusignian.
Je prie le Ministère de m'accuser réception de ces envois.

Հայաստանի Հանրապետության
Դիվանագիտական առաքելություն
Թիվ 473

Կոստանդնուպոլիս,
20 դեկտեմբերի, 1919

Արտաքին գործոց նախարարությանը
Պատիւ ունեմ նախարարությանը տեղեկացնելու, որ այս նամակը տեղ հասցնողին՝ պարոն Պողոս Բէշիշեանին եմ յանձնել վիրաբուժական գործիքների փաթեթը, որ յիշատակել էի նախորդած զեկոյցներից մէկում. գործիքներին կցուած է հայ բժիշկների միութեան նախագահ դոկտոր Թորգոմեանի նամակը:

Ես պարոն Բէշիշեանին եմ վստահել նաեւ թուրքական օրէնսդրութեանն առնչուող մի գիրք (Մեդժելլէ) եւ պարոն Այիշեան-Լուսինեանի՝ պարոն Տիգրանեանին ուղղուած նամակը:

Խնդրում եմ տեղեկացնել ինձ առաքումը ստանալուն պէս:

22 Դեկտեմբերի 1919

Մաքրի-Գիւղ
Ազնուաշուք
Պր. Թահթաճեան
Ներկ. Երեւանի Հայկ. Հանրապետութեան

Ստորագրեալս փափաքելով իմովսան օգտակար լինել մեր մանուկ հանրապետութեան, կը փափաքիմ իմ սեփական շարժուն խոհանոցը իր ամբողջ կազմուածով հայկական հերոս բանակին նուիրել: Բայց դժբախտաբար զայն մինչեւ Երեւան հասցնելու դիւրութիւն չունենալուս կը խնդրեմ բարեհաճութիւն ունենայիք սոյն խոհանոց որ այժմ Պօլիս Մահմուտ Փաշա Զիւրքճի խան փոխադրած են. Ձեր յարմար դատած միջոցաւ օր առաջ Երեւան հասցնելու ձանձրոյթը յանձն առնել:

Առ այդ մնամ յարգանօք
Նշան (?) Գարաեան

Constantinople,
le 25 Décembre 1919

478

Au Ministère des Affaires Etrangères,

Je Vous envoie aujourd'hui, en même temps que ma présente, quatre livres concernant la Bulgarie, que Mr. Mardiros Papazian a offerts pour la Bibliothèque du Ministère des Affaires Etrangères. Trois de ces livres sont publiés par le Ministère bulgare des Affaires Et[ran]gères et constituent des documents diplomatiques.

Le quatrième est un gros annuaire commercial et industriel, dont la première partie contenant la plupart des lois et règlements bulgares peut nous être très utile.

Je prie le Ministère de vouloir bien m'accuser réception de cet envoi.

Կոստանդնուպոլիս,
25 դեկտեմբերի, 1919

478

Արտաքին գործոց նախարարութեանը

Այսօր իմ այս նամակի հետ Ձեզ եմ առաքում Բուլղարիային վերաբերող չորս գիրք. պարոն Մարտիրոս Փափագեանի նուիրատուութիւնը Արտաքին գործոց նախարարութեան գրադարանին: Գրքերից երեքում, որոնք Բուլղարիայի Արտաքին գործոց նախարարութիւնն է լոյս տեսցրել, դիւանագիտական փաստաթղթեր են ամփոփուած: Չորրորդն առետրաարդիւնաբերական ծաւալուն տեղեկատու է, որի առաջին մասում գետեղուած է Բուլղարիայի օրէնքների եւ կանոնադրութիւնների մեծ մասը. սա կարող է յոյժ օգտակար լինել մեզ համար:

Նախարարութեանը խնդրում եմ ինձ տեղեակ պահել առաքումը ստանալուն պէս:

Առաջնորդարան Հայոց
ՀԱՄԱՐ 601

Զմիւռնիա,
30 Դեկտ[եմբեր] 1919

Վսեմաշուք
Պ. Ֆ. Թահտաճեան
Դիւան[ագիտական] Ներկայացուցիչ
Հայ[աստանի] Հանրապետութեան
Կ. Պօլիս

Մշոյ Խաս գիւղացի Աբգար Բլօ Խուրշուտեան մեզ յանձնած է երեսուն ոսկի թղթադրամ, Աղէքսանդրապօլ Ամերիկեան գործարանի աշխատող իր կինը Տիկին Երանուհին Իզմիր փոխադրելու համար:

Կը խնդրենք որ բարեհաճիք այդ խեղճ կինն ալ Իզմիր փոխադրելը կարգադրութեանց մասին հարկ եղածը գրել ուր որ անկ է, եւ մեզ իմացնել նաեւ ճանապարհածախսի քանակը՝ անմիջապէս Ձեզ ղրկելու համար:

Սիրալիր ողջոյններով, մնամք

Աղօթարար
Առաջն[որդական] Տեղապահ Զմիւռնիոյ
Յովհան Ծ. Վարդապետ

ՀԱՅ ԲԱՆԱԿԻ ՆՈՒՐԱՀԱԲԱՔ
ԿԵՂՐ. ՄԱՐՍԻՆ

ՀԱՍՑԷ, ԲԵՐԱ ԳԱՊՐԻՍԹԱՆ ՓՈՂՈՑ 37
ԳՐԱՍԵՆԵԱԿ ԹԻԻ 10
ՄԹԵՐԱՆՈՑ, ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ԶԻՆՃԻՐԼԻ ԽԱՆ 23
Կ. ՊՕԼԻՍ

Կ. Պօլիս, 1920

Մեծայարգ Տիար
Թահթաճեան
Դիւանագիտական ներկայացուցիչ
Հ[այաստանի] Հ[անրապետութեան]
Կառավարութեան
Կ. Պոլիս

Պատիւ ունինք ներփակ Ձեզ յղելու երկու օրինակ «Ատրիա» ընկ[երութեան]
26 թիւ Ֆրանց Եօզէֆ Զիրալի շոգենաւով դրկուած 17 (տասնեօթը) կտոր
ապրանաց գօնետըմանը, զոր ապահովագրուած է “La Federale” ընկերութեան
մօտ 6000 ոսկիի փոխարէն:

Ավարիի պարագային պետք է դիմել ներկայացուցիչ Ֆ. Պերքնարտոյ
ընկ[երութեան]: Դրկուած ապրանքները Եգիպտոսէն եկած ՍՄԱ մարքա մէկ
հակ Մանիֆաքթիւր, 2/5 թիւ չորս սնտուկ Պօնէթըրի, 12/13 F. A մէկ սնտուկ
Իզմիրէն եկած Չգեստեղէն, RA 3 fo մէկ հակ Մանիֆաքթիւր, 371/380, 10
սնտուկ գրի մեքենայ որուն 374 թիւին մէջ երկու տեսակ (մէկը թնդանօթի եւ
միւսը խորտընկեցի) երկու մեքենայէ զատ: Միւս սնտուկներէն իւրաքանչիւրը
կը պարունակէ երկերկու նոր Hammund մեքենայ:

Ապրանքներու մանրամասն ցուցակը անմիջապէս պիտի դրկուի Ձեզ: Այս
ապրանքները դրկուած են Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ
Պաթում Պ. Աթապէկեանի:

Ի դիմաց Հ[այ] Բ[անակի]
Նուիրահաւաք Մարմնոյ
Կեդր.

Ատենապետ
Յ. Յ. Հալըզեան
Ատենադպիր
Արմենակ Ա. Է. Խորիկեան

ՀԱՅ ԲԱՆԱԿԻ ՆՈՒԻՐԱՀԱՆԱԲ

ԿԵԴՐ. ՄԱՐՄԻՆ

Կ. Պոլիս, 6 Հոկտեմբեր 1920

ՀԱՄԵ, ԲԵՐԱ ԳԱՊՐԻՍԹԱՆ ՓՈՂՈՑ 37

ԳՐԱՄՆԵՆԱԳ ԹԻԻ 10

ՍԵՐԱՆՈՑ, ՍԵՐ ԵՌԿԱՅ ԶԻՆՈՒՄԻ ԽԱՆ 23

Կ. ԳՕԼԻՍ



Ն Ո Ր Ի Ն Վ Ս Ե Մ Ո Ւ Թ Ի Ն

ՊՐՆ. ԱՂԵՐՍԱՆԴՐ ԽՍՏԻՍԵԱՆ

Քանաչուր ԶԷՐ.

Հայ Բանակի Նուիրահաւաք Կեդր. Մարմինը ներկայիւ

Զեզ կը լանձնէ մինչ ցարդ հայ Բանակի անունով եղած նուիրահաւաք-
Թեանց առթիւ իր մօտ գտնուած 66183 Ռուս. ռուբլի: Ըստ լեւազան
ցուցակի:

ԲԱՆԱԿԻ ՀԱՇՎՈՑՆ ՆՈՒԻՐՈՂԱՍ

ՌՕՄԱՆՕՖ 3183 X

Տօնացի 57450

Կովկասեան 550

ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՂԻ ՀԱՇՎՈՑՆ ՆՈՒԻՐՈՂԱՍ

Տօնացի 5000

ԸՆԴՀ. գումար 66183 ռուբլի

Կը խնդրենք որ բարեհաճիք սույն գումարը Ռազմական Նահարարու-
Թեան լանձնել:

Այս առթիւ հաճեցէք ընդունել մեր անկեղծ յարգանաց հաւաստիքը:

Ի ԴԻՄԱՀ ՀԱՅ ԲԱՆԱԿԻ ՆՈՒԻՐԱՀԱՆԱԲ ԿԵԴՐ.
ՄԱՐՄԻՆ

ԱՏԵՆԱԳԻՐ

ԱՏԵՆԱԳԵՏ

Ստեփան Կարապետ *Արմեն Կարապետ*



Ստեփան Կարապետ

Հայ Բանակի Նուիրահաւաք Կեդրոնական Մարմին
(պաշտօնական ձեւաթուղթ) - Հայաստանի ազգային արխիւ

Constantinople,
10 janvier 1920

487

Monsieur le Consul-Général,

Je Vous remets, ci-joint, trois lettres dont la première (N° 1) contient Livres Turques-papier 25 (vingt cinq), la seconde (N° 2) Livres Turques-papier 15 (quinze) et la troisième (N° 3) Rb. 2345 (deux mille trois cent quarante cinq). Ces lettres sont destinées aux nommés Yénovk Haroutunian, de village Tzghag de Bitlis, agence russe à Batoum, à Mme Tavrez Bghdoyan, par l'intermédiaire d'Avédis-Gazarian, même adresse à Batoum, à Soghomon Mélikian, du village Téghoud de Bitlis.

Veuillez m'en accuser réception et agréer, Monsieur le Consul-Général l'expression de mes sentiments distingués.

Spécification des Roubles : 2000 en papier Donskoï, 300 en bons de la Transcaucasie et 45 roubles également en papier Donskoï.

Prière de faire parvenir à destination, à Erivan la lettre ci-incluse à l'adresse de Vagharschag Hokhigian, à la rédaction du journal "Aschkhadank". Ստացի Պոլսոյ Հայկական հանրապետութեան ներկայացուցիչից մի ծրար որի մէջ կայ (40) քառասուն օսմանեան թղթադրամ լիրայ եւ երկու հազար երեք հարիւր քառասուն եւ հինգ թուրքի դոնսկոյ եւ կովկասական թղթադրամ. Յանձնելի Հայկական հիւպատոս Յ. Չմշկեանին

Հ. Մելիք Սարգիսեան
13 Յունուար 1920

Կոստանդնուպոլիս,
10 յունուարի, 1920

թիւ 487

Պարոն գլխաւոր հիւպատոս,

Իմ այս նամակին կցում եմ երեք ուրիշ նամակ. առաջինը (1) թուրքական 25 (քսանհինգ) լիրա է պարունակում՝ թղթադրամի տեսքով, երկրորդը՝ (թիւ 2) 15 (տասնհինգ) թուրքական լիրա, երրորդը՝ (թիւ 3) 2345 (երկու հազար երեք հարիւր քառասունհինգ) ռուբլի: Այդ նամակները հասցեագրուած են Բաթումի ռուսական գործակալութիւնում աշխատող Ենոք Յարութիւնեանին՝ ծնունդով Բիթլիսի Ճղակ գիւղից, տիկին Թաւրեզ Բղդոյեանին, որի նամակը կարող էք յանձնել Բաթում նոյն հասցեով գրանցուած Աւետիս Ղազարեանին, եւ վերջապէս երրորդի հասցեատերը Սողոմոն Մելիքեանն է՝ ծնունդով Բիթլիսի Թեղուտ գիւղից:

Խնդրում եմ ինձ տեղեակ պահել առաքումը ստանալու դէպքում եւ յղում եմ Ձեզ յարգանացս հաւաստիքը:

Ռուբլիների տարատեսակները. Դոնսկոյի 2000 թղթադրամ, 300 ռուբլի Անդրկովկասի թղթադրամով, եւ դարձեալ 45 ռուբլի Դոնսկոյ թղթադրամով: Խնդրում ենք Երեւան հասցնել այստեղ ամփոփուած նամակը՝ ուղղուած Վահագ Հոխիկեանին, «աշխատանք» օրաթերթի խմբագրութիւն:

Ստացի Պոլսոյ Հայկական հանրապետութեան ներկայացուցիչից մի ծրար որի մէջ կայ (40) Քառասուն օսմանեան թղթադրամ լիրայ եւ երկու հազար երեք հարիւր քառասուն եւ հինգ ռուբլի դոնսկոյ եւ կովկասական թղթադրամ. Յանձնելի Հայկական հիւպատոս Յ. Չմշկեանին

Հ. Մելիք Սարգիսեան
13 Յունուար 1920

Մեր հասցեն
B. P. 319
Հայուհեաց Միութիւն

1920 յունվար 11/24

Մեծարգոյ
Պրն. Ֆ. Թահթաճեան
Ի Կ. Պօլիս

Մենք հայ տիկիկներս այստեղ Գայիրէի մէջ կազմեցինք «Հայուհեաց Միութիւն» եւ ձեռնարկած ենք հանգանակութեան ի նպաստ հանրապետութեան, հայ քաջարի անձնագոհի զինուորի, եւ արդիւնքը պիտի գնենք զինուորներին անհրաժեշտ իրեղէններ, այն է, հագուստ, կօշիկ, գուլպա[j], թաշկինակ, եւ այլն. եւ ուղարկել երուան:

Եւ որովհետեւ այստեղ ամէն բան թանկ է, ինչպէս որ ամէն տեղեր, հետեւաբար գնելուց առաջ որոշեցինք դիմել Ձեզ եւ տեղեկանալ թէ դրամը փոխադրենք, թէ գնումներ ընենք: Եւ եթէ գնումներ անենք, ինչ նիւթեր աւելի անհրաժեշտ կը նկատենք:

Կը խնդրենք շուտափոյթ մեզ հաճիք տեղեկացնել, դրամը՝ թէ նիւթեր:

Հաճեցէք ընդունիլ մեր խորին յարգանաց հաւաստիքը:
Ի դիմաց Հայուհեաց Միութեան

Ատենադպրուհի
Տիկ. Ա. Շալճեան

Ատենապետուհի
Տիկ. Աշխէն Լալայեան

Հայ Սպայից Միութիւն
Կեդրոնատեղի:
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՏՈՒՆ
ԻՉՄԻՐ

Union des Officiers Arméniens
Bureaux :
MAISON DU PEUPLE ARMÉNIEN
SMYRNE

Գուրգուրանք Հայ Բանակին վրայ
ԻՉՄԻՐ, 23 / 1 1920

Թիւ **84**

Մեծայարգ
Տիար Ֆ. Թահթաճեան
Ներկայացուցիչ Հայ Հանրապետութեան
Կ. Պոլիս

Ինչպէս մեր 10-1-20 թիւ 79 նամակաւ պարզած էինք, միութիւնս հաստատած է «Հայ զինուորին կաղանդէքը» անուանով ֆոնտ մը, որուն հասցէին 500 սկի ուղարկած ենք Պալքէտեր, փաստաբան Պ. Սերժ Գազանճեանի, որ տեղւոյն մէջ 1000 զոյգ բրդեայ գուլպայ (երկար) գնելով պիտի դրկէ Ձեր անուան՝ Պանտրմայի Իբրանոսեան եղբարց տան միջոցաւ: Պիտի խնդրէինք որ գուլպաները Պոլիս հասնելուն՝ հաճէիք տեղեկացնել մեզի, որպէսզի հոս պատրաստութեան մէջ եղող, գուլպայ[յ], ներքնագգեստ եւ այլն հետզհետէ ուղարկէինք դարձեալ Ձեր անուան, հայ բանակին համար:

Սպասելով Ձեր զեկուցման մնամք ամենախորին յարգանք
Ի դիմաց Վարչութեան

Ատենադպիր
Արթաքի Աշճեան

Ատենապետ՝
Արշակ Թօմաճեան

Глубикоуважаемый
Фердинандъ Петровичъ!

Въ настоящее время я нахожусь въ г. Эривани и организую дѣло
открытія высших[ъ] коммерческих[ъ] и бухгалтерских[ъ] курсовъ, равно
разрабатываю программы Коммерческихъ училищ[ъ].

Для сей цѣли нужны мнѣ книги на Армянскомъ языкѣ:

По бухгалтеріи
Коммерческой ариѳметикѣ
Комм. географіи
Ком. ариѳметикѣ
Ком. корреспонденціи

Торговому и вексельному право и все это на армянском языкѣ.

Прошу купить по 1 экземпляру и выслать въ Эривань на имя "Высших[ъ]
коммерческих[ъ] и бухгалтерских[ъ] курсовъ Общества распространения
Коммерческаго образованія среди Армянъ на Кавказѣ".

Министр Нар. Просвещенія указал на Васъ какъ на лицо, которое может[ъ]
оказать намъ помощь. Жду въ возможной скорости; деньги переведу по
получении Вашего увѣдомленія о суммѣ. Если забыли, то напомню Вамъ
о себѣ: я б[ывшій] главный контролеръ Тифлисской городской Управы.
Примите мой искренний привѣтъ.

Уважающий Васъ
Г. Теръ Давидянцъ

Адресъ мой: Эривань
Карвансарайская N5
Кварт. Теръ Саркисова
Томаса.

Передать предсѣдателю общества распространенія Коммерческаго
Образованія среди Армянъ на Кавказѣ.

Гарегину Камсаровичу
Теръ Давидидянцу

Очень, очень прошу просьбу не оставить безъ вниманія

Մեծայա՛րգ
Ֆերդինանդ Պետրովիչ,

Ներկայումս ես գտնուում եմ Էրիվան քաղաքում եւ կազմակերպում եմ բարձրագույն առեւտրային եւ հաշուապահական դասընթացների բացման գործը, համատեղ մշակում եմ ծրագրեր առեւտրային ուսումնարանների համար:

Այս նպատակով ինձ անհրաժեշտ են հայերէն լեզուով գրքեր.
Հաշուապահութեան
Կոմերցիոն թուաբանութեան
Կոմերցիոն աշխարհագրութեան
Կոմերցիոն թուաբանութեան
Կոմերցիոն թղթակցութեան

Առեւտրային եւ մուրհակային օրէնքի եւ այդ ամենը հայերէն լեզուով:

Խնդրում եմ գնել մէկական օրինակ եւ ուղարկել Էրիվան՝ «Կովկասի հայերի շրջանում կոմերցիոն կրթութեան տարածման ընկերութեան բարձրագույն կոմերցիոն եւ հաշուապահական դասընթացների» անունով:

Լուսաւորութեան նախարարը մատնանշեց Ձեզ որպէս մի անձի, որը կարող է մեզ օգնութիւն ցուցաբերել: Սպասում եմ հնարաւոր արագութեամբ. դրամը կփոխանցեմ գումարի մասին Ձեր ծանուցումը ստանալուց յետոյ: Եթէ մոռացել էք, ապա Ձեզ յիշեցնեմ իմ մասին. ես Թիֆլիսի քաղաքային իշխանութեան նախկին գլխաւոր վերահսկիչն եմ: Խնդրում եմ ընդունեք իմ անկեղծ ողջոյնները:

Ձեզ յարգող՝
Գ. Տէր Դաւիդեանց

Իմ հասցեն՝ Էրիվան
Քարվանսարայի N 5
Թումաս
Տէր Սարկիսովի բնակարան

Փոխանցել Կովկասի հայերի շրջանում կոմերցիոն կրթութեան տարածման ընկերութեան նախագահին:
Գարեգին Կամսարովիչին
Տէր Դաւիդեանցին
Շատ, շատ եմ խնդրում խնդրանքս առանց ուշադրութեան չթողնել:

Կ. Պօլիս,
6 Փետրվար 1920

N° 507

Մայիլեան Եղբարք
Թիֆլիս

Հաստատելով Յունվար 20 թուագրեալ նամակս, որի հետ միասին ուղարկել էի եւ զանազան գրքերի եւ թերթերի ծրարներ, ներկայիս կը յայտնեմ Ձեզ, որ թղթաբերիս հետ ուղարկում եմ Ձեզ նախկին Ամերիկեան Դեսպան Gerard-ի յայտնի հատորը, 200 դահեկան, ինչպէս նաեւ զանազան թերթերի մի կապոց:

Կցում եմ ներկայիս եւ երեկուայ «Ճակատամարտի» համարը, որի մէջ in extenso տպուած է իմ թելադրութեամբ՝ Ձեր նամակ դիմումը: Չայն պիտի հրատարակեն եւ միւս մեր թերթերը:

Անցեալ նամակիս մէջ սխալ մ[ը]’ն էր սպրդած: Չէի հաշւած թերթերի համար ծախսածս:

Այնպէս որ մօտս մնացել էր 3/5 դահեկան:
Gerard-ի հատորը արժէ 200 դահեկան:
Մնացեալն էլ թերթերով կը գոցենք:
Մնամ յարգանքօք

«ՆՈՐ ԱՅԳ»

Հայկական Պատկերազարդ
Պարբերաթերթ
16, Րեչիտ Էֆ. Խան, Պապը Ալի
Կ. Պոլիս

“NOR AIK”

(La Nouvelle Aurore)
Revue Illustrée Arménienne
16, Réchid Eff. Han, Bab-Ali
Constantinople

Constantinople, le 7 février 1920

Monsieur F. Tahtadjian
Représentant Diplomatique
de la République Arménienne
à Constantinople

Monsieur le Représentant;

J'ai déjà eu l'avantage de vous aviser que, sur les investigations publiques de mon journal, un compatriote a fait don à l'Armée arménienne de 4362 paires de chaussures militaires.

Les chaussures ont été déjà emballées dans 150 sacs, marquées R.A., N°s 1 à 150, que je tiens prêts à être expédiés à l'Armée de la République arménienne et je pense bien que ces chaussures doivent arriver à leur destination avant la fin de l'hiver pour pouvoir bien servir au but proposé par le donateur et son instigateur.

Comme une perte arrivée à cet envoi, si moindre qu'elle soit, formerait un énorme préjudice pour nos vaillants soldats, je vous prie, Monsieur le Représentant, de vouloir bien d'en soigner l'expédition par les moyens dont vous disposez pour le préserver d'une perte quelconque.

Dans cette attente, j'ai l'honneur, Monsieur le Représentant, de Vous présenter l'assurance de ma plus parfaite considération.

Vagharchag Kalpakdjian
Directeur-Propriétaire
du journal “Nor Aik”

Նուիրատուի անունը
Յարութիւն Ճիպրայիլ Իփլիքճեան - կեսարացի առևտրական
Արժէքը 3000 լիրայէն աւելի
Հասցէ - Քամանտո հան N° 29 Ստամպուլ

«ՆՈՐ ԱՅԳ»

Հայկական Պատկերագարդ

Պարբերաթերթ

16, Րէշիտ Էֆ. Խան, Պապը Ալի

Կ. Պոլիս

Կոստանդնուպոլիս,
7 փետրուարի, 1920

Կոստանդնուպոլսում Հայաստանի Հանրապետութեան
Դիւանագիտական առաքելութեան ներկայացուցիչ
պարոն Ֆ. Թահթաճեանին

Պարոն դիւանագիտական ներկայացուցիչ,
Արդէն բախտ եմ ունեցել Ձեզ յայտնելու, որ իմ օրաթերթի հանրային
ուղերձների շնորհիւ՝ մեր հայրենակիցներից մէկը 4362 գոյզ զինուորական
կօշիկ է նուիրել հայոց բանակին:

Կօշիկներն արդէն փաթեթաւորուած են «R.A., N°s 1» գրութեամբ 150
պարկերի մէջ, որոնք կազմ ու պատրաստ սպասում են առաքման եւ, ըստ իս,
իրենց հասցեատիրոջը՝ Հայաստանի Հանրապետութեան բանակ կը հասնեն
մինչեւ ծմռան աւարտն ու կը կարողանան լաւագոյնս ծառայել նուիրատուի եւ
նախաձեռնութեան հեղինակի նախատեսած նպատակին:

Քանի որ այս պարագայում ցանկացած, թէկուզ չնչին կորուստ հսկայական
վնաս կհասցներ մեր քաջարի զինուորներին, խնդրում եմ Ձեզ, պարոն
յանձնակատար, Ձեր խնամքոտ ուշադրութեանն արժանացնել այս առաքումը՝
գործի դնելով Ձեր բոլոր լծակները, որպէսզի բացառէք ցանկացած կորուստ:

Առաքման բարեյաջող ընթացքի ակնկալիքով՝ պատիւ ունեմ Ձեզ յղել, պարոն
յանձնակատար, յարգանացս հաւաստիքը:

Վաղարշակ Գալբաքճեան
«Նոր Այգ» օրաթերթի
տնօրէն եւ սեփականատէր

Նուիրատուի անունը
Յարութիւն Ճիպրայիլ Իփլիքճեան - կեսարացի առեւտրական
Արժէքը 3000 լիրայէն աւելի
Հասցէ - Քամանտո հան N° 29 Ստամպուլ

MAJESTIC HOTEL
ALEXANDRIA (EGYPT)

8 Փետր[վար] [19]20թ. Ադեքսանդրիա

Մեծարգոյ Պարոն Թախտաճեան!

Սիրելի բարեկամ! Մօտ $3\frac{1}{2}$ շաբաթ է Եգիպտոսում ենք: Իզմիրից դուրս գալիս խօսք վերցրի, որ երեք օր չանցած Ձեզ փոխադրեն առ այժմ գոնե այն ինչ որ նոր հանգանակել են: Այստեղ լրագրերից տեղեկացայ, որ արդեն փոխադրել են 4 հազար ու չըգիտեմ որքան անելի լիրա 430 հազար ու չըգիտեմ որքան անելի ռուբլի: Այս գումարը ոչինչ կապ չունե այն 4 հազար լիրայի հետ, որ հանգանակված է եղել ինձնից առաջ դեղերի համար: Սակայն նրանք խոստացել են այդ դ 4 հազար էլ դրամով փոխադրեն Ձեզ հենց որ Մարսելից յետ ստացվե: Յուսով եմ, որ ստացածդ գումարը, համաձայն մեր պայմանադրութեան, բաժանել էի այսպէս՝ $\frac{3}{4}$ -դը յօգուտ զօրքերի, $\frac{1}{4}$ -դը յօգուտ Թիֆլիսի «Հայաստ. Վերաշ. Ընկ.» ուղարկելով վերջինիս Նախագահին Դաւիդ Խան Աւան-Իւզբաշեանին: Յուսով եմ նաեւ, որ իմ պարտքս (48 լիրա) վճարել էք այդ գումարից Թոքթաթեանի եւ մնացեալ 102 լիրան փոխադրել էք կնոջս Թիֆլիս: Ինչպէս գրել եմ այս վերջին 150 լիրան ինձ հասանելիք գումար է, որ ես ծախսել եմ Իզմիրում իմ միջոցներից մնալով Իզմիրում մի ամիս անելի որպէս զի հանգանակութիւնը աջողեցնեմ:

Երեկ Կահիրեում ինձ խնդրեցին հրապարակօրէն մի գումարուելիք հանդիսում խօսիմ հայ զօրքերի մասին: Ես հարկաւ խոստացայ: Կը խօսիմ թէ՛ այնտեղ թէ այստեղ եւ յուսով եմ, որ մի գումար էլ Եգիպտոսից կստանաք: Առ այժմ Կահիրեում տիկիններն ունին 1000 եգիպ[տական] ոսկի, ես խնդրեցի, որ առանց իմ կօնֆերենսին սպասելու առ այժմ այդ գումարը փոխադրեն Ձեզ: Սակայն նրանք սպասում են Ձեր նամակին: Դուք էլ դրամով պահանջեցէք որպէս զի իրարու չը հակասենք: Ապագայում հանգանակուած գումարն էլ կը խնդրեմ, որ Ձեր միջոցով փոխադրեն: Աստեղ էլ ասել եմ, որ $\frac{3}{4}$ -դը «Հայաստ[անի] վեր[աշինութեան] ընկ[երութեան]» օգտին է եւ Դուք էլ այդպէս պիտի բաժանէք:

Խնդրեմ ծրարիս մէջ ամփոփված նամակը մի կերպ ուղարկէք Թիֆլիս կնոջս: Աղջիկս էլ մի նամակ է ուղարկել Ձեզ, որ փոխադրէք Թիֆլիս: Յուսով եմ, որ փոխադրել էք: Շատ ուրախ կը լինիմ Ձեզնից ստանալ գոնե մի մատիկ նամակ: Բոլորովին զրկված եմ Հայաստանի մասին տեղեկութիւններից: Գրեցէք Alexandrie, Hotel Majestic. Ես մինչեւ Մարտի 6-7 այստեղ եմ, յետոյ կուղեւորվեմ Իտալիայի վրայով Ամերիկա:

Միշտ յարգող ու սիրող
Շիրվանեան

Հայ Սպայից Միութիւն
Կեդրոնատեղի:
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻ ՏՈՒՆ
ԻԶՄԻՐ

Union des Officiers Arméniens
Bureaux :
MAISON DU PEUPLE ARMÉNIEN
SMYRNE

Գուրգուրանք Հայ Բանակին վրայ

9 Փետրուար 1920
ԻԶՄԻՐ

Թիւ 94

Մեծայարգ
Տեար Ֆ. Թահթաճեան
Ներկայացուցիչ Հայ Հանրապետութեան
Կ. Պոլիս

Ստացանք Ձեր 21 Յունւար թուակիր նամակը, որով կը թելադրէիք «հայ զինուորին կաղանդէքը» դրամը ղրկել Երեւան: Բայց Ձեր նամակը մեզ հասնելէն առաջ, Երեւանէն վերջերս վերադարձող Պ. Պ. Շահան Նաթալիի եւ Ա. Արզուեանի թելադրանքին վրայ Միութիւնս յարմար դատած էր լոկ զգեստեղէն ուղարկել եւ փութացած էր 1000 զոյգ բուրդէ գուլպայ յղել Ձեր անւան առաջին առթիւ: Նոյնպէս նկատելով որ հասարակութիւնը ոչ թէ միայն դրամով այլ Գապօթի եւ գուլպայի պէս նուիրատուութիւն ալ կը կատարէր, ուստի միութիւնս ստիպուած էր նոյնութեամբ իր նպատակին յատկացնել:

Արդ ներկայիս կուգանք յայտարարելու որ, ըստ Ձեր հրամագներուն [sic] միութիւնս որոշած է յետ այսու եղած դրամական նուէրները եւ մեր քով գտնւած պատրաստ դրամը, Իզմիրի Առաջնորդական Տեղապահ Տ. Յովհան Ճ. Վարդ. Կարապետեանի միջոցաւ ղրկել Ձեր անուան:

Ամենախորին յարգանք
Ի դիմաց Հ. Ս. Միութեան

Ատենադպիր Ա[րթաքի] Աճճեան
Ատենապետ Արշակ Թումաճեան

Առաջնորդարան Հայոց
ՀԱՄԱՐ 713

10 Փետր[վար] 1920
Զմիռնիա

Վսեմաշուք
Պ. Ֆ. Թահտաճեան
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Հայկ. Հանրապետութեան
Կ. Պօլիս

Ստացած ըլլալով Ձեր Յունվար 19 թուակիրը, խնդրարկու Մշեցի Աբգար Բթ
Խուրշուտեանէ գանձեցինք (50) յիսուն Օսմ[անեան] ոսկի (թղթադրամ) եւ
զայն Օսմ[անեան] Դրամատան միջոցաւ 3 օր առաջ ղրկեցինք Ձեր անուան,
որպէս զի Երեւանէն Տիկին Երանուհի Խուրշուտեանը Իզմիր փոխադրուին:

Ուստի կը խնդրենք որ բարեհաճիք գանձելով այդ գումարը, հարկ եղած
հոգածութիւնը շնորհել՝ յիշեալ Տիկինը օր առաջ քաղաքս փոխադրելու համար:

Կանխաւ շնորհակալութեամբ
Աղօթարար
Առաջն[որդական] Տեղապահ Զմիռնիոյ
Յովհան Ծ. Վարդապետ

Կ. Պօլիս,
10 Փետրվար 1920

N° 518

Արտաքին գործերի նախարարութեան

Ադըքսանդրիայի Հայ բժիշկները, դեղագործները եւ ատամնաբոյժները ձեռնարկել են մի հանգանակութեան ի նպաստ Հայ բանակին «Հայ ռազմիկներու դեղօրէից առաքման միութիւն» անունով:

Դիտաւորութիւն ունեն եւ երեկոյթներ եւ ներկայացումներ սարքելու մի եւ նոյն նպատակաւ:

Ներփակ նամակից կը տեսնէք, որ այդ միութիւնը կազմող անձինք ուզում են նախապէս իմանալ մեր կառավարութեան կարծիքը, հաւաքուելիք փողերու գործածութեան մասին եւ այդ նպատակաւ գրել են եւ մեր Վարչապետին, մի նամակ գոր նմանապէս կը կցեմ ներկայիս, խնդրելով, որ այդ դիմումը՝ թէեւ քիչ տարօրինակ, քանի որ տակաւին հանգանակութեան ի՞նչ ըլլալիքը յայտնի չէ, անուշադիր չ'մնայ:

Այդ տեսակ ազգասիրական դիտաւորութիւնք արժանի են քաջալերման:

Հասցէ

Dr. N. Vilidjian

Ատենապետ

Rue 1er Khedive N° 33

Alexandrie

Egypte

Constantinople,
le 11 Février 1920

Au Consulat-Général de la République Arménienne,
à Batoum

Monsieur le Consul-Général,

J'ai l'honneur de Vous transmettre, ci-joint, quatre lettres destinées aux nommés : Avédis Der-Ghazarian, Garo Harighian, Ghougas Hokyoyan et Apkarak Bédikian, qui sont tous les quatre des ouvriers à l'agence de la compagnie russe de navigation à vapeur et de commerce.

Ces Lettres contiennent : 1, Rb. 4000 en billets Kérensky, 2, Ltq.-Papier 50, 3, Ltq. papier 9 et 4, Ltq. Papier 5.

Je Vous prie de faire parvenir ces envois à destination et de m'en accuser réception par première occasion.

Je profite de cette occasion pour Vous rappeler ma lettre du 10 Janvier dernier N 487, par laquelle je Vous remettais trois lettres destinées à des réfugiés Arméniens à Batoum, à la même adresse, et contenant Ltq. 40 et Rb. 2345.

J'avais confié cet envoi à Mr. H. Mélik Sarkissian, commerçant de Bakou. Agréez, Monsieur le Consul-Général, mes salutations les plus distinguées.

P. S. je joins à cet envoi un pli et 50 Lirette italienne destinés à Mlle Arpik Tournian, que je vous prie de faire parvenir à destination.

Կոստանդնուպոլիս,
11 փետրուարի, 1920

Բաթումում Հայաստանի Հանրապետության
գլխավոր հիւպատոսութեանը

Պարո՛ն գլխավոր հիւպատոս,

Պատիւ ունեմ իմ այս նամակին կցելու եւս չորս նամակ՝ հասցեագրուած Աւետիս Տէր-Ղազարեանին, Գառնո Հարիկեանին, Ղուկաս Հոխոյեանին եւ Աբգար Պետիկեանին, որոնք որպէս բանուոր են ձեւակերպուած առեւտրական շոգենաւերի ռուսական ընկերութեան գործակալութիւնում:

Նամակներից առաջինը 4000 ռուբլի է պարունակում՝ Կերենսկի թղթադրամով, երկրորդը՝ 50 թղթադրամ թուրքական լիրայով, երրորդը՝ 9 թղթադրամ թուրքական լիրայով, եւ չորրորդը՝ 5 թղթադրամ դարձեալ թուրքական լիրայով:

Խնդրում եմ Ձեզ այս նամակները յանձնել հասցեատերերին եւ ինձ տեղեկացնել առաքման մասին առաջին իսկ պատեհ առիթի դէպքում:

Առիթից օգտուելով՝ ուզում եմ Ձեզ յիշեցնել յունուարի 10-ի թիւ 487 իմ նամակը, որին ես 40 թուրքական լիրա եւ 2345 ռուբլի պարունակութեամբ երեք նամակ էի կցել՝ հասցեագրուած Բաթումում նոյն հասցեով բնակութիւն հաստատած երեք հայ փախստականի:

Իմ այդ առաքումը ես վստահել էի բաքուեցի առեւտրական պարոն Հ. Մելիք Սարգիսեանին:

Թոյլ տուեք Ձեզ յայտնել, պարո՛ն գլխավոր հիւպատոս, ողջոյններս եւ յարգանացս հաւաստիքը:

Յ. Գ. - Նամակիս կցում եմ մի փաթեթ եւ իտալական 50 լիրա՝ հասցեագրուած օրիորդ Արփիկ Թումանեանին՝ խոնարհաբար խնդրելով յանձնել դրանք հասցեատիրոջը:

Avédikian Frères
FONDÉE EN 1848
SUCCURSALES:
Constantinople, Candie & Chios

Adresse Télégraphique
AVÉDIKIAN
Codes:
A. B. C. 5th Edition & Liebers

Smyrne,
le 13 Փետրվար 1920

Յարգելի Տիար Ֆ. Թահթաճեան
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Հայաստանի Հանրապետութեան
Պօլիս

Մեծայարգ Տէր,
Պատիւն ունեցանք ստանալու 18 Յունվար թուակիր Ձեր պատուական գրութիւնը: Պատրաստ ենք յայտնի 4500 լիրայի գումարը Ձեր յարմար դատած ճամբով եւ Ձեր միջոցով ուղարկել Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ Պրն. Ա. Խատիսեանին:

Եւ սակայն վերջերս Երեւանէ հոս ժամանող եւ Ձեզի ալ ծանօթ Պրն. Արշակ Արզուեան, ինչպէս եւ ուրիշներ, կը յայտարարեն թէ ասկից Երեւան Օսմանեան լիրա եւ կամ փոխարէնը օրուան գնի վրայ թուայի եթէ ղրկուի, ղրկուած գումարին արժէքը շատ պիտի պակսի, եւ հակառակ Ձեր յանձնարարած կերպին՝ Պրն. Արզուեան կը յանձնարարէ որ փոխանակ դրամի կտաւ ղրկենք ասկից, Պաթումի ճամբով Հայաստան փոխադրելու համար, եւ իբր ականատես Հայաստանի վիճակին՝ կը հաստատէ թէ ասկից ղրկուելիք կտաւը կրնայ ղրկուելիք դրամէն շատ աւելի օգտակար ըլլալ թէ զինուորի եւ թէ ժողովրդի պէտքին:

Հետեւաբար ներկայիս կը խնդրենք Ձեզնից որ եթէ այս վերջին գաղափարին Դուք եւս համամիտ գտնուիք, հրահանգ, ինչպէս նաեւ Պաթումի մեր Հիւպատոսի հասցէն հաճիք տալ մեզի, որպէսզի յիշեալ 4500 լիրայով գնուելիք ճերմակ կտաւը (Cabot) ժամ առաջ ասկից Պաթում ուղարկենք եւ յատկացեալ բեռնագիրն ալ Պաթում ղրկուելու համար Ձեզի հասցընենք:

Սպասելով Ձեր բարի լուրերուն:
Մնամք խորին յարգանքօք

Ձերդ
Եղբ[արք] Աւետիքեան

HÔTEL - RESTAURANT
M. TOKATLIAN
PÉRA - CONSTANTINOPLE

Péra, le 19

Պօլիս, 24 Փետրվար 1920

Ստացայ Պ. Ֆ. Թահթաճեանին Բաթումի Ընդհ. Հիւպատոսին Պ. Չմշկեանի
յանձնելու համար մի ծրար, որի մէջ կայ իննսուն երկու լիրա թրքական
թղթադրամ, չորս հազար ռուբլի Քերէնսքի հազարանոց եւ մի իտալական
բանքնօթ յիսուն ֆրանքանոց:



Պօլիս, 25 Փետրվար 1920

N° 538

Մեծայարգ Աւետիքեան եղբարց,
Իզմիր

Ազնիւ Տիարք,
Ձեր 13 Փետրվար թուագրեալ պատուական նամակը ստացայ:

Ինչպէս շատերից կը լսեմ վերջերս, թրքական թղթադրամը Կովկասում աւելի արժէք ունի քան այստեղ:

Եթէ Իզմիրի եղբարց օգնութիւնը փողի վերածելու միտքը ես եղայ թելադրողը, պատճառը այն էր, որ այլապէս հարցը շատ ձգձգւում էր:

Ձեզ յայտնի է անշուշտ, որ ինձանից թելադրեալ՝ Իզմիրի տարագրելոց եւ որբերի յանձնախումբը՝ դեռ սրանից մօտաւորապէս 7-8 ամիս յառաջ որոշել էր 5000 լիրայի արժէքով դեղորայք նուիրել ի նպաստ կովկասաբնակ գաղթականների, որոնք այն ժամանակ, առ ի չգոյէ դեղորէից, շատ մեծ թւով կոտորուում էին բժաւոր թիֆից (typhus exanthématique):

Համաճարակը վերջացաւ, զանազան տեղերից դեղորայք հասան, սակայն կը մնար տնտեսական տագնապը, որ չափազանց ծանր էր, ի մասնաւորի գաղթականների համար, այն գաղթականների, որոնց մնացորդները պիտի վերադառնան հայրենի հողերը եւ աւերակների մէջ պիտի վերաշինեն իրանց քանդուած օջախները:

Ինչ կը վերաբերի Ձեր նուիրած գումարով cabot (պիագ) ասուած կտաւից գնելու հարցին, այդ միտքը շատ գնահատելի է, վասն զի մեզանում մեծ է ճերմակեղէնի տագնապը, եւ cabot-ն յարմարագոյն կտաւն է մեր տառապեալների համար (զօրքն էլ մէկը լինելով):

Եթէ իմացած լինէի թէ այդտեղ cabot կար, ես ինքս կը թելադրէի այդ միտքը: Միայն թէ պէտք է շատ անել:

Cabot-ն կը բարեհաճիք բեռցնել տալ Բաթումի հայկական ծխախոտի հասցէին, իսկ բեռնագիրը ինձ կուղարկէք Ձեր Պ. Խատիսեանի ուղղեալ նամակի հետ միասին: Եթէ Ձեզ նեղութիւն չ'լինէր, պիտի խնդրէի, որ բարի լինէիք ներփակ նամակը Պ. Արզուեանի յանձնել տալ:

VERTANÈS MARDIGUIAN
 COMMISSIONS - REPRÉSENTATIONS
 Stamboul, Alyanak Han
 CONSTANTINOPLE

Constantinople,
 le 27 Փետրուար 1920

Մեծայարգ
 Պրն. Թահթաճեան
 Ներկ[այացուցիչ] Հայկ[ական] Հանրապետութեան
 Աստ

Հայկ[ական] Բանակի Նուիրահաւաք Կեդր[ոնական] Մարմնոյ գանցապահ
 կարգուած էի:

Մինչ ցարդ սոյն Մարմնոյ կողմէ յանձնուած է ինձ:
 (8050) Ուրջ հազար յիսուն լիրա օսմ[անեան] թղթադրամ:
 (17000) Տասն եօթը հազար Տանգոյի Ռուբլի
 (100) Հարիւր Ռոմանօֆ (մէկ կտոր)
 (633) Վեց հարիւր երեսուն երեք Ռոմանօֆ (211 հատ 3 Բուբլինոց)
 (1) Մէկ հատ Անգլ[իական] ոսկի թղթադրամ
 (1) Մէկ հատ Տաճկ. Ոսկի ոսկեդրամ:

Անձնական՝ ստիպողական առեւտրական գործով ստիպուած ըլլալով
 անմիջապէս այսօր ճամբորդել, եւ միւս կողմից բնական է որ Նուիրահաւաք
 պատուարժան մարմինը չի կարող ժամանակ ունենալ անմիջապէս իմ յաջորդը
 նշանակել, որով կը փութամ սոյն վերոյիշեալ փողերը՝ համապատասխան իմ
 ընկալագրերի յանձնել Ձեզ, մինչեւ որ Նուիրահաւաք Կեդր[ոնական] Մարմինը
 նոր Գանցապահ ընտրէ, յետ այնմ դուք կը կարգադրէք պետք եղածը:

Ընդունեցէք, յարգելի Պրն. Թահթաճեան, իմ խորին յարգանքները:

Վ[րթանէս] Մարտիկեան

Avédikian Frères
FONDÉE EN 1848
SUCCURSALES:
Constantinople, Candie & Chios

Adresse Télégraphique
AVÉDIKIAN
Codes:
A. B. C. 5th Edition & Liebers

Smyrne, le 4 Մարտ 1920

Մեծայարգ Տիար Ֆ. Թահթաճեան
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Հայաստանի Հանրապետութեան
Պօլիս

Յարգելի Տէր,
Վերջացող ամսոյ 25-ին թուագրուած Ձեր պատուական գրութիւնը ստանալու
առաւելութիւնն ունեցանք ու ներփակուած նամակն անմիջապէս յանձնեցինք
իր հասցէին:

Նախապէս Կովկաս ղրկուիլ որոշուած դեղերու առաքումը յետաձգել
պէտք տեսնուած էր, նախ՝ որովհետեւ մեր պ. Ա. Ս. Աւետիքեան Պեռլինում
տեղեկացած էր որ բաւականաչափ քանակութեամբ դեղորայք Գերմանիայից
արդէն ճամբայ հանուել էին դեպի Երեւան. ու յետոյ՝ Ձեր իսկ թելադրութեամբ
փոխանակ դեղի՝ դրամ կամ կտաւ ղրկելը յարմարագոյն դատուեցաւ:

Ըստ այսմ եւ համաձայն Ձեր նորագոյն հրահանգի՝ այսօր իսկ գրեցինք Պօլսոյ
մեր մասնաճիւղին, որ Պօլսոյ մէջ տրամադրելի ունեցածնիս 7 հակ քապօթներ՝
առանց մաքսագրելու՝ անմիջապէս Պաթումի համար բեռցնեն ու բեռնագիրը
Ձեզի յանձնեն, ներփակուած նամակով միասին Պ. Խատիսեանի ղրկուելու
համար:

Թէեւ փափաքեցանք այդ հրահանգը հեռագրով տալ մեր մասնաճիւղին,
սակայն հեռագրական յարաբերութիւնները խզուած լինելուն՝ դժբաղդաբար
կարելի չ'եղաւ:

Ղրկուելիք այդ 7 հակերէն զատ՝ մօտ օրէն Պօլիս պիտի հասնին նոյն ապրանքին
3 ուրիշ հակեր ալ, որոնց եւս անմիջապէս Պաթում ղրկուելու մասին պէտք
եղածը այժմէն գրած ենք տեղւոյդ մեր մասնաճիւղին:

Հաճեցէք, Մեծայարգ Տէր, ընդունիլ մեր փոխադարձ յարգանքների հետ մեր
կանխամատոյց շնորհակալութիւնները:

Ձերդ

Եղբ. Աւետիքեան

Constantinople,
le 12 Mars 1920

Au Consulat-Général de la République Arménienne,
à Batoum

Monsieur le Consul-Général,

En vous remettant, ci-joint, une requête d'Athanas Dzadourian, d'Akhalkalak, demeurant à Constantinople concernant une orpheline se trouvant chez le curé arméno-Catholique de Batoum, et la somme de Ltq. 9 (neuf), je vous prie d'y donner la suite qu'elle comporte et de m'en accuser réception

Կոստանդնուպոլիս,
12 մարտի, 1920

Բաթումում Հայաստանի Հանրապետության
գլխավոր հիւպատոսությանը

Պարո՞ն գլխավոր հիւպատոս,

Նամակիս կցում եմ ծագումով Ախալքալաքից, ներկայումս Կոստանդնուպոլսում բնակվող Աթանաս Ծատուրեանի հայցադիմումը Բաթումի հայազգի կաթոլիկ ծխատիրոջ տանն օթեանաձ մի որբ աղջկայ վերաբերեալ, որին 9 (ինը) թուրքական լիրա կազմող գումար է կցուած: Խնդրում եմ հետեւել առաքմանը եւ տեղեկացնել ինձ, երբ այն յանձնուի հասցեատիրոջը:

Կ. Պօլիս,
1920 Մարտ 15


Մեծայարգ
Պ. Թահթաճեան
Ներկայացուցիչ Հայկական Հանրապետութեան
Կ. Պօլիս

Ինչպէս Ձեզ յայտնի է Պօլսոյ մէջ գտնուող Հայ քաղաք[ական]
կուսակցութիւններու եւ զանազան միութիւններու նախաձեռնութեամբ
կազմուած Էր Հայ Բանակի նուիրահաւաք Կեդր[ոնական] Մարմին մը՝ որը մօտ
երկու ամսուան իր գործունէութեան ընթացքին կարողացաւ հաւաքել գումար
մը եւ իրերը որոնցմէ մաս մը ներփակ հաշւեցոյցի համաձայն 7 սնտուկներու
եւ 6 հակերու մէջ զետեղուելով, Ձեր յանձնարարութեան համաձայն Երեւան
պատերազմ[ական] Նախարարութեան ղրկուելու համար յանձնուած է
Մեսաժերի-Մարիթիմ Շոգենաւային Ընկերութեան «Նոր Այգի» տնօրէն Պ. Վ.
Գալփաքճեանի միջոցաւ:

Սոյն սնտուկներու եւ հակերու բեռնագիրը յիշեալ պարոնի միջոցաւ - ձեզ
յանձնուած է:

Յարգանք
Հայ Բանակի նուիրահաւաք Կեդր. Մարմին

Անդամ
Կարապետ Յ. Յավրումեան
Արաքսի Դ. Վարուժան



Գանձապահ
Ե[րուանդ] Յովնանեան

Ատենադպիր
Գ[ալուստ] Էյնաթեան

Ատենապետ
Արմենակ Ա. Է. Խորիկեան

ՀԱՅ ԲԱՆԱԿԻ ՆՈՒՐԱՀԱԲԱՔ

ԿԵԴՐ. ՄԱՐՄԻՆ

Կ. ՊՕԼԻՍ

1920

ՀԱՍՑԷ. - ՊՕԼԻՍ ԱԼԵԱՆԱՔ ԽԱՆ ԹԻԻ 6

Կ. Պօլիս,
22 Մարտ 1920

Մեծայարգ

Պ. Թահթաճեան

Դիւանագիտական ներկայացուցիչ Հայկ. Հանրապետութեան

Կ. Պոլսոյ

Հայ Բանակի նուիրահաւաք Կեդր. Մարմինը տեղւոյս վաճառականներին Տիարք Լեւոն Բանիկեանի, Եգեկիէլ Թոխմախեանի եւ Յովակիմ Աբիկեանի եւ մարմնոյս Ներկայացուցիչ Տիար Երուանդ Յովնանեանի նախաձեռնութեամբ 40 հակ (1000) ամերիկեան C. C. C. մարքայով քապօթ գնած եւ պատրաստ ըլլալով, կը խնդրէ ներկայիս Ձեր Վսեմութենէն որպէս զի բարեհաճէիք կատարել հարկ եղած դիմումը, առանց նաւաւարձի առաքումը կատարուելու: Կը խնդրենք նաեւ, Ձեր Վսեմութեան յանձնարարութեամբ Պ. Գալբագճեանի յանձնուած RA թիւ 201-213 վեց սնտուկներուն եւ 7 հակերուն ստացագիրը մեզ ուղարկել:

Հաճեցէք ընդունիլ այս առթիւ, մեր շնորհակալութիւնները եւ յարգանաց հաւաստիքն:

Ի դիմաց Հայ Բ. Ն. Կ. Մարմնոյ

Ատենադպիր

Գ[ալուստ] Էյնաթեան

Ատենապետ

Արմենակ Ա. Է. Խորիկեան

Յ. Գ. Գնուած 4 հակ քապոթներուն թիւերն են

R A 214 - 253

Նոյն

Կ. Պօլիս,
30 Մարտ 1920

N° 614

Հայ Բանակի Նուիրահաւաք
Կենտր[ոնական] Մարմին
Աստ

Յարգելի Հայրենակիցք,

Ի պատասխան Ձեր 22 Մարտ թուագրեալ պատասխան նամակին, կը փութամ յայտնել որ, ըստ իմ երէկ կատարած հետազօտութեանց, դժուար թէ Ձեզ յաջողուի 40 հարկ քապօքը այստեղից ուղարկել Ամերիկեան նպաստամատոյցի միջոցով: Եթէ այդ բանը յաջողուի իսկ, պատճառ կայ ենթադրելու թէ՝ ապրանքը կարող է երկար ժամանակ ճանապարհին մնալ: Ուստի ես պիտի յանձնարարեի, որ առանց ժամանակ կորսնցնելու քապօքը բեռնել տայիք որ եւ է ընկերութեան շոգենաւի վրայ Բաթումի Հայ հիւպատոսի անուան եւ բեռնագիրը անյապաղ ինձ հասցնէիք:

Այս առթիւ կը յայտնեմ եւ այն, որ Ձեր 15 Մարտ թիւ նամակի մէջ յիշատակուած ապրանքը բեռնուած էր «Մեսաժըրի Մարիթիմի» Նորման շոգենաւով եւ բեռնագիրը ես այն ժամանակ ուղարկած էի Բաթումի Ընդհ. Հիւպատոսին:

Այժմ այդ ապրանքի հաշու[ե]ցուցակը, որ կցուած էր վերոյիշեալ 15 Մարտ թիւ նամակի, ուղարկում եմ Երեւան Արտաքին Գործերի Մինիստրութեան:

Constantinople, le 2 Avril 1920

République Arménienne
Mission diplomatique

N 618

A la Direction générale du "Near East Relief Committee".
En ville

Monsieur le Directeur Général,

Faisant suite à notre conversation d'avant-hier, j'ai l'honneur de Vous informer que, d'ordre de Votre prédécesseur, le Major D. Arnold, les six caisses de vêtements chauds destinés aux réfugiés Arméniens à Erivan, avaient été remis au surveillant de Vos dépôts à Galata, contre 3 reçus datés des 11 Décembre (4 caisses), 27 Décembre 1919 (1 caisse) et 6 Janvier 1920 (1 caisse). Ces reçus se trouvent chez moi.

Ces vêtements en flanelle étaient offerts en faveur des réfugiés par la maison Pearce de Manchester, appartenant à Mr. Kalpakdjian, qui se trouvait alors ici. La saison d'hiver étant alors assez avancée, j'avais prié Mr. Arnold de faire expédier ces six caisses au plus tôt, directement à Erivan, et Votre prédécesseur avait bien voulu souscrire à ma demande.

J'avais en conséquence avisé mon Gouvernement de l'aimable concours prêté en cette circonstance à nos réfugiés par le "Near East Relief Committee". Les choses en étaient donc là et je croyais que les vêtements étaient, depuis très longtemps, arrivés à Erivan et distribués aux réfugiés, lorsque j'ai eu la désagréable surprise d'apprendre avant-hier, que les six caisses se trouvaient encore ici (3 caisses dans Vos dépôts, 2 caisses sur le quai de Galata et la sixième-on ne sait plus où).

La personne qui m'a donné cette mauvaise nouvelle, ajouta que, je ferais bien de m'occuper moi-même de cette expédition.

Etant donné qu'au mois de Décembre 1919, le Major Arnold m'avait formellement promis de faire embarquer ces six caisses sur le premier bateau emportant des marchandises américaines au Caucase, et que j'avais écrit en conséquence à Erivan, je viens Vous prier de vouloir bien me faire savoir si je peux compter sur la prompte expédition des vêtements en question ; représentant une valeur de plus de 3000 Livres Sterlings?

Dans l'attente de Votre aimable réponse, je vous prie d'agréer, Monsieur le Directeur-Général, l'assurance de ma considération la plus distinguée.

Le Représentant de la République Arménienne.

P.S. L'Assistance Arménienne avait remis, le 11 novembre 1919, aux dépôts Américains de Galata, pour être expédiées à Erivan, 23 caisses dont les 19 contenant des vêtements usagés et les 4 -des médicaments offerts par les Arméniens de Bulgarie et les Pharmaciens Arméniens de Constantinople, en faveur des réfugiés d'Erivan.

N'ayant de mon Gouvernement aucune nouvelle y ne active, je vous serais bien reconnaissant si Vous aviez la bonté de Vous renseigner et de me dire, si ces 23 caisses sont expédiées et, dans l'affirmative, quand ?

Կոստանդնուպոլիս,
2 ապրիլի, 1920

Հայաստանի Հանրապետության
Դիւանագիտական առաքելութիւն

թիւ **618**

«Near East Relief Committee»-ի գլխավոր տնօրինութեանը
Քաղաքացիական ծառայութիւն

Պարո՞ն գլխավոր տնօրէն,

Ի պատասխան երկու օր առաջ մեր ունեցած գրոյցի՝ պատիւ ունեմ Ձեզ տեղեկացնելու, որ Ձեզ նախորդած տնօրէնի՝ մայոր Դ. Առնոլդի կարգադրութեամբ՝ Երեւանում օթեւանած հայ փախստականների համար նախատեսուած տաք հագուստի եօթ արկղերը յանձնուել են Գալաթայի Ձեր պահեստների հսկիչին, ինչի դիմաց մեզ երեք ստացական է տրամադրուել. առաջինը՝ ձեւակերպուած 1919թ. դեկտեմբերի 11-ի ամսաթուով (չորս արկղի դիմաց), երկրորդը՝ 1919թ. դեկտեմբերի 27-ի ամսաթուով (մէկ արկղի դիմաց) եւ վերջապէս երրորդը՝ 1920թ. յունուարի 6-ի ամսաթուով (մէկ արկղի դիմաց): Այդ ստացականներն ինձ մօտ են:

Ֆլանելից հագուստները հայ գաղթականներին տրամադրել է Մանչեստրի «Pearce» ընկերութիւնը, որը պատկանում է պարոն Գալփաքչեանին, ով այդ ժամանակ այստեղ էր գտնուում:

Քանի որ ձմեռը վաղուց արդեն սկսուել էր, ես պարոն Առնոլդին խնդրել էի վերոյիշեալ արկղերը հնարաւորինս շուտ առաքել ուղիղ Երեւան, եւ նախորդ տնօրէնը բարեհաճութեամբ ընդառաջել էր իմ այդ խնդրանքին:

Հետեւաբար ես իմ կառավարութեանը տեղեկացրել էի այդ հանգամանքներում մեր փախստականներին «Near East Relief Committee»-ի կողմից ցուցաբերուած աջակցութեան մասին: Ահա թէ գործը որ փուլում էր, եւ ես կարծում էի, թէ հազուստները վաղուց ի վեր հասել են Երեւան եւ բաժանուել փախստականներին, երբ ընդամենը սրանից երկու օր առաջ ինձ յոյժ անախորժ անակնկալ մատուցեցին՝ տեղեկացնելով, որ այդ վեց արկղերը դեռեւս այստեղ են (երեքը՝ Ձեր պահեստներում, երկուսը՝ Գալաթայի ափին, վեցերորդն էլ յայտնի չէ՝ որտեղ):

Այն անձնաւորութիւնը, ով ինձ յայտնեց այդ անախորժ լուրը, յաւելեց նաեւ, որ լաւ կը լինէր, եթէ անձամբ ես զբաղուէի այդ առաքմամբ:

Քանի որ 1919 թուականի դեկտեմբերին մայոր Առնոլդն ինձ պաշտօնապէս խոստացել էր այդ վեց արկղերը բարձել ամերիկեան ապրանքը Կովկաս փոխադրող առաջին իսկ բեռնանաւի վրայ, եւ հետեւաբար՝ ես այդ մասին գրել էի Երեւանի մեր կառավարութեանը, խնդրում եմ ինձ տեղեկացնել՝ կարո՞ղ եմ արդեօք յոյս ունենալ, որ խնդրոյ առարկայ հազուստները՝ աւելի քան 3000 լիրա ստերլինգ արժողութեամբ, անյապաղ կառաքուեն հասցեատիրոջը:

Ձեր բարեհաճ պատասխանի ակնկալիքով խնդրում եմ Ձեզ, պարոն գլխաւոր տնօրէն, ընդունել յարգանացս հաւաստիքը:

Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ

Յ. Գ. -Հայ օգնութեան ֆոնդը 1919 թուականի նոյեմբերի 11-ին Երեւան առաքելու նպատակով Գալաթայի ամերիկեան պահեստներին 23 արկղ էր յանձնել, որոնցից տասնիննում օգտագործուած հազուստ էր, չորսում՝ դեղորայք, որ բուլղարահայութեան եւ Կոնստանդնուպոլսի «հայ դեղագործների» միութեան նուիրատուութիւնն էր ի նպաստ Երեւանի փախստականների:

Այդ առնչութեամբ ոչ մի լուր չունենալով իմ կառավարութեան կողմից՝ ես Ձեզ երախտապարտ կը լինէի, եթէ Դուք բարեհաճութիւն ունենայիք տեղեկանալու եւ ինձ յայտնելու, թէ արդեօք այդ 23 արկղերն առաքուե՞լ են, եւ եթէ այո, ապա՝ երբ:

Constantinople,
le 6 Avril 1920

République Arménienne
Mission diplomatique

N 625

Monsieur le Ministre-Président,
Notre compatriote, Mr. H. H. Hagopian, Docteur en droit, avocat établi de longue date à Constantinople, nous a fait une agréable surprise : il a fait don de sa riche bibliothèque, que j'ai visitée ce matin, à la République Arménienne.

Ci-inclus, la lettre que Maître Hagopian vient de m'écrire à ce sujet. Il nous fait don aussi de l'armoire en noyer d'un joli travail, contenant sa bibliothèque.

Il nous donne faculté d'enlever quand nous voulons la bibliothèque à condition de prendre à notre charge les frais d'emballage et d'expédition.

Etant donnée la valeur des livres, cette donation de Mr. Hagopian est un g[r]and service rendu à la patrie.

Je prie Votre Excellence de me fournir au plus tôt l'occasion de lui prouver que notre Gouvernement est très sensible vis-à-vis de pareils gestes patriotiques.

Veuillez me croire, Excellence,
Votre très dévoué,

A Son excellence,
Monsieur A. Khatissian,
Président du Conseil et Ministre des
Affaires étrangères, etc. etc. etc.

Կոստանդնուպոլիս,
6 ապրիլի, 1920

Հայաստանի Հանրապետության
Դիւանագիտական առաքելութեանը

Թիւ **625**

Պարո՛ն Նախարար եւ Նախագահ,
Մեր հայրենակից իրաւագիտութեան դոկտոր պարոն Հ. Հ. Յակոբեանը, որը Կոստանդնուպոլսում վաղուց հաստատուած փաստաբան է, մի հաճելի անակնկալ է մատուցել մեզ. Նա Հայաստանի Հանրապետութեանն է նուիրաբերում իր հարուստ գրադարանը, որ ես բախտ ունեցայ տեսնելու այս առաւօտ:

Այս ծրարում կգտնե՞ք Նաեւ այդ առիթով մետր Յակոբեանի՝ ինձ գրած Նամակը: Նա մեզ է նուիրում Նաեւ կաղնեփայտից այն գրապահարանը որում ամփոփուած է գրադարանը. սքանչելի ձեռքի աշխատանք:

Պարոն Յակոբեանը մեզ ցանկացած պահի գրադարանը տեղափոխելու ազատութիւն է տալիս՝ փաթեթաւորման եւ առաքման ծախսերը հոգալու պայմանով: Ելնելով վերոյիշեալ գրքերի արժէքից՝ պարոն Յակոբեանի նուիրատուութիւնը հայրենիքին մատուցուած մեծ ծառայութիւն է:

Ձերդ Գերազանցութեանը խնդրում եմ հնարաւորինս շուտ ինձ առիթ տալ ապացուցելու մեր հայրենակցին, որ մեր կառավարութիւնը շատ բարձր է գնահատում հայրենասիրութեան նմանօրինակ դրսեւորումները:

Խնդրում եմ հաւատալ, Ձե՛րդ Գերազանցութիւն, իմ անմնացորդ նուիրմանը:

Խորհրդի Նախագահ եւ Արտաքին գործոց Նախարար,
Եւ այլն, եւ այլն, եւ այլն
Նորին Գերազանցութիւն
պարոն Ա. Խատիսեանին

AVÉDIKIAN FRÈRES

CONSTANTINOPLÉ

Téléphone : Stamboul 846

Constantinople,

le 6/4/1920

[նախորդ էջը կը պասկսի] ապրանք հասցնել, քանի որ հոս մեր կողմանէ վճարուելիք մաքսատուրքը ստիպողաբար ապրանքին քանակութիւնը պիտի պակսեցունէ:

Խնդրելով որ ներողամիտ ըլլաք Ձեզի տրուած այս ծանօթոյթին համար, կը մատուցանենք մեր խորին յարգանքներու հաւաստիքը:

Եղբ. Աւետիքեան

Constantinople,
le 8 Avril 1920

République Arménienne
Mission diplomatique

N 622

Monsieur le Ministre-Président,
J'ai l'honneur de Vous transmettre, ci-joint, deux lettres à Vous destinées de Mr. Avédikian de Smyrne.

Les dix balles de cabot (biaz américain) dont il est question dans ces deux lettres, sont déjà arrivées à Constantinople et l'on est en train de les embarquer à destination de Batoum.

J'enverrai le connaissance à notre Consul en cette ville, Mr. Tchimischkian, qui s'occupera de l'expédition du cabot à Erivan.

Je dois ajouter que la somme souscrite, l'année passée, par suite de ma suggestion, par la maison Avédikian frères de Smyrne (5000 Livres Turques) était destinée à l'achat de médicaments pour les réfugiés. L'affaire avait alors subi des retards à cause de l'absence du frère aîné des Avédikian, qui se trouvait à Berlin. Dans ma correspondance ultérieure avec Mr. Avédikian, je lui avais recommandé d'acheter avec le montant de la donation du cabot ; c'est ce qu'il a fait.

Je me réserve le plaisir d'avoir bientôt à remettre Votre réponse à notre cher compatriote et noble donateur.

Veuillez me croire, Excellence,
Votre très dévoué,

A Son excellence,
Monsieur A. Khatissian,
Président du Conseil et Ministre des
Affaires étrangères, etc. etc. etc.

Կոստանդնուպոլիս,
8 ապրիլի, 1920

Հայաստանի Հանրապետության
Դիւանագիտական առաքելութիւն

Թիւ **622**

Պարո՞ն նախարար եւ նախագահ,
Պատիւ ունեմ նամակիս կցելու եւս երկու նամակ, որոնք Ձեզ է հասցեագրել
պարոն Աւետիքեանը՝ Չմիւռնիայից:

Նամակներում յիշատակուող տասը փաթեթներն (ամերիկեան բիազ) արդէն
տեղ են հասել Կոստանդնուպոլիս, եւ այս պահին դրանք բարձում են Բաթում
մեկնող նաւ:

Ուղեբեռնագիրը կուղարկեմ այդ քաղաքում մեր հիւպատոս պարոն
Չմշկեանին, որն էլ կգբաղուի ուղեբեռի առաքմամբ Երեւան:

Հարկ է աւելացնել, որ դեռեւս անցեալ տարի իմ յորդորով Չմիւռնիայի
Աւետիքեան եղբայրների ընկերութեան տրամադրած գումարը (5000
թուրքական լիրա) պետք է ծառայէր փախստականների համար դեղորայք
գնելուն: Այս գործն այդ ժամանակ ձգձգուեց Աւետիքեան աւագ եղբոր
բացակայութեան պատճառով, որը գտնուում էր Բեռլինում:

Իմ նախորդ նամակում ես վերջինիս խնդրել էի նուիրատուութեան գումարը
վերածել ապրանքի. ինչն էլ նա շտապել է անել:

Մեծ ուրախութեամբ է, որ շուտով Ձեր պատասխանը կհաղորդեմ մեր
թանկագին հայրենակցին եւ ազնիւ նուիրատուին:

Խնդրում եմ հաւատալ, Ձե՛րդ Գերազանցութիւն, իմ անսահման նուիրմանը:

Խորհրդի նախագահ եւ Արտաքին գործոց նախարար եւ այլն, եւ այլն, այլն
Նորին Գերազանցութիւն
պարոն Ա. Խատիսեանին

Art. 12.— LES RÈGLEMENTS DES AVARIES PARTICULIÈRES matérielles sur marchandises chargées autrement qu'en vrac sont établis par séries de francs 2000. — d'après l'ordre des numéros d'origine. A défaut de numéros d'origine, la franchise est prélevée sur l'ensemble de la marchandise. — Si, cependant, le nombre des sacs, barriques, ou colis avariés, est inférieur au quart du nombre assuré et qu'on ne puisse établir régulièrement les séries par ordre de numéros d'origine, la franchise prélevée sur l'ensemble, est réduite de moitié.

Les marchandises chargées en vrac ne sont point divisées en séries.
Pour toutes marchandises donnant lieu à réclamation pour cause d'avaries particulières, l'assureur peut exiger la vente aux enchères publiques de la partie avariée pour en déterminer la valeur sans par cela avoir fait acte de propriété. — La quotité des avaries particulières est déterminée par la comparaison des valeurs à l'entrepôt, si la vente des marchandises avariées a eu lieu à l'entrepôt, et par la comparaison des valeurs à l'acquitté si la vente a eu lieu à l'acquitté.

Les séries ne sont admises que pour le règlement en avarie: il faut que la perte ou la détérioration s'élève aux trois quarts sur l'ensemble des marchandises, pour qu'il y ait lieu au délaissement, lequel ne peut être que total.

Art. 13. — La somme souscrite par les assureurs est la limite de leurs engagements : ils ne peuvent jamais être tenus de payer au delà.

Art. 14. — Les Pertes et Avaries à la charge des assureurs sont payées trente jours après la remise complète des pièces justificatives, au porteur de ces pièces et de la présente police, sans qu'il soit besoin de procuration.

Art. 16. — NONOBTANT TOUTES VALEURS AGRÉÉES, les assureurs peuvent, lors d'une réclamation de pertes ou d'avaries, demander la justification des valeurs réelles et réduire, en cas d'exagération, la somme assurée au prix coûtant, augmenté de 10%. à moins qu'ils n'aient expressément agréé une surévaluation supérieure d'une quotité déterminée.

Le prix coûtant sera établi par les factures d'achat et, à défaut, par les prix courants aux temps et lieux du chargement, le tout augmenté de tous les frais jusqu'à bord, des avances de fret non restituables et de la prime d'assurance, mais sans intérêts.

Art. 16. — SI LA PRIME DU RISQUE donnant lieu à réclamation n'est pas payée, elle sera compensée avec l'indemnité due, même dans le cas où la police aurait été transmise à un tiers porteur.

Art. 17. — En cas de faillite ou de suspension notoire de paiements de l'assuré, lorsque le risque n'est pas encore fini, ni la prime payée, l'assureur peut demander caution, par lettre et à défaut de caution, dans les 48 heures après la réception de la lettre, la police est annulée sans autre avis ni formalité.

L'assuré a les mêmes droits en cas de faillite ou de suspension notoire de paiements de l'assureur.

Art. 18. Les Assurés et les Assureurs sont toujours présumés avoir reçu connaissance immédiate des nouvelles concernant les choses assurées, qui sont parvenues au lieu où ils se trouvent respectivement. En conséquence toute assurance faite après la perte ou l'arrivée des choses assurées est nulle s'il est établi que la nouvelle de la perte ou de l'arrivée pouvait être parvenue, soit au lieu où se trouvait l'assuré, avant l'ordre d'assurance donné, soit sur la place du domicile de l'assureur, avant la signature de la police, étant abrogées toutes les prescriptions contraires de la loi.

Si l'assurance a été faite par un tiers pour le compte de l'assuré, le tiers sera mis en parité de l'assuré pour tout ce qui a été stipulé dans cet article.

Art. 19. TOUS DROITS RÉCIPROQUEMENT RÉSERVÉS, l'assuré doit et l'assureur peut, dans les cas de sinistre, veiller ou procéder au sauvetage des objets assurés, prendre ou requérir toutes mesures conservatoires, sans qu'on puisse lui opposer d'avoir fait acte de propriété.

L'assureur peut, notamment en cas de perte ou d'innavigabilité du navire, pourvoir lui-même à la réexpédition des marchandises à leur destination. L'assuré doit lui fournir, s'il en est requis, tous documents utiles en son pouvoir, pour l'aider à l'exécution des mesures conservatoires.

L'assuré est responsable de sa négligence à prévenir les assureurs ou leurs agents, ou à prendre lui-même les mesures de conservation, ainsi que des obstacles qu'il apporterait à l'action des assureurs. Les avaries particulières ne seront reconnues que si elles ont été constatées contradictoirement avec l'agent local des assureurs.

Art. 30. — Les taxes, timbres et coût de police sont à la charge de l'assuré. Dans tous les cas où le calcul de la prime se fait par périodes mensuelles ou autres, toute période commencée est comptée comme finie.

Art. 21. — De convention expresse, toutes contestations auxquelles la présente

police pourra donner lieu seront portées devant les Tribunaux compétents du lieu où la présente police a été signée et décidées sur la base du Code de Commerce français.

Art. 22. — PRESCRIPTION. Toute réclamation qui après 6 mois du jour de la constatation de l'avarie ne serait pas reconnue par les assureurs est considérée comme étant prescrite, à moins que les assurés, avant l'expiration de ce délai, n'aient assigné les assureurs en paiement devant les tribunaux compétents.

N° 1 2 2 5

Agence Constantinople Somme assurée Ltq. 22.000

La Compagnie d'assurances générales l'HELVETIA à St-Gall assure aux conditions générales qui précèdent et à celles particulières qui suivent à Monsieur YERVANT HOVNANIAN, Constantinople, la somme VINGT DEUX MILLE Livres Turques sur le navire à Vapeur nommé s/s Semiramis pour le voyage de Constantinople à Batoum à la prime de trois quart pour cent sur:

R, A. N° 214/234 - 21 balles; R, A. N° 235/274 - 40 balles de cabot, R. A, N° 275/279 5 balles lingerie, R. A. N° 281/283 - 3 balles d'habits et R. A. N° 280 - 1 caisse cigarettes à la condition franc d'avarie particulière, les risques de vol exclus. Le risque de guerre est compris selon clause ci-annexée.

Ltq. 22.000	à ¾% Ltq. 165
Police Taxe 6%	Ltq. 9.90
Timbre et port	Ltq. 1.60
Total	Ltq. 176.50

Constantinople le 17 Avril 1920.
Compagnie d'Assurances Générales
L'HELVETIA
AGENCE GÉNÉRALE DE CONSTANTINOPLE
P. P. BURKHARD GANTENBEIN

En cas d'avarie s'adresser à Mrs. F. Burckhardt & C°, Constantinople
.....pour La constatation des avaries.
Aucune avarie ne sera reconnue si le certificat n'est pas signé par le susdit agent.

Թիւ 1225

Կոստանդնուպոլսի գործակալութիւն

Ապահովագրութեան դիմաց վճարուած գումար՝ 22 000 թուրքական լիրա

Սենտ-գալլում «L'HELVETIA» գլխաւոր ապահովագրական ընկերութիւնը վերը նշուած պայմաններով ապահովագրում է պարոն Երուանդ Յովնանեանին Կոստանդնուպոլսում

22 հազար թուրքական լիրա գումարով

«Semiramis» (Շամիրամ) շոգենաւով Կոստանդնուպոլսից Բաթում կատարուելիք ճանապարհորդութեան համար երեք քառորդ տոկոսով

R, A. թիւ 214/234 - 21 փաթեթ; R, A. թիւ 235/274 - 40 փաթեթ ծովային ուղեբեռ, R, A. թիւ 275/279 5 փաթեթ սպիտակեղէն, R, A. թիւ 281/283 - 3 փաթեթ հագուստ եւ R, A. թիւ 280 - 1 տուփ ծխախոտ, որոնց դիմաց փոխհատուցումը հնարաւոր է միայն եւ միայն յատուկ վթարի դեպքում, որը չի ներառում գողութեան ռիսկերը: Պատերազմական ռիսկերը նոյնպէս ներառուած են՝ պայմանագրի կէտի համաձայն, որը կցւում է սոյն փաստաթղթին.

22.000 թուրքական լիրա	¾% տոկոսով՝ 165 թուրքական լիրա
Ոստիկանական հարկ 6%	9.90 թուրքական լիրա
Դրոշմանիշ եւ նաւահանգիստ	1.60 թուրքական լիրա
Ընդամենը	176.50 թուրքական լիրա

Կոստանդնուպոլիս, 17 ապրիլի, 1920

Գլխաւոր ապահովագրական ընկերութիւն

«L'HELVETIA»

(Լ՛Հելվեթիա)

Կոստանդնուպոլսի գլխաւոր գործակալութիւն

Պ. Պ. Բուրքարդ Քանտենբէյն

Վթարի դեպքում դիմել \$. Բուրքարդ եւ ընկ. ընկերութեանը Կոստանդնուպոլսում..... վթարի արձանագրութեան համար:

Ոչ մի վթար չի ճանաչուի որպէս այդպիսին, եթէ սոյն հաւաստագիրը վերոյիշեալ գործակալի ստորագրութիւնը չի կրում:

Կ. Պօլիս, 18 Ապրիլի 1920

№ 642

Արտաքին գործոց Մինիստրություն,

Անցեալ Նոյեմբերի 19 թուակիր եւ 4947 համարաւ գրութեամբ Նախարարութիւնը ինձ յայտնած էր, որ Պ. Վրթանէս Մարտիկեանը ինձ խորհրդական էր նշանակուած:

Ինձ յայտնի էր, որ Պ. Վրթանէս Մարտիկեանը դիւանագիտական մի Միսսիայի խորհրդական լինելու նախապատրաստուած մի անձնաւորութիւն չ'էր: Նա պատերազմի ժամանակ այստեղ մի գերմանացի առեւտրական տան գործակատարն էր, իսկ զինադադարից յետոյ, երբ իւր տունը ստիպուած էր եղել այստեղից փախչելու, Պ. Մարտիկեանը շարունակում էր գործել իւր հաշուէն, լինելով միանգամայն «Ճակատամարտի», որ ճանչցուած է այստեղ իբրեւ օրկան Հ. Դ. Կ.¹, Արտօնատերը:

Վերջին հանգամանքը, զոր անշուշտ այդտեղ ի նկատի [չէ] առնուած², զիս մտածեցնել տուեց:

Այն ժամանակ Պ. Շաւարշ Միսաքեանի հետ այդ նշանակման մասին խօսելով, նրանից իմացել էի, որ Պ. Մարտիկեանը նշանակուած էր իբրեւ խորհրդական լոկ այն համոզմամբ, որ նա կարող էր իւր օգտակար հանդիսանալ առեւտրական տեսակետից: Այդ բացատրութիւնը չէր փարատած իմ վերոյիշեալ ակնածութիւնքը, նա մանաւանդ որ եւ երբեք Պ. Մարտիկեանից որ եւ է առեւտրական թելադրութիւն եւ ցուցմունք չէի լսած: Նա մինչեւ անգամ երբեք իմ մօտ չէր եղած:

Այդ ամենի շարքը ես շարունակում էի մտածել, երբ օրին մէկը՝ սրանից երկու ամիս յառաջ, Մարտիկեանը՝ Կովկաս մեկնելու առթիւ՝ իմ մօտ եկաւ եւ խօսակցութիւնից հասկացայ, որ այդ նշանակումը իրա վրայ իսկ մի թիւրիմացութեան տպաւորութիւն է գործել: Կովկասից նա վերջերս միայն վերադարձել է:

Ճակատամարտի ներփակ կտրոնը ըստ բաւականին կապացուցանէ որ անհիմն չէին իմ ակնածութիւնքը, նա մանաւանդ թէ Պ. Մարտիկեանը գործնականապէս, որ եւ է օգտակարութիւն չէր ունենար ինձ համար Նոյն իսկ իբրեւ առեւտրական մարդ, վասն զի նա չափազանց զբաղեալ է իւր գործերով: Կը մնայ ինձ ասել, որ իրերի ներկայ դրութեան մէջ, մինչեւ միացեալ Հայաստանի կազմուիլը՝ Պօլսոյ համար խորհրդականի եւ կամ այլոց կարիք չ'կայ:

¹ Խօսքը Դաշնակցութիւն կուսակցութեան մասին է:

² Բնագրի մէջ սկիզբը գրած է «աչքի առջեւ չէ», որմէ յետոյ ջնջուած է եւ գրուած է «ի նկատի», հաշուի առնելով մտքի ամբողջականութիւնը կը կարծենք որ պետք է ըլլայ «ի նկատի [չէ] առնուած»:

Կ. Պօլիս
21 Ապրիլի, 1920

N° 647

Հ. Հ. Ընդհ. Հիւպատոսարանի
Բաթում

Ներփակում եմ ներկայ Ապրիլի 19-ին («Լոյտ Թրի[ե]սթիս» ընկերութեան “Sémiramis” անուն շոգեւանով Երեւանի համար en transit Բաթում ուղարկուած 72 հակ cabot (պիագ ամերիկեան) բեռնագիրը, յատկապէս խնդրելով որ այդ ապրանքը անյապաղ ուղարկէք կառավարութեան, Արտաքին գործերի Մինիսթրութեան հասցէին:

Հայ Բանակի նուիրահաւաք Կեդր. Մարմնոյ այս առթիւ իւր գրած 19 Ապրիլ թիւ եւ 41 համար նամակից երեւում է, որ այդ 72 կտորից 24 համար մի սնտուկը կը պատկանի Վանեցի Պ. Արշակ Սմարեանի, որ զայն այդտեղ Ձեզանից պիտի ստանայ:

Այդ մասին վերոյիշեալ մարմինը նշանակել է մատիտով բեռնագրի ետեւը:

Ամբողջ ապրանքը բեռցուած է այստեղ Ազգային խնամատարութեան միջնորդութեամբ, որպէս զի խնայողութիւն լինի նաւողչէքի վրայ:

Ազգ[ային] խնամատարութեան տնօրէնը endossement արել է բեռնագրի ետեւը:

Այս առաքման մասին ես այսօր ելոյթ պիտի գրեմ Արտ[աքին] գործ[երի] Մինիստրութեան:

Անցեալները Ձեր միջոցով ուղարկուած կօշիկների եւ սորա մասին Ձեզանից տակաւին ոչ մի տեղեկութիւն չեմ ստացած:

3. Գ. Պիտի խնդրէի որ այս ապրանքի անվնաս հասնելը ինձ իմաց անէիք: Ապրանքը 22000 Օսմ[անեան] լիրա արժէքով ապահովագրուած է: Police-ը այստեղ իմ մօտ եմ պահու դրած:

Constantinople,
le 27 Avril 1920

République Arménienne
Mission diplomatique

N 654

Urgente

Monsieur le Président,

Dans les premiers jours de ce mois, le s/s "Romeo" de la Compagnie "Ellerman & Bucknall Steamship Co. Led" de New-York, a débarqué à Kourou-Tchechmé, dans les dépôts de ladite Compagnie, sept balles de cabot, destiné aux réfugiés Arméniens d'Erivan. Ainsi que la lettre ci-jointe en fait foi, l'expéditeur avait oublié de déclarer à New York que ces sept balles devaient transiter par Constantinople, pour être réexpédiés à Erivan. Par suite de cet oubli regrettable, le cabot en question est passible d'un droit d'entrée.

Comme il s'agit dans l'occurrence d'un don patriotique fait par Mr. Avédikian en faveur des réfugiés Arméniens d'Erivan, je me permets de faire recours à Votre amabilité habituelle, pour Vous prier de vouloir bien faire intervenir la Haute protection du Haut Commissariat de France, en vue de pouvoir charger ces sept balles de cabot, avec réduction de fret, sur le premier bateau partant pour Batoum, sans payer de droit d'entré.

Dans l'espoir que Vous, et par Votre intermédiaire, le Haut Commissariat de France, voudrez bien faire bon accueil à ma requête, je Vous prie d'agréer, Monsieur le Président, avec mes remerciements anticipés, l'assurance de ma considération la plus distinguée.

Au très Honorable,
Aram Bey Keutchoghlian, Président du
Comité franco-Arménien, etc. etc.

Կոստանդնուպոլիս,
27 ապրիլի, 1920

Հայաստանի Հանրապետության
Դիւանագիտական առաքելութիւն

N 654

Հրատապ

Մեծարգոյ պարոն Նախագահ,
Ընթացիկ ամսուայ սկզբում Նիւեորքեան “Ellerman & Bucknall Steamship Co. Ltd” ընկերութեան «Romeo» նաւը Քուրու-Չեշմէ հասցրեց Երեւանի հայ փախստականների համար Նախատեսուած եօթ փաթեթ՝ յանձնելով դրանք վերոյիշեալ ընկերութեան պահեստ: Ինչպէս կից նամակն է վկայում, առաքող կողմը Նիւ-Եորքում մոռացել էր յայտնել, որ եօթ փաթեթները պէտք է անցնէին Կոստանդնուպոլսի տարանցիկ գօտով՝ Երեւան առաքուելու համար: Ցաւալի այդ մոռացման հետեւանքով խնդրոյ առարկայ ուղեբեռի համար հարկ է մուտքի սակագին վճարել:

Քանի որ այս դէպքում խօսքը պարոն Աւետիքեանի հայրենասիրական նուիրատուութեան մասին է յօգուտ Երեւանի հայ փախստականների, ես ինձ թոյլ եմ տալիս դիմել Ձեզ եւ ապաւինելով Ձեր մշտական բարեացակամութեանը՝ խնդրում եմ հայցել Ֆրանսիայի դիւանագիտական ներկայացուցչութեան աջակցութիւնը՝ Բաթում մեկնող առաջին իսկ նաւով վերոյիշեալ եօթ փաթեթները զեղչուած գնով տեղափոխելու համար՝ առանց մուտքի սակագին վճարելու:

Մեծարգոյ պարոն Նախագահ, յուսալով, որ դիմումս կարժանանայ Ձեր եւ Ձեր միջոցով՝ Ֆրանսիայի բարձրագոյն դիւանագիտական ներկայացուցչութեան բարեհաճ ընդունելութեանը՝ շնորհակալանքիս հետ մէկտեղ ուզում եմ յայտնել Ձեզ յարգանացս հաւաստիքը:

Ֆրանսիայկական յանձնախմբի մեծարգոյ Նախագահ,
Եւ այլն, եւ այլն
Արամ Բէյ Զեոչօղլեանին

M. GUMUCHDJIAN
SHIPOWNER
TELEGRAMS M /
"GUMUCHDJIAN CONS/PLE"

CONSTANTINOPLE, 3 / 5 /20
ALI HAN, GALATA

Monsieur Tahtadjian
Représentant de la République Arménienne de Caucase
En Ville.

Monsieur,
J'ai l'honneur de porter à votre connaissance qu'il se trouve actuellement à bord de mon Bateau s.s. "CONSTANTIN", ancré dans le Port, deux Cuisines Portatives, lesquelles je me ferais un plaisir de mettre à la disposition du Gouvernement Arménien.

Je vous prie en conséquence de prendre les dispositions nécessaires pour vous en assurer la possession.

Le susdit Bateau est en train de faire ses préparatifs pour quitter Constantinople d'ici dans quelques jours.

Veuillez agréer, Monsieur, l'expression de mes sentiments empressés.

M Gumuchdjian

Պրն. Գումուլշեան
SHIPOWNER
TELEGRAMS M /
“GUMUCHDJIAN CONS/PLE”

Կոստանդնուպոլիս, 3 / 5 /20
Ալի Հան, Գալաթա

Կովկասում Հայաստանի Հանրապետութեան
դիւանագիտական ներկայացուցիչ
Պարոն Թահթաճեանին
Քաղաքացիական ծառայութիւն
Աստ

Պարոն,
Պատիւ ունեմ Ձեզ տեղեկացնելու, որ ներկայումս իմ՝ «Constantin» նաւի վրայ,
որը խարիսխ է գցել նաւահանգստում, երկու շարժական խոհանոց կայ, որ ես
երջանիկ կը լինեմ յանձնել Հայաստանի կառավարութեանը:

Հետեւաբար, խնդրում եմ Ձեզ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել դրանք
ստանալու համար:

Վերոյիշեալ նաւն այս պահին զբաղուած է նախապատրաստական
աշխատանքներով, որպէսզի մի քանի օրից մեկնի Կոստանդնուպոլիսից:
Շնորհ արեք ընդունել, պարոն, յարգանացս հաւաստիքը:

Պարոն Գումուլշեան

Constantinople,
le 4 Mai 1920

République Arménienne
Mission diplomatique

N 661

Monsieur le Haut Commissaire,
Mr. M. Gumuschdjian, armateur, a fait don au Gouvernement Arménien de deux cuisines roulantes, qui se trouvent à bord du s/s "Constantin", appartenant audit armateur.

Ces deux cuisines roulantes seront d'une utilité immense lors du rapatriement des réfugiés, ce qui me donne le courage de venir prier respectueusement Votre Excellence de m'accorder le concours des Autorités Maritimes françaises pour me faciliter le débarquement et la réexpédition des cuisines roulantes en question à Batoum.

Le s/s "Constantin" devant quitter ce port dans deux jours, ma requête consiste en ceci: faire débarquer au plus tôt les deux cuisines roulantes et les remettre à un entrepôt français, pour être expédiées par le s/s "Circassie" de la Compagnie de navigation N. Paquet et Cie, qui part dans quelques jours pour Batoum.

Dans l'espoir que Votre Excellence voudra bien faire bon accueil à ma présente requête, je Vous prie d'agréer, Monsieur le Haut Commissaire, avec mes vifs remerciements anticipés, les assurances de ma très haute et respectueuse considération.

A Son Excellence,
Monsieur Defrance, Haut Commissaire
Du Gouvernement de la République Française, etc.

Կոստանդնուպոլիս,
4 մայիսի, 1920

Հայաստանի Հանրապետության
Դիւանագիտական առաքելութիւն
N 661

Պարոն դիւանագիտական ներկայացուցիչ,
Նաւատեր պարոն Մ. Գումուշշեանը Հայաստանի Հանրապետության
կառավարութեանը երկու շարժական խոհանոց է տրամադրել, որոնք գտնուում
են Նոյն անձնաւորութեանը պատկանող «Constantin» բեռնանաւի վրայ:

Այդ երկու շարժական խոհանոցները յոյժ օգտակար կը լինեն փախստական-
ների հայրենադարձութեան ընթացքում. մի բան, որ ինձ համարձակութիւն
է տալիս Ձերդ Գերագանցութիւնից խոնարհաբար հայցելու ֆրանսիական
ծովային ուժերի օգնութիւնը՝ խնդրոյ առարկայ խոհանոցների ցամաք
իջեցման եւ Բաթում վերառաքման գործն առաւել դիւրին դարձնելու համար:

Ելնելով այն հանգամանքից, որ «Constantin»-ը երկու օրից լքելու է այս
Նաւահանգիստը, դիմում եմ Ձեզ հետեւեալ հայցով. պատուիրել, որ երկու
շարժական խոհանոցները հնարաւորինս շուտ իջեցուեն ցամաք եւ յանձնուեն
ֆրանսիական պահեստներից մէկին, որպէսզի այնուհետեւ Բաթում առաքուեն
«Ն. Պաքէ եւ ընկ.» ծովային ընկերութեան «Circassie» բեռնանաւով, որը մի
քանի օրից մեկնում է Բաթում:

Յուսալով, որ իմ այս հայցը կարժանանայ Ձերդ Գերագանցութեան բարեհաճ
վերաբերմունքին՝ ցանկանում եմ կանխաւ իմ շնորհակալանքը յղել Ձեզ,
պարոն դիւանագիտական ներկայացուցիչ՝ միաժամանակ յայտնելով Ձեզ իմ
խորին ակնածանքը:

Ֆրանսիական հանրապետութեան կառավարութեան
դիւանագիտական ներկայացուցիչ

Նորին Գերագանցութիւն
պարոն Դըֆրանսին եւ այլն

Constantinople,
le 13 Mai 1920

République Arménienne
Mission diplomatique

N 668

Mrs. Ellerman & Bucknall Steamship Comp. Ltd.
Ellerman's Wilson Line Ltd.
Agence de Constantinople,

Messieurs,

Le s/s "Romeo" appartenant à Votre honorable Société a débarqué ici, à Kourou-Tchechmé, en Avril écoulé, sept balles de cabot venant de New-York. Ce cabot est un don patriotique en faveur des réfugiés Arméniens se trouvant à Erivan. Le donateur ayant oublié de déclarer à New-York que ces sept balles devaient passer en transit par Constantinople, j'ai dû recourir à l'aimable intervention du Haut Commissariat de France, pour ne pas payer inutilement des droits d'entrée. Les démarches à faire à ce sujet ont été cause que les sept balles sont restées dans Vos dépôts à Kourou-Tchechmé plus longtemps qu'il ne fallait.

Etant donné qu'il s'agit en l'occurrence d'un don patriotique en faveur de malheureux réfugiés et les frais d'expédition sont à la charge de mon Gouvernement, je viens Vous prier de vouloir bien, si possible, me dispenser de payer le droit de dépôt pour ces sept balles.

Veuillez agréer, Messieurs, avec mes remerciements anticipés, mes salutations les plus empressées.

Le représentant de la République Arménienne.

Կոստանդնուպոլիս,
13 մայիսի, 1920

Հայաստանի Հանրապետության
Դիւանագիտական առաքելութիւն

թիւ **668**

«Mrs. Ellerman & Bucknall Steamship Comp. Ltd.
Ellerman's Wilson Line Ltd.»
Կոստանդնուպոլսի գործակալութիւն

Պարոնա՛յք,

Ձեր պատուարժան ընկերութեանը պատկանող «Romeo» բեռնանաւը անցած ապրիլ ամսին Քուրու-Չեշմէ է հասցրել Նիւ Եորքից առաքուած եօթ փաթեթ: Դա հայրենասիրական նուիրատուութիւն է՝ յօգուտ Երեւանում ապաստանած հայ փախստականների: Քանի որ նուիրատուն մոռացել էր Նիւ Եորքում յայտարարել, որ վերոյիշեալ եօթ փաթեթները պէտք է անցնէին Կոստանդնուպոլսի տարանցիկ գօտով, եւ ստիպուած եղայ հայցել Ֆրանսիայի դիւանագիտական ներկայացուցչութեան սիրալիր միջամտութիւնը, որպէսզի մենք չվճարենք մուտքի սակագինը, ինչն անիմաստ էր մեր պարագայում:

Այդ ուղղութեամբ արուող անհրաժեշտ քայլերի հետեւանքով վերոյիշեալ եօթ փաթեթները հարկ եղածից աւելի երկար մնացին Քուրու-Չեշմէի ձեր պահեստներում:

Քանի որ խօսքը տարաբախտ փախստականների համար նախատեսուած հայրենասիրական նուիրատուութեան մասին է, եւ առաքման ծախսերն իմ կառավարութիւնն է հոգում, խնդրում եմ Ձեզ հնարաւորութեան դէպքում ազատել ինձ եօթ փաթեթի պահեստաւորման համար սահմանուած վարձավճարից:

Կանխաւ յայտնելով իմ շնորհակալանքը՝ խոնարհաբար խնդրում եմ Ձեզ ընդունել յարգանացս հաւաստիքը:

Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ

Le 3 Յունիսի 1920
Tiflis

REPUBLIQUE D'ARMÉNIE
Représentant Diplomatique en Géorgie

N° 2029

Հայաստանի ներկայացուցիչ՝
Պ. Թախթաճեանին Պօլսում

Դուք ուղարկել էիք 10.000ռ. Կերենկաներով Մաքրուհի Թադեոսեանին յանձնելու համար: Մի քանի անգամ Ձեր ցոյց տւած հասցեով մարդ ուղարկւեց, բայց Մաքրուհի Թադեոսեանը չգտւաւ. վերջին անգամն էլ հասցեատան մէջ տեղեկանք հաւաքեցինք, բայց դարձեալ ապարդիւն:

Մեզնից անկախ պատճառներով անկարող լինելով կատարել Ձեր յանձնարարութիւնը վերադարձնում ենք ընդ սմին Ձեր ուղարկած 10.000ռ. Կերենկաներ:

Գործերի Կառավարիչ՝
Գ. Երիցփոխանեան

Գործակատար՝
Ն. Մամիկոնեան

Constantinople,
le 5 Juin 1920

République Arménienne
Mission diplomatique

N 721

Au très honorable,
Capitaine Dordain,

Mon Capitaine,

Vous aviez eu à Vous occuper dernièrement de sept balles de cabot, don patriotique en faveur des réfugiés Arméniens à Erivan.

C'est par suite des aimables dispositions prises par Vous, que ces sept balles avaient été transférées, en franchise de droits d'entrée, de Courou-Tchéchmé aux entrepôts de la Société française des Quais.

La maison Avédikian frères étant chargée par moi d'expédier ces sept balles en transit à Erivan, au nom de notre Consulat-Général à Batoum, par le s/s "Circassie" de la Compagnie française "N. Paquet & Cie", je viens Vous prier par ma présente de vouloir bien parachever la bonne œuvre, en intervenant auprès de la Douane Ottomane, afin que celle-ci laisse embarquer sans obstacle les sept balles.

Veuillez agréer, mon capitaine, avec mes remerciements anticipés, les assurances de ma considération la plus distinguée.

Le Représentant diplomatique de la République Arménienne.

Կոստանդնուպոլիս,
5 յունիսի, 1920

Հայաստանի Հանրապետության
Դիւանագիտական առաքելութիւն

N 721

Մեծարգոյ կապիտան Դորդենին

Պարո՛ն կապիտան,
Վերջերս Դուք ստիպուած եղաք զբաղուել եօթ փաթեթների առաքմամբ.
հայրենասիրական նուիրատուութիւն՝ ի նպաստ նախատեսուած Երեւանի
հայ փախստականների:

Ձեր բարեհաճ կարգադրութիւնների շնորհիւ է, որ վերոյիշեալ եօթ փաթեթներն
առանց մուտքի սակագնի տեղափոխուեցին Քուրու-Չեշմէի «Ֆրանսիական
նաւահանգստային ընկերութեան» պահեստներ:

Քանի որ ես Բաթումի մեր գլխաւոր Հիւպատոսութեան անունից «Աւետիքեան
եղբայրներ» ընկերութեանը յանձնարարել էի այդ եօթ տարանցիկ
փաթեթներն առաքել Երեւան ֆրանսիական «N. Paquet & Cie» ընկերութեան
«Circassie» բեռնանաւով, ուստի իմ այս նամակով խոնարհաբար խնդրում
եմ Ձեզ աւարտին հասցնել այդ բարի գործը՝ դիմելով օսմանեան մաքսային
ծառայութեանը, որպէսզի մեզ թոյլ տրուի առանց խոչընդոտների բարձել այդ
եօթ փաթեթները:

Կանխաւ յայտնելով Ձեզ իմ խորին շնորհակալանքը՝ խնդրում եմ ընդունել
Ձեզ, պարո՛ն կապիտան, յարգանացս հաւաստիքը:

Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցիչ

Կ. Պօլիս 13 Յունիսի 1920

Ազնուաշուք եւ սիրելի
Աւետիս Առաքելովիչ¹

Ձեր վերջին գրութիւնը, ինչպէս նաեւ (2000) երկու հազար ֆրանքը ստացել եմ:

Արդէն տուի Ձեզ մի քանի հեռագիրներ, որոնց ընկալագիրները իւր ժամանակին, հաշւոյ հետ միասին կը ներկայացնեմ:

Թղթաբերիս հետ կուղարկեմ Ձեզ եւ Կովկասից երեկ ստացուած սուրհանդակը, եւ անելացնելով իմ կողմից կովկասեան թերթեր մինչեւ Յունիսի 9-ը: Ձեր ուշադրութիւնը կը գրաւեմ Յունիս 9-ի “Слово” մէջ տպուած դաշնագրի վրայ (վրացւոց եւ մեծամասնականների միջեւ):

Ըստ տեղեկութեանց, մեծամասնականք բոլորովին տէր են դարձել Բաքուի, իսկ Գանձակում Մասսավաթիսթների կողմից տեղի ունեցած խլրտումը նրանք խեղդել են թաթար արեան մէջ եւ միանգամայն քար ու քանդ են արել քաղաքը: Կարծես թէ հին Շամխորի հաշիւներ են ուզում մաքրել:

Այս առթիւ ուղարկում եմ Ձեզ դարձեալ Թիֆլիսի տեղեկատու դիւանի վերջերս ինձ ուղղուած bulletin-ները, որոնք Ձեզ համար անելի օգտակար կարող են լինել:

Հաստատ աղբիւրից լսեցի երեկ, որ Բաթումում վար տրուած երկու աերօբլանները արդէն յանձնուած են մեզ: Ինչպէս եւ թելադրել էի այստեղ Անգլիացիք տեղն ու տեղը Աթաբեկեանի հետ են վերջացրել հարցը:

Կը յանձնարարեմ Ձեր բարեհաճ ուշադրութեան լրաբեր՝ Պ. Թելլալեանը, որ ի պաշտօնէ ձեզի ի ատեն կգայ²: Նրանից շատ շահեկան տեղեկութիւններ կը լսեք Կիլիկիայի մասին:

Մնամ խորին յարգանքօք

¹ Ահարոնեան

² Դժուար ընթեռնելի հատուած, որ կարելի է կարդալ ե՛ւ «ի ատեն» ե՛ւ «ի աստէն»:

ՀԱՅ ԲԱՆԱԿԻ ՆՈՒՐԱՀԱԲԶ
ԿԵՂՐ. ՄԱՐՄԻՆ

ՀԱՍՑԷ, ԲԵՐԱ ԳԱՊՐԻՍԹԱՆ ՓՈՂՈՑ 37
ԳՐԱՍԵՆԵԱԿ ԹԻԻ 10
ՄԹԵՐԱՆՈՑ, ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՁԻՆՃԻՐԼԻ ԽԱՆ 23
Կ. ՊՕԼԻՍ

23 Յունիս 1920

Ազնուամեծար
Պ. Թահթաճեան
Հայ Հանրապետութեան Դիւան. Ներկայացուցիչ
Կ. Պոլսոյ

Հ. Բանակի Նուիրահաւաք Կեդր. Մարմինս այս անգամ ալ 4450 զոյգ (8900 կտոր) ճերմակեղէն՝ շապիկ եւ շապկընկեր, Ամերիկեան Բըլիֆ Ընկ[երութ] ենէն հատը 20 դրուշի հաշուով գնած է սոյն ճերմակեղէններուն վրայ աւելցնելով վերջերս հաւաքուած իրեղէնից եւ Իզմիրէն ղրկուած 6 հակ եւ 2 սնտուկները թիւ R. A. 301/308 ընդամենը 22 հակ եւ 2 սնտուկ թիւ R. A. 280 եւ R. A. 288/308 the patriotic ընկերութեան Albatros շոգենաւով 22 Յունիսին 6000 ոսկիի «Ֆետեմալ» ընկերութեան, ապահովագրելէ վերջ ուղղարկեցինք Պաթումի Ը. Ը. Ներկայացուցիչին, Երեւան ղրկուելու համար: Ներփակ կը ստանաք բեռնագրերը եւ ապահովագրութեան Բօլիսը, ինչպէս նաեւ ղրկուած իրեղէններու մանրամասն ցուցակը:

Ներկայացնելով այս առթիւ Ձեր ազնուութեան մեր խորին յարգանաց հաւաստիւ մնամք
Ի դիմաց Հ[այ] Բ[անակի] Ն[ուիրահաւաք]
Կեդր[ոնական] Մարմնոյ

Ատենադպիր
Գ[ալուստ] Էյնաթեան

Վ. Ատենապետի
Ե[րուանդ] Յովնանեան

Բնագիր ցուցակը ուղարկեցի Երեւան Արտ. Գործ. Մինիստրութիւն,
իսկ պատճենը Բաթումի Հիւպատոսարանին.
Ֆ.

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
DÉLÉGATION
A LA CONFERENCE DE LA PAIX
4010

27, AVENUE MARCEAU
PARIS, le 25 Յունիս 1920

Մեծ. Պ. Ֆ. Թահթաճեան
Հ. Հ. Դիւանագիտական Ներկայացուցիչ
Կ. Պօլիս

Մեծարգոյ Պարոն Ներկայացուցիչ,
Շնորհակալութեամբ ստացած ենք ձեր 27, 29, 30, 30 մայիս եւ 1, 1, 2, 2, 3, 6,
8 եւ 14 յունիս թուակիր գրութիւնները:

1) Ստացանք Նոյնպէս ձեր 17 յունիս թուակիրը, ներփակ 73, 120 ֆր. 60 սանդիմի չէքով, որը կը կազմէր մնացորդ գումարը «Ճակատամարտ» եւ «Վերջին Լուր» թերթերու «Ճակատի համար» բացած հանգանակութեան: Այդ գումարէն 276 Օսմանեան թղթադրամ ոսկի ձեզ կը վերադարձնենք, համաձայն այդ գումարը ստորագրող Standard Oil ընկերութեան մէջ աշխատող 20 հայերու ցանկութեան, որպէս զի զայն յատկացնէք Ամերիկեան Նպաստամատոյցի միջոցաւ սովեալներու օգտին, իսկ մնացորդ գումարը ամբողջութեամբ կը փոխադրենք Պ. Վրացեանի, յատկացուելու համար ճակատի պետքերուն: Վերել յիշուած 276 ոսկին կը վերադարձնենք, գործածուելու համար այդ գումարը վճարողներու ցանկութեան համաձայն, նկատի ունենալով այն պարագան որ անոնք իրենց խնդիրքը Ներկայացուցած էին Նախ քան ամբողջական գումարին մեր կառավարութեան փոխադրուիլը: Իսկ անկից վերջ եթէ պատահին Նոյնանման խնդիրքներ, տարակոյս չկայ որ չենք կրնար նկատի առնել զանոնք:

2) Յունիս 14 թուականով հեռագրով ձեզ հաղորդած էինք մեր եւ կովկասեան միւս հանրապետութեանց Ներկայացուցիչներուն միջեւ ծանօթ համաձայնագրին ստորագրուիլը: Երկու օր առաջ առանձին ծրարներով ձեզ ղրկեցինք այդ համաձայնագրին լիակատար մէկ պատճենը եւ բացատրողական գրութիւն մը, Նոյն համաձայնութեան մասին, ստորագրուած Պարոն Ահարոնեանի կողմէ:

3) Պ. Մելիք Նուբարեանի միջոցով Բաթումի Հ. Ս. Ս. Հ. հիւպատոսէն ձեր ստացած վաւերաթուղթերու պատճենները եւ անոնց թարգմանուած օրինակները ղրկեցինք Հ.Հ. Աթենքի դեսպան Պ. Տիգրան Չայեանի, որպէս

զի օգտագործե զանոնք Պարոն Աթաբեգեանի դեմ բացուած դատական հետապնդումներուն համար: Ինչպէս գրած էինք ձեզ ասկից առաջ, Պ. Աթաբեգեանի գործին մեզ հաղորդ պահելով հանդերձ, մի՛ մոռնաք Պ. Չայեանի եւս կարծիքը ստանալ որ եւ է նոր քայլ առնելէ առաջ: Պարոն Չայեանէն եւս խնդրած ենք այս խնդրի մասին յարաբերութիւն պահել ձեզ հետ:

4) Ձեր յունիս 1 թուակիր թիւ 1214 նամակին պարունակութիւնը, ի մասին մեր կողմէ, անցեալ տարի հոկտեմբերի մէջ, Հ. Հ. Արտաքին Գործերու նախարարութեան ուղարկուած կարգ մը գումարներու, յայտնեցինք Պ. Բեգատեանի, որը խոստացաւ նամակով մեզ հաղորդել այդ գումարները ստացած ըլլալը: Նամակը ստացուելուն անոր վաւերացուած մէկ պատճենը ձեզ կը հաղորդենք:

5) Ձեր 1 եւ 14 թուակիր գրութիւններով մեզ յայտնած տեղեկութիւնները Mopang անուն նաւով Նիւ-Եորքէն փոխադրուած 23 կտոր մեքենաներու, Գուրու Չէշմէի պահեստի մը մէջ գտնուող 30 թօն մեքենաներու եւ գործիքներու եւ ինչ որ մեծաքանակ հագստեղէնի մասին, մեզ բացարձակապէս անծանօթ են: Ձեր գրութիւններէն նոյնպէս որոշակի չի կրցանք հասկնալ:

ա) թէ Գասըմ Փաշայի մթերանոցի մը մէջ աճուրդով ծախուած մեքենաները արդեօք իսկապէս նոյն այն ապրանքներն են որոնց բեռնագիրը ձեզ յանձնուած էր Տիւսիգեան Եղբարց Պօլսոյ Ներկայացուցիչ Պ. Յովհաննեսեանի կողմէ (առաջինը 22 կտոր, երկրորդը 24 կտոր)

բ) ձեզ յանձնուած բեռնատոմսին վրայ բացորոշ կերպով նշանակուած ըլլալով որ այդ ապրանքները կը պատկանին Հայաստանի կառավարութեան եւ նոյնը գրուած ըլլալով սնտուկներու տախտակին վրայ իսկ, ինչպէս Պ. Վուչինօն կրնայ աճուրդով ծախել այդ ապրանքները Պօլսոյ մէջ, ուր Հ. Հանրապետութիւնը ունի ներկայացուցիչ:

գ) դեռ մարտի մէջ իսկ տեղեկացած ըլլալով որ Հայաստանի կառավարութեան անունին ապրանքներ ստացուած են, ինչպէ՞ս այդ մասին մեզ տեղեկութիւն չի հարցուցիք եւ Պ. Ժամկոչեանի մը բերանացի բացատրութիւններուն վրայ, որը ոչ մէկ փաստի վրայ կը կռթներ, յայտարարեցիք Պարոն Վուչինոյի, American Black Sea Steamship Corp. Ընկերութեան ներկայացուցչին, թէ մեր կառավարութիւնը շահագրգռուած չէ այդ ապրանքներուն մէջ:

դ) Գուրու Չեշմեյի մթերանոցը գտնուած ապրանքները իսկապէս մե՞րն են թէ ոչ եւ ո՞ր ընկերութեան միջոցով, ե՞րբ եւ ո՞ր քաղաքէն դրկուած են եւ որի՞ ձեռքով:

ե) գործածուած մեծաքանակ հագստեղէներու մասին ոչ մէկ մանրամասնութիւն գտանք ձեր նամակին մէջ:

զ) անհասկնալի մնաց մեզ թէ Գուրու Չեշմեյի մթերանոցին մէջ պահուած 30 թօն ապրանքին համար ինչպէս կրնան ամսական հազար ֆրանքի չափ գումար պահանջել իբր մակագինաժի վարձք:

Ամէն պարագայի մէջ, ինչպէս որ ըսինք վերեւ, այդ ապրանքներու մասին մենք հոս ոչ մէկ տեղեկութիւն ունենալով, մեր կողմէ կը գրենք անմիջապէս Ամերիկա ստանալու համար հարկ երաժ լուսաբանութիւնները:

Դուք եւս ձեր կողմէ կը խնդրենք որ, ա) պետք եղած միջոցները ձեռք առնէք տեղւոյն վրայ քաղելու համար լիակատար տեղեկութիւններ, ինչ որ կենթադրենք անկարելի չէ, այդ ապրանքներու մասին, բ) Գուրու Չեշմեյի մթերանոցը գտնուած ապրանքները փոխադրել տաք Հ. Օ. Մարմնի մթերանոցը, որը ինչպէս հաղորդած էիք ժամանակին մեզի, սիրայօժար դրուած է մեր տրամադրութեան տակ, գ) մեզ ղրկէք պատճենները այն թղթակցութեան որ փոխանակուած է ձեր եւ Պ. Վուչինոյի միջեւ նախ քան յունիսի մէկը եւ որուն յիշատակութիւնը կայ այս վերջնոյն յունիս 1 թուակիր նամակին մէջ, որպէս զի քիչ մը աւելի լուսաբանուինք այդ գործի մասին: դ) պետք եղած միջոցները ձեռք առնէք հետապնդելու համար American Black Sea Steamship Corp. ընկերութեան տեղւոյդ մասնաճիւղը, Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան պատկանող ապրանքներ առանց ձեր գիտութեան աճուրդով ծախած ըլլալուն համար:

6) Իշ. Միք. Թումանեանի տեղեկացուցած նաւին մասին ոչինչ գիտենք եւ ինչպէս յայտնի է ձեզ ամերիկեան նպաստամատոյցը այստեղ մասնաճիւղ չունենալով մեզ դժուար է այդ մասին որ եւ է տեղեկութիւն քաղել: Պօլսոյ մէջ եթէ նպաստամատոյցը անծանօթ է այդ խնդրին, պետք է ենթադրել որ թիւրիմացութիւն կայ գործին մէջ:

7) Ներփակ ձեզ կը դարձնենք Սթանտարտ Օյլ ընկերութեան հայ պաշտօնեաներու «Ճակատամարտ» ի խմբագրութեան ուղղած 14 մայիս թուակիր գրութիւնը, Իշ. Մելիք Թումանեանի 20 մայիս թուակիր նամակը եւ Պարոն Չատիկ Մաթիկեանի 23 մայիս թուակիր նամակը:

8) Ներփակ դարձեալ ձեզ կը դրկենք երկու նամակներ Տիկին Հ. ՍԵՐԵՆԿԻԼԵԱՆԻ (Վարդգէս) եւ Տօքթ. Ս. Չալեանի հասցէին, խնդրելով ձեզմէ որ եթէ կարելի է Ամերիկեան նպաստամատոյցի միջոցաւ տեղ հասցնէիք զանոնք: Տիկին ՍԵՐԵՆԿԻԼԵԱՆԻ ուղղուած նամակը իր մէկ բարեկամուհիէն Օր. Պ. Պոյաճեանէն է իսկ Տօքթ. Չալեանի նամակը իր կնոջմէն եւ երկուքն ալ ընտանեկան հանգամանք միայն ունին: Տօքթ. Չալեանի որ քաղաքը գտնուիլը դժբաղդաբար անձանօթ է իր կնոջ, բայց Տփղիսի մէջ այդ մասին շատ դիւրաւ կարելի է տեղեկանալ:

Ի դիմաց Հ. Հ. Փարիզի Պատուիրակութեան

Արտաւագդ Հանըմեան
Ընդհանուր քարտուղար

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ
ՄԻՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս
6 Օգոստոս 1920

Թիւ 69

Մեծայարգ
Տիար Ֆ. Թահտաճեան
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Հայկ[ական] Հանրապետութեան
Աստ

Տիար,
Զօրավար Սեպուհի Բանակին մէջ ծառայող բժիշկներէն Տօքթ. Աւտալեան 15 Մայիս թուակիր Իգդիրէն գրած եւ հայ բժշկական Միութեան Ատենապետին ուղղած մէկ նամակովը Հայկական բանակին համար անհրաժեշտ դեղեր խնդրած ըլլալով Միութիւնս փութաց դիմել հայ բանակի նուիրահաւաք կեդրոնական յանձնախումբին եւ նուէր ստանալով 500 ոսկիի գումար մը, գնեց ըստ ներփակ ցուցակի՝ կարեւոր դատուած դեղերը:

Սոյն դեղերը յատկապէս սնտուկներու մէջ զետեղուած կը մնան ի Կ. Պոլիս Գալթաքճեան դեղավաճառատունը եւ պիտի յանձնուին Հայ բանակի նուիրահաւաք կեդրոնական յանձնաժողովին, որպէսզի ճամբայ հանուին դէպի Երեւան:

Տեղեկացնելով զայս Ձեր Ազնուութեան՝ պատիւ ունինք խնդրել, որ հաճիք հարկ եղած պաշտօնական ձեւակերպութիւնը ընել, սոյն դեղերը առաքելու Հայաստանի արտաքին գործերու նախարարութիւն՝ որուն համար կանխաւ յայտնելով մեր շնորհակալիքը

Մնամք ի դիմաց Հայ Բժշկական Միութեան

Ատենադպիր
Տօքթօր Շահպազ

Ատենապետ
Տօքթ. Սահակ

Կ. Պօլիս,
25 օգոստոս 1920

Հ[այ] Բ[անակի] Նուիրահաւաք
Կեդրոնական Մարմնոյ

Մեծայարգ Տիարք,

Հանգուցեալ Զօհրապի այրին, տիկին Քլառան, նուիրել է Հայ Համալսարանին իւր ամուսնոյ գրադարանի մի մասը, տեղաւորելով զայն երկու սնտուկների մէջ, որոնք գտնուում են իրանց բնակարանում, գերմանական դեսպանատնից քիչ վարը, Ազարեան փարթըմանի մէջ:

Նուիրել է նոյնպէս հարիւր հատորի չափ գրեանք (բժշկական) հանգուցեալ Բժ. Տաղաւարեանի այրին եւ այդ գրքերը գտնուում են Բժ. Մասիսի մօտ:

Երկու նուէրների ցուցակները ստացել եւ ուղարկել եմ Երեւան: Այժմ խնդրում եմ Ձեզանից, որ բարեհաճիք յանձնարարել Ձեր առաքիչ պաշտօնէին ստանալ այրի Զօհրապի բնակարանից վերոյիշեալ երկու սնտուկը, ինչպէս նաեւ Բժ. Մասիսից նրա մօտ պահ թողուած գրքերը եւ զայնս բեռնել առաջին առթիւ Պաթում մեկնող մի շոգենակի վրայ, յայտարարելով transit pour Erivan (Հայ Հանրապետութեան անուան):

Հանգուցեալ Բժ. Տաղաւարեանի այրիի նուիրած գրքերը սնտուկի մէջ տեղաւորուած չեն, ուստի անհրաժեշտ է հաստատ մի սնտուկի մէջ զայնս տեղաւորել տալ:

Այդ առաքման բեռնագիրը՝ ըստ սովորութեան կը բարեհաճիք ինձ յանձնել:

Այս առթիւ կը յիշեցնեմ Ձեզ Բժշկական Միութեան նուիրուած դեղօրայքը, որոնք տակաւին չեն առնուած սոյն դեղարանից, ուր թողել էր զայնս Բժ. Թորգոմեանը:

Բերլին,
8 Սեպտեմբեր 1920

Հայաստանի Հանրապետության
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Մեծարգոյ Պ. Թահթաճեան
Կ. Պոլիս

N° 759

Յարգելի հայրենակից

Պրն. Էմիրզէի միջոցով ուղարկածս 1 Յուլիս թուակիր գրութիւնը անտարակոյս ստացած կը լինէք: Այդ նամակում յիշած դեղերի եւ բժշկական գործիքների առաքումը զանազան պատճառներով ձգձգւելով միայն մի քանի օր սրանից առաջ ճանապարհել կարողացի այնպէս որ Հոկտեմբերի սկզբում կը հասնին Կ. Պոլիս:

1 Յուլիս թուակիր նամակովս (որի պատճենը ներփակ ուղարկում եմ, խնդրել էի Սուրբ. Պատրիարքի տրամադրութեան յանձնւելիք դեղերի մի մասը իր կողմից ուղարկւեր Երեւան. Բայց քանի որ նե[ր]կայիս Կիլիկիոյ դրութիւնը լաւացել է եւ հնարաւորութիւն կայ դեղեր այնտեղ ուղարկելու:

Խնդրում եմ յիշած դիմումը չանել Սրբ. Պատրիարքին:

Կ. Պոլիս ուղարկւած է Եղբ. Աւետիք[ե]անների հասցեով մի արկղ դեղեր, որի ցուցակը ներփակ կը գտնէք: Այդ արկղը նոյնպէս կը յանձնւի Ձեզ եւ խնդրում եմ բարի լինէք այդ էլ դնել Սրբ. Պատրիարքի տրամադրութեան իբր նուէր Բերլինի հայկական գաղութի կողմից, որով Բերլինի գաղութի սրբ. Պատրիարքին ուղարկած դեղերի գումարը լինում է՝

1) 1 Յուլիս 1920 նամակումս յիշած ցուցակով 29089 մարկ 50 ֆեն

2) Եղբ. Աւետիքեանների միջոցով ուղարկւած մի արկղ 10525 մարկ 50 ֆեն
միասին 39.614 մարկ 50 ֆեն

որ պատրիարքարանը բարեհաճի հաստատել Բերլինի հայկական գաղութին:

Հաճեցէք ընդունել իմ խորին յարգանացս հաւաստիքը:

Comité Arménien de Belgique
16, Avenue de Mont Kemmel
Bruxelles

Téléphone 8061
67 Avenue Plantin
Anvers.

Anvers,
le 10 Septembre 1920

Monsieur Tahtadjian
Représentant de la République Arménienne
Pera-Constantinople.

Monsieur,

Nous vous confirmons notre lettre du 22 avril 1920 par laquelle nous vous adressons un connaissance relatif à trois caisses contenant des effets usagés destinés à nos pauvres en Armenie. Vous nous obligeriez de nous dire si ces caisses sont déjà parvenues à destination.

Au plaisir de vous lire, veuillez agréer Monsieur, nos sincères salutations.

Le Secrétaire

A handwritten signature in dark ink, appearing to read 'H. Persaud', with a long, sweeping flourish extending to the right.

Բելգիայի հայկական կոմիտե
16, Կեմմել լեռան պողոտայ
Բրիսել

Հեռախոսահամար 8061
67 Պլանտեն Անվեր պողոտայ

Անվեր,
10 սեպտեմբերի, 1920

Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ
պարոն Թահթաճեանին
Բերա-Կոստանդնուպոլիս

Պարո՛ն,
Մենք հաստատում ենք 1920-ի ապրիլի 22-ի մեր նամակի առաքումը, որին
կցուած էր Հայաստանի մեր ընչազուրկների համար նախատեսուած
օգտագործուած հագուստ պարունակող երեք արկղի ուղեբեռնագիրը: Մենք
երախտապարտ կը լինէինք Ձեզ, եթէ մեզ տեղեկացնէիք, թէ արդեօք արկղերը
հասե՞լ են հասցեատիրոջը:

Պատասխանի ակնկալիքով՝ Ձեզ եմ յղում, պարո՛ն, մեր անկեղծ ողջոյնները:

Քարտուղար



Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն
Հայ-Սկաուտներ
Հիմնուած Կ. Պօլիս 1918
13 Սեպտեմբեր 1920

Թիւ **391**

Պ. Ֆ. Թահթաճեան
Հ[այաստանի] Հանր[ապետութեան]
Դիւանագիտական ներկայացուցիչ
Բերա

Անցած Ուրբաթ գիշեր 10 Սեպտ[եմբերին] Վարիէթ թատրոնի մէջ տեղի ունեցած երեկոյթին, Միութեանս Կեդրոնի վարչութեան ներկայացուցիչները կը ներկայանան Պ. Ա. Խատիսեանի եւ Միութեանս պատրաստակամութիւնը կը յայտնեն Հայաստանի սկաուտներու հագուստները հայթայթելու, որուն վրայ Տիկին Խատիսեան ժամադրութիւն կուտայ հետեւեալ օր իրեն ներկայանալու եւ այդ մասին խօսելու:

Մեր ընկերներէն երկու հոգի կ'երթան նոյն օրը եւ իրենց վրայ կ'առնեն հագուստները պատրաստելու գործը: Տիկին Խատիսեան կը յանձնարարէ Ձեզմէ գանձել այն հագուստներու համար հաւաքուած 900 ոսկին, իրենց մեկնելէն վերջ: Արդ մեր կողմէ, միութեանս պատասխանատու քարտուղարը Կ[արօ] Ուշագլեան կուգայ Ձեզ մօտ կարգադրելու այն խնդիրը:

Յարգանօք
Հ.Մ.Ը.Մ.
ԿԵԴՐՈՆԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՐՏՈՒԴԱՐ

Առաջնորդարան Հայոց
ՀԱՄԱՐ 1706

Չմիւռնիա,
21 Սեպտ[եմբեր] 1920

Վսեմաշուք

Պ. Ֆ. Թահթաճեան

Դիւանագիտական Ներկայացուցիչ

Հայկ[ական] Հանրապետութեան

Կ. Պօլիս

Կը հաստատենք մեր 1920 Փետր[ուար] 10 թուակիր եւ 713 համար գրութիւնը, որով խնդրուած էր Օսմ[անեան] Դրամատան միջոցաւ Ձեր անուան ղրկուած յիսուն (50) Օսմ[անեան] ոսկի թղթադրամը գանձելով յատկացնել տեղս բնակող Մշեցի Աբգար Բլօ Խուրշիտեանի, Երեւան (Աղէքսանդրաբօլ) գտնուող կնոջը՝ Տիկին Երանուհիին դէպի Չմիւռնիա փոխադրութեանը համար:

Անշուշտ, կը կարծենք թէ, սոյն դրամը գանձուած ու բուն նպատակին համար ալ գործածուած է, բնականաբար Ձեր կողմէ հարկ եղած հոգածութիւնը շնորհելով, որուն համար մեր կանխաւ շնորհակալութիւնները կը յայտնենք, սակայն ցարդ ոեւէ պատասխան մը չ'առնուած եւ մանաւանդ Տիկին Երանուհիի տակաւին տեղս ժամանած չ'ըլլալուն, իր ամուսինը՝ խնդրարկու Պրն. Աբգարը, որ շատ անգամներ այս առթիւ մեզ դիմած է, մտահոգուած կը խնդրէ որ գոնէ իր այդ դրամը վերադարձուի իրեն:

Ուստի, կը խնդրենք որ բարեհաճիք այս մասին հարկ եղած տեղեկութիւնները տալ մեզ, հաղորդելու համար խնդրարկուին:

Աղօթարար

Առաջն[որդական] փոխանորդ Չմիւռնիոյ

Եղիշէ ք[ա]հ[ա]ն[ա]յ Գնունի

Առաջնորդարան Հայոց

ԳԱՀԻՐԷ

Համար

Գահիրե,
2 Հոկտ[եմբեր] 1920

Վսեմ[աշուք] Տեր

Դիւանագիտական Ներկայացուցիչ

Հայաստանի Հանրապետութեան

Կ. Պօլիս

Վսեմ[աշուք] Տեր,

Ինչպէս կ'յիշէք, նոյն յանձնառագրին մէջ՝ որով Տիար Կարապետ Մելգոնեան կ'յօժարէր, ինչ ինչ պատճառներով, գործադրել իր հանգուցեալ եղբօր՝ Գրիգորի կամքը, Ազգին նուիրելով անկէ իրեն ինկած ամբողջ ժառանգութիւնը, պայման դրած էր նաեւ որ Հայաստանի Հանրապետութիւնը մինչեւ վեց ամսուան մէջ յայտնէ իր հաւանութիւնը՝ իրեն եղած offre-ին մասին:

Պարտականութիւն կ'համարիմ յիշեցնել թէ պայմանադրուած վեց ամիսներուն երկուքը միայն մնացած եւ չորսը անցած են արդէն. հետեւաբար կ'խնդրեմ որ Դուք եւս Ձեր կարգին յիշեցնէք այս պարագան Հայաստանի Կառավարութեան, որպէսզի հաճին օր առաջ գործը եզրակացնել:

Պէտք չ'է մոռնալ որ Կարապետ ծեր է եւ հիւանդկախ, նոյնպէս խիստ բժախնդիր պայմանաւորմանց վերաբերմամբ: Խորին յարգանքներով,

Առաջնորդ Հայոց Եգիպտոսի

Թորգոմ Գուշակեան

ԵՕԹԵՐՈՐԴ ԱՌԱՔՈՒՄ

ՀԱՅ ԲԱՆԱԿԻ ՆՈՒՐԱՀԱՒԱՔ ՄԱՐՄՆՈՅ 7 Հոկտ. 1920ին

Իտալական Ֆրանց ՖԵՐՏԻՆԱՆՏ շոգենաւով

R. A.

- 332 սնտկ. 1 հակ - դեղեր 50 տփ. քինին
- 333 17 երկվեցեակ շապիկ եւ վարտիք
- 334 1 հակ 12 երկվեցեակ շապիկ եւ վարտիք
1 հակ 383 զոյգ ճերմակ բուրդէ գուլպայ
40 գունաւոր գուլպայ
20 գունաւոր շապիկ
1 գապօթ
30 գունաւոր գոգնոց
1 զոյգ նոր կօշիկ
28 կտոր ֆանելա շապիկ եւ վարտիք
10 անթել ֆանելա
3 տափատ 3 ժաքէթ
22 կարմիր խաչի պլուզ
1 ոտքի փաթաթ
- 335-40 սնտկ. Իրաւագէտ Յակոբ Յակոբեանի գրքերը որուն ցուցակը
Պ. Խատիսեանի յանձնուած է:
- 341 սնտկ. Գասպար Չերազի գրքերը
- 342 Ընկոյզենի մեծ մատենադարան մը:
- 343 Ընկոյզենի մեծ մատենադարանի ուրիշ կազմածները
- 344 սնտկ. Յակոբեանի Ընկոյզէ փոքր մատենադարան
- 345 սնտկ. Յակոբեանի Ընկոյզէ փոքր մատենադարանի
մասերը եւ գրքեր
- 346-353 սնտկ. 2ական հայերէն գրի մեքենայ
- 354 սնտկ. 1 հայերէն գրի մեքենայ եւ թուղթեր
- 355 սնտկ. 2 վիրաւորի կառք, 2 թրքական թուր
- 360 պոյ սկաուտներու գօտի որուն 349ը
բարձրացիր բարձրացուրով
360 գլխարկի բարձրացուր
240 Մասն. Պոյ սկաուտի գլխարկ
- 356 հակ 120 ձեռք պոյ սկաուտի հագուստ
- 357 ՄՄ 120 ձեռք պոյ սկաուտի հագուստ
- 358 120 ձեռք պոյ սկաուտի հագուստ
եւ 360 սկաուտի փողկապ
- 359 Բրոժէքթօր մը 7 կազմածով
- 360 6 հատ դրօշակ 4ը բանուած 2ը չբանուած: Բանուածներ
ՍԱՄԱԹԻԱ ՍԱՆ ՍԹԵՖ[Ա]ՆՕ ԳՈՒՄ ԳԱՓՈՒ, ՀԱՅ ԿՂԶԻ.

ԹՕՓ ԳԱՓՈՒ կես բանուած մէկ հատ չբանուած
 100 երկվեցեակ թաշկինակ գէֆիր
 100 երկվեցեակ Գրեմ սրբիչ
 1 գալփաք
 1 զինւորական նոր զգեստ
 2 ժաքէթ մէկ տափատ
 7 ֆանելա շապիկ 4 ֆանելա վարտիք
 3 վարտիք
 1 շապիկ 5 զոյգ գուլպայ

շարունակութիւն...

361 սնտկ. 130 ծրար նամակի թուղթ եւ պահարան
 500 ծրար նամակի թուղթ եւ պահարան
 85 ծրար նամակի թուղթ եւ պահարան
 100 (?) մատիտ
 10 բարձրացիր բարձրացուր
 10 երկվեցեակ գլխարկ, 200 ածելի, 1 թնդանօթի դիտակ
 1 զինւորական պայուսակ, 1 ակնոց:
 362-3 սնտկ. 2 օճառ
 364-6 սնտկ. 3 Պալենցի գրքերը
 367-9 սնտկ. 3 Օճառ ընդամենը 5 սնտուկի մէջ
 348 ուկէս երկվեցեակ օճառ:

ԳԻՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐՈՒ ՑՈՒՑԱԿԸ ՖԱԶԹԻՒՌԻ ՀԱՄԱԶԱՅՆ

Emballées des 9 caisses N° **446-454**

Caisse	N° 446	2 machines	N° 214824	et 215033
Caisse	N° 447	2 machines	N° 214420	et 215080
Caisse	N° 448	2 machines	N° 215042	et 215064
Caisse	N° 449	2 machines	N° 214422	et 215031
Caisse	N° 450	2 machines	N° 215062	et 215072
Caisse	N° 451	2 machines	N° A.L. 214823	et A.L. 213813
Caisse	N° 452	2 machines	N° A.L. 214821	et A.L. 214659
Caisse	N° 453	2 machines	N° 214423	et 215075
Caisse	N° 454	2 machines	N° A.L. 214831	aussi que 8 dougeurs

Rubans Hamond bieolores, 5.- boits carton violer RONEO. 5 boits carbon noir Pelikan. 5.- boits carbon violi Régál et 41.- Gommess pour machine à écrire

Ապահովագրուած La Fédérale ընկերութեան 1000 ոսկիի

RÉPUBLIQUE D'ARMÉNIE
MISSION DIPLOMATIQUE
EN ALLEMAGNE
BERLIN

Բերլին,
8 Հոկտեմբեր 1920

Հայաստանի Հանրապետության
Դիվանագիտական Ներկայացուցիչ
Մեծարգոյ Պ. Թահթաճեան
Կ. Պոլիս

N° 820

Յարգելի հայրենակից

Հաստատելով 8 Սեպտեմբեր թուակիր գրութիւնս, որի պատճենը ներփակ ուղարկում եմ, պատիւ ունեմ յայտնելու, որ դեղերը 22 Սեպտեմբերին, “Ulysses” նաւով Ամստրդամից ճանապարհւած են:

Այստեղից ճանապարհւեցան երեկ պարոն Աշոտ Ալիսագեան, Միհրան Կոտիկեան եւ Խերանեան դեպի հայրենիք: Նրանք մտադիր են անցնել Կ. Պոլսով՝ այդտեղ ընդունելու եւ Բաթում ճամբելու Եդր. Աւետիքեանների հասցէին ուղղւած 25 հակ մեքենաներ A. R. Նշանով, որ նոյն “Ulysses” նաւով պիտի Պոլիս հասնեն: Կարող է պատահել, որ այդ պարոնները հնարաւորութիւն չունենան Կ. Պոլիս մտնել՝ իրենք իրենց գործը կարգադրելու, այդ դեպքում հեռագրով կը դիմեն ձեզ եւ խնդրում եմ չը մերժէք Ձեր աջակցութիւնը՝ պետք եղածը կարգադրելու որպէսզի այդ 25 հակ մեքենաները առանց ժամանակի կորուստի Կ. Պոլսից ուղարկւեն Երեւան՝ ծախքերը Բաթումում կամ Երեւանում գանձելու պայմանով:

Հաճեցէք ընդունել յարգանացս հաւաստիքը:

Ձեյմա Գրինֆիլդ

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ Կ. ՊՈԼՍՈՅ

ԱՍՏԱՐՃԵԱՆ ԽԱՆ ԱՍԱՄՊՕԼ

Կ. Պոլիս,
13 Հոկտեմբեր 1920

Ազնուաշուք
Տիար Ֆ. Թահթաճեան
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Հայ Հանրապետութեան
Կ. Պոլիս

Ազնուաշուք Տիար,
Պատիւ ունիմ հաղորդել Ձեր Ազնուութեան թէ մեծ. Տիար Պասմաճեանի
Անկախ[ութեան] Փոխառութեան արձանագրուած գումարին մէկ մասովը
հայ Հանրապետութեան հաշւոյն գնւած երեք հալ կերպասեղէնը կը գտնուի
Օսմ[անեան] Առեւտր[ական] Դրամատունը:

Ներփակ կը յանձնենք Ձեր Ազնուութեան յիշեալ կերպասեղէններու
հաշուեցուցակները խնդրելով որ բարեհաճիք յայտնել թէ որո՞ւն պետք է
յանձնենք զանոնք ղրկուելու համար Հայաստան:

Հաճեցեք ընդունիլ Ազնուաշուք Տիար, խորին յարգանացս հաւաստիքը:

Ի դիմաց Անկախութեան Փոխ[առութիւն] Կեդր[ոնական] Յանձն[աժողով]ի

Վարիչ
Արամ Ինճիճեան

ՀԱՅ ԲԱՆԱԿԻ ՆՈՒՐԱՀԱԲԱԶ
ԿԵԴՐ. ՄԱՐՄԻՆ

ՀԱՍՑԷ, ԲԵՐԱ ԳԱՊՐԻՍԹԱՆ ՓՈՂՈՑ 37
ԳՐԱՍԵՆԵԱԿ ԹԻԻ 10
ՄԹԵՐԱՆՈՑ, ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ԶԻՆՃԻՐԼԻ ԽԱՆ 23
Կ. ՊՕԼԻՍ

16 Հոկտեմբեր 1920

ԱԶՆՈՒԱՄԵԾԱՐ
ՊՐՆ. ԹԱՀԹԱՃԵԱՆ
ԴԻԲԱՆ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Հ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՊՈԼԻՍ

Հ. Բ. Նուիրահաւաք Կեդր. Մարմինս ներկայիւ Ձեզ կը տեղեկացնէ իր եօթերորդ [sic] առաքումը 8 Հոկտ. Պրն. Խատիսեանի մեկնած Իտալական ՖՐԱՆՑ ՖԵՐՏԻՆԱՆՏ շոգենաւով, Պաթում Թրանզիթ Երեւան R. A. պիտակով թիւ 332-369 38 կտոր հալ եւ սնտուկ:

Պ. Յակոբեանի գրքերը եւ մատենադարանը իր ամբողջ կազմածներով ամփոփուած են թիւ 335-340 եւ 342-345 թիւ սնտուկներուն մէջ, 341 թիւ Պ. Զերազի գրքերը որոնց ցուցակը Ձեզ յանձնուած է Նախապէս. 364-366 Պ. Պալենցի Նուիրած գրքերը, իսկ մնացեալ 332-334 զանազան իրեղէններ եւ 346—363 իրեղէններ եւ 360 ձեռք ՊՕՅ ՍԿԱՌԻՏԼԵՐՈՒ գգեստները իրենց յարակից կազմածներով, 367-369 դարձեալ այլ եւ այլ առարկաներ բանակի համար որոնց բաշխումը անձամբ պիտի կատարէ Մարմնոյս անդամներէն Պ. Գալուստ Էյնաթեան:

Սոյն ապրանքները ապահովագրուած են LA FEDERALE ընկ. մօտ 10000 ոսկիի: Զօնեմանը առնուած է Պրն. Աթապէկեանի անուան եւ յանձնուած Պ. Գալուստ Էյնաթեանի:

Ներփակ կը գտնէք վերոյիշեալ ապրանքներու մանրամասն ցուցակը: Ստացած ենք Նաեւ Ձեր 8 Հոկտ. թուակիր Նամակը որու համաձայն յիշեալ ապրանքները իրենց տեղը հասցնելու համար ձեռնա[ր]կուած է հարկ եղած աշխատութեանց:

Այս առթիւ հաճեցէք ընդունիլ մեր խորին յարգանաց հաւաստիքը:
Ի ԴԻՄԱՑ ՀԱՅ ԲԱՆԱԿԻ ՆՈՒՐԱՀԱԲԱԶ ԿԵԴՐ. ՄԱՐՄՆՈՑ
ԱՏԵՆԱՊԵՏ Արմենակ Ա. Է. Խորիկեան
Վ. ԱՏԵՆԱՊԵՏ ԴԻՐԻ Ա[րաքսի] Դ. Վարուժան

Առաջնորդարան Հայոց
ՀԱՄԱՐ 1875

Չմիւռնիա,
22 Հոկտ[եմբեր] 1920

Վսեմ[աշուք]
Պ. Ֆ. Թահտաճեան
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Հայ[աստանի] Հանրապետութեան
Կ. Պօլիս

Սեպտ[եմբեր] 21 թուակիրով յիշեցուցած էինք Ձեզ՝ Աղեքսանդրօբօլէն Չմիւռնիա փոխադրուելիք Մշեցի Տիկին Երանուհի Աբգար Խուրշուտեանի մասին նախապէս ղրկուած նամակները եւ սակայն դժբաղդաբար այդ գիրն ալ անպատասխանի մնաց նախորդներուն պէս:

Ինչպէս գիտեք, անոր իբր ճամբու ծախս՝ շուրջ ինն ամիս առաջ ղրկուած էր Ձեզ յիսուն (50) ոսկի, զոր ստացած եւ պէտք եղածը Աղեքսանդրօբօլ գրած ըլլալնիդ յայտնած էիք մեզ ժամանակին:

Մինչեւ այսօր սակայն այդ Տիկնոջ մասին ոչ մէկ տեղեկութիւն չի տրուեցաւ մեզ. մինչ իր ամուսինը յաճախ մեզ ներկայանալով տեղեկութիւն կը խնդրէ, եւ այլեւս ծանծրացած երկար սպասումէ, կը պահանջէ որ դրամը վերադարձուի իրեն, յայտնելով թէ ինք ծանօթ անձի մը հետ վերջերս գատեն դրամ ղրկած է կնոջը:

Ուստի, կը խնդրենք որ հաճիք լուսաբանել մեզ այս մասին, թէ ինչո՞ւ յապաղած է մինչեւ այսօր այդ կնոջը ժամանումը՝ եթէ դրամը ղրկուած է իրեն. իսկ եթէ ոեւէ լուր չունիք եւ կամ դրամը դեռ չէ ճամբուած, հաճեցեք վերադարձնել Առաջնորդարան, յիշեալ Աբգարին տրուելու համար:

Անշուշտ ներողամիտ կը գտնուիք այս ծանօտոյթին մասին եւ վերջ կուտաք խնդրոյն:

Ողջոյններով եւ աղօթարար

Առաջն[որդական] փոխանորդ
Եղիշէ ք[ա]հ[ա]ն[ա]յ Գնունի

ARMENIKH ΕΦΟΡΕΙΑ
ΚΑΣΑΜΠΑ

EPHORIE ARMÉNIENNE
CASSABA

Թաղական խորհուրդ Հայոց

Գասապա,
26 Հոկտ[ե]մ[բեր] 1920

Վսեմապատիւ
Տիար Թախտաճեան
Դիւանագիտական ներկայացուցիչ
Հայաստանի Հ[անրապետութեան
Կ. Պոլիս

Վսեմ[ապատիւ] Տէր
Ի նպաստ հայ Բանակի տեղւոյս մէջ հանագանակուած գումարով (600)
կտոր ճերմակեղէններ՝ այսինքն շապիկ եւ անդրավարտիք. Ձեր Վսեմութեան
միջոցաւ Երեւանի կառավարութեան ղրկուելու պայմանաւ. այսօր յանձնած
ենք Իզմիրի «Սպայից Միութեան» ծրարուած 2 հակերու մէջ, որոնց արժէքն է
(830) ոսկի. Նոյնպէս գատ սնտուկ մը դեղորայք բանակի պիտոյից յատկացուելի
(200) ոսկի թղթադրամ արժողութեամբ:

Արդ, կը խնդրուի յիշեալ հակերը եւ սնտուկը ստանալ «Սպայից միութենէն»
եւ առ այդ պէտք եղած ընկալագիրն ուղարկել շիտակ մեզ, առ ի գիտութիւն,
մինչեւ Երեւանի հանրապետութեան պաշտօնական ստացագրին ստացուիլը:

Որուն համար յայտնելով մեր խորին յարգանքը ակնկառոյց կ'սպասենք Ձեր
Վսեմ[ապատիւ] պատասխանին
Թաղ[ական] խորհուրդ Գասապայի

Ատենադպիր
Գեորգ Կ. Շիրինեան

Ատենապետ
Չաքէ Չաքէեան

Կ. Պօլիս Բերա Թոքաթլեան
Պանդոկ թիւ 76

1920 Հոկտ[եմբեր] 27

Կ. Պօլիս Վեզիր հան թիւ 5

Վսեմաշուք Տիար

Հ. Հ. Դիւանի ներկայացուցիչ

Պրն. Թահթաճեանին

Ասկէ չորս ամիս առաջ ճիշտ յունիս 20ին մեր Սղերդու Հայրենակցական Միութեան կողմէ Երեւան մեր քաջարի Բանակի զինւորներուն պիտոյից համար ղրկուելիք (14½) տասն եւ չոր[ս] օսմ[անեան] ոսկի թղթադրամներ Ձեզ յանձնեցինք եւ խնդրեցինք որ լրագրաց մէջ հրատարակել տաք, բայց դուք մեզի ըսիք որ Երեւան պիտի ղրկէք եւ ստացագիր առնելէ յետոյ պիտի ընէք. հակառակ որ մինչ օրս ոչ ստացագիր բերիք եւ ոչ ալ լրագիրներաց [sic] մէջ հրատարակեցիք, ուստի Միութիւնս այս օրեր կրկին Երեւան մեր քաջարի Բանակի համար մասնաւոր գումար մը եւս ղրկելու նպատակի մէջ ըլլալով՝ կը խնդրեմ վերոյիշեալ դրամի մասին ո եւ է ծանուցում մը ընել տաք, որպէսզի Միութիւնս ինք ալ միամտուի եւ ես ալ գանգատներէն ազատիմ. վասն որոյ զմեզ շնորհակալ կը թողուք:

Մնամ Ձեզ մեծաւ յարգանօք

Սղերդի Հայրենակցական Միութեան նախագահ
Արշակ Մ. Չերտեւեան

John A. Galani
CONSTANTINOPLÉ
ADRESSE TELEGRAPHIQUE JOGALANI
TELEPHONE : PERA 1784

Constantinople, le 28 Octobre 1920
Merkez Rihtim han, 18/20 Galata

Ref. N° **S. 568**
(Prière de citer)

Monsieur F. Tahtadjian En Ville

Monsieur,
Me référant à mon avis du 14 crt. je viens par la présente vous prier de vouloir bien faire retirer l'Ordre de livraison pour la douane, contre paiement de Ltqs. 9.50.- plus ma commission Ltqs.3.- relatif aux 14 caisses Kos.1025 expédiées d'Allemagne et qui sont déjà arrivées.

Comme la marchandise est grevée chaque jour des frais de stationnement à la douane il est dans votre intérêt de faire retirer la marchandise le plus tôt possible.

Veillez agréer, Monsieur, mes salutations distinguées.

CK/

Ջոն Ա. Գալանսիին
 Կոստանդնուպոլիս
 Հեռագրային հասցե՝ Ջոզալանի
 Հեռախոսահամար՝ Բերա 1784

Կոստանդնուպոլիս, 28 հոկտեմբերի, 1920
 Մերկեզ Ռիիթիմ հան. 18/20 Գալաթա

Յղում. Թիւ **Ս. 568**
 (խնդրում ենք յիշատակալել յղումը)

Պարոն Ֆ. Թահթաճեանին
 Քաղաքացիական ծառայութիւն

Պարո՛ն,
 Յղելով ամսի 14-ի իմ նամակին՝ սոյն հաղորդագրութեամբ խնդրում եմ Ձեզ կարգադրել, որ Գերմանիայից առաքուած 14 արկղերը, որոնք արդէն տեղ են հասել, վերցունեն մաքսատնից՝ 9. 50 թուրքական լիրա վճարի դիմաց, որին գումարւում է իմ միջնորդավճարը, որ 3 թուրքական լիրա է կազմում:

Քանի որ մաքսատունն ամեն օր յաւելեալ տուրք է աւելացնում ապրանքի սակագնին կայանման դիմաց, Ձեր իսկ շահերից է բխում հնարաւորինս շուտ ստանալ վերոյիշեալ արկղերը:

Խնդրում եմ ընդունել, պարո՛ն, յարգալից իմ ողջոյնները:
 Ս. Կ.

«ԿԻՐԻՆԻ»

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Հիմնուած Կ. Պոլիս 1920

“GURINE”

UNION NATIONALE ARMÉNIENNE

Fondé à Constantinople en 1920

Հասցէ Շերիֆ Փաշա խան թիւ 33

Կ. Պոլիս,
30 Հոկտեմբ[եր] 1920

Համար **19**

Ազնուաշուք

Պր. Փիլիպպոս Թահթաճեան

Հ[այաստանի] Հ[անրապետութեան]

Կ. Պոլսոյ

Դիւանագիտական ներկայացուցիչ

Բերա

Վաթսուկական թուականներուն Հալէպ հաստատուած Կիւրինցի վաճառականներու եւ գաղթականներու միջեւ կազմուած է բարեսիրական եւ կրթական միութիւն մը՝ «Վահանեան Ընկերութիւն» անուան տակ:

Յիշեալ ընկերութիւնը իր անդամավճարներով եւ Առեւտրական ձեռնարկներով գոյացած շահաբաժիններով արդէն 1882 թուին կը հաշուէր 4000 օսմ[անեան] ոսկի (ոսկեդրամէն աւելի գումար մը հիմնական դրամագլուխ: Այս գումարովը յիշեալ ընկերութեան հիմնադիրներէն եւ գլխաւոր անդամներէն Տիար Յարութիւն Մարանեան՝ մօտ 2900 ոսկի ծախքով շինել տուած է (5) հինգ վաճառատուն վրան երկու տունով՝ Պաթումի «տօն տը քօփօ» եւ «քօրսաքօվսքաիա» փողոցներու անկիւնը: Նոյնպէս 450-500 ոսկիով գնած է ընդարձակ պարտեզով մեծ տուն մը «Սամսոն» հայոց թաղին մէջ: Դրամագլուխէն աւելցած բաժինը մնացած է Պր. Յ[արութիւն] Մարանեանի քով, իսկ վերոյիշեալ կալուածները արձանագրուած են Պ. Պ. Յ[արութիւն] Մարանեանի եւ Հճ. Մարտիրոս Արապեանի անուան: Յիշեալ կալուածներու հասոյթէն 35 տարիներէ ի վեր Կիւրինի հայոց հանր. հաստատութիւններէն ոչ մէկը կարողացած է իրապէս օգտուիլ:

Կիւրինի քաղաք[ական] ժողովը 1908-ին Օսմ[անեան] Սահմանադրութենէն վերջ դիմում ըրած է Պր. Յ[արութիւն] Մարանեանի, որուն ի պատասխան յիշեալը նամակով մը հաստատած է ազգին պահանջը: Բայց ոեւէ ձեռնարկի

մասին ակնարկութիւն չէ ըրած ազգը օրինաւորապէս իր իրաւունքին տեր դարձնելու համար: Զաղաք[ական] ժողովը սակայն առանց յուսահատելու շարունակած է իր ձեռնարկները եւ 1911-ին Պոլիս գտնուած Կիւրինցիներէ մասնախումբ մը կազմած է խնդիրը հետապնդելու, որոնց գրած նամակներուն ոեւէ պատասխան չէ տուած Պ. Յարութիւն] Մարանեան, մինչեւ որ մասնախումբին կողմէ յիշեալ ընկերութեան հիմնադիրներէն եւ խնդրոյն մօտէն տեղեակ անձնաւորութիւններէն պր. Մանուկ Գոչունեանը կը ղրկուի Մանչեսթըր այս մասին հետապնդումներ կատարելու համար. բայց պր. Յարութիւն] Մարանեան զայն եւս կը ճամբէ մօտաւոր թուականաւ Պոլիս գալու եւ խնդիրը կարգադրելու պատիր խոստումներով: Այսու հանդերձ թէ Կիւրինի քաղաք[ական] ժողովին եւ թէ պր. Մանուկ] Գոչունեանի գրած եւ օրինակները ներփակ նամակներով կը խոստովանի Կիւրինի հայոց Ազգ[ային] իրաւունքները:

Մինչ այս մինչ այն ծագեցաւ Ընդի. Պատերազմը, որմէ վերջ յիշեալ յանձնախումբը խնդիրը կրկին ձեռք առաւ եւ 17 Սեպտ[եմբեր] 1919 թուակիր պաշտօնագրով դիմեց Սրբազան պատրիարքին:

Նորին Սրբազնութիւնը իր Անգլիա ըրած ճամբորդութեան ժամանակ տեսնուած է Պ. Յարութիւն] Մարանեանի հետ, բայց առանց ոեւէ իրական քայլի միմիայն դարձեալ Պոլիս գալու եւ խնդիրը կարգադրելու խոստումներով ճամբած է նորին սրբազնութիւնը: Յիշեալ մասնախումբը հայրենակցական Միութեան կազմութեամբ՝ լուծուած եւ իր իրաւունքները փոխանցած է Միութեանս:

Արդ նկատի ունենալով Պր. Յարութիւն Մարանեանի տարիքի յառաջացումը եւ վերահաս մահուան հաւանականութիւնը, որմէ վերջ ոեւէ կերպով կարելի պիտի չըլլայ ազատել այդ կալուածները եւ առկախ հաշիւները իր ժառանգորդներէն, ուստի պիտի խնդրէինք Հ. Հ. Կառավարութենէն, որպէսզի հարկ եղած բոլոր օրինական միջոցները գործածէ սոյն կալուածները Ազգին արձանագրել տալու եւ «Վահանեան Ընկերութեան» ունեցած բոլոր առկախ հաշիւները փոխանցելու:

Յարգանօք

Ի դիմաց «Կիւրինի» Հայր[ենակցական] Միութեան Վարչութեան

Ա. Դպիր

Ա. Թերճանեան

Ա. Պետ



RÉPUBLIQUE ARMÉNIENNE
DÉLÉGATION
A LA CONFERENCE DE LA PAIX
2845

27, AVENUE MARCEAU

PARIS,
le 30 Հոկտեմբեր 1920

Մեծ. Պ. Ֆ. Թահթաճեան
Հ. Հ. Դիւանագիտական Ներկայացուցիչ
Կ. Պօլիս

Մեծայարգ Հայրենակից,
Ինչպէս յայտնի է ձեզ Հայաստանի Հանրապետութիւնը ամենածանր ու
դժուարին օրեր է որ կապրի: Պօլշէվիկները մէկ կողմէն, քիւրտ ու թաթար
խումբեր միւս կողմէն եւ թրքական բանակները ուրիշ կողմէ, միաժամանակ
կարշաւեն մեր հանրապետութեան սահմաններուն վրայ, եւ եթէ չըլլար մեր
բանակին հերոսական կեցուածքը, ամբողջ հայկական աշխարհը վերածուած
կըլլար արդէն իսկ միացող աւերակներու կոյտի մը:

Բայց պետք չէ մոռնալ որ այդ բանակը բաղկացած է նոյն այն զինուորներէն որ
կռուեցան ռուսական բանակներու կողքին, որ մասնակցեցան կամաւորական
շարժումներուն, որ իրենց արիւնովը շաղախեցին ու կերտեցին հայկական
անկախ պետութիւնը, երկուք ու կէս տարիէ ի վեր կուրծք տուին անօրինակ
արհաւիրքներու եւ պահեցին պահպանեցին, ի գին ամէն զոհողութեան,
նորաստեղծ Հանրապետութիւնը: Այսօր նոյն այդ բանակն է որ առիւծի պէս
կուրծք կու տայ նորէն թշնամոյն յորդող ալիքներուն դէմ եւ, սա վստահ ենք,
դարձեալ, յաղթող պիտի գայ այս պայքարէն:

Բայց վերջապէս չէ կարելի սպասել, եւ արդար չէ նոյն իսկ սպասել, որ անիկա
յաւիտենապէս իր վրայ վերցնէ հայրենիքի պաշտպանութեան հոգը: Այդ
բանակին մէջ կան - եւ շատ շատեր - որոնք 5-6 տարիներէ ի վեր, ամենադժնդակ
պայմաններու մէջ, զենքը թոպէ մը չեն ձգած իրենց ձեռքէն, միշտ պատնէշին
վրայ, եւ որոնք յոգնած են անշուշտ:

Հայաստանի Հանրապետութեան ենթարկուած այսօրուայ դժուարին
վիճակը, ուրեմն, որու տեւողութեան մասին ոչինչ կարելի է գիտնալ այժմէն,
եւ որ նորանոր զոհողութիւններ կրնայ պարտադրել մեզ, տարիներէ ի վեր
զենքի տակ յոգնած զինուորները փոխարինելու պահանջը եւ թիւրքահայ
նահանգներու նուաճման, խաղաղեցման ու պաշտպանութեան հոգսերը,

պարտականութիւն կը դնեն Հ. Հ. Կառավարութեան եւ իր Փարիզի Պատուիրակութեան վրայ, միջոցներ խորհիլ, ուժեղացնելու համար Հայաստանի բանակը արտասահմանեան երիտասարդ եւ կորովի ուժերով:

Վստահ՝ որ ամէն կերպով դուք կը բաժնէք մեր այս մտահոգութիւններն ու տեսակետները, կը խնդրենք որ հաճէիք մեզ հաղորդել, կարելի եղածին չափ արագ եւ ստոյգ կերպով, հետեւեալ տեղեկութիւնները, զոր կուզենք հաղորդել կառավարութեան, գործնական որ եւ է քայլ առնելէ առաջ:

ա) իբր կանոնաւոր զինուոր հայկական բանակին մէջ ծառայելու համար ո՞րքան կամաւորներ կարելի է արձանագրել ձեր շրջանին մէջ:

բ) այդ արձանագրուած կամաւորներու թուին քանի՞ տոկոսը ձեր շրջանի հայութիւնը իր միջոցներովը կրնաք տեղափոփել մինչեւ Հայաստանի սահմանը:

գ) արձանագրութեան գործը ո՞րքան ժամանակի մէջ կարելի է լրացնել:

Սպասելով ձեր պատասխանին, եւ յաջողութիւն մաղթելով ձեր ջանքերուն ընդունեցէք, Մեծայարգ հայրենակից, լաւագոյն գգացումներուս հաւաստիքը:

Հ. Հ. Պատուիրակութեան Նախագահ
Աւ[ետիս] Ահարոնեան

Յ. Գ. Քաղաքական ժողովոյ Ատենապետին ուղղուած ներփակ նամակը իր հասցէին յանձնել կամ չի յանձնելը կը ձգենք ձեր հայեցողութեան:

Հայ Սպայից Միութիւն
Կեդրոնատեղի:
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻ ՏՈՒՆ
ԻԶՄԻՐ
Union des officiers arméniens
Office:
MAISON DU PEUPLE ARMÉNIEN
SMYRNE

ՀԱՅ ԲԱՆԱԿԸ
Ամէն բանէ առաջ եւ ամէն բանէ վեր:

Իզմիր, 8 Նոյեմբեր 1920

Թիւ **185**
Յանձնարարեալ

Վսեմափայլ Տիար
Ֆ. Թահթաճեան
Դիւանագիտական Ներկայացուցիչ Հ[այաստանի] Հ[անրապետութեան]
Կ. Պոլիս

Վսեմափայլ Տէր,
Ամսոյս 5-ին Յունական “Spetzai” շոգենաւով Ձեր անուան բեռնաւորեցիկը Բ.Դ.
մարգայով 14 եւ 15 թիւ երկու սնտուկ՝ հետեւեալ պարունակութեամբ.

Սնտուկ թիւ 14:

300 կտոր անդրաձարտիկ գապօթէ
51 կապ սեւ բամպակ մանած
1 ծրար ճերմակ բամպակ մանած
300 կտոր ներքնաշապիկ գապօթէ
8 կտոր ներքնաշապիկ գապօթէ
1 ձեռք ամառուան զինուորական համազգեստ
1 կտոր կապոյտ մելթոն 10 իարտա
Պիսքսիի դոսի դեղ
24 Sunlight օճառ
4 հատ Gillette ածելիի մեքենայ, դանակներով, վրձինով, օճառով եւ երկու
հատ պաղլեղով:

Ներփակ Ձեզ կը դրկենք բեռնագիրը, ապահովագիրը եւ մաքսի
յայտարարութիւնը (պէյաննամէ): Սնտուկները մի միայն ծովային վտանգներու
դէմ ապահովագրուած են վեց հարիւր (600) ոսկիի փոխարէն իտալական Սո-

one Centrale Marit[t]ima ընկերութեան մօտ՝ որու Պոլսոյ ներկայացուցիչն է Mr. Joseph Modiano, Germanis Han 31/35 Stamboul

Յիշեալ սնտուկներուն համար տեղոյս մաքսը ի պահ (դէփօզիթ) դրուած է՝ նաեւ 600 դրշ., որով սնտուկները հոն հասնելուն հաճեցէք, ըստ առաջնոյն, տեղւոյդ մաքսային իշխանութենէն ստացագիր մը (իւմուխապէր) առնելով՝ մեզ դրկել որպէս զի կարելի ըլլայ ետ ստանալ սոյն գումարը:


Սնտուկներու պարունակութենէն 300 կտոր անդրավարտիքն ու 300 կտոր ներքնաշապիկը, ինչպէս նաեւ դեղերու տուփը, նուիրուած է Իզմիրի թեմէն Գասապայի հայութեան կողմէ:

Պոլսոյ Սպայից Միութեան ալ հարկ եղած տեղեկութիւնը տուած ենք այս մասին:

Խնդրելով որ, Վսեմափայլ Տէր, բարեհաճէիք գոյքերուն ապահով հասած ըլլալը տեղեկացնել մեզ:

Մնա[մ]ք խորին յարգանօք
Ի դիմաց Վարչութեան

Ատենադպիր



Ատենապետ
Արսէն Ս. Մարկոսեան

Ներփակ: 1 բեռնագիր
1 Ապահովագիր
1 Յայտարարութիւն
3

Քաղ[աքական] Ժողովոյ որոշման համաձայն վէսիգան կցուած է:
31/12/1920

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Հալեպ

UNION NATIONALE ARMÉNIENNE

ALEP (Syrie)

Հալեպ,

16 Նոյեմբեր 1920

Թիւ 1115

Վսեմապատիւ

Տիար Թահթաճեան

Դիւան[ա]գ[իտական] Ներկայացուցիչ

Հ[այաստանի] Հանրապետութեան

Կ. Պոլիս

Կը հաստատենք մեր 25 Մարտ 920 թուակիրը, որով կը ծանուցանէինք թէ Տոքթ. Տեր Պօղոսեանի հետօք Ձեզ կը դրկենք £430:1:10 գումար մը հինգ կտոր չէքերով յատկացուելու համար հայկ[ական] Հանրապետութեան բանակի անհրաժեշտ պետքերուն: Կը ցաւինք որ այս դրամի Ձեր կողմէ ստացուելուն լուրը թերթերէ միայն առինք, իսկ Ձեր Վսեմութենէն ցարդ պատասխան չառինք:

Այժմ դարձեալ թերթերէն կը տեղեկանանք թէ Հ[այաստանի] Հանրապետութիւնը «անկախութեան փոխառութիւն» անունով Նոր գործի մը ձեռնարկած է Նախորդ Վարչապետ Պ. Ա[լեքսանդր] Խատիսեանի լիազօրութիւն տալով այս մասին: Միութիւնս իր կարգին միշտ տրամադիր ըլլալով իր ոյժերը բերել ի սպաս Հ[այաստանի] Հանրապետութեան բազմադիմի պետքերուն, կը ցանկայ որ փութով Հալեպ դրկէք անկախութեան փոխառութեան պաշտօնաթուղթերէն եւ մուրհակներէն, որպէսզի հոս եւս ընդ փոյթ ձեռնարկենք այդ գործին մեր կարելիութեան սահմանին մէջ աջակցելու համար հայ պետութեան զօրանալուն ու բարգաւաճելուն: Սպասելով ուրեմն Ձեր Վսեմութեան Նամակին, մնամք խորին յարգանօք

Ի դիմաց Հալեպի Հայ Ազգ[ային] Միութեան]

Ատենադպիր

Տօքթ. Գ. Մուշեան

Ատենապետ

A. Altounyan

Բերա,
18 Նոյեմբեր 1920

Պատ. Տնօրէնութիւն
Հ. Առեւտրական դրամատան
Պօլիս

Հ. Հ. Գաղթային Վարիչ Պ. Մ[ատթէոս] Էպիփղաթեանի Ձեզ հետ ունեցած բերանացի համաձայնութեան համեմատ, Հ. Հանրապետութեան եւ Բանակի անունով հանգանակուած կամ ստացուած դրամները ի պահ պիտի մնան 4% տոկոսով Դրամատանդ սնտուկին մէջ: Հետզհետէ սա հաշիւ առնուած գումարներուն գործառնութեանց կանոնաւորման համար հաճեցէք մասնաւոր ընթացիկ հաշիւ մը բանալ եւ տեղեկացնել մեզ: Այս առթիւ յայտնելով մեր անկեղծ շնորհակալութիւնները Ձեր ցոյց տուած բարեացակամութեան համար:

Յարգանք
Հ. Հ. Պօլսոյ Դիւան. Ներկայացուցիչ

ԲԺԻՇԿ ԿՈՐԵԿԵԱՆ
ԲԵՐԱ

Կ. Պոլիս,
21-11-1920

Ազնուաշուք
Պր. Թահթաճեան
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Հայ Հանրապետութեան
Կ. Պոլսոյ

Նկատելով որ, Հայ Հանրապետութիւնը ժանտախտի պատուաստի պէտք ունի,
կը փութամ իմ կողմէ հայթայթուած 1000 կրամ ժանտախտի պատուաստը
գոց սնտուկի մը մէջ դնելով Ձերդ Ազնուութեան մատուցանել, խնդրելով որ
պէտք եղած տեղը դրկելու բարեհաճութիւնը եւ ծանօթոյթը ունենաք:

21-11-1920

Յարգանօք
Ազգ. Խնամ. Բժիշկ
Տոքթ. Կորեկեան

ՀԱՅ ԲԱՆԱԿԻ ՆՈՒՐԱՀԱԲԱՔ ԿԵՂՐ. ՄԱՐՄԻՆ

ՀԱՍՑԷ, ԲԵՐԱ ԳԱՊՐԻՍԹԱՆ ՓՈՂՈՑ 37

ԳՐԱՍԵՆԵԱԿ ԹԻԻ 10 ՄԹԵՐԱՆՈՑ, ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ԶԻՆՃԻՐԼԷ ԽԱՆ 23

Կ. ՊՕԼԻՍ

Կ. Պօլիս,
Նոյեմբեր 26 1920

Ազնուամեծար

Տեար Փ. Թահթաճեան

Հ. Հանրապետութեան Դիւան. Ներկայացուցիչ

Կ. Պոլիս

Ձեր յանձնարարութեան համաձայն Գերմանիայէն եկած դեղերը եւ երեք պարոններու Միհրան Կոտիկեանի, Մովսէս Խերանեանի եւ Աշոտ Ալիսագեանի պատկանած մեքենայները ղրկուած են ՖՐԱՆՑ ՖԵՐՏԻՆԱՆՏ շոգենաւով Նոյեմբեր 6ին: Զօնեսմանները Պրն. Թորգոմ Ղազարոսեանի հետ ղրկուած են Պաթումի Հ. Հանրապետութեան Ներկայացուցիչ Պրն. Աթապէկեանի:

Սոյն շոգենաւով ղրկուած է նաեւ բեռնատար օթմօսպիլը եւ 8 Նոյեմբերին Իտալ Լոյտ Թրիեսթինօի ԲՈՎԿԱ շոգենաւով ղրկուած 6 սնտուկ դեղօրայք եւ 5 հակ զգեստեղէններու Զօնեսմանները յանձնուած են Պրն. Ղազարոսեանի յանձնելու համար Պրն. Աթաբէկեանի:

Ներփակ Ձեզ կը ներկայացնենք մանրամասն ցուցակները: Մեքենաներու մանրամասն ցուցակը կը գտնուի իրենց տերերուն մօտ որոնք արդէն մեկնած են Պաթում: Ներփակ Ձեզ կը ներկայացնենք նաեւ մեքենաներու առաքմանց առթիւ եղած ծախքերը եւ պայմանները որոնց համաձայն միայն վերոյիշեալ պարոնները կրնան տեր դառնալ իրենց մեքենաներուն:

ԲՈՎԿԱ շոգենաւով ղրկուած է նաեւ վաճառականներու կողմէ հաւաքուած թիւլպէստները որոնց Զօնեսմանը արդէն Ձեզ յանձնուած է:

Այս առթիւ հաճեցէք ընդունիլ մեր յարգանքներու հաւաստիքը:
Ի դիմաց Հայ Բանակի Նուիրահաւաք Կեդր. Մարմնոյ

ԱՏԵՆԱԴՊԻՐ

Յ. Յ. Հալլազեան

ԱՏԵՆԱՊԵՏ

Արմենակ Ա. Է. Խորիկեան

Constantinople,
le 12 Décembre 1920

République Arménienne
Mission diplomatique

N 445

Au très-Honorable,
Major D[avis] G. Arnold, Directeur-Administrateur du
"Near East Relief Committee",
En ville

Mon Commandant,
Faisant suite à notre conversation du 1 Courant, j'ai l'honneur de Vous informer que, par suite de Votre aimable autorisation, les 4 caisses de vêtements en flanelles, destinés aux réfugiés Arméniens se trouvant sur le territoire de la République Arménienne, ont été livrées aux dépôts de Votre Comité à Galata, pour être embarquées sur le premier bateau américain, partant pour Batoum et être expédiés de là, sans perte de temps, avec les marchandises appartenant au "Near East Relief Committee" à Erivan, où Votre représentant les mettra directement à la disposition de S. E. Mr. A. Khatissian, Président du Conseil.

Pour Votre information, j'ajouterai que le nom du donateur est : Andon Kalpakdjian, négociant en manufactures établi en Angleterre et se trouvant de passage à Constantinople. Les 4 caisses contiennent des vêtements chauds pour les réfugiés, pour une valeur de Lstg. 1238.

Je Vous serais bien reconnaissant, mon commandant, si Vous aviez la complaisance de faire parvenir ma lettre ci-incluse pour Mr. Khatissian, en même temps que les 4 caisses.

Veuillez agréer, mon commandant, avec mes très vifs remerciements, l'assurance de ma considération la plus distinguée.

Le représentant de la République Arménienne.
F. Tahtadjian

Կոստանդնուպոլիս,
դեկտեմբերի, 1920

Հայաստանի Հանրապետության
Դիւանագիտական առաքելութիւն

թիւ **445**

«Near East Relief Committee»-ի վարիչ եւ տնօրէն
մեծարգոյ մայոր Դ[էյվիս] Ջ. Առնոլդին

Քաղաքացիական ծառայութիւն

Պարո՛ն հրամանատար,
Ի պատասխան ամսի մէկին ունեցած մեր գրոյցի՝ պատիւ ունեմ Ձեզ տեղեկացնելու, որ Ձեր բարեհաճ արտօնութեամբ Հայաստանի Հանրապետութեան տարածքում ապաստանած հայ փախստականների համար նախատեսուած ֆլանելից հագուստների չորս արկղերը յանձնուել են Գալաթայի Ձեր կոմիտէի պահեստներին, որպէսզի առաջին իսկ ամերիկեան նաւով առաքուեն Բաթում, որտեղից էլ «Near East Relief Committee»-ին պատկանող ապրանքատեսակների հետ անյապաղ կառաքուեն Երեւան. այնտեղ Ձեր ներկայացուցիչն արկղերն անմիջապէս կը յանձնի Խորհրդի նախագահ Լորին Գերագանցութիւն պարոն Ա. Խատիսեանի տնօրինութեանը: Տեղեկացնեմ Ձեզ նաեւ, որ Նուիրատուի անունն է Անտոն Գալփաքչեան, մանուֆակտուրաների այս առեւտրականը, որն Անգլիայում է բնակւում, ժամանակաւոր այցով գտնւում է Կոստանդնուպոլսում: Այդ չորս արկղի մէջ փախստականների համար նախատեսուած տաք հագուստ է՝ 1238 լիրա ստերլինգ արժողութեամբ:

Ես Ձեզ մեծապէս երախտապարտ կը լինեի, պարո՛ն հրամանատար, եթէ Դուք առաքուող չորս արկղերի հետ մեծահոգաբար պարոն Խատիսեանին փոխանցէիք նաեւ Նրան հասցեագրուած իմ նամակը, որ կցում եմ ծրարին: Իմ խորին շնորհակալանքը յղելով Ձեզ՝ ինդրում եմ ընդունել, պարո՛ն հրամանատար, յարգանացս հաւաստիքը:

Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ
Ֆ. Թահթաճեան

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՊՐՈԻՍԱ
ARCHEVÊCHÉ ARMÉNIEN
BROUSSE

Պրուսա,
1 Դեկտեմբեր 1920

Դիւան
Թիւ **967**

Վսեմաշուք
Պ. Թահթաճեան
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Հայ Հանրապետական Կառավարութեան
Ի Կ. Պոլիս

Վսեմ[աշուք] Տէր,
Մեր Նախագահութեան տակ գումարուած Հայաստանի կարօտելոց
յանձնախումբը իր նուիրահաւաքութեան գործէն 1000 հազար ոսկիի գումար
մը հաւաքած եւ օսմանեան պանքային յանձնելով ընկալագիր մը առած
Ամեն[ապատիւ] Չաւէն պատրիարքի անունով զոր իր հասցէին ղրկեցինք
այսօր իսկ. Հաճեցէք ստանալ սոյն գումարը սրբազան Պատրիարք հօրմէ եւ
յատկացնել Բանակի օգնութեան, կը յուսանք որ մօտերս երկրորդ մասն ալ
ղրկենք:

Հաճեցէք ընդունիլ Վսեմ[աշուք] Տէր,
Մեր հայրական օրհնութիւնները

Առաջն[որդական] Տեղապահ Պրուսայի
Սարգիս Ծ. Վարդապետ

8 Décembre 1920

N° 987

Excellence

A. Aharonian, Président de la Délégation
de la République Arménienne
etc. etc. etc.

Monsieur le Président,

Ainsi que Vous le savez par mes précédentes communication le Haut-Commissariat de France est d'avis que, nous n'avons pas le droit de délivrer des passeports à des Arméniens nés en Turquie, qui n'auront pas fait régulièrement l'acquisition de la sujétion arménienne. Se basant sur ce point de vue, ledit Haut-Commissariat ne vise pas les passeports délivrés à des nationaux de cette catégorie. Après avoir bien lu le texte du traité de Sèvres en ce qui nous concerne, ainsi que les consultations y relatives de quelques sommités juridiques, je m'avoue que le point de vue dudit Haut-commissariat est exact. La seule échappatoire qui nous reste, c'est l'a 128 du traité de Sèvres, auquel nous ne sommes pas, que je sache, adaptés. Vous savez qu'ici nos compatriotes se munissaient de passeports de protégés spéciaux chez les français et chez les Anglais. C'étaient surtout les Arméniens se rendant aux Etats-Unis d'Amérique, qui voyageaient avec des passeports anglais. Je ne sais pas pourquoi, le Haut-Commissariat Britannique a cessé, il y a 5-6 semaines, de délivrer des passeports aux Arméniens. Depuis lors, je me suis arrangé de telle manière, que le Consulat américain vise les passeports que je délivre à nos compatriotes de Turquie pour l'Amérique. Cependant, je ne suis pas tranquille, surtout maintenant, et m'attends chaque jour à des difficultés présentant bien des inconvénients. Je dois vous dire que, les Arméniens partant pour l'Amérique sont de préférence originaires de Diarbékir, de Césarée, de Sivas, de Kharpout, etc. c. à d. des contrées qui resteront de toutes façons en dehors des frontières de la République Arménienne.

J'avais déjà, plus d'une fois, soulevé cette importante question et la Délégation m'avait répondu qu'elle était à l'étude, mais n'ayant rien reçu depuis lors, je voudrais voir tout à fait clair dans la matière et couvrir ma responsabilité. Voilà pourquoi, je viens, Vous prier, Monsieur le Président, de vouloir bien me dire d'une manière nette et précise, si j'ai le droit de délivrer des passeports à des Arméniens autochtones de la nouvelle Turquie, que les Alliés considèrent ici comme sujets Ottomans. Je dois poser la même question pour les territoires détachés de la Turquie, tels que Smyrne, la Thrace, etc., dont les habitants arméniens ont des formalités à remplir, pour jouir du droit d'option prévu en leur faveur. Sans

cela, les Grecs sont en droit de les considérer comme leurs concitoyens. Il en est de même pour nos nationaux de Bulgarie et de Roumanie. Tout ce monde ne veut pas comprendre qu'il a des formalités à remplir pour détacher légalement les liens avec la patrie d'adoption et pour acquérir régulièrement la nationalité arménienne.

Et tandis qu'on nous dit, à nous, d'Erivan, de chercher à multiplier le nombre des passeports délivrés à des Arméniens, je vois très souvent des com-patriotes de Mousch, de Van, de Bitlis, etc., qui arrivent de Tiflis avec des passeports du V. consulat d'Espagne là-bas, qui agit en l'occurrence comme chargé des intérêts turcs. D'après le spécimen que j'ai vu l'autre jour, ledit Vice-Consulat on a délivré 5-6 mille depuis le 1 Janvier 1920. J'ai signalé la chose à Erivan.

J'ai communiqué par écrit à Mr. Sinabian le télégramme le concernant.
Ci-joint, une lettre pour Athènes et quelques autres documents (copies).
Le document turc est le compte-rendu kémaliste de la chute de Kars.
Je joins à cet envoi une lettre par le général Bakradouni.

8 դեկտեմբերի, 1920

Թիւ 987

Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան նախագահ
 Նորին Գերազանցութիւն
 Ա. Ահարոնեանին
 Եւ այլն, եւ այլն, եւ այլն

Մեծարգո՛յ պարոն նախագահ,

Ինչպէս յայտնի է Ձեզ իմ նախորդ հաղորդագրութիւններից, Ֆրանսիայի դիւանագիտական ներկայացուցչութիւնն այն կարծիքին է, որ մենք իրաւունք չունենք անձնագրեր տրամադրելու Թուրքիայում ծնուած այն հայերին, որոնք հայկական հպատակութիւն չեն ընդունել, ինչպէս կարգն է պահանջում: Ելնելով այս տեսանկիւնից՝ վերոյիշեալ դիւանագիտական ներկայացուցչութիւնն անվաւեր է համարում այդ կատեգորիայի մեր հայրենակիցներին տրամադրուող անձնագրերը: Սեւրի համաձայնագրի տեքստին հանգամանօրէն ծանօթանալուց եւ այդ հարցերով զբաղուող ականաւոր իրաւաբանների հետ խորհրդատուական հանդիպումներ ունենալուց յետոյ ստիպուած եմ խոստովանել, որ վերոյիշեալ դիւանագիտական ներկայացուցչութեան տեսանկիւնը ճիշտ է: Մեզ մնացած միակ սողանցքը Սեւրի համաձայնագրի 128 յօդուածն է, որը մենք չենք ընդունել, որքան յայտնի է ինձ: Ինչպէս գիտեք՝ այստեղ մեր հայրենակիցները Ֆրանսիացիների եւ անգլիացիների միջոցով յատուկ հովանաւորեալների անձնագրեր են հայթայթում: Անգլիական անձնագրերով ճամփորդողներն առաւելապէս Ամերիկայի Միացեալ Նահանգներ մեկնող հայերն են: Զգիտեմ՝ ինչու արդէն հինգ-վեց շաբաթ է՝ Բրիտանական դիւանագիտական ներկայացուցչութիւնը դադարել է հայերին անձնագրեր տրամադրելուց: Այդ օրից ի վեր ինձ յաջողուել է ամերիկեան հիւպատոսութեանը համոզել, որ վաւերական համարուեն այն անձնագրերը, որոնք ես յանձնում եմ Թուրքիայի մեր հայրենակիցներին Ամերիկա մեկնելու համար: Բայցեւայնպէս, դա չի փարատում իմ անհանգստութիւնը, յատկապէս՝ հիմա, եւ ես օր օրի սպասում եմ բարդութիւնների, որոնք կարող են մի շարք անախորժութիւնների յանգեցնել: Հարկ եմ համարում Ձեզ ասել, որ Ամերիկա մեկնող հայերը գերազանցապէս Դիարբեքիից են, Կեսարիայից, Սեբաստիայից, Խարբերդից եւ մի շարք այլ վայրերից, այսինքն՝ շրջաններից, որոնք այսպէս թէ այնպէս դուրս են Հայաստանի Հանրապետութեան սահմաններից:

Ես արդէն մի քանի անգամ հնչեցրել եմ այս կարեւոր հարցը, եւ ամէն անգամ պատուիրակութիւնն ինձ պատասխանել է, որ զբաղուած է այն ուսումնասիրելով, սակայն մինչեւ օրս որեւէ պարզաբանում ստացած չլինելով՝

ուզում եմ յստակ պատկերացում ունենալ այս հարցի վերաբերեալ, որպէսզի ստանձնեմ պատասխանատուութեան իմ բաժինը: Ահա թէ ինչու եմ ուզում Ձեզ խնդրել, մեծարգո՛յ պարոն նախագահ, յստակ եւ որոշակիօրէն ինձ ասել, թէ ես իրաւունք ունե՞մ անձնագրեր տրամադրելու Նոր Թուրքիայի հայերին, որոնք օսմանեան կայսրութեան հպատակներ են՝ ըստ դաշնակիցների: Ստիպուած եմ Նոյն հարցը տալ Թուրքիայից անջատուած տարածքների՝ Չմիւռնիայի, Թրակիայի եւ մի շարք այլ նահանգների առնչութեամբ, որոնց հայազգի բնակիչները պարտաւոր են որոշ պաշտօնական ձեւակերպումներ անել՝ իրենց շնորհուած ազատ ընտրութեան իրաւունքից օգտուելու համար:

Այլապէս յոյներն իրաւունք ունեն նրանց իրենց հայրենակիցները համարելու: Նոյնը վերաբերում է Բուլղարիայի եւ Ռումինիայի մեր հայրենակիցներին: Այդ մարդիկ չեն ուզում հասկանալ, որ պաշտօնական այդ ձեւակերպումներն անհրաժեշտ են, որպէսզի իրաւական ճանապարհով չեղարկուեն այն կապերը, որոնցով իրենք կապուած են իրենց ապաստանած հայրենիքին, որից յետոյ միայն օրէնքի համաձայն՝ իրենց կարող են հայկական քաղաքացիութիւն շնորհել:

Եւ մինչ Երեւանից մեզ ասում են, որ հարկ է բազմապատկել հայերին տրամադրուող անձնագրերի թիւը, ես շատ յաճախ հանդիպում եմ Մուշից, Վանից, Բիթլիսից գաղթած հայրենակիցների, որոնք գալիս են Թիֆլիսից՝ զինուած անձնագրերով, որոնք այնտեղ գտնուող Իսպանիայի Ձեր հիւպատոսութիւնն է տրամադրել, որն այս դէպքում գործում է որպէս թուրքերի շահերը պաշտպանող յանձնակատար: Այն նմուշից, որը ես տեսայ օրերս, 1920 թուականի յունուարի մէկից ի վեր յիշեալ փոխհիւպատոսութիւնը 5000-6000 անձնագիր է տրամադրել: Ես սա յայտնել եմ պաշտօնական Երեւանին:

Ես պարոն Սինաբեանին գրաւոր ներկայացրել եմ իրեն առնչուող տեղեկութիւնները: Իմ այս նամակին կցում եմ պաշտօնական Աթէնքին ուղղուած մի նամակ եւ մի քանի փաստաթուղթ (պատճենները): Թուրքերէն փաստաթուղթը քեմալականների հաշուետուութիւնն է Ղարսի տապալման վերաբերեալ:

Այս նամակին կցում եմ զօրավար Բագրատունիի նամակը:

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Կ. Պոլիս,
8 Դեկտեմբեր 1920

Ազնուաշուք
Տիար Ֆ. Թահթաճեան
ԵՆ. ԵՆ. ԵՆ.

Պրոսայի Առաջն[որդական] փոխանորդը գիր մ'ուղղելով մեզ, կը յայտնէ թէ իր
Նախագահութեան ներքեւ կազմուած Հայաստանի կարօտելոց Նուիրահաւաք
մարմինը գործի ձեռնարկած եւ առ այժմ ձեռք բերած է 1000 ոսկի, ու այս
գումարը չէքով մը դրկելով մեզ, կը խնդրէ յանձնել Ձեր Ազնուութեան:
Փոխանորդը կ'աւելցնէ թէ երկրորդ մասն ալ պիտի դրկուի գալ շաբթու:

Արդ, համաձայն այս խնդրանքին ներփակ կը դրկենք Ձեզ նոյն 1000 ոսկւոյ
չէքը ու կը խնդրենք հաղորդել մեզ նոյն գումարին գանձումը, իմացնելու
համար յիշեալ փոխանորդին ի միամտութիւն:

Մնամք աղօթարար
Պատրիարք Հայոց
Չաւէն Արքեպիսկոպոս

R. A.
KOMMISSION POUR LA PREPARATION DE CADEAUX
Pour L'armée
De la République Arménienne

КОМИССИЯ
ПО ЗАГОТОВКЕ ПОДАРКОВЪ
для Арміи
РЕСПУБЛИКИ АРМЕНИИ
ХАРБИНЪ
Новый город Контора Зазунова

11-ին Դեկտեմբերի 1920թ.

N° 162

Հայոց Հանրապետութեան
Ներկայացուցչին
Կոստանդնուպոլիս

Ներկայ տարւայ օգոստոսի 22-ին խարբիւում գործող «Հայաստանի Հանրապետութեան Բանակին նուէրներ յայթայթող [sic] մասնաժողովը» ուղարկել էր Ճապօնիա պ. Պեդրակ Իզմիթլեանին 15 կապոց զանազան իրեր, որպէսզի Ձեր միջոցով այդ իրերը փոխադրւին Երեւան եւ յանձնւին Հայաստանի Հանրապետութեանը:

Նոյեմբերի 20-ին գրած նամակով պ. Իզմիթլեանը մեզ տեղեկացրեց, որ վերոյիշեալ իրերը նա փոխադրել է Ձեզ „Урава Мачи,, ճապօնական շոգենաւով (transit Port Said) եւ միաժամանակ ուղարկել է Ձեզ դուրիկադը եւ ապահովագրական ստացականը, որոնց պատճեն[ն]երը ստացել ենք եւ մենք:

Ենթադրելով, որ մի գուցէ պ. Իզմիթլեանի ուղարկած դուրիկադը եւ ապահովագրականը Դուք ժամանակին կամ բոլորովին չ'ստանաք, նախագահութեանս յանձնւած մասնաժողովի որոշման համաձայն, ուղարկում եմ Ձեզ այդ դուրիկադի եւ ապահովագրական պատճեն[ն]երը (N°4 եւ N°12457), որոնց ստանալու մասին, ինչպէս եւ իրերը Երեւան ուղարկելու մասին, խոնարհաբար կ'իսկոյրեմ Ձեզ չ'մերժել ժամանակին մեզ տեղեկացնել:

Նախագահ Յ. Գրդեւեանց
Քարտուղար Լ. Մելիք-Օհանջանեանց

ՊԱՏՐԻԱՐԹԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Կ. Պոլիս
13 Դեկտ[ե]մ[բեր] 1920

ՀԱՄԱՐ 5698

Ազնուաշուք
Տիար Ֆ. Թահթաճեան
Եւն. Եւն. Եւն.

Զմիւռնիոյ Առաջն[որդական] փոխանորդը գիր մ'ուղղելով մեզ, կը յայտնէ թէ նոյն քաղաքը բնակող Մշեցի Աբգար Խուրշիտեանի Աղեքսանդրաբօլ գտնուող իր կինը Տիկին Երանուհին Զմիւռնիա փոխադրելու համար իբր ճանապարհածախս շուրջ տասը ամիս առաջ նոյն Առաջնորդարանի միջոցաւ յիսուն օսմանեան ոսկի թղթադրամ դրկուած է Ձեր Ազնուութեան, սակայն ոչ մի պատասխան չէ ստացուած հակառակ իր կողմէ քանիցս Ձեզ գրուած նամակներուն, ուստի յիշեալ Փոխանորդը կը խնդրէ մեր միջոցաւ որ նոյն յիսուն ոսկւոյ գումարը իրեն վերադարձուի, յանձնուելու համար յիշեալ Խուրշիտեանի, քանի որ ցարդ ո՛րեւէ արդիւնք մը չ'է կրցած ձեռք բերուիլ:

Հաղորդելով Ձեր Ազնուութեան Զմիւռնիոյ փոխանորդին մեզի ուղղած վերոյիշեալ գրին պարունակութիւնը, կը խնդրենք որ հաճիք այդ մասին պետք եղած լուսաբանութիւնը տալ, հաղորդելու համար յիշեալ փոխանորդին:

Մնամք աղօթարար
Պատրիարք հայոց
Զաւէն Արքեպ[իսկոպոս]

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
MISSION DIPLOMATIQUE

Constantinople,
le 15 Décembre 1920

N° 995

À la délégation de la République Arménienne,
à Paris

En réponse à Votre message du 13 courant, je Vous ai câblé hier : "Message reçu annonçait changement régime et intimait ordre obéir, sous peine responsabilité selon lois temps révolutionnaires, etc. Il était signé Dro, Siline. Courrier en route Vous renseignera exactement sur situation ? En absence autre gouvernement, réitère demande instructions".

Voici maintenant le texte du radio du 6 courant:

Arménie proclamée République Soviétique. Jusque arrivée revkom (comité révolutionnaire) Arménie Soviétique à Erivan, pouvoir gouvernement transmis commandement militaire, à la tête duquel nommé camarade Dro Kanayan et commissaire RSFSR auprès commandant Arménie, camarade Siline. Tous établissements d'État, fonctionnaires et citoyens Arménie sont obligés exécuter sans retard ordres commandements militaire. Ceux qui agissent contre ordres du commandement, sont coupables et seront immédiatement responsables suivants lois temps révolutionnaires. Fin 3 Décembre N° 6815. Commandant des forces militaires d'Arménie, Dro. Commissaire RSFSR Siline".

Étant donné que le gouvernement a imposé à l'Arménie par contrainte est soviétique et le Gouvernement légitime, auquel fait allusion Votre dépêche, est encore à créer à Paris ou ailleurs et sa constitution prendra du temps, il est de toute nécessité que la Délégation, après avoir tiré au clair sa situation à elle à Paris, donne des instructions précises à nos représentants en pays Alliés. Inutile de rappeler à la Délégation qu'en ce qui me concerne, je n'ai pas de contact avec le Gouvernement turc et suis, pour ainsi dire, accrédité auprès des Hautes Commissariats des Grandes Puissances Alliées. L'exercice de mes fonctions qu'emporte, entre autres, la délivrance de passeports, que je ne peux pas libeller au nom de la République Soviétique.

Avant de vous envoyer ma première dépêche, j'ai consulté Mr. Sinabian, qui approuva pleinement mon idée de Vous demander des instructions.

Il me revient que les Autorités Consulaires Alliées à Batoum font des difficultés pour viser les passeports des Arméniens voulant quitter le Caucase

Հայաստանի Հանրապետության
Դիվանագիտական առաքելություն

Կոստանդնուպոլիս,
15 դեկտեմբերի, 1920

Թիւ 995

Հայաստանի Հանրապետության պատուիրակությանը Փարիզում

Ի պատասխան ամսի 13-ի Ձեր հաղորդագրության՝ երէկ ես Ձեզ հեռագիր եմ ուղարկել. «ստացուած հաղորդագրութիւնը ռեժիմի փոփոխութիւն է ազդարարում եւ կարգադրում ենթարկուել հրամանին հակառակ դէպքում պատասխանատուութեան կենթարկուել յեղափոխութեան ժամանակ գործող օրէնքների համաձայն եւ այլն: Ստորագրել էին Դրօն եւ Սիլինը: Նամակը ճանապարհին է եւ Ձեզ ճշգրիտ տեղեկութիւններ կտայ իրադրութեան մասին: Բացակայութեամբ այլ կառավարութեան՝ դարձեալ հրահանգներ եմ պահանջում է:

Ահաւասիկ ամսի 6-ի ռադիոհաղորդագրութեան տեքստը.

«Հայաստանը հռչակուել է Սովետական հանրապետութիւն: Մինչ ռեւկոմի (յեղափոխական յանձնաժողովի) ժամանումը, Երեւանում խորհրդային Հայաստան է հռչակուել, իշխանութիւնն ու կառավարութիւնը փոխանցուել են ռազմական հրամանատարութեանը, որ ղեկավարում են ընկեր Դրօ Կանայեանը եւ Հայաստանի հրամատարութեան ՌՍՖՍՐ-ի կոմիսար ընկեր Սիլինը: Բոլոր պետական հաստատութիւնները, Հայաստանի պաշտօնեաներն ու քաղաքացիները պարտաւոր են անյապաղ ենթարկուել ռազմական հրամանատարութեան կարգադրութիւններին: Նրանք, ովքեր կը գործեն ընդդէմ հրամանատարութեան կարգադրութիւնների, մեղաւոր կը ճանաչուեն եւ անմիջապէս պատասխանատուութիւն կկրեն՝ ենթարկուելով օրէնքով սահմանուած այն պատժամիջոցներին, որոնք գործում են յեղափոխութեան ժամանակ: Վերջ: Երեքը դեկտեմբերի թիւ 6815: Հայաստանի ռազմական ուժերի հրամանատար Դրօ: ՌՍՖՍՐ -ի կոմիսար Սիլին:

Ելնելով նրանից, որ Հայաստանին պարտադրուած կառավարութիւնը խորհրդային է, իսկ օրինական Կառավարութիւնը, որի մասին ակնարկում է Ձեր պաշտօնական հաղորդագրութիւնը, դեռ պետք է ստեղծուի Փարիզում կամ այլուր, եւ նրա կազմաւորումը ժամանակ կպահանջի, յոյժ անհրաժեշտ է, որ Պատուիրակութիւնը Փարիզում ունեցած իր կարգավիճակը պարզելուց յետոյ յստակ կարգադրութիւններ տայ դաշնակից երկրներում մեր պաշտօնական

ներկայացուցիչներին: Անօգուտ է պատուիրակութեանը յիշեցնել, որ ինչ վերաբերում է ինձ, ես թուրքական կառավարութեան հետ շփումներ չունեմ եւ այսպէս ասած՝ հաւատարմագրուած եմ ու մեր երկիրն եմ ներկայացնում դաշնակից մեծ տերութիւնների դիւանագիտական ներկայացուցիչներին: Իմ գործառնքների մէջ մտնում է անձնագրերի տրամադրումը, որոնք ես չեմ կարող կնքել խորհրդային Հայաստանի կնիքով:

Իմ առաջին հաղորդագրութիւնը Ձեզ ուղարկելուց առաջ ես խորհրդակցել եմ պարոն Սինաբեանի հետ, որը լիովին հաւանութիւն տուեց Ձեզնից հրահանգներ հայցելու իմ գաղափարին:

Ինձ հասած լուրերի համաձայն՝ Բաթումում դաշնակից պետութիւնների հիւպատոսական ծառայութիւնները դժուարութիւններ են յարուցում՝ անվաւեր ճանաչելով Կովկասից հեռանալ ցանկացող հայերի անձնագրերը:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Պրուսա

ARCHEVÊCHÉ ARMÉNIEN

BROUSSE

Պրուսա,
21 Դեկտ[եմբեր] 1920

Դիւան

Թիւ **998**

Վսեմաշուք

Պ. Թահթաճեան

Դիւանագիտական ներկայացուցիչ

Հայաստանի Հանր[ապետութեան] կառավարութեան

ի Կ. Պօլիս

Վսեմաշուք Տէր,

Կը հաստատենք մեր 1 Դեկտ[եմբեր] եւ 967 թիւ նամակը, ներկայիւ պիտի խնդրենք որ եթէ կարելի է Հայաստանի Բանակի օգնութեան համար Սրբազան պատրիարք հօր անուամբ գանձելի եւ իր միջոցաւ Ձեր Վսեմութեան յանձնելի 1000 ոսկիի Չէքը ստացա՞ք եթէ այո հաճէիք երկտողիւ մը մեզի իմացնել:
Մնամ յարգանօք աղօթարար

Առաջն[որդական] Տեղապահ Պրուսացի

Սարգիս Ծ. Վարդապետ

No. M. 2137/107

British High Commission, Constantinople.
21st. December, 1920

Sir,

With reference to your verbal enquiry of the 13th December, regarding the validity of passports issued by you, in view of the creation of an Armenian Soviet Government, I have the honour to inform you that the Allied High Commissioners have decided that such passports will still be recognised, and that the question of the recognition of passports of the Armenian Soviet Government will be left in abeyance until an actual case shall arise.

I have the honour to be,

Sir,

Your obedient Servant

Horace Rumbold

HIGH COMMISSIONER.

M. Taktajian,
Armenian Diplomatic Representative

No. M. 2137/107

Բրիտանական Բարձրագոյն Յանձնակատարութիւն, Կոստանդնուպոլիս
Դեկտեմբերի 21, 1920

Պարոն,

Դեկտեմբերի 13-ի՝ Ձեր բանաւոր հարցադրման առնչութեամբ՝ Ձեր կողմից տրուած անձնագրերի վաւերականութեան վերաբերեալ, նկատի ունենալով խորհրդային Հայկական Կառավարութեան ստեղծումը՝ պատիւ ունեմ Ձեզ տեղեկացնել, որ Դաշնակիցների Բարձրագոյն Յանձնակատարները որոշել են, որ նման անձնագրերը դեռեւս կճանաչուեն, եւ որ խորհրդային Հայկական Կառավարութեան անձնագրերի ճանաչման հարցը մնալու է առկախ, քանի դեռ փաստացի դեպք չի եղել:

Պատիւ ունեմ լինելու,

Պարոն,

Ձեր հնազանդ Ծառան՝

Հորէն Ռըմպոլտ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

Մ. Թահթաճեան

[M. Taktajian]

Հայկական Դիւանագիտական Ներկայացուցիչ

Հ. Հ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ՊՈԼՍՈՅ ԴԻԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԵԱՆ ԿԻՑ
ԳԱՐՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս,
30 Դեկտեմբեր 1920

Թիւ 23

Ազնուաշուք

Տիար Ֆ. Թահթաճեան

Հ. Հ. Դ. Ներկայացուցիչ

Հայ Հանրապետական Կառավարութեան]

Կ. Պոլսոյ

Վերջերս, Պոլսկարիայէն գալով Հայաստան մեկնելիք սպաներու 25 Դեկտեմբեր 970 թուակիր երկու նամակները ինձ յանձնած էիք, որպէսզի իրենց, դէպքերու բերմամբ Պոլսկարիայ վերադարձի համար, իբր ճամբու ծախս պահանջած 389,5 ոսկին առժամապէս գանձեն Ճակատամարտ Թերթի «Ճակատի համար» հանգանակած եւ իրենց մօտ գտնուած գումարէն եւ զայն յանձնէի՝ փոխան ստացագրի՝ նոյն սպաներու հաշւոյն իրենց պետին՝ Գնդ. Գրիգորովի:

Արդ կու գամ յայտարարել, թէ ըստ Ձեր յանձնարարութեան, նոյն գումարը յիշեալթերթի խմբագրութենէն գանձելով յանձնած եմ Հ. Գրիգորովի, ստանալով ստացագիր մը, ստորագրուած իրմէ եւ քարտուղարը Հ. Մելքոնեանէ:

Այս կերպով ուրեմն, նախապէս Պոլսկարիայ վերադարձող 7 պոլսկար եւ մէկ պոլսկարահայ սպաներու համար Պոլսոյ սպայից Միութենէն վճարուած (261,5) եւ հոս մնացողներու հետ ապրուստի ծախս կրկին նոյն Միութենէն վճարուած (200) ոսկիով ընդամենը այդ միսիային համար ծախսուած կըլլայ (851) օսմանեան] ոսկի:

Խորին յարգանք

Մ[ատթէոս] Էպլիղաթեան

BANQUE COMMERCIALE
OTTOMANE
CAPITAL: Ltqs. 100,000
Pour télégrammes :
MERCANTBANK
Cte Dépôt N° ord.
F° **354**

Constantinople, le 31 Décembre 1920
Stamboul

Monsieur
F. Tahtadjian E. V.
Nous avons l'honneur de vous remettre, ci-bas, l'extrait de votre Compte ordinaire chez nous arrêté au mi-décembre 1920 et soldant en votre faveur par:
Ltqs. 10534,70

Dont nous vous créditons à nouveau.

Veuillez l'examiner et nous dire le plus tôt possible si nous marchons d'accord, en nous retournant la formule d'autre part munie de votre signature.

Agréez, Monsieur, nos salutations empressées.
Banque commerciale ottomane

Օսմանեան առեւտրական բանկ
Կապիտալ. 100 000 թուրքական լիրա
Հեռագրի համար.
Մերկանտբանկ
Cte Dépôt N° ord.
F° 354

Կոստանդնուպոլիս, 31 դեկտեմբերի, 1920
Ստամբուլ

Պարոն Ֆ. Թահթաճեանին
Աստ

Պատիւ ունենք ստորեւ ներկայացնելու Ձեր ընթացիկ հաշուի քաղուածքը, որն արուել է 1920 թուականի դեկտեմբերի կեսին եւ ցոյց է տալիս, որ Ձեր հաշուին 10534, 70 թուրքական լիրային համարժեք գումար կայ: Գումար, որով մենք վերավարկաւորում ենք Ձեզ:

Խնդրում ենք ստուգել քաղուածքն ու հնարաւորինս շուտ տեղեկացնել մեզ՝ փոխհամաձայնեցուած են արդեօք մեր քայլերը, ապա ետ ուղարկել մեզ ձեւաթուղթը Ձեր ստորագրութեամբ:

Շնորհ արեք ընդունել, պարո՛ն, յարգալից մեր ողջոյնները:
Օսմանեան առեւտրական բանկ

Dates 1920	LIBELLE	Débit	Crédit	SOLDE JOURNALIER		Jours	NOMBRES	
				Débit	Créditeur		Débit	Créditeur
Nov. 29	[...]¹ du Journal Djagad-amard Ltq.		4000		4000			
	[...]² du Journal Vertchine lour Ltq.		5000		9000	10	9	900
	[...]³ du Journal Djagad-amard		1500		105000	21		2205
	Int. 4% (?) balance	20	3450		1053450	21		2205
		1053450			1053430			
		1053450	1053450			31		3105
Déc. 31 Solde à nouveau			1053450					
Chef comptable								

¹ Քնագրի մէջ յապաւում է, որ չի հասկցուիր:
² Քնագրի մէջ յապաւում է, որ չի հասկցուիր:
³ Քնագրի մէջ յապաւում է, որ չի հասկցուիր:

[1921]

N° 1070

Mrs. Tjeleppides & S Fafilopatis

Agents Maritimes

En ville

Messieurs,

Le s/s "Eristos" a débarqué ici, dernièrement, 15 colis venant de Kharbine via Kobe.

Ces colis contiennent un don patriotique de la part de la colonie arménienne de Kharbine, en faveur des soldats arméniens et se composent de vêtements, couverture, linges etc.

Je viens vous prier en conséquence de vouloir bien, si possible, faire une réduction maximale sur les frais qu'il y a à verser à votre agence pour déchargements et autres.

[1921]

Թիւ 1070

Պարոնայք Tjeleppides & S Fafilopatis

Ծովային գործակալներ

Քաղաքացիական ծառայութիւն

Պարոնայք,

Օրերս «Eristos»-ը ցամաք է հասցրել խարբինից առաքուած 15 փաթեթ, որոնք անցել են Կոփով:

Այդ փաթեթներում խարբինի հայկական գաղութի հայրենասիրական նուիրատուութիւնն է՝ ի նպաստ հայ զինուորների. այն բաղկացած է հագուստներից, վերմակներից, սպիտակեղէնից եւ այլն:

Ուստի՝ խնդրում եմ Ձեզ առաւելագոյնս զեղչել այն վարձավճարը, որ պէտք է մուծուի Ձեր գործակալութեանը՝ ուղեբեռը նաւից իջեցնելու եւ այլ ծառայութիւնների դիմաց:

Հ. Օ. Մ.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆ
ԿԵԴՐ[ՈՆԱԿԱՆ] ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս,
7 Յունվար 1921

Թիւ 228

Ազնուաշուք Տիար
Ֆերտինաստ Թահթաճեան
Հ[այաստանի] Հ[անրապետութեան] Պոլսոյ
Ներկայացուցիչ
Աստ

Կ. Պոլսոյ հայ Սպայից Միութեան վարչութեան երաշխաւորութեամբ
պուլկարահայ Ազգ[ային] Միութեան կողմէ վերադարձուելու պայմանաւ, Հ.
Օ. Մ.ի կեդր[ոնական] վարչութիւնս 522,50 օսմ[անեան] ոսկի տրամադրեց,
որուն մանրամասն հաշուեցուցակը ներփակ կը գտնէք, հոգալու համար
քաղաքական ծանօթ դէպքերու բերումով Պուլկարիա վերադառնալ ստիպուած
Հունգար եւ պուլկարահայ սպաներու անհրաժեշտ ծախքերը:

Արդ, Մեծայարգ Տէր, բարի եղէք ձեր բարձր միջամտութիւնը տրամադրել՝
պուլկարահայ ազգային միութիւնէն գանձելու համար վերոգրեալ գումարը: Այս
կերպով, աւելորդ անգամ մը ըլլալով, ցոյց տալով ձեր բարեացակամութեան
նոր մէկ ապացոյցին հետ կարելիութիւնը օգնութեան այնքան աղէխարշ
կոչերուն:

Հաճեցէք ընդունիլ, մեծայարգ Տէր, մեր խորին յարգանքներուն հաւաստիքը:

Դիւան

Հ. Օ. Մ.ի Կեդր[ոնական] վարչութեան

Ատենադպիր
Ե. Յովնանեան

Ատենապետ
Տօքթ. Վ. Ալեքսանեան

ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆ ՀԱՅԿ[ԱԿԱՆ] ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐ[ՈՆԱԿԱՆ] ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ Կ. ՊՈԼՍՈՅ
ԱՍՏԱՐՃԵԱՆ ԽԱՆ ՍՏԱՄՊՕԼ

Կ. Պոլիս, 13 Յունուար 1921

Վսեմաշուք Տիար Ֆ. Թահթաճեան
Դիւանագիտական ներկայացուցիչ
Հայկ[ական] Հանրապետութեան Եւ Նախագահ Անկախութեան
փոխառութեան պարտաթղթերու Տպագրութեան Յանձնաժողովոյ
Աստ

Վսեմաշուք Տիար,
Ի պատասխանի Ձեր Վսեմութեան 1920 Դեկտ[եմբեր] 31 թուակիր գրութեան
պատիւ ունիմ հաղորդելու՝ թէ Կեդր[ոնական] Յանձնաժողովս նկատի
առնելով Հայաստանի Հանրապետութեան քաղաքական արդի դրութիւնը,
ըստ որում օրինաւոր կառավարութիւն մը գոյունիւն չ'ունի հոտ այժմ, նկատի
առնելով որ Հայաստանի արդի մեծամասնական իշխանութիւնը յայտարարեց
արդէն թէ ոչ մէկ պարտք չի ճանչնար, ըլլայ այդ հին թէ նոր, նկատի
առնելով որ ներկայ պարագայներու մէջ Անկախ[ութեան] փոխառութեան
պարտաթղթերը տպագրել անկարելի է որովհետեւ տպագրութիւն դնելու
իրաւասու-նախարարները չ'ունին իրենց օրինաւոր յաջորդները, նկատի
առնելով որ Հայաստանի արդի մեծամասնական կառավարութեան
անուան փոխառութիւնը շարունակել անպատեհ է, նկատի առնելով որ
դրամական տիրող պայմաններն ալ շատ անսպաստ հանգամանք մը
ունին փոխառութեան համար պետական տեսակետով եւ նկատի առնելով
միանգամայն որ տեղւոյս մէջ փոխառութեան արձանագրողներ ոչ միայն
չեն վճարեր իրենց պարտական եղած գումարները, այլ նաեւ Նախապետ
իրենց կողմէ վճարուածներն ալ սկսած են ետ պահանջել, որոշեց առկախել
Անկախ[ութեան] փոխառութեան վերաբերեալ ամէն գործառնութիւն ինչպէս
նաեւ պարտաթղթերու տպագրութեան գործողութիւնները:

Կեդր[ոնական] Յանձնաժողովս իր յաջորդ նիստին մէջ հաստատեց
վերոյիշեալ որոշումը, աւելցնելով այս առթիւ որ մինչեւ յառաջիկայ 15
Մարտ 1921 վերջնական կարգադրութիւն մը ընել փոխառութեան հաշւոյն,
արձանագրողներու կողմանէ ց'արդ վճարուած գումարներու մասին:

Հաճեցէք ընդունիլ, Վսեմաշուք Տիար, իմ խորին ակնածանացս հաւաստիքը:
Ի դիմաց Հ. Հ. Անկախութեան փոխառութեան Կեդրոնական Յանձնաժողովոյ

Նախագահ
Արսէն Ս. Մարկոսեան

REPUBLIQUE D'ARMÉNIE

Représentant de gouvernement d'Arménie
auprès de Commandant en Chef de l'Armée Russe

28 Յունուարի 1921

N° 13

Constantinople
Rue Cabristan 47/4

Հայաստանի Հանրապետութեան
Ներկայացուցչին Թիւրքիայում
Մեծարգոյ Պարոն Թախթաշեանին

Խրիմից Կ. Պօլիս տեղափոխուած հայ սպաներից, զինւորներից ու քաղաքացիներից բաղկացած մի խումբ շնորհիւ Ազգային խնամատարութեան հոգացողութեան մերձ օրերս վերադառնում է Անդրկովկաս: Դրանց անձագրերը կամ վկայականները, որ ստացել են ինձանից, կամ ինձ ենթակայ հիւպատոսարաններից, այսինքն հարաւային Ռուսաստանի գլխաւոր հրամանատարութեան կից Ներկայացուցչութիւնից, նկատելի են կացուցանում վկայանատերերի կապը հակաբոլշեւիկեան Ռուսաստանի հետ: Իսկ զինւորականների վկայականնում ուղղակի ասուած է, որ նրանք ազատուում են ծառայութիւնից Հարաւային Ռուսաստանի Բանակում Հայկական Բանակը փոխադրուելու համար (ըստ իմ համաձայնութեան գլխաւոր հրամանատարութեան հետ) երկու հանգամանքն էլ, մանաւանդ երկրորդը վերոյիշեալների Անդրկովկաս վերադառնալուց յետոյ, կասկածի դժուար կացութեան, նոյնիսկ վտանգաւոր դրութեան մէջ են դնում նրանց: Ես կարելոր եմ համարում այս պարագան վաղօրօք շեշտել:

Անհրաժեշտ է, որ նրանք անձագրեր ունենան Ձեզ վստահացեալ Միսսիայից միւսների նման:

Ըստ սմին յայտնում եմ Ձեզ ի գիտութիւն, որ Վրացեանի կառավարութեան րադիոյից յետոյ, որով յայտնում էր, որ կառավարութիւնը լիկվիտացիայի է ենթարկում իւր դիւանագիտական յարաբերութիւնները գլխաւոր հրամանատարութեան հետ եւ խնդրում են ինձ Երեւան գնալ, պաշտօնական գրութիւն չեկաւ գլխաւոր հրամանատարութեան անունով, որպիսի կարգաւ ես նշանակուած էի Ներկայացուցիչ – յատուկ հաւատարմագրով գլխաւոր Հրամանատարին ուղղուած, հետեւաբար կապերի խզումը եւ յետ կոչումը չկարեւորուեց ըստ միջազգային օրէնքի եւ յարաբերութիւնների:

Տեղս հասած մեր պետական պաշտոնեաները, ի թիւս դոցա բրիգադայի հրամանատար Սեպուհը ինձ բացատրեցին, որ Վրացեանի կառավարութիւնը գոյութիւն է ունեցել մի օր, տեղի է ունեցել յեղաշրջում եւ Վրացեանի կառավարութիւնը օրինաւոր կարգաւ չի վերջացրել եւ ձեւակերպել Գ. հանրապետութեան ներկայացուցչութեան վերացումը կից գլխաւոր հրամանատարութեան եւ այդ պատճառաւ իրենք անսպասելի գտան Միսսիայի դադարումը:

Աչքի առաջ ունենալով, որ ինձ վստահացեալ ներկայացուցչութիւնը օրինապէս չի լուծուած, հետեւաբար ըստ պետական օրէնքի պիտի շարունակի իւր գոյութիւնը, ես պարտաւոր գտայ ինձ վերսկսել նրա գործունեութիւնը ըստ օրինակի մեր միւս ներկայացուցչութիւնների արտասահմանում, մանաւանդ որ այս կապի պահպանումը կարելոր է աչքի առաջ ունենալով քաղաքական հեռատեսութիւն:

Յարգանքոք հայկական բանակի գլխաւոր
հրամանատարութեան կից ներկայացուցիչ
Յ[ովհաննէս] Սաղաթէլեան

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Պրուսա

ARCHEVÉCHÉ ARMÉNIEN

BROUSSE

Պրուսա, 7 Փետրվար 1921

Դիւան Քաղ[աքական] Ժողովոյ

Թիւ 27

Վսեմափայլ Տիար Պ. Թահթաճեան

Հ[այաստանի] Հ[անրապետութեան] Կ. Պօլսոյ

Դիւանագիտական ներկայացուցիչ

ի Կ. Պօլիս

Վսեմափայլ Տէր,

Նկատի ունենալով ներկայիս Կեդր[ոնական] խնամատարութեան անձուկ վիճակը, հոս թէւ տարի մը առաջ հայրենիքի տուրքը հաստատուած՝ սակայն քաղաքական վերջի անցքերու պատճառաւ կարելի չէ եղած պէտք եղած հայրենիքի տուրքի գումարը գանձել:

Ուստի պիտի խնդրենք որ հաճէիք Բանակի օգնութեան համար հաւաքուած եւ Ձեր Վսեմութեան ղրկուած հազար ոսկի թղթադրամը՝ զոր Հայաստանի վերջի անցքերուն պատճառաւ կարելի չէ եղած իր նպատակին հասցնել՝ յանձնել տոյն դրամը Կեդր[ոնական] Քաղ[աքական] Ժողովոյ յանձնուելու համար զայն ելմտական յանձնաժողովոյ: Մենք պիտի աշխատինք հոս հայրենիքի տուրքին գանձուած եւ գանձուելիք դրամները անձեռնմխելի ըլլալով ի պահ դնել եւ ապագային Ձեր Վսեմութեան շնորհիւ դարձեալ իր նպատակին (Բանակի օգնութեան) հասցնել:

Վսեմ[ափայլ] Տէր, կը սիրենք յուսալ թէ Դուք եւս համամիտ պիտի գտնուիք մեր այս կարգադրութեան կարելորութիւն տալով տալով ներկայիս մեր դառնացեալ եւ դժբաղդ հոգեհատորներուն որոնք կարօտ են մեր ամենուն գթութեան:

Ընդունեցէք Վսեմաշուք Տէր, մեր խորին յարգանաց հաւաստին
ի դիմաց Քաղ[աքական] Ժողովոյ Պրուսայի

Ատենադպիր

Գ. Յակոբեան

Ատենապետ

Տօքթօր Սարգիս Շէհիրլեան

ՀԱՄԱՐ 585

Հեռաձայնի թիվ 1328

Կ. Պոլիս,
12 Փետրվար 1921Ազնուաշուք
Տիար Ֆ. Թահթաճեան
ԵՆ. ԵՆ. ԵՆ.

Պրուսայի Քաղաքական Ժողովը գիր մ'ուղղելով կը խնդրէ որ ասկէ առաջ հայ Բանակին ի նպաստ Ձեր Ազնուութեան դրկուած 1000 ոսկւոյ գումարը, որ վերջին դէպքերուն հետեւանքով իր նպատակին գործածուած չ'է, գանձուի եւ յատկացուի նոյն քաղաքի Հայրենիքի տուրքին ի հաշիւ:

Ազգային Կեդր. Վարչութեան Քաղաք. Ժողովը նկատի առնելով խնդիրը, հարկ դատեց տեղեկանալ թէ այդ մասին ի՞նչ կը խորհի Ձեր Ազնուութիւնը եւ թէ կարելի՞ է գոհացում տալ յիշեալ Քաղաքական Ժողովի այս առաջարկին, եւ հետեւաբար սպասելով Ձեր պատասխանին՝ ըստ այնմ հաղորդելու համար վերոյիշեալ Քաղաքական Ժողովին,

Մնամք ողջունիւ
ԱղօթարարՊատրիարք Հայոց
Զաւէն Արքեպիսկոպոս

BANQUE IMPÉRIALE OTTOMANE
Direction Générale

Constantinople,
le 30 Mars 1921

Monsieur Ferdinand Tahtadjian
Représentant Diplomatique de l'Arménie
Hôtel Tokatlian
En ville

Monsieur le Représentant,
Nous avons l'honneur de vous informer que suivant les instructions télégraphiques de notre Agence de Paris nous tenons à votre disposition, d'ordre de London County West and Parrs' Bank Ltd., et pour compte de Mr. Kotcharian, la somme de:

Frs.25.000- que veuillez faire encaisser à nos guichets en nous retournant dûment signée la quittance dont nous vous remettons sous ce pli la formule en double exemplaire.

Veuillez agréer, Monsieur le Représentant, l'assurance de notre considération distinguée.

BANQUE IMPERIALE OTTOMANE



ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՆԿ
Գլխավոր վարչություն

Կոստանդնուպոլիս,
30 մարտի, 1921

Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ
պարոն Ֆերդինանդ Թահթաճեանին
Թոքաթեան հիւրանոց
Քաղաքացիական ծառայութիւն

Պարոն դիւանագիտական ներկայացուցիչ,
Մենք պատիւ ունենք Ձեզ տեղեկացնելու, որ ըստ Փարիզեան մեր
գործակալութեան՝ հեռագրով ստացուած ցուցումների՝ մենք պատրաստ
ենք Ձեզ տրամադրելու «London County West and Parrs' Bank Ltd»-ի միջոցով
առաքուած եւ պարոն Քոչարեանին հասցեագրուած 25 000 ֆրանկ գումարը:

Այն կարող էք կանխիկացնել մեր դրամարկղերից մէկում՝ մեզ ուղարկելով
յաւուր պատշաճի ստորագրուած անդորրագիրը, որից երկու օրինակ կցում
ենք սոյն նամակին:

Թոյլ տուէք արտայայտել, պարոն դիւանագիտական ներկայացուցիչ, մեր
խորին ակնածանքը:

Օսմանեան կայսերական բանկ



Հ. Օ. Մ.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆ
ԿԵԴՐ[ՈՆԱԿԱՆ] ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, 31 Մարտ 1921

ՊԱՀՃԷ ԳԱԲՈՒ, ՃԷԼԱԼ ՊԵՅ ԽԱՆ, ԹԻՒ 38
ԹԻԼ 279

Ազնուաշուք Տիար Ֆերտիսանտ Թահթաճեան
Հ[այաստանի] Հ[անրապետութեան] Պոլսոյ
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Աստ

Տէր.

Հայաստանէն հասած վերջին ստոյգ տեղեկութիւնները սովի ահաւոր սպառնալիքը կը բերեն մեզի: Հայ ժողովուրդի ապահովուած մասը իր գերագոյն ճիգը պէտք է լարէ օգնութեան հասնելու եւ այս կերպով արգիլելու կրկնութիւնը 1918-ի դժբախտ օրերուն որ մեր հայրենակիցներէն բազմաթիւ հազարներ սովամահ ինկան: Հ.Օ.Մ.-ը իր վերջին նիստը ամբողջովին յատկացուց ուսումնասիրութեան համար այն միջոցներուն որոնցմով կը կարծենք օգնութեան հասնիլ տարաբախտ եղբայրներուն: Այս ուղղութեամբ մեր պատուիրակները յարաբերութեան մէջ մտած են Ամեր[իկեան] Նպաստամատոյցի Պոլսոյ Ներկայացուցիչներուն հետ: Բայց, որպէսզի մեր աջակցութիւնը զգալի ըլլայ, անհրաժեշտ է որ այդ նպատակին համար տրամադրուին այն բոլոր գումարները որոնք Հայ թիւրք պատերազմի բռնկումին հետ զանազան անուններով հայ թերթերու միջոցաւ հաւաքուեցան եւ տակաւին պահուած կը մնան Պոլսոյ մէջ: Այս նպատակով դիմում կատարած ենք նաեւ թերթերու վարչութիւններուն:

Արդ, կը խնդրենք որ Դուք եւս ձեր հաւանութիւնը տաք մեզի փոխադրելու համար դրամատան մէջ ձեր անունով պահուած գումարները, նկատի առնելով խնդրին բովանդակ լրջութիւնն ու կարեւորութիւնը բարի եղէք անմիջապէս ձեր որոշումը կատարել:

Յարգանքներով

Դիւան

Հ. Օ. Մ.ի

Կեդր[ոնական] Վարչութեան

Ատենադպիր
Յ. Յ. Հալլաբեան

Ատենապետ
Տօքթ. Թովմաս Ալեքսանեան

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Կ. Պոլիս,
8 Ապրիլ 1921

ՀԱՄԱՐ 6129

Ազնուաշուք
Տիար Ֆ. Թախթաճեան
Եւն. Եւն. Եւն.

Անգորայի Արտաքին Գործոց Նախարարութենէն կերպով մը մեր ձեռքը հասած ձեռագրի մը պատճենը ներփակ Ձեր Ազնուութեան կը հաղորդենք իր թարգմանութիւնովը միասին: Իրողութիւնը, որ մեզ կը ծանուցուի, անշուշտ մեծապէս ցաւալի է, եւ մեր դժբախտ երկրին անգամ մըն ալ արիւնսահեղութեանց թատր ըլլալու այս լուրը մեր սիրտը կը մորմոքէ: Այդ հեռագրին մէջ ակնարկուած Դաշնակցականները, եւ հայ ընտանիքները մեզ ծանօթ չեն, ոչ ալ անոնց թիւի մասին տեղեկութիւն կուտայ սոյն հեռագիրը, սակայն մեզ կը թուի թէ՝ Անգորայի կառավարութիւնը հաւանաբար կ'սպասէ միջոցներ ձեռք առնել մեր այդ դժբախտ փախստականները Տրապիզոնէն կամ Խոփէն այլուր փոխադրելու համար:

Խորհելով թէ անոնց թիւը կրնայ մեծ ըլլալ եւ մեր պիւտճէին անձկութիւնը անբաւական ըլլայ անոր նիւթական մասը հայթայթելու, կը խնդրենք Ձեր ազնուութիւնէն որ հաճիք մեզ հաղորդել թէ՛ եթէ վերոյիշեալ մեր ենթադրութիւնը ճշդուի, պիտի կրնա՞ք Ձեր տրամադրութեան տակ գտնուած գումարներէն պէտք եղածին չափ տրամադրել ասոնց ազատման համար:

Մնամք աղօթարար

Պատրիարք Հայոց
Չաւէն Արքեպիսկոպոս

UNION NATIONALE ARMÉNIENNE DE BULGARIE
COMITÉ CENTRAL

SOFIA,
le 12 Ապրիլ 1921

N° 448

Մեծայարգ
Տիար Ֆ[երտիսանտ] Թահթաճեան
Հ[այաստանի] Հ[անրապետութեան]
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Կ. Պոլիս

Մեծայարգ Տիար,
Ստացած էր ժամանակին Ձեր 31 Դեկտ[եմբեր] 1920 թւակիր՝ 1011 համար Պատ. Գրութիւնը, որու մասին հարկ եղած կարգադրութիւնն ընել ուշացուցինք մեր կամքէն անկախ պատճառներով, որոնց մէջ կարելորագոյն տեղ կը բռնեն Վարչութեանս Ատենապետ՝ Տիար Յ. Բարսամեանի երկարատեւ բացակայութիւնը քաղաքէս եւ երկրորդ այն պարագան, որ դրամական խնդիրներու մասին ստիպւած էինք որոշ բացատրութիւններ պահանջել մեր զինուորական առաքելութեան շէֆ. Պրն. Դերզնդապետ Սարգիս Գրիգորովէն:

Այս վերջինը տեղեկագրով մը կը հաղորդէ մեզի թէ՝ L.O. Թղթ. 389 461½ ստացած է Սպայից Միութենէն ո՛չ թէ մեր հաշւոյն, այլ իբր նպաստ իրենց կողմէ այդ առաքելութեան, իսկ L.O. Թղթ. 389½ ստացած է Ձեզմէ մեր հաշւոյն հանդէպ մասնաւոր ընկալագրի մը: Հետեւաբար ինք պատասխանատու եւ համարատու չի նկատեր ինքզինքը առաջին գումարի մասին, յայտնելով որ գումարին ստացւած պահուն իրեն ոեւէ պայման չ'է դրուած փոխառութեան ձեւով տուած ըլլալը յայտնող:

Առաջնորդւած այս տուեալներէն, Կեդր[ոնական] վարչութիւնս, իր վերջին նիստերէն միոյն մէջ որոշեց վերադարձնել Ձեզի մեր անւանը եւ մեր հաշւոյն Ձեր վճարած 389.50 ոսկի թղթադրամ գումարը, որ կը դրկենք Ձեզի ներփակ չէքով՝ ստացած Banque Danubienne de Bulgarie, à Sofia, հաստատութենէն՝ Banco di Roma դրամատան վրայ, թիւ 28289/1544, 2 Ապրիլ 1921 թուակիր, վճարելի Տիար Գրիգոր Ս. Թօսպըլըգեանին եւ այս վերջնոյն կողմէ ճիշտ եղած Ձեր հրամանին:

Գումարին ստացւելու պարագային, կը խնդրենք, բարի եղէք իմացնել մեզի եւ դրկել Պրն Գրիգորոֆէն Ձեր ստացած ընկալագիրը, որ պիտի ծառայէ մեզի իբր տօքիւման վերոյիշեալ գումարին հանդէպ:

Սպասելով Ձեր պատասխանին, կը մնանք
Խորին յարգանօք

Ի դիմաց Պուլկարահայ Ազգ[ային] Միութեան
Կեդրոնական վարչութեան

Ատենադպիր
Մ. Յովհաննէսեան
Ատենապետ
Յ. Բարսամեան

Ներփակւած
չէք N°28289/1544
2 Ապրիլ 1921

քաշւած Banque Danubienne de Bulgarie-ի կողմէ ի Կ. Պոլսոյ
Banco di Roma-ի վրայ
Ltq. 389.⁵⁰

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆ
ԿԵԴՐ[ՈՆԱԿԱՆ] ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս,
14 Ապրիլ 1921

ՊԱՀՃԷ ԳԱԲՈՒ, ՃԵԼԱԼ ՊԵՅ ԽԱՆ, ԹԻԻ 38
Թիւ **284**

Ազնուաշուք Տիար Ֆերտիսանտ Թահթաճեան
Հ[այաստանի] Հ[անրապետութեան] Պոլսոյ
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Աստ

Տէր,

Ստացած ենք ձեր 6 ապրիլ պաշտօնագիրը, Հ.Օ.Մ.ը առաջադրած է ուժեղապէս
օգնութեան հասնիլ մեր սովահար եղբայրներուն եւ առ այդ յառաջիկայ
շաբաթէն սկսեալ գործադրութեան պիտի դնենք այն միջոցները, որոնք
երկար եւ խղճամիտ աշխատութեան մը արդիւնքն են: Բայց որպէսզի կարելի
ըլլայ ժողովրդեան վստահութիւնը ապահովել, անհրաժեշտ է որ զայն իրազեկ
պահենք այն նպատակներուն հետ, որոնց իրագործման համար գործածուած
են իրենց տրամադրած գումարները:

Յանուն մեր տառապող հայրենակիցներու օգնութեան սրբազան գործին
կը խնդրենք որ ձեր բարեացակամութեան նոր ապացոյցները տաք Հ.Օ.Մ.ի
պատուիրակներուն՝ հասկացողութեան մը գալու. «ճակատի համար»
եւ «ճակատը պողպատենք» անունով հաւաքուած եւ ձեր վարչութեան
տրամադրութեան տակ դրուած գումարներու գործածութեան մասին:

Մեր պատուիրակներն են Տօքթ. Ալթունեան եւ Պ.Պ. Գալֆաեան եւ Փափագեան:

Խորին յարգանքներով

Դիւան

Հ.Օ.Մ.ի Կեդր[ոնական] Վարչութեան

Ատենադպիր



Ատենապետ

Տօքթ. Վ. Ալթունեան

N° 1138

Le 16 avril 1921

Au Haut Commissariat Britannique

Monsieur le Haut Commissaire

Je m'empresse de Vous exprimer mes plus sincères remerciements pour les deux lettres de 14 et N°s 3209/87 et 3250/ 45, que Vous avez bien voulu m'adresser. J'ai fait en même temps un devoir de soumettre, ci-près, en copie, à Votre Excellence, un télégramme du Com[missaire] des affaires Étrangères d'Angora, communiqué à titre privé, à Son Excellence Mgr Zaven, Patriarche des Arméniens, d'après lequel les Tachnakistes d'Arménie (?) et leurs familles avaient été autorisés à franchir la frontière et à chercher refuge en Turquie, à condition en de ne pas arrêter dans les provinces orientales et de s'embarquer via Khoyna ou Trébizonde.

Il est à supposer qu'il s'agit en l'occurrence des membres du gouvernement arménien et de leurs familles.

S'il est vrai que nos gouvernants, à l'approche de danger et faute d'autre voie pensaient à prendre le chemin de la Turquie pour échapper aux Bolchevistes, ou peut croire que le gouvernement d'Angora, étant donné son avis télégraphique au Patriarche arménien, aura soin d'aviser à tous les moyens nécessaires, pour mettre nos expatriés à l'abri de toute mauvaise surprise dans le cours du voyage. Néanmoins, je crois de mon devoir de mettre Votre Excellence au courant de la chose.

Il me reste à ajouter que, dans ma dépêche reçue via Paris et daté du 15 courant j'ai lu ce qui suit:

"Arhgoutian (n. Représentant diplomatique à Téhéran) télégraphie que nos troupes se sont retranchées à Daralagheuz et l'offensive bolcheviste a été arrêtée à Kéchichkend, après huit jours de combats, soixante maisons brûlées à Erivan. D'après cette dépêche les bolchevistes n'auraient pas réussi à étendre leur invasion sur Zanghezour et Karabagh, région montagneuse dont la population n'a jamais laissé entrer le Bolcheviks. Veuillez agréer etc.

N° 1138

16 ապրիլի, 1921

Բրիտանական ներկայացուցչությանը

Պարոն դիւանագիտական ներկայացուցիչ,

Շտապում եմ Ձեզ յղել իմ ամենաանկեղծ շնորհակալանքն ինձ հասցեագրուած՝ 14-ի նամակի, ինչպէս եւ թիւ 3209/87 եւ 3250/45 Ձեր երկու նամակների առնչութեամբ:

Իմ պարտքն էր նաեւ Ձերդ Գերազանցութեանը ներկայացնել այն հեռագրի պատճենը, որն Անգարայի արտաքին գործոց յանձնակատատարն է առաքել. անձնական հաղորդագրութիւն՝ ուղղուած Հայոց Ամենապատիւ Տէր Չաւեն Պատրիարք Սրբազան Հօր, որի համաձայն Հայաստանի դաշնակցականներին ու նրանց ընտանիքներին թոյլ են տուել սահմանը հատել՝ այն պայմանով, որ նրանք ապաստան չեն փնտրի Թուրքիայի տարածքում, կանգ չեն առնի արեւելեան սահանգներում ու նաև կնստեն Կոնիայի կամ Տրապիզոնի նաւահանգիստներից:

Կարելի է ենթադրել, որ խօսքը հայկական կառավարութեան անդամների եւ նրանց ընտանիքների մասին է:

Եթէ ճիշտ է, որ մօտեցող վտանգին ընդառաջ մեր ղեկավար մարմինները, փրկութեան այլ ճանապարհ չգտնելով, մտադիր են Թուրքիայով անցնել՝ բոլշեւիկներից խուսափելու համար, կարելի է հաւատալ, որ Անգարայի կառավարութիւնը, հեռագրի միջոցով զգուշացնելով հայոց Պատրիարքին, չի զլանայ գործի դնել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ մեր վտարանդի հայրենակիցներին ուղեւորութեան ընթացքում անախորժ անակնկալներից պաշտպանելու համար: Բայցեւայնպէս, իմ պարտքն եմ համարում Ձերդ Գերազանցութեանն իրազեկել այդ մասին:

Ինձ մնում է միայն յաւելել, որ ամսի 15-ին Փարիզից ստացուած հաղորդագրութիւնը ծանուցում էր հետեւեալը.

«Արդութեանը (մեր դիւանագիտական ներկայացուցիչը Թեհրանում) հեռագրով տեղեկացնում է մեզ, որ մեր ջոկատները հետ են քաշուել Դալարագոզ, իսկ բոլշեւիկների յարձակումը ետ է մղուել Քէշիշքենդում՝ ութ օր ձգուած պայքարից յետոյ, Երեւանում՝ վաթսուն հրկիզուած տուն: Ըստ այդ հաղորդագրութեան՝ բոլշեւիկներին չի յաջողուել առաջ շարժուել եւ գրաւել Չանգեզուրն ու Ղարաբաղը, որը լեռնային շրջան է ազգաբնակչութիւնն այդպէս էլ չի համաձայնել ներս թողնել բոլշեւիկներին»: Խնդրում եմ ընդունել յարգանացս հաւաստիքը եւ այլն:

Constantinople,
17 Avril 1921

N° 1139

A Monsieur MacCalem,
Trésorier du "Near East Relief",
En ville

Monsieur,

Faisant suite à notre récente conversation, j'ai l'honneur de Vous confirmer ci-dessous la proposition que je Vous ai faite au sujet des six caisses de vêtements en flanelle, offertes par le citoyen arménien Antoine Kalpakdjian, chef de la maison Peers de Manchester, au profit des réfugiés à Erivan.

Vous savez bien que, par suite de ma demande, d'ordre de Mr. Arnold ancien Directeur Général du "Near East Relief", ces six caisses avaient été consignées aux dépôts Vous appartenant à Galata, pour être promptement expédiées à Erivan par les soins et les moyens du "Near East Relief", autrement dit, le directeur desdits dépôts avait l'ordre de faire tout le nécessaire pour expédier à destination, au plus tôt, les six caisses en question. Ceci se passait, si j'ai bonne mémoire, en automne 1919. Je croyais cette expédition déjà faite depuis longtemps, lorsqu'un beau jour, au bout de 7-8 mois, j'apprenais, à ma grande surprise, que les caisses étaient encore là.

Par suite des démarches que j'avais alors faites auprès du colonel Coombs, Vous aviez été chargé d'enquêter sur cette affaire et de la liquider. Comme elle reste toujours en souffrance et les communications sont coupées entre Constantinople et Erivan, je vous propose ce qui suit:

Vous me payez le coût de la marchandise, d'après facture dont Vous avez la copie chez Vous. Constantinople servant, depuis longtemps, de refuge à un très grand nombre d'expatriés, Votre œuvre philanthropique n'aura pas d'embarras pour savoir à qui distribuer les vêtements en question. De mon côté, je ferai un usage on ne peut plus utile de l'argent que Vous me payerez, puisque Constantinople abrite en ce moment pas mal de fonctionnaires et officiers arméniens, qui se trouvent dans des conditions très critiques. Le peu d'argent dont je disposais, environ 5000 Livres Turques, je le leur ai distribué, ces derniers temps, en secours, mais cela ne les a pas sensiblement soulagés.

Dans l'espoir que Vous voudrez bien faire bon accueil à ma proposition et solutionner l'affaire promptement, je Vous prie d'agréer, Monsieur, l'assurance de ma considération la plus distinguée.

P.S. J'ajoute, pro memoria, que l'une des caisses qu'on prétendait avoir expédiée, n'a jamais été reçue en Arménie.

Կոստանդնուպոլիս,
17 ապրիլի 1921

Թիւ 1139

«Near East Relief»-ի գանձապահ
Պարոն Մաքկալլումին
Քաղաքային ծառայութիւն

Պարոն,

Ի պատասխան վերջերս ունեցած մեր գրոյցի՝ պատիւ ունեմ ստորել եւս մէկ անգամ հաստատելու իմ առաջարկը ֆլանելից հազուստների վեց արկղերի վերաբերեալ, որոնք «Peers de Manchester» ձեռնարկութեան ղեկավար հայազգի Անտոն Գալփաքչեանի նուիրատուութիւնն են՝ ի նպաստ երեւանի մեր փախստականների:

Ձեզ յայտնի է, որ իմ խնդրանքով եւ «Near East Relief»-ի նախկին գլխաւոր տնօրէնի՝ պարոն Առնոլդի կարգադրութեամբ՝ վերոյիշեալ վեց արկղերը յանձնուել էին Գալփաքչի ձեր պահեստներին, որտեղից «Near East Relief»-ի ջանքերով եւ միջոցներով պէտք է շուտափոյթ առաքուէին երեւան. այլ կերպ ասած՝ վերոյիշեալ պահեստների տնօրէնին յստակ կարգադրութիւն էր տրուել. գործի դնել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ խնդրոյ առարկայ վեց արկղերը հնարաւորինս շուտ հասցեատիրոջը հասցնելու համար: Եթէ յիշողութիւնս ինձ չի դաւաճանում, դա եղել է 1919 թուականի աշնանը: Եւ ինձ թւում էր, թէ առաքումը վաղուց ի վեր արուել է, երբ մի գեղեցիկ օր՝ եօթ-ութ ամիս անց, ի զարմանս ինձ՝ իմացայ, որ արկղերը տակաւին այդտեղ են:

Այդ ժամանակ գնդապետ Կումբսի մօտ ձեռնարկած իմ քայլերի արդիւնքում Ձեզ յանձնարարուել էր հետաքննութիւն սկսել գործի վերաբերեալ եւ աւարտին հասցնել այն: Քանի որ խնդիրն այդպէս էլ մնում է չլուծուած, եւ կապը խզուած է Կոստանդնուպոլսի եւ երեւանի միջեւ, ահաւասիկ իմ առաջարկը:

Դուք ինձ կը վճարեք ապրանքի գինը՝ ըստ այն ապրանքագրի, որի պատճենը Ձեզ մօտ է: Եւ որովհետեւ Կոստանդնուպոլիսը վաղուց ի վեր ապաստան է դարձել մեծաթիւ հայ վտարանդիների համար, Ձեր մարդասիրական արարքը պէտք է որ առանց որեւէ դժուարութեան գտնի իր հասցեատիրոջը:

Ինչ վերաբերում է ինձ, ես աւելի քան արդիւնաւետ կերպով կօգտագործեմ Ձեր վճարած գումարը, քանի որ ներկայումս Կոստանդնուպոլիսն օթեւանում է մեծ թուով հայազգի պաշտօնեաների եւ սպաների, որոնք գտնւում են շատ ծանր պայմաններում: Այն սուղ միջոցները, որ ես ունէի իմ տնօրինութեան տակ՝ շուրջ 5000 թուրքական լիրա արժողութեամբ գումարը, վերջին օրերին ես բաժանել եմ՝ որպէս օգնութիւն, բայց դա նրանց վիճակն առանձնապէս չթերեւացրեց:

Յուսալով, որ առաջարկս կարժանանայ Ձեր հաւանութեանը, եւ որ շուտափոյթ լուծում կտրուի այս գործին՝ խնդրում եմ Ձեզ ընդունել յարգանացս հաւաստիքը:

Յ. Գ. – Որպէս յիշեցում՝ աւելացնեմ, որ այն արկղերից մէկը, որն իբրեւ թէ առաքուել էր, այդպէս էլ տեղ չի հասել Հայաստան:

Հ. Հ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ՊՈԼՍՈՅ ԴԻԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԵԱՆ ԿԻՑ
ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս
26 Ապրիլ 1921

Վսեմ. Տիար Ֆ. Թահթաճեան
Աստ

Երեկ ըստ Ձեր յանձնարարութեան Հ. Փափագեանի ղրկեցի 1500 ֆր.ի չէք մը որ արժեք 157,07 ոսկի. մնացեալ գումարն ալ ղրկեցի Հ. Հրաչի: Անոր առնելիք 52,80 ոսկի է եղեր եւ որովհետեւ իմ վճարածս 51,26 ոսկի էր ուրեմն դեռ կը պահանջէ 1,54 ոսկի: Նախապէս չէի գիտեր թէ Հ. Հրաչ որչափ կը պահանջէ եւ չէքը 1500 ֆր.ի համար առած էի: Ասոնք երկտողով մը պարզեցի Հ. Փափագեանի աւելցնելով թէ Ձեր յանձնարարութեամբ գործած եմ:

Ճակատի ֆոնտի հաշուէն սպաներու մինչեւ երեկ երեկոյ վճարած գումարս հասաւ 2577,5 ոսկիի: Ինչպէս գիտեք, մենք միայն 1700 ոսկի քաշած էինք: Իսկ պաշտօնեաներու համար վճարած եմ 2531,25 ոսկի: Ասոր փոխարէն Բարիզէ եկած 25000 ֆր.ի փոխարժեքը եղող 2590,67 ոսկի յանձնած եմ Նոյն ֆոնտի հաշւոյն: Ուրեմն եթէ այս 90,67 ոսկին քաշենք, պաշտօնեաներու հաշւոյն մեր մօտ պիտի մնայ տրամադրելի 59,42 ոսկի ի հարկէ սպաներու համար տրուած 5ական ոսկի եւ ուրիշ մի քանի նպաստները (Տիկ. Եսայեանի, Հայրապետեանի) որոնք Կ. Շատենոֆի նպաստի հաշւոյն սեպեցի վերի հաշիւներու հետ առնչութիւն չունին:

Խորին յարգանք
Մ[ատթէոս] Էպլիղաթեան

Յ. Գ. Ինչպէս բերանացի ալ բացատրեր էի վերջին անգամ Օսմ[անեան] դրամատունէն դրամ գանձեր էի (2500 ոսկի) եւ յանձնէր Հ. Կիլիսանտանեանի պաշտօնէից բաժնելու համար: Հետեւեալ օր ինծի վերադարձուեցաւ 25 ոսկեայ մը որ կեղծ էր: Դիմեցի Նոյն պանգին որ չ'ուզէ ետ ստանալ եւ որովհետեւ դրամը ստացողներու պարկեշտութիւնը կասկածէ վեր է ներփակ Ձեզ կը յղեմ այդ 25նոցը ի պատշաճ կարգադրութեան:

Նոյն

Կ. Պօլիս,
29 Ապրիլի 1921

N° 1157

Հ. Հ. Պատուիրակութեան

Իբրեւ շարունակութիւն իմ թիւ եւ համար գրութեան, պատիւ ունիմ ներկայիս կցելու Հ. Օ. Մարմինէն ստացած պատասխանի պատճենը:

Չարմանալի է որ կարդալէ զկնի այն ամենը որ եւ գրել էին իրանց երկու հայ թերթերի ճակատի համար հաւաքած դրամների մասին այդ Մարմինը մի անգամ եւս յանուն սովեալ հայրենակիցների օգնութեան գործը մէջ բերելով նորից դրամների փոխանցումից է ճառում:

Այս առթիւ անելորդ չեմ համարիր յայտնել պատուիրակութեանդ այդ վերջին լուրի արտօնատէր Պ. Տէր-Ներսէսեանը անպատասխան թողուց իր 25 Մարտ թիւ պաշտօնագիրը, որի պատճենը ուղարկել էի իմ 9 Ապրիլ թիւ 1117 համար զեկոյցով:

Զեզ եմ թողնում որակել այդ վերաբերմունքը:

Պօլսում գտնուող Հ. Բանակի սպաները գիտէք որ նրանց ամէն մէկին 65 լիրա նպաստ էի վճարած:

Սրանից 8-10 օր յառաջ, լսելով զնդ[ապետ] Շախաթունիից որ նրանցից մի քանիսը արդէն առանց կարիքի էին, եւ համաձայնուել էք այդպիսիներին վճարել՝ իբրեւ բացառիկ նպաստ՝ 5ակական լիրա: Բանից դուրս եկաւ, որ գրեթէ բոլորն ալ ստացան այդ 5 լիրան, որի գումարը 100 լիրան անցաւ:

Իսկ այժմ պատահեց հետաքրքիր մի բան: Ամսուս 18-ին զնդ[ապետ] Շախաթունիի միջոցով ուղարկեցի մեր այդ սպաներին 50 լիրա, որպէս զի Չատկուայ առթիւ նրանք զգան թէ՝ իրանց մասին կայ այստեղ մտածող:

Գնդ. Շախաթունիի համար իմ այդ միտքը անակնկալ էր եւ շատ ուրախացաւ, հաւատացած լինելով, որ չափազանց գոհ պիտի մնային սպաները:

Իսկ այսօր նա եկաւ մօտս, յետ տուեց 50 լիրան եւ ասաց թէ՝ երբ սպաներից մի քանիսին նա յայտնել է իմ արածի մասին, նրանք մի քանի րոպէ խորհրդակցել են իրանց մէջ եւ հապա վերադառնալով, ասել են զնդապետին: «Մենք պետութեան զինուորական պաշտօնեաներն ենք եւ պետութիւնը պարտաւոր է հոգալ մեր պետքերը: Մենք Փարիզից կարգադրութիւն ենք սպասում: Այդ 50 լիրան չենք կարող ընդունիլ:

Գնդ[ապետ] Շախաթունին շատ դատապարտելի է գտնում սպաների այդ վարմունքը: Կարծում էր թե՛ այն չի լինիր եւ Ձեր կարծիքը:

Երբ նրանք ստանալու էին 65 լիրայի նպաստը, նրանց յայտարարել էին նախկին նախարարները եւ այլք, որ այդ միանւագ նպաստից դուրս նրանք ոչինչ չունեին ստանալու եւ այդպէս էլ խմբագրուած էին նրանց ընկալագրերը:

Բայց եւ այնպէս բաւական եղաւ մի քանիսի առանց դրամի լինելը յիշատակելը, որպէս զի ամենն ալ նորից 5ական լիրա ստանան: Իսկ այժմ բոլորովին ինքնաբերաբար իմ կողմից առաջարկուած Չատկուայ նուէր 50 լիրայից հրաժարուած են!?

Պէտք է աւելացնեմ, որ նրանցից ոչ մէկը մօտս գալու եւ գէթ երկու խօսքով գոհունակութիւն յայտնելու չափ բարեկրթութիւն չունեցաւ:

Ձեզ յայտնի է եւ այն, որ երբ՝ դարձեալ ինքնաբերաբար նրանց բնակարանի հարցով պարապուեցայ եւ պատրիարքը առաջարկեց, որ Օրթաքէօյի կայանում, նախկին դպրոցի շէնքին մէջ տեղաւորուին, ամէն օր հաց եւ կաթի նման բաներ ստանալու պայմանաւ, նրանք հրաժարուեցան, ասելով թէ «կեդրոնից հեռու է» (далеко от центра):

Յաւում եմ, որ երէկ եւ այսօր գրածներիս մէջ ուրախառիթ բան չ'կայ, բայց այդ է իրականութիւնը:

Հ. Հ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ՊՈԼՍՈՅ ԴԻԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԵԱՆ ԿԻՑ

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս 5 Մայիս 1921

Թիւ ...

Վսեմաշուք

Տեար Ֆ. Թահթաճեան

Աստ

Մարտի հաշիւը՝ ուղղուած՝ արդէն ունէի քովս ներկակ կը դրկեմ: Ապրիլի հաշիւը այսօր լրացուցի եւ ստացագրերը եւ տետրերը դրկեցի եղբօրս որպէսզի ինքն ալ ստուգելէ վերջ 1-2 օրէն հաշուեցուցակով ինձ վերադարձնէ: Ապրիլի մէջ տրուած է 409 անցագիր 146ը 5 ոսկինոց 174ը 3նոց 85 ձրի 2 հատ երկու ոսկինոց եւ երկուք ալ ոչնչացած:

Հասոյթ անցագրի	1256 ոսկի
Հասոյթ վիզայի	44 ոսկի
Հասոյթ ստուգ. վաւերացման	10 ոսկի
	1310 [ոսկի]

Շատինոֆի նպաստը մասնաւոր հաշիւի անցուցած ըլլալով այդ ֆօստի հաշւոյն վճարածներէս զատ հայկ[ական] Պանգը Ապրիլ 30ին 1000 ոսկի եւս յանձնեցի. հետեւաբար ինչպէս մանրամասն հաշիւէն պիտի տեսնուի Հ. Վ. Ահարոնեանի 100. Պ. Կիւլիսանդեանի 50 եւ Պ. Խատիսեանի 17,5 ոսկիի հաշուէն դուրս իմ քովս 584 ոսկի կը մնայ տրամադրելի Պ. Շահխաթունիի տրուած եւ վերադարձուած 50 ոսկին ալ ասոր մէջն է. նկատելով որ ստորագիրը այսօր Ձեզ կը վերադարձնեմ տետրակը չը պիտի արձանագրուի: Ինչպէս գրեցի եղբայրս այս հաշիւները պիտի ստուգէ եւ ճշդելէ վերջ կը պատրաստէ հաշուեցուցակը զատ երկու օր վերջ Ձեզ կը յղեմ:

Խորին յարգանօք

Մ[ատթէս] Էպլիդաթեան

Յ. Գ. Հիմայ Բըլիֆի կեդրոնէն նամակ մը ստացայ որով մէջ կը յայտնեն թէ անկարելի եղած է իրենց յիսուն ոսկին Երեւան դրկել եւ կը խնդրեն այդ դրամը վերստանալ. բայց զացած միջոցիս անշուշտ պատճառը կը հարցունեմ:

13 Մայիս 1921

N° 1180

Հ. Հ. Պատուիրակութեան
Փարիզ

Սրանից բաւական ժամանակ յառաջ, ուղարկել էի պատուիրակութեանդ Հ. Օ. Մարմնոյ հետ փոխանակած նամակներիս պատճենները:

Ներփակելով վերջին լուրին նորագոյն եւ առաւել քան երբեք տգեղ մի արարքի փաստը, պիտի յատկապէս խնդրէի Ձեզանից, որ եթէ անպատեհութիւն մը չէք տեսներ, «Ճակ» եւ «Վ[երջին] լուրի» միջոցով հանգանակուած դրամների մասին (ճակատի համար) մտքերը լուսաւորող մի յօդուած գետեղէիք այդտեղ մի հատ թերթի մէջ, լրացնելու համար Ձեր նիւթը, կը կցեմ ներկայիս պատճենը նոր մի նամակի, զոր ուղղեցի Հ. Օ. Մարմնոյ:

«Վ[երջին] լուրի» տուած հաշուետուութիւնից երեւում է որ այնտեղի փողերից 147¼ Օսմ[անեան] լիրա վերցրել է Պ. Սադաթէլեանը, Վրանկելի բանակի Հայ սպաների իբրեւ նպաստ: Այդ բանը պատահել է անցեալ տարի:

Խրիմից եկող գաղթականների վերայ, որոնց մէջ 60-70 հազար զօրք կար (Վրանկելի բանակը) միայն, միայն ֆրանսացիք ծախսել են 100 միլիոն ֆրանքից ավել: C'est de notoriété publique.

Չարմանալի չէ, որ առանց իմ գիտութեան արել է այդ քայլը, Պ. Սադաթէլեանը, եւ Տէր Ներսէսեանն ալ վճարել է:

Միջանկեալ կերպով կասեմ, որ Պ. Չալիանեանն էլ գրպանիցն ճեպկիրը 130 լիրա տարաւ» ասելով, փոխառութեան յանձնաժողովի նախագահին գրաւոր դիմում արաւ (առանց իմ գիտութեան) եւ այնտեղից այդ գումարը ստացաւ, բայց միանգամայն՝ իբրեւ լիազօր փոխառութեան գործին՝ գրաւոր կարծիք տուեց թէ՛ միւստորութիւնը պետք էր չեղեալ համարել եւ գանձուած դրամները յետ բաժանել:

Ապշած մնացի, երբ այդ մասին post factum իմացայ այն ժամանակ:

Թէ որքա՛ն խեղաթիւրում կայ Պ. Ներսէսեանի հաշուետու յօդուածի մէջ, զայդ մասամբ պիտի տեսնէք Հ. Օ. Մարմնոյ իմ ուղղած նամակից:

Մարդը հաւաքած դրամներից 5000 լիրա գնացել դրել է Հայ Կառ. Դրամ. Ներքեւ, մտցնելով Հ. Բանկան, իսկ այժմ գրում է թէ՛ ինձ է յանձնել առաքման

համար, թեև յօդուածի սկզբում ինքն է խոստովանում թէ՛ այն ժամանակ Հայաստանը արդէն տակն ու վրայ էր, եւն:

Աւելի հոյակապը այն է՝ որ այդ «ճակատի» դրամներից մինչեւ հիմա 3500 լիրա մեր սպաներին բաժանած լինելս ամենին յայտնի լինելով հանդերձ, դարձեալ որը բացատրութեան է սպասում թէ՛ ինչ են եղել դրամները: Տէր Աստուած, այս ինչ ողբալի մտայնութիւն է:

Եւ նկատեցեք, որ եթէ իսկ «ճակատից» եկող տառապեալ հայ սպաների նպաստ վճարեցի, այդ մասին այնքան աղմուկ բարձրացնող մարդիկ իրանք չեն էլ մտածում այդ մի եւ նոյն սպաների մասին:

Փոխառութիւն.

Երեկ ստացայ մի հեռագիր, Արսէնեանի համար: Պարիզից լինելուն, կռահեցի որ փոխառութեան միտքին կը վերաբերէր, բայց ուղարկուած էր այնպիսի մի ձեւով, որ զայն բաց անել չէի կարող, ուստի եւ բաւականացայ իսկոյն եւեթ հասցէին ուղարկելով:

Փոխառութեան մասին Ձեզ վերջին անգամ գրելէ յետոյ, շարունակ նորանոր կոչեր եւ մտքեր եմ կարդում թերթերի մէջ: Դրամները յետ չ'տալու մասին վաղուց է որ լռում են այստեղ եւ ամէն կողմից այն են ասում թէ՛ այդ փողերից պէտք է լաւ օգտուեն որբերը, սովեալները, եւն. [...] հեռագրի մէջ յիշատակուած վերջին հրահանգը տակաւին չեմ ստացել:

Աթաբէկեան.

Լսում եմ, որ Բաթումի իշխանութիւնը décret-ներով յայտարարել է թէ Հ. Հ. Ընդհ. Հիւպ[ատոս] Աթաբէկեանը պետական գոյք է փախցրել Բաթումից: Առանձնապէս խիստ է եղել décret-ն դեղօրէից մասին, զոր ես որոշել էի Near East Relief-ի միանալով՝ երկրորդ անգամ լինելով, Հայաստան ուղարկել, որպէս զի ժողովուրդը օգտուի, սակայն Աթաբէկեանի արած խախտութիւնը գրկեց զիս զայդ անելու հնարաւորութիւնից, ինչ որ մեծ վիշտ է ինձ համար:

Խնկունի, որ նուազ պիտի վշտանայ եւ Պ. Գրինֆիլդը. եթէ իմանայ թէ ինչ է պատահել այդ դեղերի հետ: Ինչ որ տակաւին Ձեզ չեմ ասել, այն է որ այդ դեղերի մի մասը (գրեթէ կեսը) պատրիարքի պիտի յանձնուէր եւ նրա միջոցով Կիլիկիա պիտի ուղարկուէր:

Գիտենալով որ այն ժամանակ (Հոկտեմբերի սկզբին) մեզանում դեղօրայից սով կար, ես յայտնել էի պատրիարքին որ բոլորը պիտի ուղարկէի Երեւան եւ նա համաձայնութիւն տուել էր:

Թավրիզի հեռագիրը հաղորդեցի Բ. Քոմիսարներին: Եալովայի հայերից ոմանք բռնուում են այստեղ իբրեւ ջարդարար, թուրք անհատներ մատնութեան վրայ: Պատրիարքի այդ մասին ներկայացրած բողոքագրի պատճենը ներփակում եմ:

30 Ապրիլի «Ապագայ» թերթի տպած Աղեքսանդրապոլի դաշնագիրը վերնագրով յօդուածը:

Չարիքի արմատը՝ ինչպէս միշտ ասել եմ՝ Փարիզում է: Այդտեղ որդեգրում են այնտեղի մտքերը «Գրեթէ խաչ են դրել Կովկ[ասեան] Հայաստանի վրայ»:

Անցեալում ի զուր թուրքերը աւելորդ ցոյցերով եւ այն անխոհեմ արարքով գրգռող մարդիկ, այժմ չափազանց խոհեմ եւ զգոյշ են դառել, ոմանք մինչեւ իսկ գլուխնին նորից ֆէս են ծածկում: Մի եւ նոյն բանը նկատելի է եւ Յոյների մէջ, որոնց օրինակին հետեւում են մերիները անցեալում եւ իմ տուած խոհեմութեան խորհուրդները մնում էին «ձայն բարբառոյ յանապատի»

14 Mai [1921]

N° **1182**

A Son Excellence,
L'Amiral Bristol, Haut-Commissaire des
Etats-Unis d'Amérique, etc. etc. etc.

Monsieur le Haut-Commissaire,
J'ai l'honneur de Vous communiquer, ci-près, en copies, deux télégrammes de
notre gouvernement, reçus via Téhéran, par notre Délégation à Paris.

Ainsi que Votre Excellence voudra bien le relever de la lecture de ces télégrammes, le peuple martyr, tout en se meurtrissant toujours sur son chemin de la Croix, non seulement continue sa lutte inégale contre les Bolchéviks, mais il préfère s'expatrier en masse, pour ne pas avoir à subir le régime communiste.

A tous les maux et calamité dont souffrait l'Arménien, tant au pied du Mont Ararat qu'ailleurs, s'est ajouté maintenant la famine, qui fait, des ravages dans notre population déjà si cruellement éprouvée depuis nombre d'années.

Voilà déjà plus d'un mois que le Near East Relief américain, s'est remis à son œuvre providentielle de ravitailler, dans la mesure du possible, les orphelins et les autres victimes de la famine en Arménie.

Les deux télégrammes ci-inclus étant de véritables cris de détresse, en ce qui concerne spécialement la famine, je prie respectueusement Votre Excellence de vouloir bien les signaler à l'attention de qui de droit.

Veuillez agréer, Monsieur le Haut-Commissaire, les assurances de ma considération la plus distinguée.

Le Représentant Diplomatique,

14 մայիսի [1921]

Թիւ **1182**

Ամերիկայի Միացեալ Նահանգների
Դիւանագիտական ներկայացուցիչ
Եւ այլն, Եւ այլն, Եւ այլն,

Նորին Գերագանցութիւն
Ադմիրալ Բրիստոլին

Պարո՞ն դիւանագիտական ներկայացուցիչ,
Պատիւ ունեմ ստորեւ Ձեզ ներկայացնելու մեր կառավարութեան երկու
հեռագրերը, որոնք Փարիզի մեր պատուիրակութիւնը ստացել է Թեհրանի
միջոցով:

Ինչպէս Ձերդ Գերագանցութիւնը կեզրակացնի վերոյիշեալ հեռագրերի
ընթերցումից, նահատակ ժողովուրդը, շարունակելով տառապել Զարչարանաց
իր ճանապարհին, ոչ միայն հետամուտ է իր անհաւասար պայքարին ընդդէմ
բոլշեւիկների, այլեւ գերադասում է դիմել զանգուածային արտագաղթի՝
կոմունիստական վարչակարգին ենթարկուելուց խուսանաւելու համար:

Ի լրումն հայերին վիճակուած բոլոր պատուհասների եւ չարիքների
ինչպէս Արարատ լեռան ստորոտին, այնպէս էլ այլուր՝ ներկայումս սովն է
աւերածութիւններ գործում մեր ազգաբնակչութեան մէջ, որն արդէն տարիներ
շարունակ այնքան դաժան փորձութիւնների է ենթարկւում:

Մէկ ամսից աւելի է, ահա, ինչ ամերիկեան «Near East Relief»-ը վերսկսել է
փրկչական իր առաքելութիւնը՝ հնարաւորութեան սահմաններում սնունդ
մատակարարելով Հայաստանի որբերին եւ քաղցից տառապող միւս բոլոր
զոհերին:

Ու քանի որ ստորեւ Ձեզ ներկայացուող երկու հեռագրերն իրապէս
յուսահատութեան ճիչ են եւ առնչւում են յատկապէս սովին, ապա
խոնարհաբար խնդրում եմ, Ձե՛րդ Գերագանցութիւն, յայտնել դա իրաւասու
մարմիններին:

Թոյլ տուէք արտայայտել, պարո՞ն դիւանագիտական ներկայացուցիչ, իմ
խորին պատկառանքը:

Դիւանագիտական ներկայացուցիչ

Պատուարժան
Խմբագրության «Ճակատամարտ» Օրաթերթի
Աստ

Սթանտարտ Օյլ Ընկերության հայ պաշտոնեաներս անցեալ աշնան ձեր բացած «Ճակատի համար» հանգանակության մասնակցած էինք 276½ ոսկիի գումարով մը: Արդ նկատելով որ այս գումարը ցարդ կարելի չէ եղած նպատակին յատկացնել եւ կը մնայ հոս, կը խնդրենք որ հաճիք մեզ վերադարձնել որպէսզի առաջին առթիւ եւ ամենայարմար միջոցով կարենանք հասցնել Հայաստանի տարաբաղդ սովեալներուն:

Կալաթա 14 Մայիս 1921

Մնամք յարգանք
(Սթանտարտ Օյլ Ընկ[երութեան հայ պաշտոնեաներ)

Լ. Ասատուրեան
Արմէն Թէշիշեան
Ս. Թաթարեան
Ժ.¹ Հալճեան
Գ. Ա. Մկրեան
Օ. Պահատուրեան
Լ. Իւթիւճեան
Ս. Գ. Յարութիւնեան
Հ. Յ. Աբրահամեան
Ե. Եազիճեան
Օր. Ե. Իսկէնտերեան
Օր. Ս. Նահապետեան
Օր. Ա. Միքայէլեան
Բերթիզ Խաչերեան
Օննիկ Բարունակեան
Ա. Գաբրիէլեան
Ա. Ֆնտզլեան
Ալիզսան Օվանէսեան
Գ. Պալպանեան
Սարգիս Ակրեանց

Վերոյիշեալ գումարը յանձնուած էր 2 Նոյ[եմբեր] 1920-ին

¹ Ձեռագիրը կարող է կարդացուիլ ե՛ւ «Ժ», ե՛ւ «Լ»:

Յարգելի Պր. Թահթաճեան
Հ[այաստանի] Հ[անրապետութեան]
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Կ. Պոլսոյ

Թերթիս ճակատի համար հանգանակած գումարը Ձեր տրամադրութեան
տակ ըլլալով, պիտի խնդրէինք որ նկատի առնէք այս նամակը:

Կը հաստատենք ըստ մեր արձանագրութեան նոյն ընկերութեան հայ
պաշտօնէութեան կոչով Ճակատի ֆոնտին համար յանձնուած գումար
276½ ոսկի (երկու հարիւր եօթանասուն եւ վեց ու կէս ոսկի) յայտա[րա]րած
Ճակատամարտի թիւ 596-ի (1920 Նոյեմբեր 3-ի) մէջ:
Յարգանքներով

Վարչութենէն
Ասատուրեան
Ազատամարտ Օրաթերթի
17 Mai 1921

Banca Italo-Caucasica di Sconto
SOCIETÀ ANONIMA — CAPITALE SOCIALE L. 40.000.000
SEDE SOCIALE E DIREZIONE CENTRALE: ROMA

PORTAFOGLIO ESTERO
N° **315**

Constantinople,
le 18 Mai 1921
(Batoum)

Monsieur le Représentant Diplomatique de la République Arménienne
en ville

Monsieur,

En réponse à votre lettre du 14 crt., nous nous empressons de vous informer que suivant sa demande du 14 Mars, à Batoum, nous avons consenti à Monsieur M. Atabékian, comme personne privée, une avance pour couvrir les frais d'expédition de:

M. A 20 caisses plomb
14 caisses médicaments
1 baril médicaments
19 balles sacs vides

Ladite avance a été remboursé à Constantinople par Mr. Atabékian le 2 Avril écoulé, et par conséquence la marchandise lui a été délivré.

Agréez, Monsieur le Représentant, nos salutations distinguées.

BANCA ITALO-CAUCASICA DI SCONTO



Banca Italo-Caucasica di Sconto
 SOCIETÀ ANONIMA — CAPITALE SOCIALE L. 40.000.000
 SEDE SOCIALE E DIREZIONE CENTRALE: ROMA

PORTAFOGLIO ESTERO

Թիւ 315

(Բաթում)
 Կոստանդնուպոլիս,
 18 մայիսի, 1921

Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցչին
 (քաղաքացիական ծառայութիւն)

Պարո՛ն,

Ի պատասխան ամսի 14-ի Ձեր նամակի՝ շտապում ենք Ձեզ տեղեկացնել, որ ընդառաջելով Բաթումում պարոն Մ. Աթաբեկեանի մարտի 14-ի հայցադիմումին՝ մենք վերջինիս, որպէս մասնաւոր անհատի, կանխավճար ենք տրամադրել՝ առաքման ծախսերի դիմաց վճարելու համար. առաքում, որը բաղկացած է.

20 արկղ արճճից

14 արկղ դեղորայքից

1 տակառ դեղորայքից

Դատարկ պարկերի 19 փաթեթից

Պարոն Աթաբեկեանը ապրիլի երկուսին Կոստանդնուպոլսում փոխհատուցել է կանխավճարի գումարը, եւ հետեւաբար՝ ապրանքը նրան է յանձնուել:

Պարո՛ն դիւանագիտական ներկայացուցիչ, խնդրում եմ ընդունել յարգանացս հաւաստիքը:

BANCA ITALO-CAUCASICA DI SCONTO



Mr. F. Tahtadjian,
Diplomatic Representative
of the Armenian Republic
at CONSTANTINOPLE.

Excellence,

As the representative of the Armenian Legation at Washington, I have the honor to inform you that the Armenian Colony of the U. S. A. desiring to assist the reparation of Armenia, has bought valuable goods and transferred them, in the month of October 1920, through Dilcisian Bros. Part of these goods has not been delivered at its destination, and been left at the Warehouse of Kourou-Tchechme. Mr. Franco, the director of the Warehouse, has notified me that in the Warehouse there are (30) thirty tons of goods (instruments, machinery, etc.) addressed to the Armenian Republic, and that I must pay for storage 90 (Ninety) Turkish pounds per month.

In behalf of the Armenian Legation at Washington D.C. I beg your Excellency to pay the said rent on account of the Legation at Washington or the Armenian Delegation at Paris.

I beg to inform that among the goods there are 69 bales and 30 boxes of clothings which has been sent by the Armenian Red Cross of America for the refugees in Armenia. Considering that the refugees are in urgent need of clothings and that the clothings are liable to be destroyed at the Warehouse, I beg you to apply to the American Relief of the Near East to be kind enough to transfer the clothings to its destination, as soon as possible.

Yours very respectfully,
Zadig Matigian

23rd May, 1921
Constantinople

Պարոն Ֆ. Թահթաճեան

[F. Tahtadjian]

Հայաստանի Հանրապետութեան

Դիւանագիտական Ներկայացուցիչ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ձերդ Գերազանցութիւն,

Որպէս Հայկական Պատուիրակութեան ներկայացուցիչ Վաշինգտոնում պատիւ ունեմ տեղեկացնել Ձեզ, որ ԱՄՆ-ի Հայ Գաղութը, ցանկանալով աջակից լինել Հայաստանի վերակառուցմանը, գնել է արժեքաւոր ապրանքներ եւ դրանք փոխանցել 1920 թուականի Հոկտեմբերին «Դիւսիզեան Եղբայրների» միջոցով: Այս ապրանքների մի մասը չի հասել Նպատակակէտին եւ մնացել է Զուրու-Չէշմէի պահեստում: Պահեստի տնօրէն պարոն Ֆրանկոն տեղեկացրեց ինձ, որ պահեստում կայ երեսուն (30) տոննա ապրանք (գործիքներ, սարքաւորումներ, եւայլն)՝ հասցեագրուած Հայաստանի Հանրապետութեանը, եւ ես պահեստաւորման համար պէտք է վճարեմ ամսական 90 (իննսուն) թուրքական ոսկի:

Վաշինգտոնի Հայկական Պատուիրակութեան անունից խնդրում եմ Ձերդ Գերազանցութեանը վճարել նշուած վարձավճարը Վաշինգտոնի Պատուիրակութեան կամ Փարիզի Հայկական Պատուիրակութեան հաշուին:

Խնդրում եմ տեղեկացնել, որ ապրանքների մէջ գտնուում են 69 հակ եւ 30 արկղ հագուստ, որոնք ուղարկուել են Ամերիկայի Հայկական Կարմիր Խաչի կողմից՝ Հայաստանում փախստականների համար: Նկատի ունենալով, որ փախստականները հրատապ հագուստի կարիք ունեն, եւ հագուստները կարող են փչանալ պահեստում, խնդրում եմ Ձեզ դիմել Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան Նպաստամատոյցին, որպէսզի այդ հագուստները ըստ կարելոյն շուտափոյթ տեղափոխեն իրենց նպատակակէտը:

Յարգանք Ձերդ՝

Չատիկ Մատիկեան

[Zadig Matigian]

Մայիսի 23, 1921

Կոստանդնուպոլիս

2 Յունիս 1921

N° 1215

Հ. Հ. Պատուիրակութեան
Փարիզ

Աթաբէկեան - Երեկուայ «Երկիր» թերթը «Ի՞նչ եղան Գերմանիոյ հայ գաղութի նուիրուած 14 սնտուկ դեղերը» վերնագրով տպել է մի նամակ Բաթումից, զոր ներփակ ուղարկում եմ:

Ինչպէս երեւում է, այդ թերթը ստացել է Բաթումից եւ պատճենները սոյն թղթերի, զորս կցել էի պատուիրակութեանդ ուղղած վերջին տեղեկագրիս:

Եթէ յիշում էք, ես Ձեզ էի ուղարկել պ. Աթաբէկեանի նոյն նամակը, որով նա առաջարկում էր ինձ հին թուականով մի թուղթ գրել իրան, դեղերը յետ պահանջելու համար:

Ինչպէս պարզւում է հիմա, նա Բաթումում խօսել է այն ժամանակ այդ մասին, ասելով թէ՛ արդէն կարգադրութիւն է ստացել ինձանից (!?):

Պ. Աթաբէկեանի ինձ ուղղած նամակը քիչ տարօրինակ էր: Գրում էր ի միջի այլոց թէ՛ կարող էր Թիֆլիսից, ձեռնհաս իշխանութիւնից, հեշտութեամբ ստանալ իրան պետք եղած թուղթերը, բայց դրա համար տասն օր պիտի կորսնցներ:

Ուրեմն ժամանակ վաստակելու համար էր, որ ինձ էր դիմում, նախապէս քաջ գիտենալով, որ Պոլսոյ միջոցով հարցը բնականաբար անելի պիտի երկարեր!..

Յետոյ, գրում էր թէ՛ երբ ստանար իւր ակնկալած թուղթը, դեղօրայքը մաքսատնից դուրս պիտի բերէր Պոլիս (!):

Բացի դրանից, ես հարց էի տուել ինքնիրանս թէ՛ գիտենալով հանդերձ որ Պ. Խատիսեանը այդ միջոցին Թիֆլիսում էր գտնւում, որտեղ նա կարող էր ամեն ինչ շատ մեծ հեշտութեամբ ձեռք բերել, ինչո՞ւ համար Պ. Աթաբէկեանը նախընտրել էր անհամեմատ անելի երկար մի ճանապարհ:

Այդ ամենի հետեւանքը այն էր եղած որ այն ժամանակ, որ Պ. Աթաբէկեանի նամակը ենթարկել էի պատուիրակութեանդ հայեցողութեան, բայց միանգամայն գրել էի ստիպողական ձեւով Պ. Խատիսեանի՝ Թիֆլիս, որ Բաթումից անցնելու ժամանակ հետաքրքրւեր այդ դեղօրէից հարցով, որոնց այնքան երկար ժամանակ այնտեղ մնալը ինքն ըստ ինքեան իւր համար անհասկանալի մի երեւոյթ էր:

Պ. Խատիսեանը ստացել էր *en temps utile* իմ նամակը եւ Բաթումում իմացել էր Պ. Աթաբէկեանից, որ դեղօրայքը վաղուց արդէն անցել էին նոր կառավարութեան ձեռքը, ինչ որ ինքը այդտեղ կը հաստատէ ձեզ:

Յիշում եմ եւ այն, որ միաժամանակ Բաթումում բժիշկ որդւոյս ուղղած մի նամակումս, փոքրիկ հարցական կէտ մը գետեղել էի այդ դեղօրէից շարքը:

Պէտք է աւելացնեմ, որ այն ժամանակ ես ոչ մի կերպ կարող էի երեւակայել, որ Պ. Աթաբէկեանը կանի այն, ինչ որ նա արաւ պետական գոյքերի վերաբերմամբ:

«Երկրի» թղթակիցը զիս լինել է Նախկին Հիւպատոս (?), իսկ թերթը աւելորդ է համարել ուղղել այդ կրկնակի սխալը:

Ներփակում եմ իտալական դրամատան ինձ ուղղած նամակի պատճենը, որմէ երեւում է, որ Աթաբէկեանը այդ հաստատութեան միջոցով եւ պարտքի տակ ունէր այդտեղ 20 սնտուկ արճիճ (անագ պիտի լինի որ շատ աւելի թանկ արժէ) 14 սնտուկ դեղօրայք, 1 տակառ դեղօրայք եւ 19 հակ պարապ պարկ:

Պոլիս, 3 Յունիս 1921

N° 1219

Հ. Հ. Պատուիրակութեան

Շարունակութիւնն նախընթաց գրագրութեան: Տեղւոյս գրեթէ բոլոր թերթերի մէջ տպուած է Աթէնքից մի հեռագիր Աթաբէկեանի մասին:

Ներփակում եմ մի քանի կտրոններ:

Հեռագրի մէջ յիշատակուած Իգայա (եւ ոչ Իսաքու) անուն ծայնը. անցեալ տարի՝ երբ Աթաբէկեանը կովկասեան դրամատան Բաքուի մասնաճիւղի տնօրէնն էր, սարքել էր վերջնոյս հետ՝ Բաթումում մի գործ, որի ետեւից յիշեալ դրամատունը մօտ 100 հազար Անգլիական ոսկի կորուստ էր ունեցել:

Այդ գործի մասին շատ շահեկան տեղեկութիւններ կարող է տալ Ձեզ Պ. Ադ. Միք[այէլ] Թամամշեանը, որ այժմ Փարիզում է գտնուում:

Տարօրինակ է, որ այժմ Աթաբէկեանը մի եւ նոյն Իսայայի մօտ է գնացել եւ նրա միջոցով ուզեցել է գործել:

Աթէնքի հեռագիրը հաստատում է, որ 14 սևտուկ եւ 1 տակառ դեղօրայք (այդ է Բերլինից անցեալ տարի ստացուած եւ ուղարկուած քանակը) գրաւուած են եւ քննութիւն է կատարուում:

Հիմա որ Ձեզ մօտ են գտնուում Աթաբէկեանի Բաթումից փախցրած բոլոր ապրանքի գրաւոր փաստերը, արդեօք նպատակայարմար կը դատէի՞ք Ձեր կողմից հետապնդում անել դիւանագիտական ճանապարհով:

Յուցակից նկատած կը լինիք անշուշտ, որ այնտեղ մասնաւորների անուան ստացուած ապրանք ալ կայ:

Չանգեզուր - Եթէ տեղւոյս թերթերի այսօր եւ երեկ տուած լուրերի հաւատանք, Չանգեզուրի եւ Երեւանի մէջ համաձայնութիւն է կնքուած եւ ոմանք կառավարութեան անդամներից անցել են Պարսկաստան:

Մոռացել էի ասել Ձեզ նախընթաց նամակումս թէ՛ ըստ Պ. Կօրրինիի - Pas un seul coup de fusil n'avait été tiré au Zanghézour.

«Ճակատամարտը» չհրատարակեց Իշ[խան] Արդուբեանի 15 Մայիս թուակիր հեռագիրը, զոր նա ինձմէ յառաջ ստացել էր: Չ'հրատարակեց եւ նախընթացը, որ 1-2 օր յառաջ էր ստացել:

3 Juin [1921]

N° **1218**

A Son Excellence,
Monsieur le Marquis de Garroni, Haut Commissaire d'Italie,

Monsieur le Haut Commissaire,

Le prince David de Signakh Youzbachian, sa fille Mlle Nina son fils Mr. Boghdan, jeune officier de l'Armée Arménienne, des fuyards des Bolchéviks, sont arrivés à Constantinople en Mars dernier, pour se rendre en France (à Paris). Le vieux prince ne pouvant supporter le voyage par mer, la famille doit prendre le chemin de fer.

Leurs passeports arméniens, parfaitement en règle, sont déjà munis de tous les visas, sauf le visa italien, qu'ils ne peuvent pas obtenir depuis plus d'un mois. Inutile de dire qu'il s'agit d'un visa de transit, sans droit d'arrêt en Italie.

Je dois ajouter que, le prince David de Signakh Youzbachian est porteur d'un passeport séparé délivré par S.E. Mr. Gorrini, Représentant Diplomatique d'Italie en Arménie (en date du 16 Février 1921 N° 32), par lequel lui et sa famille sont autorisés à se rendre en Italie et à y séjourner. Le même passeport est visé par Mr. Gorrini et ce visa porte:

"Per recarsi a Costantinopoli, in Italia, soggiornarvi e fare ritorno entro l'anno 1921".

Mr. Gorrini connaît très bien le prince David et tous les membres de sa famille. En vue de fixer Votre Excellence sur le compte de cette très respectable famille, j'ajouterai de mon côté que Mr. Youzbachian est un grand propriétaire à Tiflis et environs, mais tous ses biens ont été confisqués par le régime bolchéviste, et il a eu de la peine à se sauver, avec sa famille, de Tiflis. Il a hâte d'arriver à Paris, étant cointéressé dans quelques affaires de naphte qu'on y traite en ce moment. Son fils n'est pas moins pressé pour y arriver, car il veut entrer dans une Ecole Militaire française.

En portant ce qui précède à la Haute Connaissance de Votre Excellence je La prie de vouloir bien user pour une fois de Son Autorité pour faire accorder à cette famille arménienne, qui n'a besoin que de traverser en train express le territoire italien, le visa sollicité depuis si longtemps.

Deux télégrammes envoyés à Rome, les 3 et 14 Mai, sont restés sans réponse. Dans l'espoir que Votre Excellence voudra bien accorder à ma présente requête Sa bienveillante attention, je La prie d'agréer, avec mes remerciements anticipés, l'assurance de ma haute considération.

Le Représentant Diplomatique,

3 յունիսի [1921]

Թիւ **1218**

Իտալիայի դիւանագիտական ներկայացուցիչ (կոմիսար)
 Նորին Գերագանցութիւն
 Պարոն մարքիզ դը Գարրոնիին

Պարոն դիւանագիտական ներկայացուցիչ,

Իշխան Դաւիթ դը Սինեաք Իւզբաշեանը, վերջինիս դուստրը՝ օրիորդ Նինան, եւ որդին՝ պարոն Բոգդանը, որը հայոց բանակի երիտասարդ սպայ է, փախուստի դիմելով բուլղերիկներից, նախորդ տարուայ մարտ ամսին ժամանել են Կոստանդնուպոլիս՝ Ֆրանսիա (Փարիզ) մեկնելու նպատակով: Ելնելով նրանից, որ տարեց իշխանի համար դժուար կը լինի դիմանալ ծովային ճամփորդութեանը՝ ընտանիքը ստիպուած է ճանապարհ ընկնել երկաթուղով:

Նրանց հայկական անձնագրերում, որ լրիւ օրինական են, առկայ են արդէն մուտքի բոլոր արտօնագրերը՝ բացառութեամբ իտալականից, որ նրանց չի յաջողում ստանալ արդէն մէկ ամսից ի վեր: Անիմաստ է յիշեցնել, որ խօսքը տարանցիկ մուտքի արտօնագրի մասին է՝ առանց Իտալիայում կանգ առնելու իրաւունքի:

Հարկ եմ համարում յաւելել, որ իշխան Դաւիթ դը Սինեաք Իւզբաշեանը նաեւ առանձին մի անձնագիր ունի, որը նրան Հայաստանում Իտալիայի դիւանագիտական ներկայացուցիչ Նորին Գերագանցութիւն պարոն Գորրինին է տրամադրել (տրուած 1921 թուականի փետրուարի 16-ին, N° 32), ու որը նրան եւ իւր ընտանիքի անդամներին Իտալիա այցելելու եւ այնտեղ բնակութիւն հաստատելու իրաւունք է տալիս: Նոյն այդ անձնագրում, որի վրայ պարոն Գորրինիի կնիքն է, նշուած է. “Per recarsi a Costantinopoli, in Italia, soggiornarvi e fare ritorno entro l’anno 1921”.

Պարոն Գորրինին քաջածանօթ է ինչպէս իշխանին, այնպէս էլ ընտանիքի անդամներին:

Որպեսզի Ձերո՞ Գերազանցությունը յստակ պատկերացում տամ այս պատուարժան ընտանիքի վերաբերեալ, իմ կողմից ցանկանում եմ անելացնել, որ պարոն Իզաբելան խոշոր սեփականատեր է Թիֆլիսում եւ Թիֆլիսի մերձակայքում, սակայն բոլշեւիկեան կառավարութիւնը բռնագրաւել է Նրա ողջ ինչքը, եւ Նրան չի յաջողուել ընտանիքի հետ փախուստի դիմել Թիֆլիսից:

Նա շտապում է օր առաջ Փարիզ ժամանել՝ ի թիւս մի շարք այլ անձանց՝ հետաքրքրուած լինելով Նաւթին առնչուող մի գործով, որի շուրջ մօտ օրերս պայմանաւորուածութիւն է ձեռք բերուելու Փարիզում: Նրա որդին Նոյնքան անհամբեր է, քանի որ ցանկանում է ընդունուել Ֆրանսիական ռազմական դպրոց:

Ձերո՞ Գերազանցությունը ներկայացնելով Նախապատմութիւնը՝ խնդրում եմ բացառութեան կարգով գործի դնել Ձեր ունեցած իշխանութիւնը, որպէսզի հայազգի ընտանիքին տրամադրեն այնքան վաղուց ակնկալուած մուտքի արտօնագիրը, որ Նրանց հարկաւոր է՝ միայն եւ միայն ճեպընթացով Իտալիայի տարածքով անցնելու համար:

Հռոմ առաքուած՝ մայիսի 3-ի եւ 14-ի մեր հեռագրերը մինչեւ օրս մնում են անպատասխան:

Յուսալով, որ իմ այս հայցը կարժանանայ Ձերո՞ Գերազանցութեան բարեհաճ հոգածութեանը՝ կանխաւ իմ շնորհակալանքն եմ յայտնում Ձեզ եւ խնդրում եմ ընդունել յարգանացս հաւաստիքը:

Դիւանագիտական ներկայացուցիչ

NEAR EAST RELIEF
25, RUE TAXIM, CONSTANTINOPLE

June 10, 1921
Mr. Edward Martin,
N.E.R. Warehouse,
ORTAKEUY.

My dear Mr. Martin:

Mr. F. Tahtadjian, Diplomatic Representative of Armenia, is giving us fifteen cases and one barrel of drugs and medicines, sixteen bales of clothing, etc., to be shipped by us to the Caucasus. This will be your authorization for receiving these goods when they arrive and you will kindly give a receipt for the same.

Very truly yours,
F. W. MacCallum,
Regulating Officer,
Caucasus Branch.

ՄԵՐՁԱԴՈՐ ԱՐԵՒԵԼԹԻ ՆՊԱՍԱՍԱՏՈՅՑ
25 ԹԱՔՍԻՄԻ ՓՈՂՈՑ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
[NEAR EAST RELIEF]
[25, RUE TAXIM, CONSTANTINOPLE]

Յունիսի 10, 1921
Պարոն Էդուարդ Մարթին
[Edward Martin]
Մ.Ա.Ն. Պահեստ
Օրթագիւղ

Իմ սիրելի պարոն Մարթին,
Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ պարոն Ֆ. Թահթաճեանը մեզ տալիս է տասնհինգ տուփ եւ մէկ տակառ դեղ եւ դեղորայք, տասնվեց հակ հագուստ, եւ այլն, որոնք մեր կողմից ուղարկուելու են Կովկաս: Ձեր արտօնութիւնը կը լինի ստանալ այս ապրանքները հասնելուն պէս. բարի եղէք խնդրեմ տրամադրել ստացականը:

Ամենայն անկեղծութեամբ Ձեր՝

Ֆ. Ու. Մաքալըմ
Կարգաւորող Պաշտօնեայ
Կովկասի Մասնաճիւղ

14 Յունիս 1921

N° 1233

Հ. Հ. Պատուիրակութեան
Փարիզ

Իբրեւ շարունակութիւն 1 Յունիս թիւ եւ 1213 համար գեկոյցիս, պատիւ ունիմ տեղեկագրելու հետեւեալը:

Ամսու 3-ին ստացայ տեղոյս “American Black Sea Steamship Corporation” ծովային ընկերութիւնից մի նամակ, որի պատճենը ներփակում եմ:

Ենթադրելով թէ այդ գրութեան մէջ յիշատակուած մեքենայք կարող էին առնչութիւն ունենալ Յունիսի 1-ին Տիւսիգեան եղբարց ներկայացուցիչ՝ Պ. Յովհաննէսեանի ինձ յանձնած բեռնագրի, ինչպէս նաեւ Պ. Չ[ատիկ] Մաթիկեանի ներկայացրած յայտարարութեան հետ, ամսու 5-ին ուղղեցի վերոյիշեալ շոգենաւային ընկերութեան 1222 համար գրութիւնս, որի պատճենը նմանապէս կը ներփակեմ:

Քանի մը օր վերջը, այն է՝ Յունիսի 9-ին, ստացայ նրանց պատասխանը, որի մէջ զարմանօք կարդացի թէ՝ Քասսիօ փապա ասուած տեղը գտնուող ինչ որ մթերանոցի մէջ աճուրդից ծախուած էին ինչ ինչ մեքենաներ:

Կարծելով թէ թիւրիմացութիւն մը կար գործի մէջ, նորից գրեցի շոգենաւային ընկերութեան, եւ առանց պատասխանի սպասելու, մի եւ նոյն օրը (երէկ) անձամբ գնացի Ամերիկեան այդ շոգենաւային ընկերութեան գրասենեակը, որպէս զի հարցը պարզեմ:

Այդ երկու թղթերի պատճենները եւս ներփակ կը գտնեք:

Եւահաթէի՝ նշքացուեցայնտեղ: Տիւսիգեան եղբարց կողմանէ (Յովհաննէսեանի միջոցով) Յունիսի 1-ին ինձ յանձնուած բեռնագիրը կը վերաբերի ճիշտ այն 24 (եւ ոչ 22 ինչպէս գրել էին) կտոր մեքենաների, զորս ծախել էին Մայիսի 6-ին աճուրդից, Քասսիմ-փաշա ասուած տեղի մթերանոցում:

Ընկերութեան գործակատարը՝ Վուչիւս անուն պօլսեցի մի իտալացի (Levan-tin) ասաց ինձ թէ՝ իրանք դեռ մարտի մէջ գրած են եղել Տիւսիգեան տան (այդ տանը՝ ինչպէս իմացայ այժմ Վուչիւսիօյից, ներկայացնում է միանգամայն Levant Royal Steamship Company անուն շոգենաւային ընկերութիւնը), որ “Mopang” շոգենաւով հասել են Պօլիս մեքենաներ (Հայ կառավարութեան անուան) եւ

առաջարկած է եղել, որ ներկայացուի բեռնագրի բնագիրը եւ հրահանգ տայ միանգամայն թե՛ ի՞նչ պետք է անել մեքենաների հետ:

Վուլչինոյի ասածին, Տիլսիզեան տունը բեռնագրի մասին բոլորովին լռել է եւ գոհացել է հրահանգ տալով, որ մեքենաները Քասիմ-փաշայի մթերանոցը փոխադրուին եւ այնտեղ պահուին:

Դրանից յետոյ, միշտ ըստ բացատրութեան Վուլչինոյի, նրանք նորից գրած են եղել Տիլսիզեանների, բայց պատասխան չեն ստացել:

Իսկ այժմ, երբ մեքենայք աճուրդից ծախուած են, Տիլսիզեան տունը, Յովհաննէսեանի միջոցով, Յունիսի 1-ին յանձնում է ինձ բեռնագիրը:

Այդ բեռնագրից երեւում է:

1) որ մեքենայք Տիլսիզեան տան էին յանձնուած Երեւան փոխադրելու համար (Հայ կառավարութեան անուան): Բեռնագրի մէջ Տիլսիզեան տունը նշանակուած է իբրեւ *chargeurs*.

2) որ մեքենաները բեռնուած էին Նիւ-Եորքում անցեալ տարի՝ Դեկտեմբերի մէջ (15-ին) հրամանին (*à l'ordre*) “Mount Royal” շոգենաւային ընկերութեան, որի ներկայացուցիչը այստեղ Տիլսիզեան տունն է եղել (այդ ընկերութեան “Mopang” շոգենաւի վրայ):

3) որ փոխադրութեան վարձը (*frêt*) կանխիկ վճարուած է եղել Նիւ-Եորքում: Եթէ մեքենաները Տիլսիզեան տան կարգադրութեամբ այստեղ մնացել են, երեւի այդ տունը մի տեղից հրահանգ ստացել էր, որ կանգնեցնէ Երեւան փոխադրութիւնը եւ այնտեղ պահէ զայնս: Եթէ պայմանգրի մէջ, Տիլսիզեան տունը լիովին պատասխանատու էր մինչեւ վերջը իրան յանձնուած մեքենաների համար:

Անցեալ Փետրվարի վերջերը եւ կամ Մարտի մէջ, լաւ չեմ յիշում, ինձ դիմել էր մի ոմն Ժամկոչեան, Ամերիկայից եկած, որպէս զի կարողանար իմ օգնութեամբ առանց բեռնագրի ստանալ մեքենաներ, որոնք նրա խօսքով, ստացուել էին Ամերիկայից Հայ կառավարութեան անուան (Երեւան), բայց իրա սեպհականութիւն էին, եւ բացատրել էի նրան այն ժամանակ, որ առանց բեռնագրի չի կարելի ապրանք ստանալ, եւ երբ շատ խնդրել էր, ուղղել էի նրան իմ բարեկամներից Լեւոն Թոփալեան անուն մի վաճառականի մօտ, որպէս զի՝ եթէ հնարաւորութիւն կար, նա երաշխաւոր լինէր այդ մեքենաները դուրս բերելու համար:

Թոփալեանը ոչինչ չէր արել, իսկ Ժամկոչեանը այլ եւս մօտս չէր եկել:

Պետք է անելացնեմ այն, որ Փետրվարի եւ կամ Մարտի մէջ գրել էր ինձ խուլ կերպով American Black Sea Steamship Corporation-ի տեղւոյս կառավարիչը (Պ. Վուչինսոն) Ամերիկայից ստացուած ինչ որ մեքենաների մասին, եւ որովհետեւ՝ առ ի չգոյէ բեռնագրի եւ որ եւ է հրահանգի, իմ գիտցածը այն էր միայն, ինչ որ լսել էի ժամկոչեանից, այնպէս էի հաւատացած որ նրա մեքենաների մասին էր խօսքը եւ ըստ այնմ ալ վարուել էի:

Հիմա որ անակնկալի մը առջեւ ենք գտնուում, վախենում եմ որ վտանգւած չլինեն եւ այն ապրանքները եւ մեքենայք, որոնց մասին յայտարարեց Պ. Մաթիկեանը:

Յաւալի է, որ Պ. Մաթիկեանը, որ մի ամսու չափ մնաց այստեղ, լուրջ կերպով չ'պարապուեց այդ գործով եւ գոհացաւ տալով ինձ մի յայտարարութիւն, որի մէջ չ'էր իսկ ասուած թէ ո՞ր եւ գտնուում այդ թօն ապրանքի բեռնագրերը:

Ամենից տարօրինակը այն է, որ երբ Վուչինսոյի հետ ունեցած տեսակցութիւնիցս յետոյ (Յունիսի 13-ին) յայտնեցի ժամկոչեանին թէ իւր մեքենաները աճուրդից ծախուած էին, նա պատասխանեց թէ «սուտ են խօսում», թէ Մայիսի 20-ին նա այցելել է Պ. Մաթիկեանի հետ Քուրու-Չեշմէի մթերանոցը եւ այնտեղ տեսել է իւր մեքենայքը: Որպէս զի այդ կետը բոլորովին պարզուի եւ ստուգուի ես դրկեցի նրան Քուրու-Չեշմէ:

Հետեւեալ օրը (այսօր Յունիսի 14-ին) նա եկաւ մօտս եւ յայտնեց թէ այնտեղ են իւր մեքենայքը, ինչպէս եւ մնացեալ ապրանքը, որ տեսել էին Մայիսի 20-ին: Դրանից յետոյ ուրեմն բոլորովին պարզուեց, որ աճուրդից ծախուած մեքենայք (24 կտոր) առնչութիւն չունէին ժամկոչեանի հետ:

Չեմ գիտեր թէ ի՞նչ կարելի է այժմ անել այդ մեքենաների վերաբերմամբ, թէեւ պարզ երեւում է, որ զեղծում է տեղի ունեցել թէ Վուչինսոյի եւ թէ Տիլսիզեանի կողմից:

Յամենայն դեպս, ես իմ կողմից միջոցների պիտի դիմեմ անյապաղ մեր իրաւունքները պաշտպանելու համար:

Խնդրում եմ յատկապէս, որ այդ առաքումների մասին ինձ կարելի եղածին չափ մանրամասն տեղեկութիւններ տաք եւ միանգամայն վերադարձնէք Պ. Մաթիկեանի յայտարարութիւնը, պահանջուած հրահանգով միասին:

«Շատ էժան ծախուեցան մեքենայքը», ասելով հանդերձ, Վուչինսոն յայտնեց թէ 6-700 Օսմ[անեան] թղթադրամ լիրա կայ իրացն մօտ ապրանքի տիրոջ յանձնելու: Դրանից էլ առանձնապէս երեւում է, որ կարելի չ'էր մեքենաները

ծախելու, mais on a monté le coup avec préméditation pour gagner de l'argent.
Իմ անելու քայլերի մասին Ձեզ կը տեղեկագրեմ:

Մնամ խորին յարգանքով.

Ֆ. Թ.

Յ. Գ. Ինչպես տեսնում եք, Վուչինոն իբրեւ թէ բոլորովին չի տեսել ժամկոչեանը
եւ ինձանից խնդրում է, որ զայն գտնեմ եւ ուղարկեմ իրանց մօտ:

Մինչդեռ այժմ ժամկոչեանը բացատրում է, որ նա շարունակ գնում է եղել
Տիլսիգեանի եւ Վուչինոյի մօտ եւ երկուսից էլ մինչեւ վերջը այն պատասխանն
է լսել թէ՝ առանց բեռնագրի ապրանք չէ կարելի ստանալ?! Նրանք տեսել եւ
կարդացել էին ժամկոչեանի մօտ գտնուող նամակները եւ այլ թղթեր:

Պօլիս,
25 Յունիսի 1921

N° 1247

Հ. Հ. Պատուիրակութեան
Փարիզ

Սրանից շատ ժամանակ առաջ, Մայիլեան եղբարք ուղարկել էին ինձ շատ մը նիւթեր իրանց գիտական եւ արդիւնաբերական ուսումնասիրութեանց վերաբերեալ:

Այդ նիւթերից մի մասը այստեղ օգտագործուած էր Հայ թերթերի միջոցաւ: Ինչ կը վերաբերի Հայաստանի հանքային հարստութեանց, այն ժամանակ իմ թելադրութեամբ եւ աշխատակցութեամբ մի յօդուած երեւացել էր (1920-Ապրիլ) Լոնտոնի յայտնի Mining journal-ի մէջ “Armenia’s mineral resources” վերնագրով:

Ներփակելով այդ յօդուածը, պատիւ ունիմ յայտնելու, որ Մայիլեանների այդ նիւթերի ծրարը ուղարկում եմ Ձեզ Պարոն Տաւիթ Եուզբաշեանի միջոցով, այն մտքով որ Փարիզում աւելի ճիշտ եւ նպատակայարմար կը լինի գայնս օգտագործել յառաջիկայում:

Խնդրում եմ, որ բարի լինեք իմաց անել ծրարի ստացումը:
Մնամ խորին յարգանքով,

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
DÉLÉGATION
A LA CONFERENCE DE LA PAIX
4037

27, AVENUE MARCEAU
PARIS, le 1 Յուլիս 1921

Հայկական Լեգեոնի կազմութեան լուրը.

Մեծ. Պ. Ֆ. Թահթաճեան
Հ. Հ. Դիւանագիտական Ներկայացուցիչ
Կ. Պօլիս

Մեծարգոյ Պարոն Ներկայացուցիչ,
Ի պատասխան Ձեր 21 եւ 22 յունիս թուակիր գրութեանց, որով մեզ կը հաղորդէիք Պօլսոյ մամուլին մէջ շրջան ընող գրոյց մը, որու համաձայն Հայաստանի Հանրապետութեան Յունաստանի դեսպանը Պ. Տ[իգրան] Չայեան, պարոն Պալթաճիի հետ իր տեսակցութեան ընթացքին յայտնած ըլլայ որ Հայերը կը փափաքին մասնաւոր լեգեոն մը կազմել Հելլեններու կողքին Քեմալիստներու դէմ կռուելու համար, ի վիճակի ենք ձեզ յայտնելու թէ այդ լուրը յերկրածոյ միայն կրնայ ըլլալ:

Արդարեւ մեր ձեռքին տակ ունինք Յունիսի 14-ին Պ. Պալթաճիի եւ Պ. Չայեանի տեսակցութեան խիստ մանրամասն մէկ տեղեկագիրը որու մէջ հեռաւոր ակնարկութիւն մը մինչեւ անգամ չկայ հայկական լեգեոնի մը կազմութեան մասին: («Նեօլոյոսի» Աթենքէն ստացած հեռագիրը յունիս 16 թուականը կրելով, այդ տեսակցութեան միայն կրնար վերաբերիլ):

Հաւանօրէն այդ լուրը ծագում առած է Հաճընի ինքնապաշտպանութեան պարագլուխներէն Պ. Արամ-Կայծակի եւ իր չորս ընկերներուն Աթենքի մէջ Ներկայութենէն: Պարոն Արամ-Կայծակ Ներկայացած է Պ. Չայեանի եւ փափաք յայտնած է երթալ Իզմիր, յունական գինուորական իշխանութիւններու տրամադրութեան տակ դնելու համար ինքզինքը, յայտնելով որ 400 հայեր պատրաստ են իրեն միանալու: Պարոն Չայեան ի պատասխան խոհականութեան հրաւիրեր է Պարոն Արամ Կայծակը, յայտարարելով միաժամանակ որ ինքը այդ մասին ոչ մէկ դիմում կրնայ կատարել յունական իշխանութեանց մօտ, մինչեւ որ պետք եղած հրահանգը չի ստանայ պատկան Ազգային Իշխանութենէն: Պարոն Չայեան այդ մասին մեզմէ որ եւ է հրահանգ խնդրած չըլլալով, կենթադրենք որ այդքանով ալ փակուած է այդ խնդիրը:

Աւելորդ չենք նկատեր նոյն առիթով ձեզ իմացնել որ Հայաստանի Հանրապետութեան Յունաստանի դեսպանը Պատուիրակութեանս կողմանէ ստացած իր ընդհանուր տիրէքթիվներուն մէջ կամաւորական հարցեր յարուցանելու ոչ մէկ հրահանգ ունի արդէն:

Պատուիրակութիւնս խնդրած է Պ. Չայեանէն, որպէս զի յարմարագոյն եղանակով հերքէ այդ լուրը:

Ընդունեցէք, Մեծարգոյ Պարոն Ներկայացուցիչ, մեր խորին յարգանաց հաւաստիքը:

Ի դիմաց

Հ. Հ. Փարիզի Պատուիրակութեան

Արտաւագդ Հանըմեան

Ընդհանուր քարտուղար

Յ. Գ. Ներփակ ձեզ կը դրկենք վաւերացուած պատճենը Պարոն Բեգզատեանի 28 Յունիս թուակիր գրութեան, ի մասին ձեր կողմէ դրկուած կարգ մը գումարներու ստացման եւ լիակատար պատճենը Պարոն Վրացեանի 29 յունիս թուակիր վերջին ձեռագրին:

ԱՀ

Athènes,
le 14 juillet 1921

N° ge 25
N° se 20
Objet :
Affaire Médicaments
3 annexes

Monsieur
Mr. Ferdinand Tahtadjian
Représentant Diplomatique de la République Arménienne
Constantinople

Monsieur le Représentant,
J'ai reçu, avec la liste y annexée, la lettre confidentielle que Vous avez bien voulu m'adresser à la date du 25 juin dernier, sub N° 1291, concernant l'affaire Atabékian - médicaments.

Le retard subi par l'envoi à Constantinople des articles sanitaires est dû au fait que M. Atabékian les ayant déposés chez des turcis personnes en garantie des avances qu'elles lui ont faits, force nous est aujourd'hui de désintéresser celles-ci pour dégager la marchandise. Jusqu'à mon arrivée à Athènes, il n'avait pas été possible à M. Klidjian, malgré son zèle et ses louables efforts, d'en disposer, même contre dédommagement des créanciers, M. Atabékian ayant déclaré qu'il n'existait pas de gouvernement arménien et qu'il demeurait le seul maître de ces marchandises, à défaut d'une autorité qualifiée pour lui en demander compte. L'outrecuidance de cette thèse n'avait point rencontré de contradiction légale.

Ma présence a donc eu pour effet de régler, en quelque sorte automatiquement, ce côté de la question. Mais comme l'affaire était déjà entre les mains du Procureur Royal et que les créanciers de M. Atabékian avaient opposé une saisie sur les marchandises, je devais, ou bien suivre la voie judiciaire, ou bien envisager un arrangement à l'amiable. C'est ce dernier mode que j'ai préféré, pour des raisons de tout ordre.

J'attends actuellement que notre Délégation à Paris m'ait fait parvenir les fonds nécessaires, pour expédier, aussitôt après liquidation des comptes, de 14 caisses d'articles sanitaires à Constantinople. Je ne manquerai pas de vous faire parvenir le connaissance afférent à cette expédition.

Quant à M. Atabékian, sa présence, ici, est nettement préjudiciable à nos intérêts, et je ferai le nécessaire pour son prompt départ. Cet homme étant à la fois insolvable et inconscient, j'estime que, dans les circonstances actuelles, une action judiciaire contre lui n'aurait pour conséquence que de nous créer de nombreux désagréments. Aux explications que je lui ai demandées sur les marchandises autres que les articles sanitaires et qui avaient été retirés par lui de la douane de Batoum, il m'a répondu tantôt par des dénégations indiquées, tantôt en m'affirmant que certaines balles (sacs vides, etc.) avaient été vendues pour faire face avec frais de transport, etc. Le fait est, pratiquement parlant, qu'il n'y a rien à saisir en dehors des 14 caisses d'articles sanitaires, et que ces marchandises, aussitôt dégagés, nous avons le plus pressant intérêt à éloigner d'ici un personnage dont la conduite, les propos, l'attitude cynique nous font le plus grand tort.

Veillez agréer, Monsieur le Représentant, l'assurance de ma haute considération.

Le Ministre d'Arménie
Tchaïan

Աթենք,
14 յուլիսի, 1921

N° ge 25
N° se 20
Խնդրոյ առարկան.
դեղորայքի գործը
Երեք կից փաստաթուղթ

Կոստանդնուպոլսում
Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցիչ
պարոն Ֆերդինանդ Թահթաճեանին

Պարո՛ն դիւանագիտական ներկայացուցիչ,
Սոյն նամակին կցուած ցուցակի հետ ես ստացայ Աթաբեկեանի եւ դեղորայքի
գործին առնչուող թիւ 1291 գաղտնի նամակը, որն ինձ հասցեագրելու
բարեհաճութիւն էք ունեցել յուլիսի 25-ին:

Սանիտարական այդ պարագաների Կոստանդնուպոլիս առաքման ուշացումը
պայմանաւորուած է նրանով, որ պարոն Աթաբեկեանն այդ ապրանքն ի
պահ էր տուել թուրքական քաղաքացիութիւն ընդունած անձանց՝ իրեն
մատուցած մի շարք ծառայութիւնների դիմաց, եւ այսօր մեզանից ջանքեր են
պահանջւում, որպէսզի վերջիններիս ստիպենք մոռանալ իրենց անձնական
շահագրգռութիւնը՝ ապրանքը ետ ստանալու համար: Չնայած իր ողջ եռանդին
ու գործադրած ջանքերին, որոնք արժանի են դրուատանքի, մինչեւ իմ՝ Աթենք
ժամանելը պարոն Քլիշեանին չէր յաջողուել ետ ստանալ դեղորայքը՝ նոյնիսկ
պարտատերերին փոխհատուցելու պայմանով, քանի որ պարոն Աթաբեկեանը
յայտարարել էր, որ հայկական կառավարութիւն գոյութիւն չունի, եւ ինքն է
այդ ապրանքի միակ տէրն ու տնօրէնը՝ համապատասխան իշխանութեան
բացակայութեան պարագայում, որն իրաւասու կը լինէր իրենից հաշիւ
պահանջելու: Նրա առաջ քաշած թեզի ամբարտաւանութիւնն օրինական
որեւէ ընդդիմախօսութեան չէր բախուել:

Ուստի՝ իմ ներկայութիւնն այստեղ ինչ-որ առումով ինքնըստինքեան
կարգաւորեց հարցի վերոյիշեալ կողմը: Սակայն քանի որ գործն արդէն հասել
էր Արքայական դատախազին, եւ պարոն Աթաբեկեանի պարտատերերը
պահանջել էին առգրաւել ապրանքը, ես ստիպուած էի կա՛մ լռելեայն
հետեւել դատաիրաւական ընթացակարգին, կա՛մ էլ փորձել հարցը
լուծել բարեկամաբար: Ես գերադասեցի վերջին տարբերակը՝ ելնելով
ամենատարբեր նկատառումներից:

Ներկայումս սպասում եմ, որ Փարիզի մեր պատուիրակությունն ինձ ուղարկի անհրաժեշտ գումարը, որպեսզի հաշիւները փակելուց յետոյ անյապաղ Կոստանդնուպոլիս առաքեմ սանիտարական պարագաների տասնչորս արկղերը: Ես անպայմանօրէն Ձեզ կուղարկեմ նաեւ առաքմանն առնչուող նաւաբեռնագիրը:

Ինչ վերաբերում է պարոն Աթաբեկեանին, նրա ներկայութիւնն այստեղ ուղղակիօրէն հարուածում է մեր շահերին, եւ ես կանեմ անհրաժեշտ ամենը՝ նրա շուտափոյթ մեկնումը կազմակերպելու համար: Ելնելով նրանից, որ վերոյիշեալ անձնաւորութիւնը վճարունակ չէ եւ միեւնոյն ժամանակ բաւականաչափ գիտակից չէ՝ ես համարում եմ, որ ստեղծուած հանգամանքներում վերջինիս դեմ յարուցուելիք դատական գործը մեզ միայն եւ միայն բազում անախորժութիւններ կպատճառի: Երբ ես նրանից բացատրութիւններ պահանջեցի՝ դեղորայքից զատ միւս ապրանքատեսակների մասին, որ նա ստացել էր Բաթումի մաքսատնից, Աթաբեկեանն ինձ պատասխանեց՝ մերթ ասածս ժխտելով, մերթ յայտնելով, որ որոշ կապոցներ (դատարկ պայուսակներ, եւ այլն) վաճառուելէին՝ բեռնափոխադրման ծախսերը հոգալու համար եւ այլն: Ինչեւէ, փաստը մնում է փաստ, որ գործնականում դեղորայքի տասնչորս արկղերից զատ՝ առգրաւման ենթակայ այլ ապրանք չկայ, եւ երբ մենք ետ գնենք ապրանքը, մեր իսկ շահերից է բխում՝ շուտափոյթ կերպով հեռացնել այստեղից այն անձնաւորութեանը, ով իւր վարքով, խօսքերով, ցինիկ պահուածքով, մեծագոյն վնասն է հասցնում մեզ:

Թոյլ տուէք արտայայտել, պարոն դիւանագիտական ներկայացուցիչ, յարգանացս հաւաստիքը:

Հայաստանի Հանրապետութեան նախարար՝
Չայեան

22 Juillet [1921]

N° **1293**

Au très honoré
Docteur F.W. MacCallum,
Near East Relief
En ville

Cher Docteur,

En réponse à Votre lettre de ce jour, j'ai l'honneur de Vous remettre une copie de la déclaration en date du 23 Mai dernier, que Mr. Zadig Matigian, citoyen arménien, établi aux Etats-Unis d'Amérique, a déposé entre mes mains.

Ce n'est que par suite de cette déclaration que j'ai su qu'il y avait dans les Entrepôts de Kourou-Tchesmé une trentaine de tonnes de marchandises (141 colis) appartenant au Gouvernement Arménien à Erivan, et que ces marchandises consignées à New York à la maison Dilsizian frères, pour le transport au Caucase (en transit par Constantinople), avaient été retenues ici, jusqu'à nouvel avis à la suite d'instructions reçues directement par ladite maison.

La maison Dilsizian frères étant en faillite, j'ai appris, il y a deux jours, que les Entrepôts mentionnés dans la déclaration de Mr. Matigian appartiennent maintenant à la maison (ou compagnie de navigation "Mount Royal", et que la Banque Américaine "Guaranty Trust" s'occupe, je ne saurais dire à quel titre des affaires de la "Mount Royal".

En l'absence des connaissements et d'autres renseignements je me suis adressé à notre Délégation à Paris à l'effet de recevoir des instructions. Mais la Délégation ne sachant également rien au sujet de cette expédition, s'est adressée de son côté à notre Légation à Washington, tout en m'autorisant à expédier à Erivan, si la chose est possible, par les soins du Near East Relief, les 69 balles et 30 caisses de vêtements se trouvant à Kourou-Tchesmé. Voilà pourquoi, je Vous avais saisi de cette question.

Il est à supposer que les duplicatas des connaissements des marchandises en question se trouvent entre les mains de la "Mount Royal". La maison Dilsizian doit posséder les originaux des connaissements. Mr. Ovannessian, l'ancien directeur de ladite maison, me disait dernièrement que ces documents ne sont pas encore reçus, mais je n'ai pas grande confiance en lui ; d'autant plus qu'il est impossible que les connaissements de marchandises expédiées de New York en Octobre 1920 ne soient pas encore là.

Mais, s'il en était même ainsi, la Comp. "Mount Royal" ne risquerait absolument rien si elle consentait à se dessaisir des vêtements en faveur du Near East Relief ; d'autant plus que le "Guaranty Trust", qui est intéressé dans l'affaire, est un établissement de crédit américain.

L'intervention du Near East Relief dans cette affaire me serait d'autant plus précieuse, que les Dilsizian étant en faillite et en l'absence des connaissances, j'ai bien peur qu'il n'y ait des tripotages pouvant porter préjudice aux intérêts du Gouvernement Arménien. Je Vous dis cela, parce que le cas s'est déjà présenté à Constantinople : Une partie de machines et instruments (24 colis), appartenant également au Gouvernement Arménien, a été vendue aux enchères publiques, le 6 Mai dernier, par la "American Black Sea Steamship Corporation" de cette ville. Je l'ai appris, à mon grand étonnement, le 13 Juin dernier.

Ces marchandises, confiées de même aux Dilsizian frères pour le transport au Caucase, avaient été chargées à New-York, le 13 Décembre 1920, sur le s/s "Mopang".

Il s'agissait de machines et d'instruments représentant une grande valeur et qui n'étaient passibles d'aucune détérioration. Il n'y avait donc aucune raison pour les vendre au bout de 2-3 mois après leur arrivée. Néanmoins la chose a eu lieu, et j'ai peur qu'on ne monte un second coup avec les 142 colis de Kourou-Tchesmé. C'est là une raison de plus pour que je fasse recours à Votre intervention et protection. Dans l'espoir, etc.

Յուլիսի 22 [1921]

Թիւ **1493**

Պատուարժան դոկտոր Ֆ. Վ. Մաքկալլումին
«Near East Relief» Զաղաքացիական ծառայութիւն

Թանկագին բժիշկ,

Ի պատասխան այսօր ստացուած Ձեր նամակի՝ պատիւ ունեմ Ձեզ ուղարկելու մայիսի 23-ին արուած յայտարարութեան պատճենը, որն ինձ է յանձնել Ամերիկայի Միացեալ Նահանգներում հաստատուած ծագումով հայ՝ քաղաքացի պարոն Չատիկ Մատիկեանը:

Այդ յայտարարութեան շնորհիւ է միայն, որ ինձ յայտնի դարձաւ, որ Քուրու-Չեշմէի պահեստներում Երեւանի հայաստանեան կառավարութեանը պատկանող շուրջ երեսուն տոննա ապրանք կայ (141 ճամպուրկ), եւ որ այդ ապրանքը, որը Նիւ Եորքում յանձնուել է «Դիլիքեան եղբայրներ» ընկերութեանը՝ Կովկաս առաքուելու համար (Կոստանդնուպոլսի տարանցիկ գօտով), վերոյիշեալ ընկերութեան կողմից ստացուած կարգադրութեան համաձայն՝ պահուել է այդտեղ՝ մինչեւ նոր հրահանգներ ստանալը:

Քանի որ «Դիլիքեան եղբայրներ» ընկերութիւնը սնանկացել է, երկու օր առաջ ես տեղեկացայ, որ պարոն Մատիկեանի յայտարարութեան մէջ յիշատակուած պահեստները ներկայումս պատկանում են “Mount Royal” ծովային ընկերութեանը կամ հաստատութեանը, եւ որ “Guaranty Trust” ամերիկեան բանկն է զբաղւում “Mount Royal”-ի գործերով՝ չեմ կարող ասել, թէ ինչ կարգավիճակով:

Ձեռքիս տակ չունենալով ո՛չ ուղեբեռնագրեր եւ ո՛չ էլ ուրիշ տեղեկութիւններ՝ ես դիմեցի Փարիզի մեր պատուիրակութեանը՝ համապատասխան ցուցումներ ստանալու նպատակով: Սակայն պատուիրակութիւնը նոյնպէս որեւէ տեղեկութիւն չունենալով այդ առաքման վերաբերեալ՝ իր հերթին հարցում է արել Վաշինգտոնի մեր դիւանագիտական առաքելութեանը՝ միեւնոյն ժամանակ ինձ արտօսելով հնարաւորութեան դէպքում «Near East Relief»-ի միջոցով Երեւան առաքել Քուրու-Չեշմէում գտնուող հագուստի 69 կապոններն ու արկղերը: Ահա թէ ինչու եմ ես Ձեզ անհանգստացնում այս հարցով:

Կարելի է ենթադրել, որ “Mount Royal”-ի ներկայացուցիչների մօտ են գտնուում վերոյիշեալ ապրանքի ուղեբեռնագրերի պատճենները: Ուղեբեռնագրերի բնօրինակները, հաւանաբար, «Դիլիքեան ընկերութիւնում» են: Վերոյիշեալ ընկերութեան նախկին տնօրէն պարոն Օվանեսեանը բոլորովին վերջերս

հաւաստիացնում էր ինձ, որ այդ փաստաթղթերը դեռեւս չեն ստացուել, սակայն ես առանձնապէս չեմ վստահում նրան, առաւել եւս, որ անհնար է, որ հոկտեմբերի 20-ին Նիւ Եորքից առաքուած ապրանքի ուղեբեռնագրերը դեռեւս տեղ հասած չլինեն:

Բայց նոյնիսկ եթէ այդպէս է, “Mount Royal” ընկերութիւնը բացարձակապէս ոչ մի ռիսկի չի դիմի, եթէ համաձայնի հագուստի արկղերը յանձնել «Near East Relief» ընկերութեանը, առաւել եւս, որ այս գործի մէջ իր շահագրգռութիւնն ունեցող “Guaranty Trust”-ը բարձր վարկանիշ ունեցող ամերիկեան հաստատութիւն է:

«Near East Relief» ընկերութեան միջամտութիւնն այս գործում ինձ համար առանձնապէս ցանկալի է մի պարզ պատճառով. Դիլիքեանների սնանկացման եւ ուղեբեռնագրերի անհետացման հետեւանքով ես այն մտավախութիւնն ունեմ, որ հնարաւոր են մեքենայութիւններ, որոնք հարուածի տակ կը դնեն Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան շահերը:

Սա Ձեզ ասում եմ, որովհետեւ նախադէպը եղել է Կոստանդնուպոլսում. մեքենաների եւ սարքերի մի մասը (24 ճամպրուկ), որը նաեւ Հայաստանի կառավարութեան սեփականութիւնն էր, վաճառուել է մայիսի վեցին հանրային աճուրդի ժամանակ այս քաղաքի «American Black Sea Steamship Corporation» հաստատութեան նախաձեռնութեամբ: Ես դա իմացայ մեծ զարմանքով, յունիսի 13-ին:

Այդ ապրանքը, որը նոյնպէս վստահուել էր Դիլիքեան եղբայրներին Կովկաս առաքուելու համար, 1920 թուականի դեկտեմբերի 13-ին Նիւ Եորքում բեռնուել էր «Mopang» բեռնանաւի վրայ:

Խօսքը մեծ արժէք ունեցող մեքենաների եւ գործիքների մասին էր, եւ դրանք բացարձակապէս վնասուած չէին: Այնպէս որ, ոչ մի պատճառ չկար, որ դրանք վաճառուէին տեղ հասնելուց երկու-երեք ամիս անց: Բայցեւայնպէս, ինչ եղել է, եւ ես վախեցնում եմ, որ մի բան էլ Քուրու-Չեշմէի 142 ճամպրուկների գլխին բերեն: Եւս մի պատճառ՝ Ձեր միջամտութիւնն ու աջակցութիւնը հայցելու: Յուսալով, որ... եւ այլն, եւ այլն:

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
MISSION DIPLOMATIQUE
Section consulaire

Constantinople,
le 5 Août 1921

«Վերջին լուրի» խմբագրութեան
Աստ

Մեծայարգ Տիար Խմբագրապետ,
Ձեր պատուական թերթի 2244 համարի առաջնորդողը կը վերջանար
«խմբագրական ծանօթութեամբ» մը, զոր առանձին թախիծով կարդացի:

Թէ ներկայ կուսակցական անմիտ կռիւների միջոցին գտնոււմ են մարդիկ,
որոնք մի տեսակ քաւութեան նոխազ դառնան, դա ինձ համար հասկանալի
է, ուստի եւ «Բարիգի խմբակի գործիք» բառերը զիս շատ յուզելով հանդերձ
չ'վիրաւորեցին, նա մանաւանդ որ եւ այստեղ նոր դէմք մը չեմ եւ շատ շատերը
վաղուց հասկացել են թէ ոչ ոքի գործիքը երբեք չեմ եղած եւ չեմ լինելու: Եւ այն
անձնաւորութիւնը, որոնց դուք կակնարկեք, շատ լաւ գիտեն որ այդ այդպէս է:

Յաւալին այն է սակայն, որ այնպիսի դժուար եւ փափուկ մի ժամանակ, երբ
հայ ջերմաչափը գերոյից բաւական վար է ցոյց տալիս եւ միութեան մէջ պետք
է փնտռենք մեր փրկութիւնը, մենք՝ կուսակցական նեղմիտ հաշիւներից եւ
կրքերից քարացած, շարունակոււմ ենք ինքզինքնիս վարկաբեկել, առանց
մտաբերելու որ ոչ մի տեղ եւ ոչ ոք տակաւին մեզ հասունութեան վկայական
չէ տուել:

Զ'պետք է մոռանանք, որ սնանկութիւնը այնպիսի ահռելի մի բան է, որ մարդու
ձեռից տունն էլ կը տանի, օջախն էլ ...

Երբ Դուք եւ ուրիշները ճակատը կը պաշ[տ]պանէիք, ես շատ մտատանջ էի եւ
իմ բարեկամներից ոմանց կարտայայտուէի այդ մասին: Մտատանջ էի վասն
զի ինձ կը թուէր, Ձեր ընտրած միջոցը շատ հեռու էր լաւագոյնը լինելուց,
ճակատ ամրացնելու եւ կամ պողպատելու համար:

Այդպիսի մի բան կանեն հայրենիքի սահմանների մէջ եւ կամ բարեկամ
երկրում:

Թէ ի զուր չէր իմ մտատանջութիւնը, այդ վերջը պարզուեց դժբաղդաբար:

Այնպես որ, եթե այդ «պողպատենքից» չ'եռուենք այլ եւս, լաւ կանենք:
Մեզանից ուժեղները կարող են շատ բաներ անել:

“Quod licet iovi non licet bovi”.

Ինչ կը վերաբերի Ձեր յիշատակած այլ եւս պատմական դարձած դեղորեից, շատ ցաւում եմ, որ նախ քան սխալ տեղեկութիւն մը հրատարակելը (որ արդէն թարգմանուած է օտար թերթերի մէջ), աւելորդ համարեցէք ինձ հարցանել: Ի գուր չէ ասուած թէ՝ «Մարգարէ ի գաւառի իւրում պատիւ ոչ ունի»:

Այստեղ, Տաճկաստանի մայրաքաղաքում, «Փրկութեան կոմիտէ» կազմեցին, դրին զայն Հ. Հ. Դ. ներկայացուցչին հովանաւորութեան եւ նախագահութեան տակ, խոշոր տառերով այդ ամենը հրատարակեցին Հայ թերթերի մէջ եւ յետոյ միայն՝ թերթերից՝ եւ տեղեկացայ:

Եւ այնքան դժուար եղաւ այն ժամանակ եւս հասկացնել թէ՝ անյարմար էր այդպիսի բան անելը: Վերջ ի վերջոյ «փրկութիւնը» «օգնութեան» վերածուեց եւ մնացեալը անպատեհ համարուեց:

Վերադառնալով դեղորեից, ես ասուեցի անհամբերութեամբ սպասում եմ նրանց եւ վաղուց ձեռք եմ բերել Ամ[երիկեան] նպաստամատոյցի հաւանութիւնը, զայնս Հայաստան փոխադրելու եւ ժողովուրդին բաժանելու համար: Կուզեմ սակայն, որ Ձեր միջոցով գիտցուի թէ՝ ի՞նչ է այդ 14 սնտուկներու ուշանալուն պատճառը: Հիւանդ հայերը այդ դեղերից զրկելու չափ անխիղճ անձը, որի անունը աւելորդ է յիշել, երբ տեսել է որ դեղերը իրանից առել են եւ կամ պէտք է առնեն, ստեղծել է իսկոյն պահանջատերներ, որոնք դատական գրաւման ներքեւ են դրել այդ հայրենասիրական նուէրը: Իմ ստացած վերջին պաշտօնագրից այնպես է երեւում, որ դեղերի տիրանալու համար պէտք պիտի լինի բաւարարութիւն տալ կեղծ պահանջատերերի, վճարելով նրանց 8-10 հազար ֆրանք:

Լիայոյս եմ թէ սոյն նամակս կը բարեհաճիք հրատարակել Ձեր մօտակա համարի մէջ, խնդրեմ ընդունեք, տէր խմբագրապետ, խորին յարգանացս հաւաստիքը:

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ՀԱԼԵՊ

UNION NATIONALE ARMÉNIENNE
ALEP (Syrie)

Հալեպ,
17 Օգոստոս 1921

Թիւ **1406**


Վսեմ.
Տիար Թահթաճեան
Ներկայացուցիչ Հ[այաստանի] Հանրապետութեան
Կ. Պոլիս

[1]920 Մարտ 25-ին Ձեր Վսեմ. Միջոցաւ՝ տեղւոյս Հայ Կարմիր Խաչի կողմէ Հայկ[ական] Բանակին համար հանգանակուած 430 սթերլինկ դրկուեցաւ բժիշկ Պ. Յարութիւն Տէր Պօղոսեանի ձեռամբ, իր նպատակին յատկացուելու համար: Կը ցաւինք սակայն, որ ցարդ այդ մասին որ եւ է պատասխան չստացանք:


Հայ Կարմիր Խաչի վարչութիւնը մեր միջոցաւ կը փափաքի գիտնալ թէ վերոյիշեալ գումարը հասա՞ծ է Ձեզ եւ գործածուած իր նպատակին թէ ոչ:

Սպասելով Ձեր փութկոտ պատասխանին,
Մնամք ամենախորին յարգանօք
Ի դիմաց Հայ. Ազգ[ային] Միութեան]

Բ. Ատենադպիր



Ատենապետ



Հ. Հ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՊՈԼՍՈՅ ԴԻՄՆԱԳԻՏԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԵԱՆ ԿԻՑ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Թիւ 28

Կ. Պոլիս 7 Սեպտեմբեր 1921

Վսեմաշուք
Տեար Ֆ. Թահթաճեան
Աստ

Ինչպէս ներքին, քարտուղար Պ. Անտիեանի գրութենէն կերեալ, անցեալ Օգոստոսի ընթացքին անցագրերու պատրաստութեան ժամանակ անուշադրութեան հետեւանք սխալ մը գործուած է եւ այս կերպով (900) ինն հարիւր թիւեր բաց կը մնան: Ամսոյն վերջը հաշիւներու պատրաստութեան եւ քննութեան միջոցին երեւան ելած այդ սխալը դարմանելու համար արձանագրութեան տետրի մէջ եղելութիւնը պարզուած եւ յառաջիկային այդ կարգի ցաւալի սխալ մը տեղի չըտալու համար Նոր անցագրերը թիւ մէկէ սկսեալ թուագրեալ կերպով ապսպրուած են: Ի հարկէ հաշիւներու (ամսափակ) մէջ ցոյց տրուած անցագրերու թիւը միայն ճիշտ է եւ ընդհանուր անցագրերու վարի թուաշարժը սխալ:

Մնամ խորին յարգանք
Ս[ատթեոս] Եպիփաթեան
Հիւսկ[ատոսական] բաժնի վարիչ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	RÉPUBLIQUE D' ARMÉNIE.	РЕСПУБЛИКА АРМЕНИИ.
ԱՐԹՈՒՐ ԳԵՆԵՐԱԼ ԶԻՊԱՏՈՒՄԱՐ.	Consulat Général d' Arménie à Batoum.	Генеральное Консульство Армении в Батумь.
ՍԵՑԵԳԻՐ № 1234	PASSEPORT № 1234	ПАСПОРТ № 1234
Այս անցագիրը իմ անունով, ժամանակով, սկսած 1920 թ. մարտի 29-ից տրուած է:	Le présent passeport valable pour un an à partir du 29 Mars 1920 a été délivré à Mr Grigori Stepanian	Настоящий паспорт, сроком на один год с 29 Марта 1920 года, выдан г. Григорию Степаняну
« 18 » տարեկան, Գրիգորի Գրիգորի փոք. Բաթումի	« 18 » ans domicilié à Tharberd en compagnie de sa mère et sa sœur	« 18 » лет, жителю пер. Тхарберда с мамой Степанов. ф. и сестрой. Ех. 29.
Իմ Բաթումի Գրիգորի փոք. 29 մարտի 1920 թ.	Signature du porteur	Подпись владельца паспорта
	Le Consul Général de la République d' Arménie à Batoum	Генеральное Консульство Армении в Батумь
Գրիգորի Գրիգորի փոք.	Գրիգորի Գրիգորի փոք.	Григорий Григорьевич

Հայաստանի Հանրապետության անցագրի նմուշ (1920թ.)
Հայաստանի ազգային արխիւ

Athènes, le 19 septembre 1921

N° ge 56

N° SI 46

Objet:

Affaire Médicaments

3 annexes

Monsieur

Mr. Ferdinand Tahtadjian

Représentant Diplomatique de la République Arménienne
Constantinople

Monsieur le Représentant et cher Collègue,

Pour faire suite à mes précédentes communications concernant l'affaire des médicaments, je m'empresse de Vous informer que les quatorze caisses d'articles sanitaires en question viennent d'être expédiées à bord du vapeur "Chrissi" en partance pour Constantinople, à l'adresse du "Near East Relief" américain.

Conformément à Votre demande, je Vous adresse, ci-inclus, le connaissance et le certificat de douane relatifs à cette expédition. Vous trouverez également sous ce pli la police d'assurance afférente à la même marchandise, que j'ai tenu à faire assurer, contre tous risques, pour un montant de 70. 000 drachmes. Les frais d'expédition et autres sont payés jusqu'à Constantinople. En conséquence, vous n'avez qu'à passer les documents concourant les 14 caisses susdites au "Near East Relief" américain.

Il a été constaté que les articles renfermés dans les caisses ont été déplacés et qu'une petite partie des médicaments énumérés dans la liste initiale fait défaut, le sieur Atabékian et ses acolytes l'ayant apparemment vendue pendant qu'ils disposaient de la marchandise. Mr. Klidjian, qui m'a secondé avec le plus grand dévouement pour le règlement de cette malheureuse affaire, s'est lui-même chargé de l'emballage à nouveau des 14 caisses (plus exactement : 13 caisses et un baril), lesquelles peuvent être expédiés, telles quelles, en Arménie.

Veuillez agréer, Monsieur le Représentant et cher Collègue, l'assurance de ma haute considération.

Tchaïan

P.S. Je vous confirme mon télégramme en date de ce jour, ainsi conçu : "Médicaments expédiés Relief Constantinople Recevrez connaissance courrier" id

թիւ ge 56
թիւ se 46

Աթէնք, 19 սեպտեմբերի, 1921

Խնդրոյ առարկան.
Դեղորայքի գործը
Երեք կից փաստաթուղթ

Կոստանդնուպոլսում Հ.Հ. դիւանագիտական ներկայացուցիչ
Պարոն Ֆերդինանդ Թահթաճեանին,

Պարոն դիւանագիտական ներկայացուցիչ եւ թանկագին գործընկեր,
Դեղորայքի գործին առնչուող իմ նախորդ հաղորդումներից յետոյ շտապում
եմ Ձեզ տեղեկացնել, որ սանիտարական ապրանքի տասնչորս արկղերը
«Chrissi» շոգենաւով առաքուել են Կոստանդնուպոլիս՝ ամերիկեան «Near
East Relief» ընկերութեան հասցեով:

Ձեր պահանջի համաձայն՝ նամակիս հետ Ձեզ եմ ուղարկում ուղեբեռնագիրն
ու մաքսային ծառայութեան հաւաստագիրը՝ առաքման վերաբերեալ: Այս
ծրարում Դուք կը գտնէք նաեւ ապրանքի ապահովագրութեան փաստաթուղթը.
Ինձ համար կարեւոր էր ապրանքն ապահովագրել բոլոր հնարաւոր ռիսկերից՝
70 000 դրահիմա գումարի դիմաց: Բոլոր, այդ թւում՝ նաեւ առաքման ծախսերը
վճարուած են մինչեւ Կոստանդնուպոլիս: Հետեւաբար՝ Ձեզ մնում է միայն
վերոյիշեալ 14 արկղերին վերաբերող փաստաթղթերը յանձնել ամերիկեան
«Near East Relief»-ին:

Պարզուելէ, որ արկղերի մէջ ամփոփուած ապրանքը տեղից տեղէ փոխադրուել,
եւ նախնական ցուցակի մէջ թուարկուող փոքրաթիւ դեղամիջոցներ
բացակայում են, քանի որ պարոն Աթաբեկեանն ու իր համախոհները, ըստ
երեւոյթին, վաճառել են դեղորայքը, երբ այն դեռ իրենց տնօրինութեան տակ
էր գտնուում: Պարոն Զլիջեանը, ով ինձնից յետոյ անմնացորդ նուիրումով
յանձն է առել այս տխրահոջակ գործի կարգաւորումը, անձամբ ստանձնել է 14
արկղերի (աւելի ճիշտ՝ 13 արկղերի եւ մի տակառի) վերափաթեթաւորումը.
արկղերն այս տեսքով կարող են առաքուել Հայաստան:

Պարոն դիւանագիտական ներկայացուցիչ եւ թանկագին գործընկեր, թոյլ
տուէք արտայայտել յարգանացս հաւաստիքը:

Չայեան

Յ. Գ. Հաստատում եմ այսօր ուղարկած իմ հեռագիրը՝ հետեւեալ
բովանդակութեամբ. «դեղորայքն առաքուած Ռելիեֆ Կոստանդնուպոլիս
Ստանալ ուղեբեռնագիր փոստային առաքում»: Նոյն

Այդ գումարը տրուում է հայ հանրապետութեան այն սպային, որ ունի այդ մասին պետք եղած վաւերաթուղթ կամ զօրավար Քիշմիշեանից, մինչեւ որ նա այստեղ է, եւ կամ Պոլսում գտնուող նախկին նախարարներից մէկնումէկին:

Գալով հայ հանրապետութեան պետական պաշտօնեաներին, որոնք նոյն վիճակումն են գտնուում այդ մասին խորհրդակցութիւնը նոյնպէս ցանկալի համարեց գալ նրանց օգնութեան նոյնչափ գումարով, սակայն այդ խնդիրն ստիպողական չլինելուն պատճառով, որոշուեց այդ մասին յայտնել Փարիզ՝ Պատուիրակութեան եւ սպասել նրանցից հրահանգի, մինչեւ այդ մասնակի դէպքերում բաւարարել Պետ[ական] Պաշտօնեաներին եթէ նրանց կարիքը կը վկայեն, նախկին նախարարներից մէկը. ինչ վերաբերւում է Վրանկէլեան եւ Տէնկեան բանակի հայազգի սպաներին, որոնք նոյնպէս կարող են այս տեղ գտնուել նիւթական ծանր վիճակում – նրանց հայ հանրապետական գումարներով օգնելու մասին խօսք լինել չի կարող. նրանք պետք է նկատուեն իբրեւ սոսկ գաղթականներ եւ նրանց օգնութիւնը կարող է լինել տեղական բարեգործական գումարներից եւ կամ Վրանկէլի մօտ եղած գումարներից: Այս վերջինի համար նրանց պետք է ուղղել դիւանագիտական ներկայացուցիչ Պր. Սաղաթէլեանին՝ նրան աջակցութիւնը խնդրելով:

Ա[բրահամ] Գիւլիսանդանեան
Տիգ[րան] Բեգզատեան

Արձանագրութիւն խորհրդակցութեան որ տեղի ունեցաւ Պոլսում Մարտի 10, 1921 թուականին մասնակցութեամբ հայ հանրապետութեան նախկին ֆինանսների նախարար Ա[բրահամ] Գիւլխանդանեանի, դիւանագիտական ներկայացուցիչ Պոլսում Պ. Ֆ. Թահթաճեանի, եւ դիւանաց ներկայացուցիչ՝ Վրաստան, Տ[իգրան] Բեկզատեանի Հայաստանի հանրապետութեան սպաներին եւ պետական պաշտօնեաներին տրուելիք օգնութեան մասին:

Ի նկատի ունենալով որ, շնորհիւ Հայաստանում տեղի ունեցած յեղաշրջման, հանրապետութեան սպաներից եւ պաշտօնեաներից շատերը ստիպուած են եղել փախչել Կովկասից մեծամասնականներից - յաճախ առանց որեւիցէ միջոցների, որ դրանից շատերը արդէն հասել են Պոլիս եւ գտնուում են նիւթական ծանր կացութեան մէջ:

Խորհրդակցութիւնը որոշեց խնդրել, Պր. Թահթաճեանէն իր մօտ գտնուած Պետական գումարներից խորհրդակցութեան մասնակցողների բարոյական պատասխանատուութեան տակ տալ այդպիսի սպաներին նպաստը մինչեւ 65 Օսմ[անեան] լիրա հետեւեալ հաշւով:

- I • Պոլսում ապրելու 5 օրուան համար մինչեւ կը կատարուի բոլոր ձեւականութիւնները Պուլկարիա կամ ուրիշ տեղ ուղարկելու համար օրական 3 (երեք) լիրա Օսմանեան:
- II • Ճանապարհածախս մինչեւ Պուլկարիա 20 քըսան լիրա.
- III • Այնտեղ ապրելու համար, մինչեւ որ մէկ ամիս 30 երեսուն լիրա:

Հոկտեմբեր 6 1921

N° 1365

Հ. Հ. Պատուիրակութեան
Փարիզ

Երէկ հեռագրեցի Ձեզ հետեւեալը:
“Officier Lazian”, etc.....

Ինչպէս գիտեք, բեռնատոմս մեջտեղ չկայ, ուստի եւ չէր կարող ապրանքի տիրանալ: Եթէ բեռնատոմսը լինէր իսկ, պետք պիտի լինէր վճարել վերոյիշեալ ահագին գումարը, որպէս զի կարելի լինէր զգեստեղէնը դուրս բերել: Այդ դէպքում ատիպուած պիտի լինէինք վճարումները շարունակել եւ մնացեալի, այսինքն մեքենաների համար, որոնցմէ 6-7 կտորը կը պատկանի Ժամկոչեանին, այս 3-4 ամիսներից ի վեր՝ իւր ընկեր եւ բարեկամ Պ. Չ[ատիկ] Մաթիկեանի ուղղած հեռագրերի եւ նամակների պատասխան չէ ստացած:

Գրել էի Ձեզ, որ գործը հեշտացնելու եւ յաջողցնելու նպատակաւ, ես այստեղ խօսել էի այդ ապրանքի մասին Պ. Վիքրիի հետ, որ մեծ հետաքրքրութեամբ լսել էր զիս եւ խոստացել էր, որ իւր կողմից պիտի գրէր Ամերիկա եւ աշխատէր, որ զգեստեղէնը շուտով դուրս բերուէր այնտեղից եւ ուղարկուէր Երեւան:

Պ. Վիքրին այստեղ խօսել էր իւր ընկերներին, եւ որքան ինձ յայտնի է, գրել էր միանգամայն Ամերիկա: Այնուհետեւ ես քայլեր արել էի տեղւոյս Near East-ի վարչութեան մօտ, յուսալով թէ՛ նրանք այդ մեծաքանակ հազուստեղէնը ձեռք բերելու եւ Հայաստանի տառապեալներին հասցնելու համար, չ'պիտի կանգնէին նիւթական մի ծախսի առջեւ:

Բայց ինչպէս պիտի տեսնեք ներփակ թղթից, Near East-ը չի ուզում անել այդ ծախսը:

Ի նկատի առած որ.

- 1) Քուրուլէշմէի մթերանոցները կը պատկանին Ամերիկեան Mount Royal-ի
- 2) Որ այդ ապրանքը զուտ հայրենակցական մի առաքում է որ cas de force majeure-ի մի հետեւանքով մնացել է այստեղ
- 3) Որ այդ բանը պատահել է Տիլսիզեան եղբարց մեղքով, որոնք երեւի բեռնատոմսերը spéculation-ի առարկայ են շինել (արդէն նրանք խարդախ ոմանք են ճանչցուած Ամերիկայում),
- 4) որ Mount Royal-ը սերտ կերպով կապուած է Տիլսիզեանների հետ (այն) աստիճան, որ այստեղ շատերից լսել եմ: “Le Mount Royal est de création Dilsizian”!

5) որ Near East Relief-ը իւր օգնութեան գործի բերմամբ շահագրգռուած է, որ հարցը շուտ վերջանայ եւ զգեստեղէնը հասնի Հայաստան, իւր թուում է, որ դժուար չէ այնպէս Ամերիկայում Near East-ի աջակցութեամբ, այնպիսի համաձայնութեան մի գալ որ droit de de magasinage-ը բարեխիղճ minimum-ի վերածուի գուցէ կարելի է այնպէս անել որ Mount Royal-ը բոլորովին հրաժարուի այդ պահանջելուց եւ բոլոր ապրանքը, մեքենաներն ալ մէջը լինելով, տեղափոխուի Near East-ի Օրթաքէոյի մթերանոցները: Այսպիսով այլ եւս վճարելու բան չ'մնար, հազուստեղէնը կգնայ Հայաստան ժամկոչեանը կը ստանայ իւր մեքենաները (6-7 կտոր), իսկ մնացեալ մեքենայք՝ եթէ լաւագոյն չէ որ ուղարկուին Հայաստան՝ կը մնան այստեղ մեր Ամերիկացի բարեկամների մօտ:

Ինչ կը վերաբերի Մայիսի 6-ին ապօրէն կերպով ծախուած 24 կտոր մեքենաների (accés[soires] d'automobiles), զորս Տիւրքիայի տունը՝ իբրեւ expéditeur բեռնդել էր Նիւ Եորքում “Morang” անուան շոգենաւի վրայ, դրա պարտաւորութիւնը՝ ինչպէս քանիցս լսել եմ, լիովին կը պատկանի գլխաւորապէս Տիւրքիայի տան եւ յետոյ վերոյիշեալ շոգենաւային ընկերութեան: Առաջինը Նիւ-Եորքում խարդախ սնանկ է յայտարարուած եւ այստեղ կան syndicները, իսկ երկրորդը պատասխանատու է իւր գործակատարի պարտքի համար:

Ի դեպ, ցարդ ինձ համար պարզուած չէ թէ այդ ծախուած ապրանքը ինչի՞ց էր բաղկացած եւ ի՞նչ արժէք ունէր: Տիւրքիայի տան սնանկութեան գործի կեդրոնը Նիւ-Եորքում եւ Միլանում է եւ Յովհաննէսեանը վաղուց դադարել է ներկայացուցիչ լինելէ:

Ոչ մի հիմք եւ պատճառ չէր աճուրդի, կարճ ժամանակի մէջ ծախելու մի ապրանք որ արժէք ունէր եւ détérioration-ի ենթակայ չէր: Ինչպէս գիտեք, աճուրդից գոյացած գումարից մնացել է 6-700 լիրա, որ ապրանքի տիրոջ կը պատկանի:

REPUBLIQUE ARMÉNIENNE
CONSULAT GÉNÉRAL D'ARMÉNIE

SOFIA,
14 Դեկտեմբեր 1921

N° 111

Վսեմ Տէր,

Պատիւ ունիմ հաղորդելու Ձեր վսեմութեան, որ հիւպատոսարանս ստացած ըլլալով Հ[այաստանի] Հ[անրապետութեան] Փարիզի Պատուիրակութեան միջոցով պատճենը Ձեր 12 Նոյեմբեր թուակիր հեռագրին՝ ի մասին Թաւրիզ ապաստանած 600 մտաւորականներու եւ 3000 այլ փախստականներու թշուառ վիճակին, անմիջապէս խորհրդակցութեան կանչեց Պուլկարահայ Ազգ[ային] Միութեան Կեդրոնական Վարչութեան Անդամները եւ թելադրեց անոնց, որ իրենց միջոցներու ներած չափով օգնութեան փութան այդ դժբաղդներուն:

Ուրախ եմ բերելու Ձեզ ի գիտութիւն, որ կեդրոնական վարչութիւնը, ընդառաջ երթալով հիւպատոսարանիս այս թելադրութեան, անմիջապէս դրկեց Կ. Պոլսոյ Հայրենիքի Օգնութեան Մարմնին 1000 Օսմ[անեան] ոսկի թղթադրամ Նոյն նպատակին համար:

Ընդունեցէք, վսեմ Տէր,

Խորին յարգանացս հաւաստիքը

Փն Le Consul Général-ի

Մ. Յովհաննեսեան

Քարտուղար Հ. Հ. Սօֆիայի Ընդի. Հիւպատոսարանի

Առ Նորին Վսեմութիւն

Ֆ[երտինանտ] Թահթաճեան

Դիւանագիտական Ներկայացուցիչ

Հ[այաստանի] Հ[անրապետութեան]

Կ. Պոլիս

Մեծապատիւ
Պարօն Թախթաճեան

Նախ եւ առաջ Ձեզանից ներողութիւն եմ խնդրում որ Ձեզ այս նամակովս
նեղութիւն եմ պատճառում:

Ուստի խնդրում եմ այս բարութիւնը ինձ համար Ձեզ նեղութիւն չպատճառէ
ուղարկեմ Ձեզ չէք Լօստօն 14 ֆունթ 9 շիլինգ եթէ կարելի է այս գումարը
դարձնէիք, տաճկական լիրա եւ ուղարկէք Թիֆլիս յետեւեալ հասցեով Մկրտիչ
Ասպետեանցին որը գտնվում է Վիրիսկի սպուսկի վրա[յ] եւ որը ունի թղթեղենի
խանութ. յուսով եմ որ խնդիրքս անկատար չէք թողնի որի համար նախապէս
յայտնում եմ խորին շնորհակալութիւնս:

Յարգ[անօք]
Մարգար Մկրտչեան Սիրունեանց (Ախալցխացի)

27 X Խարբին

Հասցէս Խարբին
Պօլիցէիսկա փողոց 66 կամ Մանչուրիա Մարգար Սիրացին

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
DÉLÉGATION
A LA CONFERENCE DE LA PAIX
5083

30, RUE SAINT-DIDIER
PARIS, le 12 jունուար 1922

Մեծարգոյ Պարոն Ֆ. Թահթաճեան
Հ. Հ. Դիւանագիտական Ներկայացուցիչ
Կ. Պոլիս

Մեծարգոյ Պարոն Ներկայացուցիչ,
Ձեզ յայտնի է թերեւս որ Ամերիկեան Նպաստամատոյցը, որոշ վճարման մը փոխարէն, յանձնառութիւն կը ստանձնէ Ռուսաստանի ամէն կողմերուն համար գրեթէ մատնանշուած ոեւէ անձնաւորութեան յանձնել այդ գումարին համապատասխան ծրար մը ուտեստեղէն (ալիւր, պահածոյ միս, կաթ եւլն.): Այդ կարգադրութենէն դուրս կը մնայ սակայն Կովկասեան Հայաստանը, չենք գիտեր ինչ պատճառներով:

Պատւիրակութիւնս նկատելով որ այդ կարգադրութիւնը եթէ տարածուէր նաեւ Հայաստանի վրայ, անիկա ոչ միայն դիւրութիւն պիտի տար այն բազմաթիւ հայերուն որոնք արտասահման ապաստանած են եւ զրկուած են իրենց ազգականներուն կամ բարեկամներուն օգնութիւն հասցնելու հնարաւորութենէն, այլ նաեւ միջոց պիտի ընծայէր արտասահմանի հայ գաղութներուն որպէսզի անհատաբար կամ խմբովին նպաստ հաւաքեն իրենց երկրի բաղդագուրկ ազգակիցներուն, Ներկայիւս կը խնդրէ ձեզմէ որպէսզի այդ ուղղութեամբ ձեր բոլոր կարելին ընէիք՝ դիմելով Ամերիկեան Նպաստամատոյցի տեղւոյդ կեդրոնին:

Ձեր այդ դիմումը նպաստաւոր ընդունելութիւն գտնելու պարագային պետք է տեղւոյդ հայ թերթերուն միջոցաւ իմացնել այդ լուրը հանուր հայութեան, յարակից բոլոր անհրաժեշտ մանրամասնութիւններով:

Ընդունեցէք, Մեծարգոյ Պարոն Ներկայացուցիչ,
խորին յարգանացս հաւաստիքը:

Վ. Հ. Հ. Բ. Պատւիրակութեան նախագահ
Վ. Փափազեան

Հ Հ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ՊՈԼՍՈՅ ԴԻԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԵԱՆ ԿԻՑ
ԳԱՐՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, 24 Յունվ[ար] 1922

Թիւ 31

Վսեմաշուք

Տիար Ֆ. Թահթաճեան

Հ[այաստանի] Հ[անրապետութեան] Կառավարութեան

Դիւան[ագիտական] Ներկայացուցիչ

Աստ

Տէր,

Ներփակ պատիւ ունիմ Ձեզ ներկայացնելու հիւպատոսարանի գործառնութեան սկսած Նոյ[եմբեր] 30 [1]920 թուականէն մինչեւ 31 Դեկտ[եմբեր] [1]921 թուի տասնեւերեք ամսուայ դրամական գործառնութեանց հաշուեկշիռը եւ իրեն յարակից ցուցակ մը եւ նօթագրութիւն մը:

Ինչպէս կարելի է տեսնել տոյն հաշուեկշռէն այդ տասնեւերեք ամսուայ շրջանին 1) անցագրերէ 2) վիզայէ 3) ստորագրութիւններու վաւերացումէ եւ տեղական սեփուրի վկայականներէ ունեցած ենք հասոյթ (22895) քսան եւ երկու հազար ութհարիւր իննսուն եւ հինգ օսմ[անեան] ոսկի թղթադրամ: Սոյն հասոյթէն գատ Պ. Շատինօֆի կողմէ 523.56 լիրա թղթադրամ օսմանեան Նոյնպէս Պ. Խախութեանի կողմէ ալ 100 լիրայի նուիրատուութիւններ եղած են ի նպաստ տարագիր հայ սպաներու եւ անհատներու: Նոյնպէս վերջին Դեկտեմբեր ամսուայ մէջ գործադրութեան դրուած ձեւով մը ամեն նուիրատուի անձնական գիրով եւ ստորագրութեամբ կնքեալ թուղթի մը վրայ արձանագրուած) տասնեւերեք (13) ոսկի նուիրատուութիւններ ալ եղած են այնպէս որ այս 13 ամսուայ շրջանին հասոյթ եւ նուիրատուութեան ընդհանուր գումարը եղած է 23,541,56 օսմ[անեան] ոսկի թղթադրամ: Այս գումարէն դուրս կը մնայ Բարիզի պատուիրակութեան կողմէ տարագիր պաշտօնեաներու բաժնուելու համար դրկուած (2590,67) երկու հազար հինգ հարիւր իննսուն ոսկի վաթսուն եօթ դրշ.ը ինչպէս նաեւ ըստ պատկանելոցն եւս տրուած (607,60) վեց հարիւր եօթ ոսկի վաթսուն դրշ.ի իբր աւանդ ստացուած եւ բաժնուած գումարը, որոնք իրենց ժամանակին մի առ մի արդէն նշանակուած էին Ձեր վսեմութեան ամեն ամիս մատուցուած հաշուեկշիռներու մէջ: Ասոնցմէ գատ յայտնի է թէ ճակատի ֆօստէն ալ գանձումներ ըրած եւ սպաներու բաժնած ենք որոշ գումար մը որու մանրամասն հաշիւը, կրկին, եւ իր ժամանակին, Ձեր Վսեմութեան փութացած էի յանձնել:

ելքի բաժնին մեջ ինչպես կը տեսնուի Ձեր վսեմութեան անուան կը տեսնուի (13986,30) տասն եւ երեք հազար ինն հարիւր ութսուն եւ վեց ոսկի երեսուն դրշ. (ցուցակ 2) որով (8250) ոսկին Ձեր վսեմութեան վճարուած է իսկ (5736,30) ոսկին Ձեր անուան կը մնայ Պոլսոյ հայկական Պանգը % 4 տոկոսով:

Սոյն տասներեք ամսուայ շրջանին պաշտօնէից (հիւպատոսական բաժնի վարիչին, քարտուղարին եւ սպասաւորին) վճարուած է (4220) չորս հազար երկու հարիւր քսան ոսկի ռոճիկ: Իսկ «Չանազանք» անուան տակ ծախսուած 1888,62,5 ոսկիէն (1260)ը վճարուած է հիւպատոսարանին իբր շէնքի վարձքը: Ներկայ շէնքի վարձքը տարեկան կանխիկ վճարուած ըլլալով, այս անուամբ մինչեւ Նոյեմբեր ամիսը ոչինչ ունինք այլ եւս վճարելիք:

Միւս նպաստներու եւ այլ ծախքերն ալ իր ժամանակին ամեն ամիս մանրամասնօրէն Ձեր Վսեմութեան ներկայացուած ըլլալով հոս աւելորդ կը նկատեմ կրկնել:

Գործի սկսած առաջին ամիսէն ի վեր հիւպատոսարանիս անցագրի եւ վիզայի հասոյթները քանի մը հարիւր ոսկիի տարբերութեամբ գրեթէ հաւասար եղած էին մինչեւ երեք ամիս առաջ երբ մէկէն Նոյն հասոյթի քանակը գրեթէ կէս առ կէս պակսեցաւ: Ասոր պատճառները, կը կարծեմ, քանի մը տեսակ են:

Նախ Ամերիկայի համար ճամբորդելու դիւրութեան կրճատումը եւ սահմանափակումը: Ամերիկեան ծանօթ գաղթականներու օրէնքին համաձայն սահմանափակ թուով հայեր միայն պիտի կրնային երթալ հոն:

Արդ այդ թիւը շուտ լրացաւ որովհետեւ օրէնքի հրատարակումէն առաջ անցագիր ստացողները իրենց ժամերու կարգադրութիւնները անմիջապէս չը կրնալով լրացնել մեկնած էին՝ որոշ չափով՝ օրէնքի հրատարակութենէ վերջ հետեւաբար այս կերպով վնասած եւ ազդած իրենցմէ վերջ մեկնելիքներու ստանալիք վիզաներու: Այդ օրէնքը իր ուժը կը պահէ մինչեւ Յունիս, հետեւաբար՝ եթէ կը ճշտուին այդ ժամանակէ վերջ, ա՛լ աւելի խիստ օրէնքի մը հրատարակման մասին թերթերու մեջ տեսնուած լուրերը գուցէ Յունիսին Նորէն սկսին Ամերիկայի համար անցագրի գործողութիւնները:

Միւս կողմէ սակայն քաղաքական պայմաններու Նոյն ձեւով մնալը, եւ հետեւաբար բոլոր թուրքահայերու մեր կողմէ անցագիր տալու կարելիութիւնը ո՞ր աստիճան ապահով կարելի է համարել: Երկրորդ պատճառը անցագրի հասոյթներու նուազման հոն է, որ շատ մը հայեր, մեր քաղաքական ներկայ պայմաններէն ազդուելով, կը փութան ֆրանսական եւ իտալական մասնաւոր պաշտպանեալներու յատուկ անցագրեր ստանալ, բան մը որով արգելք ըլլալ կարելի չ'ըլլար, որովհետեւ, այդ արգելքը նա՛խ պետք էր բղիթիլ անոնցմէ, որ

այդ գործողութիւնները – իբր շահու աղբիւր՝ ոչ-իսլամները պաշտպանելու անուան տակ – սիրով կը կատարեն, իսկ երկրորդ բո՛ւն իսկ հայերը, որոնք սակայն, իրենց ազգասիրական զգացումները կը զոհեն, յետագայի մտավախութեան եւ շահու ակնկալութիւններու: Երրորդ պատճառն ալ այն է որ շարք մը կառավարութիւններ կամ սիրով եւ կամ անտարբերութեամբ կը դիտեն հայերուն թուրք կառավարութենէ դիւրութեամբ ստացած անցագրերը եւ ընթացք կու տան անոնց: Իսկ թուրք կառավարութեան անցագրերը ոչ միայն աւելի աժան են այլ նաեւ պատրիարքարանի ինքնութեան հետեւաբար եւ հայրենիքի տուրքի կապուած չ'ըլլալով՝ գործ ունեցող անհատներու աւելի դիւրամատչելի են:

Այս պայմաններու տակ, ծանօթ է Ձեր վսեմութեան, թէ հիւպատոսարանս ալ, պատրիարքարանի ծախսերէ եւ հայրենիքի տուրքէ խուսափող այս կարգի անհատներու մեզի բերելիք նիւթական եւ բարոյական վնասներէն ազատ մնալու համար, սկսաւ ինքնութիւնը շատ ծանօթ եղող անհատներու – երբեմն կարգ մը թեթեւ ձեւականութեանց տակ – ուղղակի անցագիր տալ: Յուսալի է նոր ընդգրկուած այս միջոցը քիչ շատ իր օգուտը ունենայ:

Յամենայն դէպս յուսալով որ նոր տարին, լաւագոյն քաղաքական պայմաններու տակ, հիւպատոսարանիս վարկն ու դիրքը բարձրացնէ՝ որու համար իր պաշտօնէութեան որչափ ջանադիր ըլլալը կը սիրեմ յուսալ թէ ծանօթ է Ձեր վսեմութեան

Մնամ խորին յարգանքօք

Մ[ատթէոս] Էպիփղաթեան

Հ. Հ. Հիւպատոսական բաժնի վարիչ

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
DÉLÉGATION
A LA CONFERENCE DE LA PAIX
5225

30, RUE SAINT-DIDIER
PARIS, le 16 Փետրուար 1922

Մեծարգոյ Պարոն Ֆ. Թահթաճեան
Հ. Հ. Դիւանագիտական Ներկայացուցիչ
Կ. Պոլիս

Մեծարգոյ Պարոն Ներկայացուցիչ,
Շնորհակալութեամբ ստացած ենք ձեր 28 եւ 29 յունուար թուակիր գրութիւնները, ներփակ Նազըլեան Գերապայծառի կողմէ Ձօր. Պելլէյի եւ Պարոն Պուանկարէի ուղղուած գրութեանց պատճեններով, որոնց կցուած էր Նաեւ ֆրանսացի Յիսուսեաններու մէկ փաստաթուղթը “La situation des Chrétiens à l’Intérieur” խորագրով: Մոռացումի հետեւանքով անշուշտ ձեր գրութեան կցուած չէր 25 Նոյեմբեր թւականով Յիսուսեաններու կողմէ Ատանայէն դրկուած տեղեկագրին պատճենը, զոր յիշատակած էիք իբր դրկուած:

Ձեր խնդրանքին համաձայն այդ պատճենները, որոնց օրինակները մեքենագրել տուինք մեր գործածութեան համար, ներփակ ձեզ կը վերադարձնենք:

Առիթէն օգտուելով կը խնդրենք ձեզմէ որ բարի ըլլաք Նազըլեան Գերապայծառին հաղորդել Պատուիրակութեան խորին շնորհակալիքը այն բարեացակամ աջակցութեան համար զոր ցոյց կուտայ Հ. Հ. Կ. Պոլսոյ Ներկայացուցչին:

Ընդունեցէք, Մեծարգոյ Պարոն Ներկայացուցիչ,
խորին յարգանացս հաւաստիքը:

Ա[ւետիս] Ահարոնեան

R. A.
 KOMMISSION POUR LA PREPARATION DE CADEAUX
 Pour L'armée
 De la Republique Arménienne

 КОМИССИЯ
 ПО ЗАГОТОВКА ПОДАРКОВЪ
 для Арміи
 РЕСПУБЛИКИ АРМЕНИИ
 ХАРБИНЪ

Փետրուարի 19-ին 1922թ.

N° 44

Մեծարգոյ Պ. Թահթաճեան
 Հայաստանի Հանրապետութեան
 Պօլսոյ ներկայացուցիչ
 Կ. Պօլիս

Մեծարգոյ Հայրենակից,
 Խարբինում գործող Հայոց Հանրապետութեան զօրաբանակի համար նուէրներ
 հայթայթող մասնաժողովը 1920 թուի Օգոստոս ամսի 22-ին ուղարկել է դէպի
 Հայաստան 15 կապոց զանազան իրեր մօտ 5000 ամերիկական դօլլար]
 արժողութեամբ՝ որոնք նոյն թուի Նոյեմբերի 19-ին Կօբէ քաղաքից (Ճապօնիա)
 Պ. Պետրակ Իզմիլեանի միջոցաւ ուղարկուած են Կ. Պօլիս Ձեր անունով:

1921 թիւ Մարտ ամսին մասնաժողովս նոյն նպատակով ուղարկել է
 Ճապօնիա[j]ի Հայոց կօնսուլ Տիկին Դիանա-Աղաբէկ Աբգարին 45 արկղ
 զանազան իրեր (մօտ 15000 ամերիկական դօլլար] արժողութեամբ՝ որը
 համաձայն Մեծապայծառ Տիկնօջից ստացան նամակի 1921 թուի Յուլիսի
 31-ին ճապօնական Կարմիր Խաչը ընդունել է ծրի “Kbret” շոգենաւով
 տեղափոխելու Պօրտ-Սայիդ՝ որտեղից եւ կուղարկուի Պօլիս Հայկական
 Կարմիր Խաչին. Տիկին Աբգարը իր ժամանակին յայտնած է ինչպէս Կ. Պօլսոյ
 Կարմիր Խաչին նոյնպէս եւ մեր պատրիարքին:

Իսկ ինչ վերաբերում է Կանադիա կոմպանիա[j]ի միջոցաւ Անգլիոյ մէջ գնուած
 250 ձեռք զգեստեղէինն՝ մենք Պ. Ալլետիս] Ահարոնեանից ստացած նամակի
 համաձայն մանրամասնութիւններ պահանջեցինք եւ նրանցից ստացած
 փաստաթղթերի պատճենները՝ ինֆօռմացիա[j]ի հետ ուղարկում ենք՝ ինչպէս
 Ձեզ՝ նոյնպէս եւ Փարիզ Պ. Ահարոնեանին:

Վստահ լինելով որ դուք (եթե մինչեւ այժմ չէք ստացել մեր ուղարկածները) միջոցներ էք ձեռք առնելու գտնելուց յետոյ նպատակին ծառայեցնելու եւ հայ կարօտեալ ժողովուրդի պէտքերին յատկացնելու:

Մասնաժողովս խնդրում է ընդունել իր խորին յարգանաց հաւաստիքը:

Պ. Գրիգոր Ձամոյեանը խարբինում եղած ժամանակ շատ լաւ տեղեակ էր այս բոլոր ուղարկածներին եւ Լոնդոնում գնածներին մեր կարծիքով չի մերժելու Ձեզ տեղեկութիւններ տալ ամեն ինչի մասին:

Հայաստանի Հանրապետութեան Բանակին
Նուէրներ հայթայթող մասնաժողովի

Նախագահ
Յ. Գրծելեանց

Քարտուղար
Յ. Յակոբեանց

Սոյն նամակիս հետ ուղարկւում է.

- 1) Մասնաժողովի գործունէութեան ինֆօռմացիան.
- 2) Պատճեն մասնաժողովի ելքումուտքի հաշուի.
- 3) Մեր N° 33 նամակի պատճեն (Կանադիան կօմպանիա[յ]ին).
- 4) Մեր N° 42 նամակի պատճեն (Կանադիան կօմպանիա[յ]ին).
- 5) Կանադիան կօմպանիա[յ]ից ստացած N° 1673 նամակի պատճեն 8/VI 1921 թ.
- 6) Կանադիան կօմպանիա[յ]ից ստացած N° 1818 նամակի պատճեն 28/XII 1921 թ. եւ չորս հատ զանազան փաստաթղթերի պատճեն[ն]եր (фактыра)

Բոլոր այս թղթերը ուղարկել իմ Փարիզի պատուիրակութեան:

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
DÉLÉGATION
A LA CONFERENCE DE LA PAIX
5345

30, RUE SAINT-DIDIER
PARIS, le 21 Փետրուար 1922

Մեծարգոյ Պ. Ֆ. Թահթաճեան
Հ. Հ. Դիւանագիտական Ներկայացուցիչ
Կ. Պոլիս

Մեծարգոյ Պարոն Ներկայացուցիչ,
Ստացած ենք ձեր 27 յունուար թուակիր գրութիւնը, ներփակ Ս. Պատրիարքի
24 յունուար թուականով ձեզ ուղղած Նամակին պատճենով՝ ի մասին Պուլկար
կառավարութեան հրատարակած մէկ նոր օրէնքին որ կը պարտադրէ հայ եւ
հրեայ վաճառականներուն իրենց մուտքի եւ ելքի տոմարները պուլկարերէնով
բռնել:

Տարբեր աղբիւրներէ մեր ստացած տեղեկութիւնները այդ մասին մեզի
ենթադրել կուտան թէ այդ օրէնքը հաւանօրէն կը վերաբերի Պուլկարիոյ մէջ
հաստատուած բոլոր վաճառականներուն անխտիր եւ ոչ թէ միայն հայոց եւ
հրեաներուն:

Պաշտօնական որեւէ դիմում կատարելէ առաջ պուլկար կառավարութեան
մօտ, մենք կը գրենք ուրեմն Հ. Հ. Սօֆիայի Ընդհանուր Հիւպատոս Պարոն
Մավեանի ճշտելու համար վերոյիշեալ կէտը եւ ըստ այնմ կը տնօրինենք
պատշաճը:

Ընդունեցէք, Մեծարգոյ Պարոն Ներկայացուցիչ,
մեր խորին յարգանաց հաւաստիքը:

Ա[ւետիս] Ահարոնեան

Կ. Պոլիս,
27 Փետրվար 1922

N° 1559

Հ. Հ. Պատուիրակութեան,
Փարիզ

Ի պատասխան Ձեր 17 Փետրվար թիւ եւ 5235 համար գրութեան, պատիւ ունիմ
յայտնելու, որ անցեալ 1921 տարուայ հասոյթի յաւելուածի ճիշտ գումարն է՝
ըստ հաշուեցուցակի Հ. Բանկի 31 Դեկտ[եմբեր] 1921, զոր անցեալները միայն
ստացայ, 5912 լիրա 90 դահեկան:

Ինչպէս ուրիշ առթիւ ասել եմ, այդ դրամը պահ է դրուած վերոյիշեալ բանկում:

Բաւական ժամանակէ ի վեր ոչինչ չենք կարողանում աւելացնել, վասն զի մէկ
կողմից Ամերիկան մերինների համար առ այժմ գոցուած լինելուն, հասոյթը
զգալի չափով պակասել է, իսկ միւս կողմից՝ հիւպատոսական բաժինը
ստիպուած է լինում շարունակ վճարումներ կատարել իբրեւ նպաստ:

Մնամ խորին յարգանքօք

Recommandée

Marseille,
le 1er Mars, 1922

Monsieur F. Tahtadjian
Représentant de la République Arménienne
Constantinople

Cher Monsieur,

J'ai l'honneur de vous informer que suivant les instructions reçues de Paris de la Délégation de la République Arménienne, je vous ai expédié par le vapeur Circassie de la Cie. Paquet:

RA I/55, 55 caisses fournitures d'écoliers pour le retrait desquels il y aura à payer à Constantinople la somme de 1218 fr, 80 centimes.

Ci-inclus j'ai l'avantage de vous remettre, dûment revêtus de ma signature:

- 1° Un exemplaire du connaissance relatif à cette expédition,
- 2° La police d'assurance qui couvre l'envoi contre les risques maritimes et de guerre, pour une somme totale de 60000 francs.

Vous aurez l'obligeance de disposer de ces 55 caisses suivant les instructions qui vous parviendront de la Délégation de la République Arménienne à Paris.

Je vous adresserai par prochain courrier un détail du contenu de ces caisses.

En attendant je vous indiquerai simplement, à titre provisoire, que l'expédition comprend des cahiers pour écoliers, porte-plumes, crayons, plumes et encre en poudre.

Sans autre pour aujourd'hui, vous priant de bien vouloir m'accuser réception de ces documents pour la bonne règle, je vous prie d'agréer, cher Monsieur, l'assurance de mes meilleurs sentiments.

Hrant Mirzayantz

Պատուիրուած նամակ

Մարտի,
1 մարտի, 1922

Կոստանդնուպոլսում
Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ
Պարոն Ֆ. Թահթաճեանին

Թանկագին պարոն,
Պատիւ ունեմ Ձեզ տեղեկացնելու, որ Փարիզում Հայաստանի
Հանրապետութեան Պատուիրակութիւնից ստացուած կարգադրութիւնների
համաձայն՝ ես Ձեզ մի փաթեթ եմ առաքել «Circassie de la Cie» շոգենաւով:

ՀՀ 1/55, 55 արկղ դպրոցական պարագաներ, որոնք ստանալու համար
Կոստանդնուպոլսում հարկ կը լինի 1218 ֆրանկ 80 սանտիմ վճարել:

Նամակին կցուած են հետեւեալ փաստաթղթերը՝ իմ ստորագրութեամբ.

1. Նաւաբեռնագրի մի օրինակ
2. Ապահովագրութեան փաստաթուղթը, որը 60 000 ֆրանկ գումարի դիմաց
ապահովագրում է ուղեբեռը ծովային եւ ռազմական բոլոր ռիսկերից:

Դուք կը կարողանաք տնօրինել այդ 55 արկղերը՝ ըստ Փարիզում Հայաստանի
Հանրապետութեան պատուիրակութեան կարգադրութիւնների:

Յաջորդ նամակում ես Ձեզ հանգամանօրէն կը ներկայացնեմ այս արկղերի
պարունակութիւնը:

Առայժմ պարզապէս նշեմ, որ առաքուած ուղեբեռը պարունակում է
դպրոցական տետրեր, գրչատուփեր, մատիտներ, թանաքով գրիչներ եւ
թանաքի փոշի:

Այսօր բաւարարուելով այսքանով՝ խնդրում եմ Ձեզ հաստատել վերոյիշեալ
փաստաթղթերի ստացումը, ինչպէս սահմանուած կարգն է պահանջում:
Խնդրում եմ հաւատալ, թանկագին պարոն, Ձեր հանդէպ ունեցած իմ լաւագոյն
զգացմունքներին:

Հրանդ Միրզայեանց

Marseille, le 3 Mars, 1922

Monsieur P. TAHTADJIAN,
Représentant Diplomatique de la
REPUBLIQUE ARMENIENNE
Constantinople.

Cher Monsieur,
Faisant suite à ma lettre recommandée du 1er crt, j'ai l'avantage de vous remettre ci-inclus un détail du contenu des 55 caisses qui voue ont été expédiées par mes soins, et dont je vous ai déjà adressé le connaissance.

J'écris aujourd'hui même à Paris à la Délégation qui, probablement vous adressera par un prochain courrier les indications nécessaires sur l'emploi que vous avez à faire de ces 55 caisses.

Recevez, Cher Monsieur Tahtadjian, les nouvelles assurances de mes sentiments très dévoués.

Hrant Mirzayantz

Մարտի, 3 մարտի, 1922

Կոստանդնուպոլսում
Հայաստանի Հանրապետության
Դիւանագիտական ծառայութեան ներկայացուցիչ
Պարոն Պ. Թահթաճեանին

Թանկագի՛ն պարոն,
Հետեւելով մարտի մէկի իմ պատուիրուած նամակին՝ իմ այս նամակի հետ ուզում եմ հանգամանօրէն Ձեզ ներկայացնել իմ հոգածութեամբ Ձեզ առաքուած 55 արկղերի պարունակութիւնը, որոնց մասին արդէն գրել եմ Ձեզ:

Այսօր իսկ ես կը գրեմ Փարիզի պատուիրակութեանը, որը հաւանաբար մօտ ապագայում նամակի միջոցով Ձեզ անհրաժեշտ ցուցումներ կը տայ՝ այդ 55 արկղերի կիրառութեան վերաբերեալ:

Թանկագի՛ն պարոն Թահթաճեան, դարձեալ եւ դարձեալ խնդրում եմ հաւատալ իմ անմնացորդ նուիրմանը Ձեր հանդեպ.

Հրանդ Միրզայեանց

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
DÉLÉGATION
A LA CONFERENCE DE LA PAIX
5923

30, RUE SAINT-DIDIER
PARIS, le 25 Մարտ 1922

Մեծարգոյ Պ. Ֆ. Թահթաճեան
Հ. Հ. Դիւան[ագիտական] Ներկայացուցիչ
Կ. Պօլիս

Մեծարգոյ Պարոն Ներկայացուցիչ,
Ստացած ենք ձեր 23 Փետր. եւ 1 Մարտ թուակիր գրութիւնները, որոնցմով
մեզ կը հաղորդէիք Հ. Հ. բանակի սպաներէն Պ. Պ. Սահակեանի, Սեֆերեանի
եւ Նանասեանի նպաստի խնդիրները:

Պատուիրակութիւնս նկատելով որ այդ կարգի խնդիրները, որոնց առջեւ
անկարելի է խուլ մնալ, կը շարունակուին տակաւին եւ հաւանօրէն պիտի
շարունակուին այսուհետեւ, թէ ժամանակի խնայողութեան եւ թէ անմիջական
օգնութեան կարօտ եղողներու խնդիրքը չի յապաղեցնելու մտահոգութեամբ,
իր 23 մարտի նիստին մէջ որոշեց 10,000 ֆրանքի գումար մը յատկացնել այդ
նպատակին:

Այդ գումարը զոր պիտի հանէք ձեր մօտ պատրաստի գտնուած գումարներէն
եւ որը պիտի գտնուի ձեր տրամադրութեան տակ, պիտի յատկացնէք մաս
առ մաս ի հարկէ բոլոր կարելի տնտեսութեամբ տեղդ գտնուող Հ. Հ. բանակի
սպաներու եւ պետական պաշտօնատարներու օգնութեան, համախորհուրդ
մեր Պօլիս գտնուող նախկին նախարարներուն հետ, արդիւնքը միայն
հաղորդելով մեզ պարբերաբար:

Նոյնը կը հաղորդենք այսօրուայ թուականով Հ. Հ. նախկին նախարարներուն:
Ձեզ կը վերադարձնենք, ուրեմն ներփակ վերոյիշեալներու խնդրագիրները,
անոնց միացնելով Հայաստանի Խորհրդարանի անդամ Պ. Միքայէլ Տէր-
Գեորգեանի խնդրագիրը: Նկատի ունենալով այս վերջնոյն չափազանց ծանր
դրութիւնը եւ անոր օգնելու ստիպողականութիւնը, մենք իրեն ուղղակի
փոխադրեցինք 200 ֆրք: Այս գումարը դուք կանցնէք ձեր հաշւոյն եւ իրեն իբր
նպաստ ձեր որոշելիք գումարին մնացորդը փութով կը դրկէք իրեն:

Ընդունեցէք, Մեծարգոյ Պարոն Ներկայացուցիչ,
խորին յարգանացս հաւաստիքը:

Ա[ւետիս] Ահարոնեան

REPUBLIQUE ARMÉNIENNE
CONSULAT GÉNÉRAL D'ARMÉNIE
SOFIA

SOFIA,
10 Ապրիլ 1922

N° 202

Վսեմ Տէր,

Հայաստանի բանակի սպաներէն Գևդապետ Պրն Պապաճանօֆ խնդրագրով մը դրամական օգնութեան համար դիմում ըրած ըլլալով Հ. Հ. Պատուիրակութեան, այս վերջինը իր 23 Փետրուար՝ թիւ 5250 գրութեամբ կը հաղորդէր մեզ, որ նոյն օրը հրահանգ տրւած է Ձեր վսեմութեան, որպէսզի յիշեալ զինուորականին համար նախապէս որոշուած 63 Օսմանեան ոսկի միանուագ նպաստը ղրկւի հիւպատոսարանս, իրեն յանձնելու համար:

Այս գումարը մինչեւ այսօր ստացուած չ'ըլլալով, կը խնդրեմ Ձեր վսեմութենէն կարգադրել հարկ եղածը, փութացնելու համար անոր առաքումը հիւպատոսարանիս հասցեով:

Պրն Գևդապետ Պապաճանօֆ կը խնդրէ, որ այդ գումարն իր հաշւոյն 5 Օսմ[անեան] ոսկի վճարուի, հանդէպ ընկալագրի, Պրն Համբարձում Յովհաննեսեան Մելքոնեանցի, «Ճակատամարտի» խմբագրութեան միջոցով:

Խորին յարգանք
Le Consul Général
Վիւվիլ

Առ Նորին Վսեմութիւն
Ֆ[երտինանտ] Թահթաճեան
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Հ[այաստանի] Հ[անրապետութեան]
Կ. Պոլիս

14 Ապրիլի 1922

N° 1613

Հ. Հ. Պատուիրակութեան,
Փարիզ

Նպաստ սպաների եւ պաշտօնէից

Ի պատասխան պատուիրակութեանդ 25 Մարտ թիւ եւ 5929 համար գրութեան,
պատիւ ունիմ զեկուցանելու հետեւեալը:

Նախկին նախարար Պ. Արարատեանը որը տեղեկութիւն ուներ Ձեր
կարգադրութիւնից, իրա ընկերների հետ՝ կազմեց մի ցուցակ, որի համաձայն
պիտի վճարուի իբրեւ նպաստ կարգ մը նախկին սպաների եւ պաշտօնեաների
համար. այժմ մօտ 500 օսմ[անեան] թղթադրամ լիրա:

Հետզհետէ պիտի ներկայացուին նոր ցուցակներ:

Պիտի ստիպուիմ եթէ հնարաւորութիւն լինի այդ վճարումները կատարել
ընթացիկ հասոյթներից, առանց դաչելու բանկում պահուած հասոյթի excé-
dent-ի:

Վճարումների ցուցակների պատճենները Ձեզ պիտի ուղարկեմ:

Հ. Խորիրդարանի անդամ Պ. Մ[իքայէլ] Տէր-Գեւորգեանի անունը մտցուած
է ցուցակի մէջ: Պատուիրակութեան ուղղակի նրան ուղարկած 200 ֆրանքի
փոխարժէքը վար կը դնենք եւ Ձեզ կը փոխադրենք:

Այս առթիւ կը յայտնեմ, որ գնդ[ապետ] Բաբաջանֆի ուղարկեցի, Սոֆիայի
ընդհ. Հիւպատոս Մավեանի միջոցով, 38 օսմ[անեան] թղթադրամ լիրա:

Երեւի գնդապետը իւր Փարիզ արած դիմումի մէջ չէր յիշատակած, որ այստեղ
ստացել էր 25 լիրա, զոր այժմ վար բռնելով, վճարած եղանք սպաների յատուկ
նպաստը, որն է՝ 63 լիրա:

REPUBLIQUE ARMÉNIENNE
MISSION DIPLOMATIQUE
Section consulaire

Constantinople,
le 15/4 1922

N° 36

Վսեմաշուք
Տիար Ֆ. Թախթաճեան
Հ[այաստանի] [Հանրապետութեան]
Դիւան[ագիտական] Ներկայացուցիչ
Աստ

Համաձայն Պատուիրակութեան 5904 թիւ եւ 15 Մարտ թուական գրութեան եւ Ձեր մակագրութեան Սօֆիա ընդ[հանուր] հիւպատոս Պ. Մավեանի ղրկեցի (38) օսմ[անեան] ոսկիի չէք մը փոխարժեքը յանձնուելու համար Գնդ[ապետ] Պապաճանօֆի: Յիշեալը նախապէս ինձմէ ստացած էր (25) ոսկի որով 63 ոսկիի գումարը յիշեալ 38-ով կամբողջանայ: Նոյնպէս պատուիրակութեան հաշւոյն Պ. Գեորգ Մելիքեանի վճարեցի 2000 ֆր.ի փոխարէն (276) երկու հարիւր եօթանասուն վեց օսմ[անեան] ոսկի թղթադրամ:

Խորին յարգանք
Մ[ատթէոս] Էպլիղաթեան

REPUBLIQUE ARMÉNIENNE
CONSULAT GÉNÉRAL D'ARMÉNIE
SOFIA

SOFIA, le 5 Mai 1922

N° 219

Վսեմ Տէր,

Ստացած եմ Ձեր վսեմութեան 18 Ապրիլ թուակիր 1616 համար Պատ. Գրութիւնը, որուն ի պատասխանի պատիւ ունիմ բերելու ի գիտութիւն, որ ստացւած ըլլալով տոյնպէս Պրն. Էպլիդաթեանի 15 Ապրիլ թուակիր՝ 35 համար գրութիւնը, 3705 լիրա գումարի չէքով միասին, գումարը յանձնւեցաւ Գնդապետ Պրն. Բաբաջանօֆին, հանդէպ ընկալագրի, որ այսօրուան թղթատարով ղրկւեցաւ Պրն. Էպլիդաթեանի:

Ինչ կը վերաբերի անցագիրներու մասին Ձեր վսեմութեան յիշած սահմանափակումին, հիւպատոսարանս ցարդ ո եւ է հրահանգ չ'է ստացած Հ. Հ. Փարիզի Պատուիրակութեան կողմէ եւ հետեւաբար չ'ունի ոեւէ ծանօթութիւն յիշեալ յարգելի պատճառներուն մասին:

Ընդունեցէք, Վսեմ Տէր,
Խորին յարգանացս հաւաստիքը

CONSULAT GÉNÉRAL D'ARMÉNIE
Le Consul Général



Առ Նորին Վսեմութիւն
Ֆ[երտինանտ] Թահթաճեան
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Հ[այաստանի] Հ[անրապետութեան]
Կ. Պոլիս

ՊԱՏՐԻԱՐԶԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԽԱՌՆ-ԺՈՂՈՎ

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱՐ 7609

Կ. Պոլիս, 10 Մայիս 1922

Ազնուաշուք

Տիար Ֆ. Թահթաճեան

ԵԼՆ. ԵԼՆ. ԵԼՆ.

Ձեր Ազնուութեան բերանացի դիտողութեան վրայ՝ Բերայի Թաղական
Խորհուրդէն բացատրութիւն պահանջեր էինք կարնեցի Յովհաննէս հանգ[ու]
ց[եալ] Համբարձում Սաաթճեանի համար տուած ինքնութեան թուղթի մասին:
Նոյն Խորհուրդը ի պատասխանի գրով մը կ'այտնէ թէ յիշեալը ներկայացուցած
է իր ինքնութիւնը հաստատող հետեւեալ գրերը:

- 1) Տփլիսի Սպանիական փոխ հիւպատոսի կողմէ 860 թիւ եւ 26
Մարտ 1921 թուականաւ տրուած վկայագիր մը (վրան լուսանկարը
փակցուած եւ կնքով հաստատուած), որով հաստատուած է
յիշեալին ինքնութիւնն ու օսմ[անեան] հպատակ ըլլալը: Այս
վկայագրին մէջ յիշատակուած է օսմ[անեան] իշխանութեան կողմէ
1866-76 թիւ եւ 23 Ապրիլ 1914 թուականաւ տրուած անցագրի
հիման վրայ:
- 2) Պաթումի վրական կառավարութեան կողմէ 20 Մայիս 1921թ.
տրուած անցագիր մը՝ լուսանկարով:
- 3) Պոլսոյ Ելեքտրական ընկերութեան կողմէ 5 Նոյեմբ[եր] 1921 թ.
տրուած վկայագիր մը:

Ասոնցմէ զատ յիշեալին բնակած տեղէն ստուգուած է յիշեալին ինքնութիւնը:
Մեր ստացած այս պատասխանը պարտք համարելով հաղորդել Ձեզ ի
տեղեկութիւն:

Մնամք աղօթարար

Պատրիարք Հայոց

Չաւէն Արքեպիսկոպոս

Légation des Pays-Bas
Constantinople, le 11 mai 1922
N° **882**

Monsieur le Représentant Diplomatique,
Me référant à Votre lettre du 18 mars dr. concernant le chèque fourni par la Légation Royale des Pays-Bas à l'ordre de Mademoiselle Natalie Ivanoff, j'ai l'honneur de Vous faire parvenir sous ce pli un duplicata du chèque portant le même numéro et tiré à l'ordre de Monsieur Papadjanoff.

Par le même courrier je prends soin d'informer le département à La Haye.
Veuillez agréer, Monsieur le Représentant Diplomatique, l'assurance de ma haute considération.

Le Ministre des Pays-Bas,

A Monsieur le Représentant Diplomatique
de la République Arménienne
Constantinople

Նիդերլանդիայի դիւանագիտական առաքելութիւն
Կոստանդնուպոլիս, 11 մայիսի, 1922
Թիւ **882**

Պարո՛ն դիւանագիտական ներկայացուցիչ,
Յղելով մարտի 18-ի Ձեր նամակին, որն առնչւում էր Նիդերլանդիայի դիւանագիտական ծառայութեան կողմից օրիորդ Նատալի Իւանովի անունով ձեւակերպուած բանկային անդորրագրին՝ պատիւ ունեմ այս նամակով Ձեզ ուղարկելու Նոյն համարն ունեցող եւ պարոն Պապաջանովի անունով ձեւակերպուած բանկային անդորրագրի պատճենը:

Միեւնոյն առաքմամբ հարկ եմ համարում սոյնի մասին տեղեկացնել նաեւ Հելսինկիի վարչութեանը:

Խնդրում եմ ընդունել, պարո՛ն դիւանագիտական ներկայացուցիչ, յարգանացս հաւաստիքը:

Նիդերլանդիայի նախարար

Կոստանդնուպոլսում Հայաստանի Հանրապետութեան
դիւանագիտական ներկայացուցիչին

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
Délégation à la Conférence de la Paix

Մայիս 17 1922
Ջենովա
Hôtel Nizza

Մեծարգոյ
Պ. Ֆ. Թախտաճեան,

Ներկակ Պարիզի «Ապագայ» թերթում Մայիս 13-ին լոյս տեսած Պոլսի երեք հոգեւոր հայ պետերի մի յայտարարութեան պատճենը: Նկատի ունենալով յարուցւած խնդրի ծանրակշիռ նշանակութիւնը, Ձեզ խնդրում եմ հնար եղածին չափ շուտով հաղորդել ինձ ճշգրիտ լուսաբանութիւններ այս յայտարարութեան դրդապատճառների եւ նպատակի մասին: Շատ հետաքրքիր է նաեւ պարզել թէ այս որոշումը պարիզեան թելադրա՞նք է, թէ Պոլսի:

Պատրաստւում էի գրել Ձեզ Պատւիրակութեան տեսակէտը plam-ի եւ Կիլիկիայի մասին ի պատասխան Գեր[ապայծառ] Նազլեանի Ապրիլ 27 նամակի, երբ տեսայ յիշեալ յայտարարութեան տակ նաեւ Նազլեան ստորագրութիւնը:

Այս պարագան բնականապէս անտեղի է դարձնում սրբազանի հետ որեւէ գրագրութիւն յիշեալ նիւթի մասին:

Յարգանքներով
Աւետիս Ահարոնեան

Յ. Գ. Ձեր պատասխանը բարի եղեք ուղղել Պարիզ, ուր կը լինիմ մի շաբաթից յետոյ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ
ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ
ՈՒՐՇԻՆԳՏՈՆ

Յունիս 30, 1922

Տիար Ֆ. Թահթաճեան,
Հ. Հ. Դիւանագիտական Ներկայացուցիչ,
Կ. Պօլիս,

Մեծայարգ Տիար,
Անդրադառնալով Ձեր Ապրիլ 29 թուակիր նամակին, որով մեզ կը գրէիք
ի դիմաց Տիկին Աննա Ղազարեանի՝ դիմելու անոր ամուսնին, Պրն. Մայք
Ղազարեանի, Տիբոսիտ, իր կնոջ եւ պարագաներուն օգնելու համար:

Իբր արդիւնք մեր դիմումներուն Պրն. Մայք Ղազարեանը մեզ ուղարկած է 12
անգլ. ոսկիի Ամերիկեան Էքսփրեսս—ի չէք մը Ձեր միջոցաւ իր ընտանիքին
դրկուելու համար:

Ներփակ կստանաք յիշեալ չէքը: Բարի եղէք մեզ իմացնել այդ չէքին ստացուած
լինելը եւ տիրոջ յանձնուիլը:

Խորին յարգանքով,

Փ. Ս. Մանուէլեան
Քարտուղար

Պ. Էպլիդաթեանի

Խնդրեմ այս կինը կանչէք հիւպատոսարան եւ իրան յանձնէք այն 12 անգլ.
ոսկինոց չէքը, բացատրելով իրան թէ մօտաւորապէս ինչ կանէ փոխարժէքը,
թրքական թղթադրամով ընկալագիրը՝ ձեր ստորագրութեամբ հաստատուած՝
բարի եղէք ինձ ուղարկել:

ՖԹ

21/VII/22

NEAR EAST RELIEF
STAMBOUL, CONSTANTINOPLE

Telephone : Stamboul 3000
Cable address "NEAREAST"

July 20, 1922

Mr. F. Tahtadjian
Diplomatic Representative of Armenia
Hotel Tokatlian
Pera

Sir,

We have in our warehouses 46 cases of valuable machinery and tools carpenter's, blacksmith's, mechanic's, etc. and some effort must be made to remove these as quickly as possible. As you are aware we have reduced our storage capacity by more than one half and we are at present finding it very difficult to store this machinery. In addition to this the machinery needs attention and there is great need of it in Armenia.

We took it into our warehouse with the understanding that it was to be forwarded to Armenia immediately. It has now been here nine months and no effort has been made to remove it. We would therefore ask you to remove this machinery or give us authorization to ship to Armenia within the next 15 days.

Yours very truly,
W. H. Day
Director Supplies & Transportation

WHD: LG

ՄԵՐՁԱԴՈՐ ԱՐԵԲԵԼՔԻ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ
ՍՏԱՄՊՈՒԼ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Հեռաձայն. «Stamboul 3000»
Հեռագիրի հասցե. «NEAR EAST»

Յուլիսի 20, 1922

Պարոն Ֆ. Թահթաճեան
[F. Tahtadjian]
Հայաստանի Դիւանագիտական Ներկայացուցիչ
Թոքաթլեան Պանդոկ
Բերա

Պարոն,
Մեր պահեստներում ունենք արժեքաւոր սարքաւորումների եւ գործիքների 46 սնդուկ՝ ատաղձագործների, դարբինների, մեքենայագործների, եւ այլն: Հարկ է որոշակի ջանքեր գործադրել դրանք հնարաւորինս շուտ տեղափոխելու համար: Ինչպէս տեղեակ էք, մենք մեր պահեստային տեղակայման հնարաւորութիւնը աւելի քան կիսով չափ պակասեցրել ենք եւ ներկայումս շատ դժուարանում ենք պահել այս սարքաւորումները: Բացի այդ, սարքաւորումները կարօտ են ուշադրութեան եւ Հայաստանում դրանց մեծ կարիքը կայ:

Մենք այն տարանք մեր պահեստ՝ հասկանալով, որ այն պէտք է անմիջապէս տեղափոխուի Հայաստան: Այժմ ինը ամիս է, ինչ այն այստեղ է, եւ ոչ մի ջանք չի գործադրուել այն փոխադրելու համար: Հետեւաբար խնդրում ենք Ձեզանից այս սարքաւորումները հեռացնել կամ մեզ արտօնութիւն շնորհել դրանք Հայաստան փոխադրելու առաջիկայ 15 օրուայ ընթացքում:

Ամենայն անկեղծութամբ Ձեր՝

Ու. Հ. Տէյ
Մթերման եւ Փոխադրութեան Տնօրէն

WHD: LG

ՊԱՏՐԻԱՐԶԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԽԱՌՆ ԺՈՂՈՎ
ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Պատճեն

Մեծայարգ Տիար Նախագահ
Հայաստանի Հանրապետության Պատուիրակության
Բարիզ

Ձեր 22 Յուլիս 1522 թուակիր նամակով յայտնած փափաքին համաձայն պատիւ ունիմ տեղեկացնելու հետեւեալը:

Ինձ յանձնուած դիւանագիտական պայուսակով երբ Պոլիս հասայ (1920 Դեկտեմբեր) շշուկներ կային որ Հայաստանի կառավարութիւնը եղած է խորհրդային սօսեալիստական եւ Պրն. Օհանջանեան, որուն ուղարկւած էր պայուսակը, այլ եւս Երեւան չի գտնուիր: Ուզեցի այն ատեն պայուսակը յանձնել Ձեր Պօլսոյ ներկայացուցչին, եւ երկու անգամ գնացի Պր. Թահթաճեանի մօտ, բայց երկու անգամին ալ զինքը չի գտայ: Ուստի դիմեցի Պրն. Ամատունիին որ ինձմէ խնդրեց կնքուած պայուսակը բանալ եւ մէջէն ցանկը իրեն յանձնել. ես ալ այդպէս ըրի:

Պր. Ամատունի ցանկին վրայ նշանակեց իր կարեւոր նկատածները - դիւանագիտական (կնքուած ծրարները) սուրհանդակը առաւ եւ հայ Յեղ[ափոխական] Դաշնակցութեան Պօլսոյ Կեդրոնական Բիւրոյի անունով, ինք տուաւ, ուրիշ ընկերներու ներկայութեան ստացագիր մը պաշտօնական կնիքով. այս ստացագիրը կը գտնուի Պօլիս՝ խնամատարութեան տեսուչ Պրն. Պետրոս Տեփոյեանի մօտ, եւ մնացածները, այսինքն վեց ծրար նամակադրոշմ (ծրարները կնքուած չէին պատուիրակութեան կնիքով) չորս տուփ նետլէի կաթ եւ խուրջ մը մը բժշկական թերթեր, իբր անկարեւոր պայուսակիս մէջ ձգելով կրկին ինձ յանձնուեցաւ, որ ինձ հետ Բաթում տանեմ, թերեւս կարենալ յանձնելու Պ. Օհանջանեանին:

Երբ Բաթում հասայ, մաքսատան մէջ վրացի պաշտօնեաները ամբողջ ծրարները բաց ըրին - քանի որ կնքուած չէին - կաթերն ու ծրարներու մէջէն բաւական քանակութեամբ նամակադրոշմ վերցուցին բռնի, ըսելով նաեւ որ իզուր է որ ատոնք պիտի հանեմ Երեւան քանի Օհանջանեան եւ Դրօ արդէն կախուած են:

Այդ ճգնաժամային թույլին չէի գիտեր ալ ի՞նչ անել ինձ յանձնուած ծրարներու մնացած բեկորներով: Յետոյ, բնականօրէն մտածումս եղաւ զանոնք կրկին Ձեր Պօլսոյ ներկայացուցչին ուղարկել եւ այդ մտքով յանձնեցի զանոնք դաշնակցական երիտասարդի մը, զոր ստեպ կը տեսնէի Կորիւն Գազագեանի, Տիգրան Աւետիսեանի հետ, եւ որ Պօլիս պիտի երթար: Նրա անունը ժամանակին ըսի Պ. Խոսրով Պապայեանին եւ Տիկին Բրօֆ. Ա. Խաչատրեանին Թիֆլիս ընտանեկան ճաշի մը ժամանակ, որ գնահատեցին իմ այդպէս ընելը, այժմ այդ երիտասարդին անունը ո եւ է կերպով չեմ կրնար յիշել, բայց շատ դիւրին կ'ըլլայ Ձեզ հասկնալ այդ թէ սոյն երկու անձերէն եւ թէ անշուշտ՝ Ճակատամարտի խմբագրութենէն ալ քանի որ այդ թերթը վերջերս գրած էր որ «Ռուսահայ մը նամակագրութիւններով բեռնաւորուած Պօլիս կուգայ եւ կը ծախէ զանոնք, մէկ ծրար միայն յանձնելով Բեզգատեանին:

Ես կը կարծէի թէ Պօլսոյ Հ[այ]Յ[եղափոխական] Դաշնակցութեան Կեդրոնական Բիւրոյին եւ վերոյիշեալ երիտասարդ դաշնակցականին միջոցով դուք արդէն տեղեակ կը լինէք այս անցուղարծին:

Ընդունեցէք Մեծայարգ Տիար Նախագահ խորին յարգանացս հաւաստիքը:

Ստոր. Ս. Խաչատրեան

27 Յուլիս 1922
Gardegasse 2/15 VII Wien

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
DÉLÉGATION
A LA CONFERENCE DE LA PAIX

30, RUE SAINT-DIDIER

PARIS, le 1 Oգոստոս 1922

N° **5976/6**

Հ[այաստանի] Հ[անրապետութեան] Կ. Պօլսոյ
Դիւան[ագիտական] Ներկայացուցիչ
Մեծ[արգոյ] Պ. Ֆ. Թահթաճեան
Կ. Պօլիս

Ձեր 28 Յուլիս 1922 նամակին յետ-գրութեան խնդրած էինք ձեզմէ որ հաճիք մեզ հաստատել Պ. Խաչատրեանի անուան հետ կապուած նամականիշներու ծախսի հարցին մասին ձեր ունեցած բոլոր տեղեկութիւնները:

Ներփակ պատիւը ունինք ձեզ ղրկելու պատճենը Պ. Խաչատրեանի Վիեննայէն մեզ ուղղած 27 Յուլիս թուակիր մէկ գրութեան՝ ի պատասխան մեր 22 Յուլիս թ. նամակին որով բացատրութիւն պահանջած էինք յիշեալէն այդ գործի մասին: Ձեզ ուղարկելով Պ. Խաչատրեանի թուղթին պատճենը, կը խորհինք թերեւս դուք ի վիճակի ըլլաք մեզ կարգ մը լուսաբանութիւններ տալու հոն տրուած բացատրութեանց մասին եւ կամ ջանալ ճշտելու զանոնք տեղւոյդ վրայ:

Յարգական բարեկներով՝
Վ. Հ. Հ. Պատուիրակութեան
Նախագահ

Ալ[եքսանդր] Խատիսեան

Constantinople,
le 6 Août 1922

N° 1694

American Black Sea Steamship Comp.
La ville

Messieurs, conformément aux instructions de la Délégation de la République Arménienne à Paris, en date du 28 juillet écoulé N° 5973/6, j'ai l'honneur de Vous transmettre ci-joint, en due forme, le connaissance des 22 caisses de marchandises, appartenant au gouvernement arménien, qui furent vendues aux enchères publiques le 6 Mai 1921, avec prière de me verser le reliquat de cette vente.

Je Vous prie en même temps de vouloir bien me délivrer une copie de l'acte dressé pour cette vente, avec l'inventaire de marchandises vendues.
Veuillez agréer, etc.

Կոստանդնուպոլիս,
6 օգոստոսի, 1922

Թիւ 1694

American Black Sea Steamship Comp.
Քաղաքացիական ծառայութիւն

Պարոնայք, համաձայն Փարիզում Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան յուլիսի 28-ին արձակած թիւ 5973/6 հրամանագրի՝ պատիւ ունեմ կից փաստաթղթով Ձեզ ներկայացնելու Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանը պատկանող եւ 1921 թուականի մայիսի 6-ի հանրային աճուրդում վաճառուած 22 արկղերի նաւաբեռնագիրը՝ խնդրելով Ձեզ ինձ առաքել վաճառքին առնչուող արձանագրութիւնը:

Խնդրում եմ նաեւ ներկայացնել վաճառքի համար կազմուած իրաւական ակտի պատճենը՝ վաճառուած ապրանքների ցուցակի հետ մէկտեղ:
Խնդրում եմ ընդունել, եւ այլն...

Le 10 Août 1922

N° 1702

Mr. Rosset, Directeur de service des passeports, etc

Les Arméniens dont les noms sont portés sur la liste ci-jointe, dressée par l'assistance nationale arménienne, se trouvent à bord du s/s "Sahara", arrivé de Batoum.

Ayant leurs parents et amis à Constantinople, tous ces réfugiés arméniens se sont faufileés parmi les réfugiés syriens, pour s'embarquer sur le "Sahara".

L'assistance nationale arménienne me garantit que tous ces réfugiés arméniens, au nombre de 64 personnes, seront hébergés et entretenus par leurs parents domiciliés à Constantinople.

Je viens en conséquence Vous prier de vouloir bien les autoriser à débarquer, etc.

10 օգոստոսի, 1922

Թիւ 1702

Պարոն Ռոսսէ, Անձնագրային ծառայութեան տնօրէն, եւ այլն

Հայազգի ուղեւորները, որոնց անունները յիշատակուում են հայ ազգային օգնութեան ֆոնդի կազմած կից ցուցակում, գտնուում են Բաթումից ժամանած «սահարա» նաւի վրայ:

Բարեկամներ եւ հարազատներ ունենալով Կոստանդնուպոլսում՝ հայ փախստականները «սահարա» նստելու համար սպրդել են սիրիացի փախստականների շարքերը:

Հայ ազգային օգնութեան ֆոնդը երաշխաւորում է, որ թուով վաթսունչորս հայ փախստականներին կօթեանեն եւ հոգ կը տանեն Կոստանդնուպոլսում բնակուող իրենց հարազատները:

Հետեւաբար, խնդրում եմ Ձեզ արտօնել նրանց ցամաք իջեցումը եւ այլն:

ԱԶԳԱՅԻՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Բերա, Ս. Երրորդութեան Եկեղեցիի շրջաքակը
Հեռագիր՝ Կ. Պոլիս, Մուսվէնէթ
Հեռախօս՝ Բերա, 1338

Կ. Պոլիս, 10 Օգոստոս 1922
Թիւ **3745**

Վսեմաշուք
Տիար Ֆ[երտինաստ] Թահթաճեան
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Հ[այաստանի] Հ[անրապետութեան]
ի Կ. Պոլիս
Աստ

Վսեմաշուք Տէր,
Ներփակ ցուցակին մէջ անուններնին նշանակուած 79 գաղթականները
Պաթումէն «Սահարա» շոգենաւով Պոլիս հասած են եւ բոլորն ալ առանց
բացառութեան տեղւոյս մէջ պարագաներ կամ ազգականներ ունին: Պիտի
խնդրէինք որ Ձերդ Վսեմութիւնը հաճէր միջնորդել ֆրանսական պազնավալին
մօտ, յիշեալ հէջ գաղթականներուն ցամաքահանման համար:

Ազգ[ային] Խնամատարութիւնս երաշխաւոր կըլլայ յիշեալներուն
պատուաւորութեան եւ յանձն կառնէ սնուցանել եւ պատսպարել զիրենք:

Ներկայացնելով մեր կանխայայտ շնորհակալութիւնները
Մնանք Յարգանօք

Ի դիմաց Ազգ[ային] Խնամ[ատարութեան]
Կեդր[ոնական] Վարչ[ու]թեան
Ընդհ[անուր] Տնօրէն
Պ. Տեփոյեան

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
DÉLÉGATION
A LA CONFERENCE DE LA PAIX

30, RUE SAINT-DIDIER
PARIS, le 10 Օգոստոս 1922
N° 5986/6

Մեծ[արգոյ] Պ. Ֆ. Թահթաճեան
Հ[այաստանի] Հ[անրապետութեան]
Դիւան[ագիտական] Ներկայացուցիչ
Կ. Պոլիս

Ձեր մասնաւոր ուշադրութեան ենք յանձնում հետեւեալ պարագան:
Մեր քաղաքացիներին Ձեր կողմից տրւած անցագրերը կրում են առհասարակ
“se rend à Paris” կամ “se rend à Paris & les pays étrangers” երբեմն էլ “se rend
à Paris” եւ մի քանի օտար երկրների անուններ:

Այդ կարգի անցագրերի վրայ երբեմն գրւած է լինում “valable pour un
an” մակագրութիւնը, բայց մեծ մասով, նրանք չեն կրում ժամանակի
տեւողութեան որեւէ մակագրութիւն: Այդ հանգամանքը առիթ է տալիս որոշ
թիւրիմացութիւնների եւ բարդութիւններ ստեղծում մեր քաղաքացիների
ճամբորդութեան համար:

Խուսափելու համար այդ թիւրմացութիւն եւ բարդութիւններից, խնդրում
ենք անցագրերի եւ նրանց ժամանակամիջոցի վերաբերմամբ վարւելիք մեր եւ
Եւրոպայի մեր միւս ներկայացուցիչների սովորութեան համաձայն, այն է տալ
երկու կարգի անցագրեր

ա) Անցագրեր որոնցով մեր քաղաքացիք կարող են գնալ մի կամ մի քանի
միմեանց յաջորդող երկրներ եւ վերադառնալ օրինակ “se rend en Allemagne,
France & Italie” կամ թէ չ’է se rend en France եւ այդպիսիների վրայ դնել “va-
lable pour un seul voyage” կնիքը եւ որի համար կ’ստանաք 30 ֆրանսական
ֆրանքին համապատասխանող գումարը: Որպէս ծանօթութիւն, աւելացնենք
որ այդ անցագրերին տրւում է visa հետեւեալ ձեւով “Bon pour se rendre en
Allemagne, France, Italie & retour à Constantinople կամ “Bon pour se rendre
en France & retour à Constantinople” բնական է որ այս կարգի անցագիր
ունեցող մեր քաղաքացիք միանգամ այդ ճամբորդութիւնը կատարած, երբ
վերադառնան Կ. Պոլիս այլեւս նոյն անցագրով երկրորդ անգամ ճամբորդել չեն
կարող եւ պարտաւոր երկրորդ անգամայ ճամբորդութեան համար նորոգել
իրենց անցագրերը:

բ) Անցագրեր, որոնցով կարող են մի տարի շարունակ ճամբորդել արտասահմանեան բոլոր երկրները եւ որոնց վրայ դրւում է “se rend à l'étranger” մակագրութիւն եւ “valable pour un an” կնիքը եւ որոնց համար սովորաբար ստացւած է 80ֆր. Ֆրանք կամ նրա համագոր գումարը երկրի դրամով: Այս կարգի անցագրերին տրւում է իւրաքանչիւր անգամ այն երկրի կամ երկրների վիզան ուր ճամբորդը մտադիր է գնալ եւ վերադառնալու: Օրինակ “Bon pour se rendre en France կամ en France, Suisse, Italie, Belgique, Allemagne & retour” եւ այդպէս մի քանի անգամ տարւայ ընթացքում: Տարին լրանալուց անցագրի տէրը պարտաւոր է նորոգել իր հին անցագիրը:

Այսպիսով մեզ պարզ կ'լինի որ ա) կարգի անցագրով Փարիզ եկողները ուրիշ երկիր անցնելու համար պարտաւոր են նորոգել մեզ մօտ իրենց անցագիրը իսկ բ) կարգի անցագրով եկողները կարող են մեզնից նոր visa-ներ վերցնել եւ շարունակել իրենց ճամբորդութիւնը բոլոր այն երկրներում որ ցանկանում են:

Ընդունեցեք խնդրեմ Մեծ[արգոյ] Պ. Ներկայացուցիչ մեր խորին յարգանաց հաւաստիքը:

Ալ[եքսանդր] Խատիսեան

Յ. Գ. Խնդրում ենք ներփակ նամակը բարի լինեք ուղարկելու Թիֆլիզ: Նոյն

ARMENIAN NATIONAL RELIEF WORK
CENTRAL COMMITTEE
Pera, Balook-Bazar, Armenian Church

Teleph. Pera **1338**

Telegraphic Address: ARECOM

Constantinople,
10 August 1922

List of Refugee People in the Steamer SAHARA

Name	Age	N° of people	Town	Name	Age	N° of people	Town
Roupen Meryatzian	35	1	Van	Aram Zadigian	28	1	Adabazar
Margo Vartanian	35	5	Van	Arshag Garabedian	33	5	Outmen
Hairig Chnavonian	30	1	Tavriz	Hatcho Garabedian-Hagopian	27	1	Outmen
Mgrditch Sdepanian	33	1	Salmas	Garabed Melkonian	27	1	Van
Levon Hayrabedian	21	5	Moush	Armenag Garabedian	24	1	Hazarbad
Kevork Minassian	13	1	Arapkir	Bedros Simonian	44	1	Salmasd
Manoug Avedissian	12	1	Van	Kevork Tavitian	22	1	Salmasd
Yeghiazar Soukiassian	52	3	Van	Hagop Minassian	60	1	Beitouth ¹
Goliath Seropoff	62	1	Moush	Arousiag Haroutiounian	30	2	Van
Krikor Eloyatz	32	1	Moush	Aso Sarkissian	19	2	Prkhs
Mihran Aloyan	40	3	Van	Moushegh Torossian	16	1	Van
Hrpsimé Hatchadourian	36	1		Sahag Ohanian	18	1	Salmasd
Kasbar Melikian	42	2	Moush	Hovagim Mgrditchian	40	1	Moush
Saribeg Mgrditchian	18	1	Van	Moses Mizsheghian ²	18	1	Moush
Mariam Khintirian	60	2	Constantinople	Bedros der Martirosian	25	1	Alashgerd
Minas Takvorian	48	1	Van	Hairabed Hagopian	40	1	Moush
Apraham Kandoyan	34	1	Van	Siranoush Bedrossian	20	2	Moush
Manoug Kalousdian	32	1	Terzan	Heghiné Kevorkian	35	1	Kemakh
Sarkis Kalousdian	23	1	Terzan	(Simon Hagopian) Hatchadour [...] ³	30	4	Salmasd
				Roupen Sarkissian	12	1	Moush

¹ Քնագրի մեջ գրուած է Beitouth, որ հաւանաբար սխալմունք է եւ մեզի համաձայն պետք է ըլլայ Պէյրուս:

² Քնագրի մեջ գրուած է Mizsheghian, որ հաւանաբար «Մուշեղեան» ձեւի տարրերէն բխած է, ուստի մենք նախընտրեցինք «Մուշեղեան» տարրերակը:

³ Քնագրի մեջ ազգանունը անընթեռնելի է:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՍԱՄԱՏՈՅՑ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ
[ARMENIAN NATIONAL RELIEF WORK] ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Բերա, Պալըք-Պազար, Հայկական Եկեղեցի

Հեռաձայն. «Pera **1338**»

Հեռագրի հասցե. «ARECOM»

Կոստանդնուպոլիս,
Օգոստոսի 10, 1922

«ՍԱՀԱՐԱ» [SAHARA] Շոգենաւում Փախստականների Ցանկ

Անուն	Տարիք	Անձերի քանակ	Վայր	Անուն	Տարիք	Անձերի քանակ	Վայր
Ռուբեն Մերեացեան	35	1	Վան	Արամ Չառիկեան	28	1	Ատապազար
Մարկո Վարդանեան	35	5	Վան	Արշակ Կարապետեան	33	5	Ուտմեն ? (Outmen)
Հայրիկ Շմաւոնեան	30	1	Թաւրիզ	Խաչո Կարապետեան- Յակոբեան	27	1	Ուտմեն ? (Outmen)
Մկրտիչ Ստեփանեան	33	1	Սալմաստ	Կարապետ Մելքոնեան	27	1	Վան
Լեւոն Հայրապետեան	21	5	Մուշ	Արմենակ Կարապետեան	24	1	Հազարապատ
Գեորգ Միկասեան	13	1	Արաբկիր	Պետրոս Սիմոնեան	44	1	Սալմաստ
Մանուկ Աւետիսեան	12	1	Վան	Գեորգ Դաւիթեան	22	1	Սալմաստ
Եղիազար Սուքիասեան	52	3	Վան	Յակոբ Միկասեան	60	1	Բէյրութ
Գոլիաթ Սերոբով	62	1	Մուշ	Արուսեակ Յարութիւնեան	30	2	Վան
Գրիգոր Էլյեանց	32	1	Մուշ	Ասո Սարգիսեան	19	2	Փրիս? (Prkhs)
Միհրան Ալյոեան	40	3	Վան	Մուշեղ Թորոսեան	16	1	Վան
Հռիփսիմէ Խաչատուրեան	36	1		Սահակ Օհանեան	18	1	Սալմաստ
Գասպար Մելիքեան	42	2	Մուշ	Յովակիմ Մկրտիչեան	40	1	Մուշ
Սարիբէկ Մկրտիչեան	18	1	Վան	Մովսէս Մուշեղեան	18	1	Մուշ
Մարիամ Խիւրդիւրեան	60	2	Կոստանդնուպոլիս	Պետրոս Տէր Մարտիրոսեան	25	1	Ալաշկերտ
Միկաս Թաւրեան	48	1	Վան	Հայրապետ Յակոբեան	40	1	Մուշ
Աբրահամ Գանտոյեան	34	1	Վան	Սիրանուշ Պետրոսեան	20	2	Մուշ
Մանուկ Գալուստեան	32	1	Թերջան	Հեղինէ Գեորգեան	35	1	Զեմախ
Սարգիս Գալուստեան	23	1	Թերջան	Խաչատուր [...]	30	4	Սալմաստ
				Ռուբեն Սարգիսեան	12	1	Մուշ

Հ Հ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ՊՈԼՍՈՅ ԴԻԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԵԱՆ ԿԻՑ
ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, 27 Օգոստ[ոս] 1922

Թիւ ...

Վսեմաշուք

Տիար Ֆ. Թահթաճեան

Աստ

Հ[այաստանի] Հ[անրապետութեան] պատուիրակութեան թիւ 5978/6 եւ 5979/6 եւ (3) Օգոստ[ոս] թուական կրկին գրութիւններու համաձայն ինձ հրահանգ էիք տուեր վճարել Պ. Արարատեանի միջոցաւ պարլամենտի նախկին անդամ Պ. Միքայէլ Տէր Գեորգեանի մի հարիւր լիրայ օսմանեան ինչպէս նաեւ յարմար միջոցաւ դրկել մի հարիւր լիրայ եւս Կարսի նախկին նահանգապետ Պ. Ս[տեփան] Ղորղանեանի: Արդ կու գամ յայտարարել թէ Պ. Արարատեան յարմար միջոցներ գտած ըլլալով այդ գումարները իր տեղը հասցնելու այսօր իսկ վճարեցի իրեն երկու հարիւր ոսկի միսիան ստանալով Պ. Արարատեանէ ստացականներ՝ առժամապէս: Երբ յիշեալ երկու անձերը ստանան իրենց յատկացուած գումարը ի հարկէ իրենց ստացականներն ալ կը փոխանակուին Պ. Արարատեաններուն հետ:

Խորին յարգանք

Ս[ատթէոս] Էպլիղաթեան

Հայաստանի Հանրապետության
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Պ. Ֆ. Թահթաճեանին

Մեր սիրելի հայրենակից եւ Ձեզ ծանօթ Պ. Մուշեղ Խուդադեանը անկնկալ կերպով վախճանել է ուրբաթ գիշեր՝ իր անկողնում սրտի պայթիւնից թերեւս Ֆլորիայում:

Ֆրանսիական ոստիկանութիւնը իր սենեակը գնալով, նախնական քննութիւն կատարելով, վերցրել է նրա մօտ գտնւած իրերն ու թղթերը եւ ուղարկել իր կենտրոնին:

Իբրեւ բարեկամ ու հայրենակից, մենք յայտնեցինք ոստիկանութեան (ֆրանսիական), որ մեր դժբախտ հայրենակիցը ուրիշ բարեկամներ չունենալով այստեղ, մենք վերցնում ենք նրան թաղելու պարտականութիւնը մեզ վրայ:

Այսու խնդրում ենք, բարի լինէք մեր դժբախտ հայրենակցի թղթերն ու իրերը պահանջէք ֆրանսիական ոստիկանութիւնից եւ պահել Ձեզ մօտ, որպէսզի ապագայում իր հարազատները ստանալու հնարաւորութիւն ունենան:

Միաժամանակ խնդրում ենք, բարի լինէք կարգադրելու, որ հիւպատոսարանը տէր դառնայ դիակին, որը գտնւում է այժմ Հէյդար-փաշայի դիագնոսարանում եւ մեզ յանձնի թաղելու համար:

Յարգանք
Ս. Արարատեան
Տ[իգրան] Դեոյեան
28 VIII [Օգոստոս] Կ. Պոլիս 1922թ.

Հ[ԱՅԱՍՏԱՆԻ] Հ[ԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ] ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ
ՊՈԼՍՈՅ ԴԻԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԵԱՆ ԿԻՑ
ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
Միաւոր 1-30 ծախսերու

	Օսմ[անեան] ոսկի
Դռնապան Նշանին ամսականը	35
Դռնապան Նշանին իր(?)	
ամսուա[յ] ընթացքին գրասենեակի կատարած ծախքերը	1425
Պր. Անոփեանի (քարտուղար) ամսականը	80
Նախկին սպայ Պարոնեանի նպաստ	3
Նախկին սպայ Մաչանեանի նպաստ (տաս հազար ֆր.ի հաշիւը)	30
Պ. Թահթաճեանի ռոճիկը	650
Աւետեանի (նախկին պաշտօնեայ 10000 ֆր.ի ի հաշիւ	30
Պէճիտեան տպարանի (1000 անցագրի եւ պահարանի ծախս	22
հայկ. պանգայ	595
Հատ. Նախագահ Պ. Ահարոնեանի անուան հայկ. պանգայ [...]	3000
Մնացական Գեորգեանի նպաստ եւ վարկատուութիւն	21
Մուսայելեանի եւ իր ընկերներուն	
(նախկին սպաներու ձեռքի ծախս	24
հայկ. պանգայ յանձնած Պ. Թախթաճեանի անուան	1000
Պ. Դաւիթեանի (Ապրիլէն - 1 Հոկտեմբեր վեց ամսական	900
Պ. Յակոբեանի	
(Սօչիի նախկին Հիւպատոս 10000 ֆրանքի հաշւոյն	40
Գր. Աւետեանի	
(5 օր աշխատող պատահական օգն. Քարտուղարի	7,5
Պ. Դաւիթեանի (Մարմնի անունով)	3000
Օսմ. Պանգայ յանձնուած Պրն. Թահթաճեանի անուան	6000
Պանգի պետ եւ օդոմոպիլի ծախս (դրամատնին	3,5
Ա. Պէճիտեան տպարանի (3000 անցագրի եւ թղթա[...])	67
Օգնական քարտուղարին	208
Իմ ամսականս մանր ծախսեր եւ հաշուէ[...]	780
	16,010,25
փոխադրել	
տիկին Ժամհարի նպաստ (10000 ֆրն եւ այլն	50
Պ. Գրիգեանի նպաստ	75
Պ. Պահատուրեանի փոխ տուած	9
Պ. Գնափեանի (քարտ.) մանր ծախսերը	3,17
	16147,42
Սեպտ.ի հասոյթ	15219,16
Սեպտ.ի հայկ. Պանգայէն գնծ. Չէք	3000
(18219,16 - 16147,42) = 2071,74	

Haut Commissariat
de la République Française
en Orient
SERVICE POLITIQUE

Constantinople,
le 11 septembre 1922

182/12

Monsieur le Représentant,
Vous avez bien voulu me faire parvenir la copie de la note adressée, le 18 Août dernier, par le Président de la Délégation de la République Arménienne aux gouvernements français, anglais et italien, pour que des représentants de l'Arménie soient appelés à participer à la Conférence de Venise.

J'ai l'honneur d'accuser réception de cette communication et de vous faire savoir que, le moment venu, je ne manquerai pas de recommander à mon gouvernement la suggestion de la Délégation de la République Arménienne.

Veuillez agréer, Monsieur le Consul, les assurances de ma considération la plus distinguée.

Pellé

MONSIEUR TAHTADJIAN
CHEF DE LA MISSION DIPLOMATIQUE
DE LA REPUBLIQUE ARMENIENNE

ԱՐԵՎԵՐՔՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Գլխավոր Ներկայացուցչության
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Կոստանդնուպոլիս,
11 սեպտեմբերի, 1922

182/12

Պարո՞ն դիւանագիտական ներկայացուցիչ,
Դուք ցանկացել էք ինձ հասցեագրել պաշտօնական այն հաղորդագրության
պատճենը, որն օգոստոսի 18-ին Հայաստանի Հանրապետության
պատուիրակության նախագահը յղել է Ֆրանսիայի, Անգլիայի եւ
Իտալիայի կառավարութիւններին՝ Վենետիկի համաժողովին Հայաստանի
ներկայացուցիչների մասնակցութիւնն ապահովելու համար:

Պատիւ ունեմ Ձեզ տեղեկացնելու, որ ստացել եմ Ձեր հաղորդագրութիւնը
եւ ցանկանում եմ Ձեզ յայտնել, որ երբ ժամանակը գայ, ես անպատճառ
իմ կառավարութեանը կերաշխաւորեմ Հայաստանի Հանրապետության
պատուիրակության առաջարկը:

Շնորհ արեք ընդունել, պարո՞ն հիւպատոս, յարգանացս հաւաստիքը:

Պելլէ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԴԻԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ
ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԱՐՈՆ ԹԱՀԹԱԶԵԱՆ

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
DÉLÉGATION
A LA CONFERENCE DE LA PAIX

30, RUE SAINT-DIDIER
PARIS, le 18 Սեպտ[եմբեր] 1922

N° **6031/6**

Նիւթ՝
Ամերիկայէն դրկուած 46 սնտուկ մեքենաները

Մեծ[արգոյ] Պ. Ֆ. Թահթաճեան
Հ[այաստանի] Հ[անրապետութեան]
Դիւան[ագիտական] Ներկայացուցիչ
Կ. Պօլիս

Մեծ[արգոյ] Պարոն Ներկայացուցիչ,
Ստացած ենք Ձեր 29 Օգոստոս եւ 1 Սեպտեմբեր թուակիր նամակները
Ամերիկայէն դրկուած 46 սնտուկ մեքենաներու եւ գործիքներու մասին:

Ի պատասխան, 16 Սեպտ[եմբեր] թուականով Ձեզ հեռագրեցիք հետեւեալը
Sommes tombés d'accord avec Vickrey pour envoi 46 caisses médecines et out-
ils en Arménie par entremise Near East Relief stop Vickrey qui trouve ces instru-
ments très nécessaires pour Arménie a déjà envoyé instructions nécessaires y
relatives son comité Constantinople stop Retenez seulement caisse drapeaux
stop transférez 3000 livres confirmation par lettre suit

KHATISSIAN

Վիքրիի հետ ժընեվի մէջ մեր ունեցած տեսակցութիւններէն յայտնուեցաւ
արդարեւ որ ինքը չափազանց օգտակար կը գտնէ այդ մեքենաները
Հայաստանի համար եւ լաւագոյն կը նկատէ անոնց Հայաստան փոխադրուիլը
քան թէ Պ. Ճէքսընի յայտնած ցանկութեան համաձայն անոնց գործածուիլը
Պօլսոյ իրենց արհեստից վարժարանին մէջ:

Պ. Վիքրի այդ ուղղութեամբ արդէն իսկ պետք եղածը գրած ըլլալով իրենց
Պօլսոյ կոմիտէին, Ձեզ կը մնայ հետեւութիւն տալ մեր նախկին հրահանգին
այդ մեքենաները Ամերիկեան նպաստամատոյցի միջոցաւ Հայաստան
փոխադրելու՝ գործածուելու համար Հայաստանի մէջ եւ Հայաստանի
պետքերուն համար, այնպէս ինչպէս Ձեզ մանրամասնօրէն գրած ենք
ժամանակին:

- Ինչ կը վերաբերի մեր հեռագրի վերջին մասին, այսինքն 3000 ոսկւոյ փոխադրութեան, այդ մասին աւելորդ չենք նկատեր հրաւիրել Ձեր մասնաւոր ուշադրութեանը պատրաստի որեւէ կարեւոր գումար Պոլսոյ մէջ պահելու անպատեհութեան վրայ, ներկայ շփոթ օրերուն մէջ: Թերեւս լաւագոյն է այս պայմաններուն մէջ, ամսէ ամիս Պոլսոյ եկամուտէն աւելցած գումարը այսուհետեւ փոխադրել Պարիզ:

Ընդունեցէք, Մեծարգոյ Պարոն ներկայացուցիչ, խորին յարգանացս հաւաստիքը:

Վ. Հ. Հ. Պատուիրակութեան
Նախագահի Ալ[եքսանդր] Խատիսեան

NEAR EAST RELIEF
ORTAKEUY, CONSTANTINOPLE

Telephone: PERA 2637
Cable address "NEAREAST"

September 27, 1922

Mr. F. Tahtadjian
Diplomatic Representative of Armenia
Hotel Tokatlian Pera.

Dear Sir:

As we have informed you several times we are extremely anxious for you to come to some decision as to the disposition of the various cases of machinery held in our warehouse under your name. Our last conversation on the subject resulted in my sending to you my recommendations on the matter and to date I have had no reply as to your action.

In the meantime we have received two letters from our General Secretary, Mr. Vickrey, on the subject and he informs us that your Mr. Khatissian says we refused to take the goods. As far as I know the goods have never been offered to us except to store in our warehouse under your name and we have been trying for some months to get the proper authority to dispose of these goods in any way that you would suggest or authorize.

Aside from the fact that these cases in question have caused us no inconsiderable amount of inconvenience it must be remembered that machinery of this nature lying idle deteriorates much more rapidly than when used. Owing to the fact that some of the heavier cases were not made strong enough originally, they are not water-tight, particularly after having been handled several times. Due to the fact that some ten of these cases were so heavy and so awkward to handle we were forced to leave them outside of the warehouse and consequently they have suffered somewhat from the weather. It was Mr. Vickrey's understanding, as well as the understanding of the Direction here, that these cases were to be turned over to the Near East Relief for their use in Armenia.

It would be impossible for us under any circumstances to consider buying this machinery so that portion of my letter of recommendation in which payment was suggested may be considered, cancelled. Is it not possible for you to give us some decision as to the disposition of these cases.

Awaiting a reply at your earliest convenience

I am

Very truly yours

R. JACKSON

Acting Director Supplies & Transportation

RJ: IT

ՍԵՐՁԱԴՈՐ ԱՐԵԲԵԼԹԻ ՆՊԱՍԱՍԱՏՈՅՑ

ՕՐԹԱԳԻԴ, ԿՈՍԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Հեռաձայն. «Pera 2637»

Հեռագրի հասցե. «NEAREAST»

Սեպտեմբերի 27, 1922

Պարոն Ֆ. Թահթաճեան

Հայաստանի Դիւանագիտական Ներկայացուցիչ

Թոքթաթեան Պանդոկ, Բերա

Յարգելի Պարոն,

Ինչպէս Ձեզ մի քանի անգամ տեղեկացրել ենք, չափազանց մտահոգ ենք, որ Դուք որեւէ որոշում կայացնէք Ձեր անունով մեր պահեստում պահուող սարքաւորումների այլազան արկղերի կարգաւորման վերաբերեալ: Սրա շուրջ մեր վերջին խօսակցութիւնը յանգեցրեց նրան, որ Ձեզ ուղարկեցի այս հարցի վերաբերեալ իմ առաջարկութիւնները, եւ մինչեւ օրս ոչ մի պատասխան չեմ ստացել Ձեր գործողութիւնների վերաբերեալ:

Միաժամանակ դրա վերաբերեալ մենք երկու նամակ ենք ստացել մեր գլխաւոր քարտուղար պարոն Վիքրիից: Նա մեզ տեղեկացնում է, որ Ձեր Պարոն Խատիսեանն ասում է, թէ մենք մերժել ենք վերցնել ապրանքը: Որքան գիտեմ, ապրանքը մեզ երբեք չի առաջարկուել, միայն խնդրել է պահել Ձեր անունով մեր պահեստում, եւ մենք մի քանի ամիս փորձել ենք համապատասխան լիազօրութիւններ ստանալ այս ապրանքները որեւէ կերպ՝ ըստ Ձեր առաջարկի կամ թոյլտուութեան, տնօրինելու համար:

Բացի նրանից, որ խնդրոյ առարկայ արկղերը մեզ զգալի չափով անյարմարութիւն են պատճառել, պետք է ի մտի ունենալ, որ այս բնոյթի սարքաւորումները չկիրառուելու դեպքում շատ աւելի արագ են քայքայւում,

քան օգտագործելիս: Քանի որ որոշ ակելի ծանր արկղեր ի սկզբանե բաւականաչափ տոկոսն չեն եղել, ջրակայուն չեն՝ յատկապէս մի քանի անգամ օգտագործած լինելուց յետոյ: Քանի որ այս արկղերից մօտ տասը չափազանց ծանր էին եւ դժուարաշարժ, մենք ստիպուած էինք դրանք թողնել պահեստից դուրս, ըստ այդմ նրանք որոշ չափով տուժել են եղանակից: Պարոն Վիքրիի, ինչպէս նաեւ այստեղի ղեկավարութեան տեսակէտն էր, որ այս արկղերը յանձնուեն Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցին՝ Հայաստանում դրանց օգտագործման համար:

Մեզ համար անհնար կլինէր որեւէ պարագայում մտածել այս սարքաւորումները գնելու մասին, այդ պատճառով իմ յանձնարարական նամակի այն մասը, որտեղ առաջարկուում էր վճարում, կարելի է դիտարկել որպէս չեղեալ:

Արդեօք հնարաւոր չէ՞, որ Դուք մեզ յայտնեք Ձեր որոշումն այս արկղերի կարգաւորման վերաբերեալ:

Սպասելով Ձեր շուտափոյթ պատասխանին՝
մնում եմ
Ամենայն անկեղծութեամբ Ձեր՝

Ռ. ՃԷՐՍԸՆ

Մթերման եւ Փոխադրութեան Տեղապահ Տնօրէն
RJ: IT

Հ Հ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ՊՈԼՍՈՅ ԴԻԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԵԱՆ ԿԻՑ
ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, 14/ 10/ 1922

Թիւ ...

Վսեմաշուք

Տիար Ֆ. Թահթաճեան

Աստ

Ներփակ կը գտնէք Պ. Պապաեանի խնդրագրին պատճենը: Իրեն վճարեցի հարիւր ոսկի: Պ. Պահատուրեանը ժամանակին ստացեր էր 9 ոսկի փոխարինաբար (թէեւ փոխ առնուած դրամները ցարդ բան մը չ'է գանձուած:

Պ. Հայկազունեանին 5 ոսկի չ'եմ վճարած դեռ. եւ Ձեր հրամանին վրայ չեմ վճարեր այլեւս: Գալով հանգուցեալ Մուշեղի յուղարկաւորութեան առթիւ ինձմէ ստացուած 30 ոսկիին, այդ գումարը ոչ ոք վերադարձուց ինձ. լսեցի միայն թէ այդ անունով գումար մը հաւաքուած է եւ կը մնայ կարգ մը դերասաններու մօտ եւ թէ Ձեր վսեմութիւնը յանձնարարած է անոնց հաւաքուած գումարը ինծի յանձնել եւ սակայն կոպեկ մ'իսկ չ'ստացայ ինչպէս ըսի: Ուրեմն այդ գումարը Պ. Արարատեանի անձնական պարտքի՞ն վրայ պիտի աւելցուի թէ բաց պիտի մնայ:

Խորին յարգանքք

Մ[ատթէոս] Էպլիղաթեան

ARTACHES H. ENFIADJANTZ
18, Rue St-Vincent de Paul

Bruxelles, le 16 Octobre, 1922

Monsieur F. Tahtadjian
Représentant Diplomatique de la
République Arménienne à
CONSTANTINOPLE

Cher Monsieur,

Tous m'obligeriez beaucoup en voulant bien prêter votre assistance à Monsieur Artaches Ter-Avétissof, Mademoiselle Hélène Ter-Ossépiantz, Madame Marie Enfiadjiantz et Monsieur Arcadi Galoustoff afin de leur faciliter l'obtention des visas qui leur sont nécessaires pour se rendre de Constantinople en Europe.

Monsieur Ter-Avétissof est engagé au service de la Firme "Enfiadjian & C°" à Bruxelles. Mademoiselle Ter-Ossépiantz veut rejoindre dans la même ville ses Frères — Messieurs Léon et Goukas Ter-Ossépiantz, employés de ladite Maison. Madame Enfiadjiantz et Monsieur Galoustoff se rendent en Europe pour leurs affaires personnelles.

Je peux me porter garant que ces personnes sont parfaitement honorables et ne professent pas les opinions politiques des bolcheviks. J'atteste en outre, qu'elles ont des moyens d'existence pleinement suffisants et puis garantir que nulle d'entre elles ne sera en nécessité de solliciter des secours pécuniaires.

Je vous serais très reconnaissant de bien vouloir communiquer les dits renseignements au Contrôle Interallié des Passeports.

Je vous présente d'avance mes bien sincères remerciements pour la bonne suite que vous voudrez donner à ma demande, et vous prie, cher Monsieur, de croire à mes sentiments dévoués.

A. Enfiadjiantz

Réponse le 27 Décembre 1922

N° **1836**

Excuse-moi si, débordé par la situation, j'ai été lent à répondre à votre lettre du 16 octobre dernier.

Déjà, à la réception de votre télégramme, j'avais fait le nécessaire auprès du Bureau Interallié de contrôle des passeports, aux fins de donner aux vôtres, restés à Batoum, la possibilité de venir à Constantinople.

Et lorsqu'ils sont arrivés ici, je leur ai donné des passeports pour Bruxelles. A l'heure qu'il est, vous les avez sûrement, depuis longtemps, à côté de vous. Veuillez agréer, etc.

Արտաշես Հ. Էնֆիյաջեանց
Թիւ 18, Սենտ-Վենսան դը Պոլ փողոց

Բրիւսել, 16 հոկտեմբերի, 1922

Կոստանդնուպոլսում Հայաստանի Հանրապետութեան
Դիւանագիտական ներկայացուցիչ
պարոն Ֆ. Թահթաճեանին

Թանկագի՛ն պարոն,

Ես Ձեզ անչափ երախտապարտ կլինեմ, եթէ համաձայնեք Ձեր աջակցութիւնը ցուցաբերել պարոն Արտաշես Տէր-Աւետիսովին, օրիորդ Էլէն Տէր-Օսեպեանցին, տիկին Մարի Էնֆիյաջեանցին եւ պարոն Արկադի Գալուստովին, որպէսզի վերոյիշեալ անձանց առանց լրացուցիչ բարդութիւնների տրամադրուեն Կոստանդնուպոլսից Եւրոպա մեկնելու համար անհրաժեշտ մուտքի արտօնագրերը:

Պարոն Տէր-Աւետիսովը ծառայում է Բրիւսելում գտնուող «Էնֆիյաջեանց եւ ընկ.» ֆիրմայում: Օրիորդ Տէր-Օսեպեանցը կամենում է միանալ նոյն քաղաքում բնակուող իր եղբայրներին՝ պարոնայք Լեւոն եւ Դուկաս Տէր-Օսեպեանցներին, որոնք աշխատում են վերոյիշեալ հաստատութիւնում: Տիկին Էնֆիյաջեանցն ու պարոն Գալուստովը Եւրոպա են մեկնում անձնական գործերի բերումով:

Ես երաշխաւորում եմ, որ վերոյիշեալ անձինք պատուարժան մարդիկ են եւ չեն գբաղում բոլշեւիկների քաղաքական հայեացքների քարոզչութեամբ: Բացի դրանից՝ ուզում եմ Ձեզ հաւաստիացնել, որ նրանք լիովին ապահովուած են իրենց գոյութիւնը պահպանելու համար անհրաժեշտ միջոցներով, եւ ես պատրաստ եմ երաշխաւորելու, որ յիշատակածս անձանցից եւ ոչ մէկը կարիք չի ունենայ դրամական օգնութիւն հայցելու:

Ես Ձեզ անչափ երախտապարտ կը լինեմ, եթէ այս տեղեկութիւնները փոխանցեք Դաշնակից ուժերի անձնագրերի ստուգման վարչութիւն:

Ուզում եմ կանխաւ Ձեզ յղել իմ անկեղծ շնորհակալանքները՝ իմ այս դիմումին ընթացք տալու համար, եւ խնդրում եմ Ձեզ, թանկագին պարոն, հաւատալ իմ անմնացորդ նուիրմանը:

Ա. Էնֆիյաջեանց

Պատասխան, 27 դեկտեմբերի, 1922

Թիւ **1836**

Ներո՛ղ եղէք, որ ես չտիրապետելով իրադրութեանը, ձգձգեցի հոկտեմբերի 16-ին գրուած Ձեր նամակի պատասխանը:

Ձեր հեռագիրը ստանալուց յետոյ ես ձեռնարկել էի բոլոր անհրաժեշտ քայլերը՝ դիմելով անձնագրերի ստուգման դաշնակցային գրասենեակին՝ Բաթումում մնացած Ձեր հարազատներին, Կոստանդնուպոլիս գալու հնարաւորութիւն տալու նպատակով:

Եւ երբ նրանք ժամանեցին այստեղ, ես նրանց անձնագրեր յանձնեցի Բրիւսելի համար: Հիմա նրանք վաղուց արդէն Ձեր կողքին են, վստահաբար: Խնդրում եմ ընդունել, եւ այլն:

THE EASTERN TELEGRAPH COMPANY, LIMITED.

PERA STATION.

(Message Forms 5/25)

(Received Message Form.)

By H. KELECHIAN

12 Novembre 1922

TELEGRAM From Paris

N° **586/8**

Words 79

Date 8

Time 12/40

To Tahtadjian Hôtel Tokatlian Constantinople

Prière mettre disposition commission assistance patriarcat cinq mille livres turques provenant excédent recettes consulaires pour secourir ceux qui sont obligés de quitter Constantinople stop accordez de même larges facilités pour passeports et visas aux indigents porteurs certificats etanants commission assistance stop demandez droit nommer votre représentant auprès cette commission pour contrôler emploi fonds alloues et délivrance certificats indigence stop vous prions aussi faire rechercher gare Sassouni Ephrem Sarkissian et leur remettre 75 livres turques chacun.

Aharonian

THE EASTERN TELEGRAPH COMPANY, LIMITED.
PERA STATION.

(Message Forms 5/25)

(Received Message Form.)

Հ. Քելեշեանի մօտ
12 նոյեմբերի, 1922

Հեռագիր Փարիզից

Թիւ **586/8**

Words 79

Ամսաթիւ 8

Ժամը 12/40

Թահթաճեանին Թոքաթեան հիւրանոց, Կոստանդնուպոլիս

Խնդրանք տրամադրել յանձնախումբ աջակցութիւն պատրիարքարան թուրքական հինգ հազար լիրա հիւպատոսական բիւջէից օգնելու համար նրանց, ովքեր ստիպուած են հեռանալ Կոստանդնուպոլսից դադար դիւրին դարձնել նաեւ անձնագրերի եւ մուտքի արտօնագրերի տրամադրումը օգնութեան յանձնախմբի կողմից հաւաստագիր ստացած ընչազուրկներին դադար պահանջեք այդ յանձնախմբում ձեր ներկայացուցիչն ունենալու իրաւունքը վերահսկելու համար տրամադրուող գումարը եւ հաւաստագրերի տրամադրումն ընչազուրկներին դադար խնդրում ենք նաեւ կարգադրել որ կայարանում գտնեն Սասունի Եփրեմ Սարգիսեանին ու իւրաքանչիւրին 75 թուրքական լիրա տան:

Ահարոնեան

Հ[ԱՅԱՍՏԱՆԻ] Հ[ԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ] ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ
ՊՈԼՍՈՅ ԴԻԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԵԱՆ ԿԻՑ
ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, 13 Նոյեմբեր 1922

Վսեմաշուք

Տիար Ֆ. Թահթաճեան

Աստ

Ներփակ կը յղեմ Սեպտ[եմբեր] եւ Հոկտ[եմբեր] ամիսներու մուտքի եւ ծախսի հաշիւները: Կը ներեք որ սովորականէն աւելի ուշացան անոնք. ծանօթ է այն զբաղման կամքը որ օրական մինչեւ 12-16 ժամի կը հասնի եւ առօրեայ այս ծանր աշխատանքը կը յամեցնէ միւս բոլորը:

Այդ հաշիւներու քննութիւնը պիտի ցուցնէ որ դժբաղդաբար երկու ամիսուայ մօտ 24000 ոսկիի հասոյթին մօտ 783,5 ոսկիի սնտուկի բաց մը կայ: Բաց մը որ որչափ ցաւալի գրեթէ նոյնչափ ալ անխուսափելի էր, նկատի առած 20-25 անգամ աշխատանքի մեծանալը. ժողովրդային խուճապի մէջ, անոր կատարուելու ստիպողականութիւնը եւ մեր համեստ հիւպատոսարանի այդչափ մեծ աշխատանքի մը համար նախապատրաստական կազմակերպութիւն մը ունենալու անկարելիութիւնը:

Այնպէս որ մէկ օրէ միւս օր մեր մէկ քարտուղարին ստիպուեցանք տաս հատ օգնական տալ եւ ամենուն դիմումներուն գոհացում տալու համար մէկ երկու յարգելի անձնաւորութիւններ (Տօքթ. Բարսեղեան եւ Պ. Արարատեան եւն.) իմ կերակուրի ժամանակ իսկ անցագրի խնդրածնիդ գոհացում տալ աշխատած են ինքնաբերաբար: Այս թոհուրոհին մէջ, ահա անխուսափելի էր նաեւ այն մի քանի անշահ արարքները (կեղծել գիրս, առանց դրամը յանձնելու անցագիր գրել տալ եւն.), որոնք պատահեցան եւ որոց առջեւը առնել ո եւ է մէկու համար անկարելի էր:

Ձեր վսեմութեան ծանօթ է նոյնպէս որ նոյն իսկ մեզմէ հին եւ մեծ հիւպատոսարաններ ալ որոնք գուցէ մեզի չափ ալ զբաղած չ'էին ունեցան այս կարգի ցաւալի պարագաներ:

Հետեւաբար իմ ծանօթ նկարագիրս Ձեր Վսեմութեան համար բաւարար երաշխաւորութիւն մը կազմելով՝ որ գործին մէջ եմ կողմէ անպարկեշտ բան մը չեկայ, միւս կողմէ կարողութեան թերիին երբեք զայն վերագրել կարելի չ'ըլլալով՝ ստիպուած պէտք է ընդունիլ զայն իբր անխուսափելի կարիք մը, որ ո՛րչափ ցաւալի, ա՛յնչափ գոյացած հասոյթին քով ճղճիմ կը մնայ:

Միւս կողմէ յոյս ունիմ թէ այս պարագաները պատուիրակութեան մօտ պարգելով մէկտեղ, Ձեր Վսեմութիւնը բարի պիտի ըլլայ արդարութեան հարկը բացատրելու եւ յայտարարելու իրեն՝ իմ այս երկու ամիսուայ մէջ ցոյց տուած արտակարգ աշխատանքին եւ եռանդին մասին. երբ ուրիշներ չ'ունենալով մէկտեղ ինծի չափ վտանգուած ըլլալու վիճակ, յարմար դատեցին հեռանալ քաղաքէս, իսկ ես ներշնչուած իմ պարտականութեան զգացումէս եւ մանաւանդ Ձեր բարձր օրինակէ՝ փոխանակ փախչելու եւ իմ անձիս ապահովութիւնը երաշխաւորելու – ինչ որ շատ բնական եւ ոչ այպանելի բան մը պիտի ըլլար – Ձեր կողքին եւ պատնէշի վրայ մնացի եւ լկիչ մտահոգութեանց մէջ օրական 12-16 աշխատելու կորովը ունեցայ: Հետեւաբար, Վսեմաշուք տէր, կը մտածեմ թէ ներկայ պարագաներու մէջ, գուցէ անպատեհ չ'ըլլար նաեւ այս կէտին պարզուիլը Պատուիրակութեան եւ իրմէ ինդրել արդար կարգադրութիւն մը:

Խորին յարգանք
Ս[ատթէս] Էպլիդաթեան

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՀԱՄԱՐ **8298**

Կ. Պոլիս, 14 Նոյեմբեր 1922

Արտասահման ղրկուելիք հայ կարօտ գաղթականներուն ուղեւորութեան ծախքերուն գործածուելու նպատակով Փարիզի Հ. Հ. Պատուիրակութեան կարգադրութեամբ ղրկուած 5000 հինգհազար ոսկիին ի հաշիւ ստացանք տեղւոյս Դիւանագիտական Ներկայացուցիչ Պ. Ֆ. Թահթաճեանէ 3000 երեք հազար օսմ[անեան] ոսկի թղթադրամ:

Պատրիարք Հայոց
Չաւեն Արքեպիսկոպոս

17 Նոյեմբեր 1922

N° 1788

Հ. Հ. Պատուիրակութեան,
Փարիզ

Ներփակ պատիւ ունիմ ուղարկելու Ձեզ համաձայնական ոստիկանութեան պետից այսօր ստացած մի պատասխանս, որ օրուայ կացութեան տեսակետից շատ յատկանշական է:

Այդ պատասխանի մէջ ասուած է համաձայնական ոստիկանութիւնը չի կարող միջամտել խնդրոյ առարկայ եղած գործի մէջ:

Ահա թէ ո՞րն է այդ միտքը:

Սրանից քանի մը օր առաջ, երիտասարդ Հայ կին մը յանձնեց ինձ խնդրագիր մը իւր ամուսնոյ Յովսէպ Սահակեանի անունից, որ Օգոստոսից ի վեր բանտ է դրուած թուրքերի կողմից: Սահակեանի պատմութիւնը հետեւեալն է: 17 տարի Ամերիկայում ապրելէ յետոյ, 1920 թուի վերջերը, Հայ անցագրով, եկել է Պոլիս, որպէս զի գնայ իւր ծնողաց, Պուրսայի շրջակայքը: Հոն հասնելով, իմացել է, որ ծնողքը չկային այլ եւս...

Վերադարձել է Պոլիս եւ այստեղ Օրթաքէոյում ամուսնացել է հայ ազնից վերայ:

Ուզում էր յետ գնալ Ամերիկա, բայց երազը պակասած լինելուն, նորից գնացել է Պուրսա, որտեղ բաց է արել նպարավաճառի փոքրիկ մի խանութ, վերջին դէպքերի բերմամբ, շատերի նման ինքն ալ փախել է այնտեղից, բայց Պոլիս հասնելուն, երկու թուրք կանանց ցուցումների վրայ, թուրք ոստիկանները զինքը ձերբակալել են եւ առնելով իւր մօտից 4 գորգ, կանացի շորեր եւ 300ից անէլ լիրա, տարել զինքը բանտ են նստեցրել, որտեղ մնում է մինչեւ հիմա: Ըստ իւր խնդրագրի, տակաւին զինքը չեն հարցաքննել իսկ:

Այդ խնդրագիրը իմ երկար եւ motive գրութեամբ ուղարկել էի համաձայնական ոստիկանապետին, որը այժմ ինձ յայտնում է թէ՝ իրանք միջամտելու իրաւունք չունին: Պատրիարքից լսել էի անցեալները, թէ ճիշդ այդպէս էին պատասխանել եւ մի քանի խնուսցի հայերի մասին, որոնք իբրեւ ջարդարար բռնուած եւ բանտ էին դրուած: Այդ առթիւ Պատրիարքից լսել էի, որ այդպիսի դէպքեր տեղի ունեցել էին եւ ինքը գրել էր Ազգային պատուիրակութեան: Հիմա որ քաղաքին գրեթէ տիրացել են միլիճիք, այդ կացութիւնը առանձին ուշադրութեան արժանի է:

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
MISSION DIPLOMATIQUE

Constantinople,
le 18 Novembre 1922

Confidentielle et urgente

A Son Excellence,
Le Général Pellé,
Haut Commissaire de France,

Monsieur le Haut Commissaire,
Ainsi que Vous le savez, je me trouve à Constantinople, depuis l'Armistice, en qualité de Représentant Diplomatique de la République Arménienne, accrédité auprès des Hauts Commissaires des Grandes Puissances Alliées.

Depuis la crise de Septembre dernier, le petit office consulaire de ma Mission est envahi journallement par des Arméniens qui veulent s'en aller d'ici.

Alors que mes compatriotes disposant de moyens prennent de préférence des passeports de protégés spéciaux, ceux qui se présentent à ma section consulaire sont d'ordinaire des déracinés et des déshérités - et Dieu sait s'il y en a ici !- à qui je signe des passes gratuits ou à tarif très réduit.

Ces titres de voyage sont valables pour un seul voyage.

Cette situation et les événements politiques qui se précipitent ici, avaient été cause que j'avais fait part à notre Délégation à Paris de certaines appréhensions, ayant trait à l'exercice de mes fonctions et à ma sécurité.

Par une dépêche datée du 15 courant, notre dite Délégation m'informe qu'elle a fait les démarches nécessaires auprès du Gouvernement français, et m'engage à m'adresser à Votre Excellence.

Très heureux d'avoir appris cette bonne nouvelle, je viens Vous prier respectueusement, mon Général, de vouloir bien m'accorder la protection du Haut Commissariat de France, tant pour le temps que je pourrai rester encore ici, que pour mon départ éventuel pour la France, où j'aurai, avant tout, à me soigner d'une grave affection de cœur, dont je souffre.

Connaissant bien les sympathies que Vous nourrissez pour le malheureux peuple, que je représente, je suis sûr d'avance, mon Général, que Vous voudrez bien m'accorder Votre protection la plus efficace, et Vous en exprime ma plus vive gratitude.

Veuillez agréer, Monsieur le Haut Commissaire, les assurances de ma très respectueuse considération.

Հայաստանի Հանրապետության
Դիւանագիտական առաքելութիւն

Կոստանդնուպոլիս,
18 նոյեմբերի, 1922

Գաղտնի եւ հրատապ

Ֆրանսիայի դիւանագիտական ներկայացուցիչ
Նորին Գերագանցութիւն
Գեներալ Պելլէին

Պարո՛ն դիւանագիտական ներկայացուցիչ,
ԻնչպէսյայտնիէՁեզ, ՉինադադարիցյետոյեսգտնումեմԿոստանդնուպոլսում, որտեղ որպէս Հայաստանի Հանրապետութեան հաւատարմագրուած դիւանագիտական ներկայացուցիչ՝ կոչուած եմ իմ երկիրը ներկայացնելու Դաշնակից պետութիւնների ներկայացուցչութիւններին:

Սեպտեմբերի ճգնաժամից յետոյ իմ Առաքելութեան հիւպատոսական փոքրիկ գրասենեակն ամէն օր լիքն է հայորդիներով, որոնք կամենում են հեռանալ այստեղից:

Մինչ նիւթապէս ապահովուած իմ հայրենակիցները գերադասում են յատուկ հովանաւորեալների անձնագրեր ձեռք բերել, հիւպատոսական ծառայութեանը դիմողները սովորաբար տեղահանուած, ունեզրկուած մարդիկ են - ու Աստուած գիտի, թէ ինչ մեծ թիւ են սրանք կազմում այստեղ - մարդիկ, որոնց համար ես անվճար կամ զեղչուած գնով անցաթղթեր եմ ստորագրում: Այդ արտօնագրերը վաւերական են ընդամենը մի ուղեւորութեան համար:

Ելնելով ստեղծուած իրադրութիւնից եւ այստեղ ծայր առած քաղաքական անցքերից՝ ես Փարիզի մեր պատուիրակութեանը հաղորդեցի պաշտօնական պարտականութիւններիս ի կատար ածման եւ անձիս անվտանգութեան առնչութեամբ ունեցած իմ մտավախութիւնները:

Այսամսուայ 15-ին տարածած իր հաղորդագրութեամբ մեր պատուիրակութիւնն ինձ տեղեկացնում է, որ անհրաժեշտ քայլեր է ձեռնարկել՝ դիմելով ֆրանսիական կառավարութեանը, եւ ինձ յանձնարարում է դիմել Ձերոյ Գերագանցութեանը:

Մեծ ուրախութեամբ ստանալով այս բարի լուրը՝ ես խորին յարգանքով դիմում եմ Ձեզ, պարոն Գեներալ, Ձեզնից հայցելով ֆրանսիական դիւանագիտական ներկայացուցչութեան հովանաւորութիւնը՝ ինչպէս այստեղ գտնուելու ողջ ժամանակամիջոցի, այնպէս էլ իմ հաւանական ուղեւորութեան համար Ֆրանսիա, որտեղ ես նախեւառաջ պետք է բուժուեմ սրտային լուրջ հիւանդութիւնից:

Քաջատեղեակ Ձեր տածած համակրանքին այն դժբախտ ժողովրդի հանդէպ, որի զաւակն եմ ես, պարոն Գեներալ, ես ի սկզբանէ վստահ եմ, որ Դուք կը բարեհաճէք ինձ արժանացնել Ձեր աւելի քան արդիւնաւետ հովանաւորութեանը, եւ ցանկանում եմ իմ խորին երախտագիտութիւնը յայտնել Ձեզ այդ առիթով:

Թոյլ տուէք արտայայտել, պարոն դիւանագիտական ներկայացուցիչ, իմ խորին եւ անվերապահ ակնածանքը Ձեր հանդէպ:

27 Նոյեմբեր 1922

№ 1791

Հ. Հ. Պատուիրակութեան,

Վերջերս Ձեզ ուղղած մի տեղեկագրութեամբ անցողակի յիշել էի, որ՝ անցեալ Հոկտեմբերի մէջ՝ այստեղ ազգային իշխանութեանց կողմէ դիմումներ էին եղած համաձայնական Բ. Քոմիսիւնների, որպէս զի հեշտացնեն Պօլսից մեկնիլ ուզող հայերի ճանապարհորդութիւնը:

Այս անգամ ձեռք բերի 9 Հոկտեմբերի Համազգայնի խողովակով կատարուած այդ դիմումի (վատ ֆրանսերէնով մը խմբագրուած), ինչպէս նաեւ իտալական Բ. Քոմիսիւնի 12 Հոկտեմբերի տուած պատասխանի մը պատճենները, զորս կը ներփակեմ:

Թեւ երկու շաբաթից ի վեր մեկնողների թիւը շատ պակասել է, բայց եւ այնպէս պէտք է ասեմ, որ յոյն իշխանութիւնք վիզա տալիս են խնամատարութեան կողմից կազմուած խմբովին ցուցակների, ինչպէս նաեւ պատրիարքարանի ինքնութեան վկայականների վերայ:

Այդ տեսակ թղթերը վիզա անում է եւ interallié contrôleը, որով շատ հեշտացել է կայաններում պատսպարուող գաղթականների եւ որբանոցների որբերի մեկնումը:

Այդպիսիներին խնամատարութիւնը աշխատում է շուտով évacuer անել, որպէս զի ազատուի բաց մնացած 4-5 կայանների բեռից եւս:

Near East Relief-ն ալ, որբերին ուղարկում է Յունաստան մի եւ նոյն ձեւով, այն է խմբովին ցուցակներով: Լսում եմ, որ Ամերիկացիք համաձայնութիւն են կայացրել Յոյն կառավարութեան հետ եւ իրանց Հայ որբերը պիտի հաստատուին Mont-Athos-ում: 2000-ի չափ արդէն ուղարկել են:

Պօլսաբնակ հայերից այժմ փախչողները շատ քիչ են: Մտքերը հանգստացել են եւ մարդիկ սպասում են:

Լաւ որ այդպէս է, վասն զի խուճապային փախուստը քանդում էր այնպիսիների համար, որոնք լքում էին իրանց գոյքը, գործերը եւ ահագին շահերը:

Երեկուայ թերթերի մէջ կարդացի սթաթիսթիք տեղեկութիւններ, որոնց համաձայն այս տեղից մեկնել են տեղի օտար երկիր, Սեպտեմբերից ի վեր, մօտ 200 հազար հոգի, որոնց միայն 15 հազարը հայ է եղել, գնացողների մէջ

150 հազարի չափ Յոյն կայ եղել, որոնց մեծագոյն մասը – սեւ ծովից եկած: - Չեմ գիտեր թէ յառաջիկան ի՞նչ է վերապահել մեզ, ցանկալի պիտի լինէր, որ խուճապային եւ մասսայական exode-ը չ'կրկնուէր. բայց ի նկատի պէտք է ունենանք, որ Բալքանեան երկիրներից միայն Յունաստանն է, որ ինչ ինչ սահմանափակումներով ընդունում է հայ գաղթականներին, Բուլկար ներկայացուցիչը, ահա մի ամիս է՝ վիզա չի տալիս եւ այդ կարգադրութիւնը Սօֆիայից է ստացուել, ինչպէս գրել էր քանիցս, վիզա չեն տալիս եւ Ռումանիան ու Սերբիան, որոնք սակայն կարող էին առանց իրանց ո եւ է անպատեհութեան, քիչ աւելի մարդասէր վերաբերմունք ունենալ դէպի մեզ, քանի որ ընդի. Պատերազմը չափազանց ընդարձակեց այդ երկու երկիրները: Ի դէպ, լսեցի որ Ռումանիայում բոլորովին դատարկ են 2-3 ամառանոցներ (stations balnéaires), որտեղ անցեալ ձմեռ քանի մը հազար Ռուս գաղթականներ էին պատսպարուած:

Աւելորդ չէ գուցէ, որ զայդ գիտենանք:

Գիտեք որ Րէֆէթ փաշան Պօլիս գալէն ի վեր, հետզհետէ envahissementի ենթարկում էր բոլոր տեղական իշխանութիւնը:

Նա արդէն շատ բան ձեռք անցուցեր էր, երբ երէկ թերթերի մէջ communiqué մը դուրս եկաւ թէ՛ համաձայնութիւն մը կայացել է արդէն ոստիկանութեան մասին: Եթէ՝ ինչպէս շատերը հասկանում են՝ համաձայնականները désintéressés լինին Տաճկահպատակներից եւ իրանց contrôlը վերապահեն միայն օտարականներին, այն ժամանակ մեկնիլ ուզող Տաճկահպատակ Յոյներն ու հայերը ստիպուած պիտի լինին թուրք իշխանութեան դիմել, ինչ որ ինքն ըստ ինքեան բաւական է, որ դադարեցնէ իւր գործունեութիւնը իր հիւպատոսական բաժինը, որտեղից ցարդ անցագիր ստացողները գրեթէ առանց Տաճկահպատակ Հայեր են: Երէկ երբ խօսում էի Յունական ք. Զօմիսերի հետ այդ մասին, տեսայ որ նա չափազանց յոռետես է, այնպէս է հաւատացած, որ առանց սպասելու conférenceի վերջին, տեղույս համաձայնական իշխանութիւնը արդէն իսկ թողածի պէս են իրանց contrôlը տեղացի քրիստոնեայ ժողովուրդի վերաբերմամբ:

France
Angleterre
N° 1794-1795

Le 29 Novembre 1922

Monsieur le Haut-Commissaire,

Les journaux turcs de ce matin ont publié un long télégramme de l'Agence d'Anatolie, où il est question d'un prétendu complot ourdi par des Arméniens, dans les premiers jours de ce mois, à Vintimille (en Italie). Des conspirateurs, réunis en cette ville, auraient arrêté d'envoyer une vingtaine de Comitadjis à Constantinople, en vue de susciter ici des troubles et excès ("massacres" d'après le texte) entre turcs et chrétiens ; et cela, afin de provoquer une intervention étrangère. Ces Comitadjis seraient en même temps chargés d'attenter à la vie de hauts dignitaires du gouvernement nationaliste.

D'après ce télégramme tendancieux, dont la traduction parut dans le "Stamboul", on aurait été renseigné sur tous les détails de ce prétendu complot de source sue et officielle.

Je me fais un devoir de signaler à la bienveillante attention de Votre Excellence ce télégramme de l'Agence d'Anatolie (Agence semi officielle), parce que des publications de cette nature ne sont pas précisément ce qu'il faut en ce moment, pour rassurer les esprits alarmés et désespérés.

Il est à peine nécessaire de dire que tout ce prétendu complot me fait l'effet d'une fable extravagante, inventée de toutes pièces par des gens malintentionnés.

Parmi les noms cités dans le télégramme, il y en a qui appartiennent aux membres des deux Délégations Arméniennes à Paris. Aussi me suis-je empressé de signaler la chose à notre Délégation à Paris qui ne tardera pas -j'en suis certain- à la démentir de la façon la plus formelle ; car je ne peux pas même admettre qu'il puisse se trouver parmi mes compatriotes des monstres, qui seraient capables d'ourdir et d'exécuter des crimes aussi ignobles.

Veuillez agréer, Monsieur le Haut-Commissaire, etc.

Ֆրանսիա
Անգլիա
Թիւ **1794-1795**

29 նոյեմբերի, 1922

Պարոն դիւանագիտական ներկայացուցիչ,

Այս առաւօտ թուրքական օրաթերթերն Անատոլիայի գործակալութիւնից ստացուած մի երկար հեռագիր են հրապարակել, որում նշուում է Վենտիմիլիաում (Իտալիայում) ամսի սկզբին Նախապատրաստուող կարծեցեալ դաւադրութեան մասին, որի Նախաձեռնողներն իբրեւ թէ հայեր են: Այդ քաղաքում հաւաքուած դաւադիրներն իբրեւ թէ որոշել են շուրջ քսան ահաբեկիչ ուղարկել Կոստանդնուպոլիս, որպէսզի այստեղ խռովութիւն եւ այլ ծայրայեղ քայլեր (ըստ հեռագրի՝ «կոտորածներ») հրահրեն հայերի եւ թուրքերի միջեւ, որոնց վերջնականատակն իբրեւ թէ օտարերկրեայ ներկայացուցչութիւնների միջամտութիւնը յարուցելն է: Միեւնոյն ժամանակ այդ ահաբեկիչներին իբրեւ թէ յանձնարարուած է ոտնձգութիւն գործել ազգայնական կառավարութեան բարձրաստիճան պաշտօնեաների դէմ:

Որոշակի մտայնութիւն հետապնդող այս հեռագրի համաձայն, որի թարգմանութիւնը լոյս է տեսել «Ստամբուլում», կարծեցեալ դաւադրութեան նուազագոյն մանրամասնութիւնների վերաբերեալ այս տեղեկութիւնը հաւաստի եւ պաշտօնական աղբիւրներ են տրամադրել:

Իմ պարտքն եմ համարում Ձերդ Գերագանցութեան բարեհաճ ուշադրութիւնը սեւեռել Անատոլիայի գործակալութեան (որը պաշտօնական գործակալութիւն չէ) տարածած այս հեռագրի վրայ, քանզի այսօր Նմանօրինակ հրապարակումներն այնքան էլ չեն համապատասխանում պահի թելադրանքին՝ քաղաքացիների տագնապած եւ ապակողմնորոշուած մտքերը փարատելու համար: Աւելորդ է, թերեւս, ասել, որ կարծեցեալ դաւադրութիւնն ինձ վրայ արտառոց մի առասպելի տպաւորութիւն է գործում, որ ծայրից ծայր չարամիտ անձանց յօրինուածքն է:

Ի թիւս հեռագրում յիշատակուող անունների՝ առկայ են Փարիզի երկու հայկական պատուիրակութիւնների անդամների անունները: Ուստի՝ ես փութացի հաղորդել դա Փարիզի մեր պատուիրակութեանը, որն էլ, վստահ եմ, անյապաղ եւ ամենապաշտօնական ձեւով կհերքի վերոյիշեալ լուրը, քանզի ինձ համար անընդունելի է այն միտքը, որ իմ հայրենակիցների շարքերում կարող են գտնուել այնպիսի ճիւղներ, որոնք ընդունակ կը լինեն Նման զագրելի ոճիրներ նիւթելու եւ ի կատար ածելու:

Խնդրում եմ ընդունել, պարոն դիւանագիտական ներկայացուցիչ, եւ այլն:

30 Նոյեմբեր 1922

N° 1796

Հ. Հ. Պատուիրակութեան,
Փարիզ

Իբրեւ պարտականութիւն երեկուայ հեռագրիս եւ տեղեկագրիս, պատիւ ունիմ ներկայիւ կցելու բ. Քօմիսէրների այդ մասին ուղղած գրութեանս պատճենը, ինչպէս նաեւ այդ երեւակայական դաւադրութեան մասին մի քանի կտրոններ: Ուշադրութեան արժանի է “Stamboul”ը ոչ մի commentaire չէ արել, իսկ “Journal d’Orient”ի վերնագիրը եւ նրան յաջորդող յառաջաբանը մեզ աննպաստ են: Սակայն այդ կարգի թերթերի ուղղամտութեան վրայ վստահիլ արդէն չէ կարելի:

Երեկ երեկոյ Ս. Պատրիարքը ինձ ասաց, որ գնացել էր Րէֆէթ փաշայի մօտ այդ անհեթեթ հեռագրի առթիւ եւ թէ Րէֆէթ փաշան խոստացել էր, որ այսօր հերքման պէս բան մը պիտի տար թերթերի:

Մինչդեռ իմ ներփակած կտրոններից պիտի տեսնեք, որ Րէֆէթ փաշան իւր communiquéի մէջ վեր է հանում, որ պատրիարքը առանձին մի պատուիրակութեամբ գնացել է մօտը, pour confirmer les sentiments de dévouement et de fidélité que les Arméniens de Constantinople nourrissent pour leur gouvernement et pour dire que, “ces individus” animés d’un esprit nuisible sont maudits par les Arméniens de Constantinople.

Երեւի պատրիարքի յայտնած մտքերը այս անգամ եւս - “pour le besoin de leur cause” - խեղաթիւրուած են:

Պատրիարքը ասել է Րէֆէթ փաշային որ Agence d’Anatolieի հեռագիրը բոլորովին սուտ ու անհիմն է: Իբրեւ դրա ապացոյց, յայտնել է թէ՛ Անդրանիկը վաղուց է որ Ամերիկայում է, թէ նա ու եւ է յարաբերութիւն չունի Պ. Ահարոնեանի հետ, թէ Փաշալեան եւ Զօպանեան դաշնակցականներ չեն, եւն.:

Ըստ Չաւէն պատրիարքի վկայութեան, Րէֆէթ փաշան իրան ասել է, որ այդ հեռագրի մասին ինքը իմացել է դեռ սրանից 15 օր յառաջ, բայց կարեւորութիւն չ’տալով, անհետեւանք է թողել, իսկ հիմա հեռագիրը Անգարայից եկել եւ հրատարակուել է առանց իրան գիտակցութեան:

Այդպէս է խօսել պատրիարքին, իսկ communiqué ուրիշ բան է ասում:

Եւ որովհետեւ ըստ երեւոյթին այն հեռագիրը այս միջոցիս մէջտեղ է նետուել, զմեզ վարկաբեկելու համար, իմ կարծիքով, անպայման հարկաւոր է, որ երկու պատուիրակութիւնք միասին ներքին այդ առասպելը եւ այդ առթիւ ասեն թէ անվայել է նորից ի գործ դնել Համիտական ժամանակները յիշեցնող այդպիսի միջոցներ:

Գրել էի երէկ այս մասին associated pressի ներկայացուցիչ Պ. Միլլսի հետ իմ ունեցած երկար տեսակցութեան մասին:

Պ. Միլլսը այս առաւօտ յայտնեց ինձ, որ երէկ գիշեր հեռագրել է Ամերիկա, հերքելու համար այդ տգեղ manoeuvre: Եթէ հետեւիք, կը կարդաք նրա հերքումը:

Այսօր մտերմօրէն կարդացի նրա ք. Զօմիսերների ուղղած գրութեան պատճենը:

1 Դեկտեմբեր 1922
(Աղեքսանդրիա) Ուր[բաթ]

Ազնուափայլ Ֆ. Թահթաճեան,
Ներկայացուցիչ ի Հ. Կառավարութեան
Կ. Պօլիս

Ստորագրեալս՝ Գառնիկ Սըվաճեան այս անգամ ձեզ կը դրկեմ պանք օթթօմանի վրայ քաշուած (7) անգլիական ոսկինոց չէք մը՝ Արթաքի Սվաճեանի (այլ անուամբ) Պօրուճեանի անուանը, նկատի առնելով տեղւոյդ դժնդակ եւ անտանելի կացութիւնը. դերեւս իրենց ձեռքը չի հասնի՝ ամենահարմար միջոցը այս դատելով՝ ուղղակի ձեր բարձր անուանը դրկեցի՝ գոնէ այս վերջի պահուն իրենց ցաւալի նեղութեանց պզտիկ սփոփանք մը ըլլալու համար:

Լիահոյս եմ որ այս ձեր անհատին խնդրանքը չի մերժելով իւր նպատակին պիտի հասցընէք՝ որ արդէն ինքը անձամբ ձեզ պիտի ներկայանայ:

Վստահ եմ որ ընդունեցաք այն երկու նամակները մին գրուած հայերէն քրեթէ չորս օր առաջ Սվաճեան եղբարձ կողմանէ, եւ միւսն ալ ամսոյս 28-ի գրուած ֆռանսերէն՝ ձեր մէկ բարեկամի կողմանէ՝ երկուքն ալ թախանձագին խնդրելով ձեր բարձր Ազնուութենէն. նկատի առնելով տեղւոյդ ծանր կացութիւնը՝ եւ ապրելու անտանելիութիւնը՝ կարելին եղածը ընելու՝ դիւրութեամբ մը՝ բասի խնդիրը աւարտելու մեր եղբօր ընտանիքին եւ զաւակներուն՝ նոյնպէս մեր հարսին, որոնց ատրեսները արդէն հիշուած են ֆռանսերէն նամակին մէջ:

Մեր ընտանիքի բշտուած բեկորներէն՝ ատոնք միայն մնացած են, որ եթէ չազատենք կորսուելու դատապարտուած են:

Լիահոյս եմք որ ձեր բարձր Ազնուութիւնը՝ եթէ ուզէ չպտի զլանայ այդ խեղճ մնացած Հայաստանի բեկորներուն կարելին ընելու մէկ միջոց մը գտնալու եւ բասերին հանելով դէպի մեզ դրկել յԱղեքսանդրիա: Եւ մենք յանձնառու ըլլալով իրենց վերաբերեալ ամէն բանի կատարման:

Կը մնամք Ձերդ հաւատարիմ հպատակներ եւ կը խնդրենք որ ընդունիք մեր երախտագիտական զգացումները:

Հայաստանի Հանրապետութեան հպատակ զաւակ

Գառնիկ Սվաճեան եղբարք
(Աղեքսանդրիա) Եգիպտոս
Ներփակ չէքին թիւն Է
(27/623/76.365)

Հասցէս. Karnig Sevadjan
% Djébédjian
Rue de France N° 18
Alexandrie

Haut Commissariat Britannique. Constantinople.

le 4 Décembre 1922

N° **8127/8127/22.**

Monsieur le Représentant Diplomatique,

J'ai eu l'honneur de recevoir la note en date du 29 Novembre par laquelle vous avez bien voulu attirer mon attention sur un télégramme de l'Agence d'Anatolie concernant un prétendu complot Arménien.

Je m'empresse de vous informer en réponse que je n'ai pas manqué de porter le contenu de ce télégramme à la connaissance de mon Gouvernement. J'ai également fait publier par la presse locale un démenti de cette partie des allégations y parues qui fut de la compétence des Autorités Britanniques.

Veuillez agréer, Monsieur le Représentant Diplomatique, l'assurance de ma haute considération.

Nevile Henderson
HAUT COMMISSAIRE AD INTERIM

Au Représentant Diplomatique
de la République Arménienne,
Constantinople

Կոստանդնուպոլսի Բրիտանական ներկայացուցչություն

4 դեկտեմբերի, 1922

Թիւ **8127/8127/22.**

Պարո՛ն դիւանագիտական ներկայացուցիչ,
Պատիւ ունեցայ ստանալու նոյեմբերի 29-ի Ձեր հաղորդագրութիւնը, որով
Դուք ցանկացել էք իմ ուշադրութիւնը սեւեռել Անատոլիայի գործակալութեան
տարածած հեռագրի վրայ՝ կարծեցեալ հայկական դաւադրութեան
վերաբերեալ:

Աճապարում եմ իմ այս պատասխանով Ձեզ տեղեկացնել, որ ես անյապաղ
իմ կառավարութեանը իրազեկեցի վերոյիշեալ հեռագրի բովանդակութեանը:
Ես յանձնարարեցի նաեւ հերքում տալել տեղական մամուլում՝ ժխտելով
պնդումների այն մասը, որը բխում էր բրիտանական իշխանութիւնների
իրաւասութիւնից:

Պարո՛ն դիւանագիտական ներկայացուցիչ, խնդրում եմ Ձեզ ընդունել
յարգանացս հաւաստիքը:

Դիւանագիտական ներկայացուցչի պաշտօնակատար
Նելիլ Հենդերսոն

Գլխաւոր կոմիսար
Կոստանդնուպոլսում
Հայաստանի Հանրապետութեան
Դիւանագիտական ներկայացուցչին

PATRIARCAT ARMÉNIEN
CONSTANTINOPLÉ
N° 3970

GRATIS

CERTIFICAT D'IDENTITÉ

PATRIARCAT ARMÉNIEN certifie que le porteur du présent,
Mr. Roupén Démirian âgé de 46 ans, originaire
De Rodosto, domicilié à Péra
Désirant se rendre en Bulgarie, relève de la nationalité Arménienne.
En foi de quoi le présent certificat lui a été délivré.
Fait à Constantinople, le 5/12/1922.

Signature du porteur

LE VICAIRE PATRIARCAL
Dertad Boyadjian

Հայոց Պատրիարքարան
Կոստանդնուպոլիս
Թիվ 3970

ԱՆՎՃԱՐ

ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԸ հաստատում է, որ սոյն փաստաթղթի տեր
քառասունվեցամեայ տիար Ռուբեն Դեմիրեանը,
Ով ծնունդով Ռոդոսթոյից է, բնակվում է Բերայում,
Եւ ցանկանում է մեկնել Բուլղարիա, հայկական քաղաքացիութիւն ունի,
Ի հաստատումն ինչի նրան տրուել է սոյն հաւաստագիրը:
Կոստանդնուպոլիս, 5/12/1922

Հաւաստագրի տիրոջ ստորագրութիւնը

Պատրիարքական տեղապահ
Տ. Տրդատ Քիւյ. Պոյաճեան

Arch. Deleg. Turchia 102, fasc. 533 708r
Lausanne, le 6 décembre 1922

Copie de la note adressée aux Ministres des Affaires Etrangères de Grande-Bretagne, de France et d'Italie pour protester contre le prétendu complot de Vintimille.

Excellence,

Les Journaux turcs de Constantinople ont publié en date du 28 novembre une dépêche transmise d'Angora par l'Agence télégraphique semi-officielle Anatolie, annonçant "que par suite d'un complot ourdi à Vintimille dans les premiers jours de novembre avec participation d'Aharonian, Antranik, Tchobanian et autres, des comitadjis arméniens sont arrivés à Constantinople en vue de susciter des troubles entre Turcs et chrétiens, provoquer par ce moyen une intervention étrangère et attenter en même temps à la vie des hauts fonctionnaires nationalistes". La plus large publicité a été donnée à cette dépêche dans la presse turque de Constantinople, qui l'a fait suivre de commentaires des plus malveillants envers les Arméniens.

Sans nous arrêter sur l'absurdité d'attribuer un rôle de conspirateur au chef de la Délégation de la République d'Arménie, M. Aharonian, qu'il suffise de noter que M. Aharonian n'a jamais été à Vintimille, que le Général Antranik se trouve en Amérique depuis six mois et que M. Tchobanian n'a pas quitté Paris ces derniers temps.

Bien que la nature mensongère de telles allégations soit évidente, nous nous faisons un devoir d'attirer l'attention de Votre Excellence sur le grand danger qui peut en découler pour la sécurité de la population arménienne de Constantinople,

Nous nous permettons de protester énergiquement contre la publication de telles calomnies en priant Votre Excellence de bien vouloir attirer l'attention du Haut-Commissaire de la Grande Bretagne à Constantinople afin qu'une enquête soit faite pour découvrir la source de toutes ces machinations.

Veuillez agréer, Excellence, l'assurance de ma très haute considération.

(signé): A. AHARONIAN
Président de la Délégation
de la République Arménienne

Լոզան, 6 դեկտեմբերի, 1922

Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի Արտաքին գործոց Նախարարութիւններին ուղղուած պաշտօնական հաղորդագրութեան պատճէն՝ ի նշան բողոքի Վենտիմիլիայի կարծեցեալ դաւադրութեան տեղեկութեան դէմ:

Ձե՛րդ Գերագանցութիւն,

Նոյեմբերի 28-ին Կոստանդնուպոլսի թուրքական օրաթերթերն Անգարայից Անատոլիայի ոչ պաշտօնական հեռագրային գործակալութեան միջոցով ստացուած պաշտօնական հաղորդագրութիւն են հրապարակել, որում ասուում է, որ «նոյեմբերի սկզբին Վենտիմիլիայում Ահարոնեանի, Անդրանիկի, Զօպանեանի մասնակցութեամբ ծրագրուած դաւադրութեան նպատակով, հայ comitadjի-ներ՝ ահաբեկիչներ են ժամանել Կոստանդնուպոլիս՝ թուրքերի եւ քրիստոնեաների միջեւ խռովութիւններ հրահրելու, այդ ճանապարհով օտարերկրեայ ներկայացուցչութիւնների միջամտութիւնը յարուցելու, ինչպէս եւ ազգայնական բարձրաստիճան պաշտօնեաների դէմ ոտնձգութիւն գործելու նպատակով»: Վերոյիշեալ հաղորդագրութիւնը մեծապէս տարփողունեց Կոստանդնուպոլսի թուրքական մամուլի ջանքերով, որին հետեւեցին հայերի դէմ ուղղուած յոյժ թշնամական մեկնաբանութիւններ Նոյն այդ մամուլի էջերում:

Զանդրադառնալով Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան պարագլուխ պարոն Ահարոնեանին դաւադրի դեր վերագրելու անհեթեթութեանը՝ բաւարարուենք սոսկ նշելով, որ պարոն Ահարոնեանը երբեւէ Վենտիմիլիայում չի եղել, զօրավար Անդրանիկը վեց ամսից ի վեր գտնուում է Ամերիկայում, իսկ պարոն Զօպանեանը վերջին ժամանակներս չի հեռացել Փարիզից: Թէեւ ակներեւ է վերոյիշեալ պնդումների կեղծ բնոյթը, մեր պարտքն ենք համարում Ձերդ Գերագանցութեան ուշադրութիւնը սեւեռել այն լուրջ վտանգի վրայ, որ կարող է սպառնալ Կոստանդնուպոլսի հայազգի բնակչութեան անվտանգութեանը այս ամէնի հետեւանքով: Մենք մեզ իրաւունք ենք վերապահում մեր աներկբայ բողոքը հնչեցնել՝ այդօրինակ յերիւրանքների հրապարակման դէմ՝ խնդրելով Ձերդ Գերագանցութեանը Կոստանդնուպոլսում Մեծ Բրիտանիայի դիւանագիտական ներկայացուցչի ուշադրութիւնը բեւեռել կատարուածի վրայ, որպէսզի հետաքննութիւն բացուի՝ բոլոր այս մեքենայութիւնների աղբիւրը բացայայտելու նպատակով:

Խնդրում եմ ընդունել, Ձե՛րդ Գերագանցութիւն, յարգանացս հաւաստիքը:

ստորագրութիւնը՝

Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան Նախագահ
Ա. Ահարոնեանի

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
DÉLÉGATION
A LA CONFERENCE DE LA PAIX

34, AVENUE WAGRAM
PARIS, le 8 Դեկտ[եմբեր] 1922

N° 6077/6

Նիւթ
Անատուլի գործակալութեան հեռագիրը

Մեծարգոյ Պարոն Ներկայացուցիչ,
Ստացանք Վենթիմիլի մէջ սարքուած առասպելական դաւադրութեան մը մասին Անատուլի գործակալութեան տուած վրդովեցուցիչ հեռագրի վերաբերմամբ Ձեր գրած հաղորդագրութիւնը:

Երկու պատուիրակութիւններու կողմէ անմիջապէս հերքմնագիր մը ուղարկուեցաւ մամուլին. պատճենը կը գտնաք Ներփակ: Այդ հերքմնագիրը հրատարակուած է Journal des Débats-ի Éclair-ի եւ ուրիշ կարգ մը ֆրանսական, ինչպէս նաեւ բելգիական թերթերու մէջ: Պօղոս Փաշա Նուպարի կողմէ նոյն առիթով տուած մէկ հերքմնագիրը հրատարակուած է “Times”-ի մէջ:

Պատուիրակութիւնս Էնկիւրիի կիսապաշտօնական հեռագրական գործակալութեան այդ հաղորդագրութեան մասին Դաշնակից երեք Մեծ Պետութեանց Արտաքին Գործերու Նախարարներուն ուղղած է դարձեալ բողոքի նօթ մը, որուն պատճենը կը գտնեք նոյնպէս Ներփակ:

Ընդունեցէք, Մեծարգոյ Պարոն Ներկայացուցիչ, խորին յարգանացս հաւաստիքը:

Վ. Հ. Հ. Պատուիրակութեան Նախագահի՝
Ընդհանուր Զարտուղար
Ա. Հանեսեան

Կ. Պոլիս, 13ին Դեկտեմբերի 1922թ.

Հ. Հ. Մեծարգոյ Պարոն
Դիւանագիտական Ներկայացուցիւն,
Կ. Պոլիս

Մեծարգոյ Պարոն,

Պատիւ ունեն խոնարհաբար գեկուցանելու Ձեզ հետեւեալը.

Իմ նախկին աշակերտս, Պ. Մարտիրոս Պալեան (Balian), որ ամսիս 10-ին եկել է Պոլիս Paquet-ի Tadla շոգենաւով Բաթումից մի շատ ցաւալի թիւրիմացութեան պատճառով անախորժ անակընկալի է հանդիպել: Երբ Պ. Պալեանը 6 ամիս առաջ մտադրուել է Ակկերմանից գնալ Բաթում, տեղացի ծերունի հայ Չեմպերճի ազգանունով, որ յարգուած անձնաւորութիւն է եւ ծառայում է Պ. Պալեանի ազգականների՝ Ասուատուրովների մօտ, խնդրել է Պալեանին, որ վերջինս տեսնուի իր որդու հետ, որ ծառայում է Բաթումում Բոսորք-ում: Բաթումում Պալեանը տեսնուում է երիտասարդ Չեմպերճիի հետ, որը խնդրում է նրանից, որ յանձն առնէ իր մի նամակը յանձնել հօրը Ակկերմանում, որտեղից եկել էր Պալեանը եւ ուր պիտի վերադառնար իր քրոջ, երեխաների եւ ազգական օրհորդների հետ:

Վերջին րոպէին Պ. Չեմպերճին յանձնում է նրան մի նամակի փոխարէն մի ծրար (paquet) “Areos” առեւտրական հաստատութեան անունով, յանձնարարելով նրան, որ եթէ կը յանձնէ Areos-ին այդ ծրարը, կը պահանջէ այն նամակը, որ պիտի յանձնէ իր հօրը:

Բաթումում այդ ծրարի վրայի կնիքները սովետական կօստրօլի ներկայացուցիչները վերցնում են եւ ճանապարհին Պ. Պալեանը բաց է անում ծրարը եւ տեսնում է, որ այնտեղ կան մի քանի լրագիրներ եւ երկու պահարան (enveloppe) որոնք կնքուած էին եւ Areos-ի հասցէն էին կրում: Երբ տեսնում է այդ լրագիրները, վճռում է, որ Քաւաքում, հէնց որ միջդաշնակցային կօստրօլը նաւը գայ, անմիջապէս յանձնէ նրան այդ բոլորը համաձայնական գրաքննութեան ներկայացնելու համար: Ինչ որ եւ կատարում է Քաւաքում, առանց սպասելու, որ իրանից պահանջեն: Կօստրօլը խնդրում է տեղեկութիւններ տալ Ռուսաստանի հայութեան մասին: Պալեանը ամենայն բարեացակամութեամբ կատարում է կօստրօլի խնդիրը եւ արժանանում է նրա շնորհակալութեան:

Դեկտեմբերի 13-ին Պալեանը, համաձայն իրան տրուած հրահանգի, ձեռքն ունենալով յանձնուած ծրարների փոխարէն տրուած ընկալագիրը միանգամայն հանգիստ խղճով գնում է section française du contrôle Intéallié des passeports, որտեղ ներկայանում է Mr Rivaud-ին, որ եւ հարցաքննում է

Նրան: Հարցաքննութիւնից յետոյ Պ. Rivaud-ն Նրան յայտարարում է, որ կամ Նա Պալեան չէ, այլ ինչ որ Kourbanoff, եւ կամ թէ այդ ծրարները Նա ստացել է Kourbanoff-ից Բաթումում: Սպառնում է Նրան կամ Ռուսաստան վերադարձնել եւ կամ ձերբակալել մինչեւ որ հարցը կը պարզուի: Այս սպառնալիքը խորապէս յուզում է Պալեանին եւ սպան փոքր ինչ մեղմանալով պահանջում է Նրանից, որ 14-ին Դեկտեմբերի ժամը 2-ին կնքուած պատկերով մի վկայական ներկայացնէ Ձեզանից, որտեղ ասուած լինի, որ Նա հայ-հպատակ է եւ քաղաքականապէս վստահելի:

Ես Մարտիրոս Պալեանին, ճանաչում եմ Նրա ծննդեան օրից եւ եղել եմ Նրա ուսուցիչը: Նա պատկանում է Նոր-Նախիջեւանի մի պատուաւոր ընտանիքի եւ Նրա հանգուցեալ հայրը ամբողջ քաղաքին յայտնի մի առեւտրական է եղել:

Պ. Պալեան Մոսկուայի համալսարանի իրաւաբանական բաժնի ընթացաւարտ է, Ռոստովում եւ Նոր-Նախիջեւանում սեփականատէր է 5 տների: Ծառայել է ռուս կամաւոր բանակում եւ Նովորոսիսկի պարպումից յետոյ եկել է Պոլիս, որտեղ մնացել է մինչեւ 1921 թուականի յունուարը: Այստեղից անցել է մեր անցագրով Ակկերման (Բեսսարաբիա) իր ամուսնացած քրոջ մօտ, որտեղ մնաց մինչեւ սոյն տարուայ յուլիս ամիսը, երբ տեղեկանալով իր միւս քրոջ կրած խեղճութիւնների մասին, Պոլիսի վրայով անցնում է Ռուսաստան քրոջը եւ Նրա երեխաներին փրկելու նպատակով: Թիֆլիսում, Պոլիս գալու համար թոյլտուքիւն (пропуск) առնելիս, իբր համաձայնական լրտես ձերբակալուելով, 27 օր մնում է «Չեկայում», ենթարկուելով մահուան սպառնալիքին:

Մեծ դժուարութիւններից յետոյ ազատուելով բանտից, Պոլիս է բերում իր հիւանդ քրոջը՝ Տիկ. Իսկուհի Մորթաճեանին, Նրա զաւակներին եւ տիկնոջ ամուսնու եղբօր 3 աղջիկներին, որոնց միակ նեցուկը եւ ապաւենը այս օտար երկրում ինքը՝ Պ. Պալեանն է:

Ես երաշխաւորում եմ, որ Պ. Պալեանը քաղաքականապէս միանգամայն պարկեշտ, ճշմարտախօս եւ վստահելի անձնաւորութիւն է եւ ինձ յայտնի է Նրա միանգամայն բացասական վերաբերմունքը դէպի այսօրուայ Ռուսաստանի վարիչները:

Ի նկատի ունենալով այս ամենը, խոնարհաբար խնդրում եմ Ձեզ, որ չ'մերժեք կարելին անել Նրան այս թիւրիմացութիւնից ազատելու համար:

Հաճեցեք ընդունել, Մեծարգոյ Պարոն, իմ կանխայայտ շնորհակալութիւններս եւ անկեղծ յարգանքներիս հաւաստիքը:

Գր[իգոր] Անտփեան

Վսեմաշուք Տիար

Պ. Ֆ. Թահտաճեան

Դիւանագիտական Ներկայացուցիչ

Հայաստանի Հանրապետութեան

Կ. Պօլիս

Տէր,

Ստորագրեալս փոքրասիական վերջին դէպքերուն Պանտրմաէ գաղթած եմ: [1]912-ին Թուրքիոյ Հալպալըի երկրագործական Բարձրագոյն վարժարանին հետեւելով եւ պատերազմի պատճառաւ թերի մնացած շրջանի վերջին տարիս ալ [1]920-ին շարունակելով նոյն թուին որպէս շրջանաւարտ վկայական ստացալ երկրագործական նախարարութենէն, «գրաաթ մեհենտիսի» տիտղոսով:

Այսպէս ըլլալով վկայեալ գիւղատնտես մը, կ'ուզէի օգտուիլ մասնագետներու հանդէպ ամերիկեան հիւպատոսարանի ցոյց տուած բացառիկ արտօնութենէն, Միացեալ Նահանգները կարենալ մտնելու եւ հոն մասնագիտութեանս գործնական զարկ մը տալու համար: Բայց դժբաղդաբար խուճապային գաղթի ընթացքին շատ մը գրքերուս հետ կորսնցուցած եմ նաեւ վկայականս եւ հակառակ վերջերս պատկանեալ իշխանութեան մօտ կատարած ջանքերուս համոզուեցայ թէ անհնարին է տիւալիքաթա մը ստանալ վարչական փոփոխման բերումով:

Որով կը խնդրեմ Ձերդ վսեմութենէն, որ հաճի – նկատի առնելով նաեւ ծանօթ երեք ստորագրութեամբ կցեալ վկայագիրը – համապատասխան

Վկայագիր

Ներկայիս կը հաստատենք թէ Պ. Թագուր Փափագեան Հալքալըի երկրագործական Բարձրագոյն Վարժարանի 1920 տարուան ընթացաւարտներէն է:

13 Դեկտ[եմբեր] [1]922

Գիւղատնտես

Վ. Բրոյեան

Կ[ոպէռնիկ] Թանտրճեան

Մ. Ասլանեան

Այս նամակին կըցւած է 7 անքլիական ոսկիի չէքը
ըստացած եմ Պ. Թահթաճեանէ

14 Դեկտ[եմբեր] [1]922

Յարութիւն Սվաճեան Ապաճեան

14 Դեկտ[եմբեր] 1922

N° **1817**

Պատասխան

Ի պատասխան Ձեր 1 Դեկտ. Թուակիր նամակին, կը փութամ յայտնել, որ
այսօր յանձնեցի Ձեր եղբոր Յարութիւն Սվաճեանի եօթ անքլիական ոսկւոյ
չէքը:

Որքան յայտնի է ինձ, անքլիական հիւպատոսարանը վիզա չ'տար Եգիպտոսի
համար, մինչեւ որ այդ տեղից օրինական խողովակով նպաստաւոր
տեղեկութիւններ չըստացուին վիզա խնդրողի մասին:

Այդ պատճառով ես այսօր բացատրեցի Ձեր եղբոր թէ ի՞նչ պէտք է անել գործը
կանոնաւորելու համար:

Եթէ պարզուի որ իմ միջամտութիւնը կարող է հարցը հեշտացնել, բնական է,
որ չ'պիտի զլանամ իմ աջակցութիւնը
Մնամ յարգանքօք

Փաստաթուղթ մը շնորհել, որով միայն կարելի պիտի ըլլար ամերիկեան հիւպատոսարանի մօտ դիմումս արդիւնաւորել:

Վստահ խնդրանքին ընդունելութեանը, հաճեցեք ընդունիլ Տէ՛ր, իմ խորին երախտագիտութիւնը:

Յարգանօք

Թ[ագւոր] Տ. Փափագեան

1

4/12/[1]922

Կ. Պօլիս

N° **1818**

Gratis

Certificat

Sur la foi de témoins dignes de toute confiance, je certifie que le porteur du présent Mr. Takvor Papazian est un agronome sorti de l'École d'Agriculture de Halkali (Turquie) avec le titre d'ingénieur agronome.

En foi de quoi le présent certificat lui a été délivré pour être présenté au Consulat Général des États-Unis d'Amérique.

Le 15 Décembre 1922

Հայաստանի Հանրապետության Մեծարգոյ Պարոն Դիւանագիտական
Ներկայացուցչին

Մեծարգոյ Պարոն,

Պատիւ ունեմ խոնարհաբար զեկուցանելու Ձեզ, որ ամսիս 9-ին
հիւպատոսական Բաժնի վարիչ Պ. Մատթէոս Էպլիղաթեանը քաղաքից
մեկնելուց առաջ ինձ յանձնեց կնքուած 13 ծրարներ, որոնք, ըստ իր
յայտարարութեան, պարունակում են երկու տարուայ հաշիւներ եւ զանազան
դրամական վաւերաթղթեր:

Ամսիս 14-ին, համաձայն Պ. Էպլիղաթեանի հրահանգի, այդ 13 կտորը
զորս կնքուած ծրարների մէջ *recommandée* ուղարկեցի Փարիզ Հ. Հ.
Պատուիրակութեան Հասցէին:

Բանկալթի, 14 Դեկտեմբերի 1922թ.

Հիւպատոսական Բաժնի քարտուղար

Գր[իգոր] Անուփեան

Յ. Գ. Նամակիս կցում եմ անգլիական Փոստի ընկալագիրը:
Նոյն

Haut Commissariat
de la République Française
en Orient
SERVICE POLITIQUE

Constantinople,
le 18 Décembre 1922

223/12


Monsieur le Délégué,

A la date du 29 Août dernier vous avez bien voulu demander que les papiers et objets divers appartenant à feu Mouchehgh Khoudanian, décédé le 26 Août à Floria, vous fussent remis par la gendarmerie française pour être par vous tenus à la disposition des héritiers se trouvant au Caucase.

J'ai l'honneur de vous faire connaître que la gendarmerie française s'était bien rendue sur le lieu du décès et avait dressé l'inventaire, dont copie ci-jointe des effets et papiers trouvés chez le défunt. Mais le tout avait été laissé ensuite aux soins de la gendarmerie Turque, entre les mains du chef de poste de gendarmerie Ottomane de Macri-Keuy. C'est donc aux autorités turques que les ayants-droit devraient éventuellement adresser leur demande d'envoi en possession de ce modeste héritage.

Veuillez agréer, Monsieur le Délégué, les assurances de ma considération distinguée.

LE GÉRANT DU HAUT COMMISSARIAT

A handwritten signature in dark ink, appearing to read 'Tahtadjian', with a long vertical stroke extending downwards from the end of the name.

MONSIEUR TAHTADJIAN
DÉLÉGUÉ DE LA RÉPUBLIQUE ARMÉNIENNE
CONSTANTINOPLE

Արեւելքում Ֆրանսիայի Հանրապետութեան
Դիւանագիտական ներկայացուցչութիւն
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ


Կոստանդնուպոլիս,
18 դեկտեմբերի, 1922

223/12

Պարո՛ն պատուիրակ,
Օգոստոսի 29-ին Դուք պահանջել էիք, որ ֆրանսիական ոստիկանութիւնը
Ձեզ յանձնի օգոստոսի 26-ին Ֆլորիայում վախճանուած հանգուցեալ Մուշեղ
Խուդանեանի փաստաթղթերն ու նրան պատկանող այլեւայլ իրեր, որպէսզի
Դուք այդ ամէնը յանձնէք Կովկասում գտնուող նրա ժառանգներին:

Պատիւ ունեմ Ձեզ տեղեկացնելու, որ ֆրանսիական ոստիկանութիւնն
այցելել էր հանգուցեալի կացարան եւ գոյքագրել էր վերջինիս ունեցուածքը.
Նամակիս կցում եմ հանգուցեալի մօտ գտնուած իրերի եւ փաստաթղթերի
ցուցակի պատճենը: Սակայն այդ ամէնն այնուհետեւ յանձնուեց թուրքական
ոստիկանութեանը՝ օսմանեան ոստիկանութեան Մաքրիքէօյի ծառայութեան
պետի հոգաճութեանը: Ուստի՝ հանգուցեալի իրաւայաջորդները թուրքական
իշխանութիւններին պետք է ուղղեն իրենց հայցադիմումը՝ այդ համեստ
ժառանգութեանը տիրանալու համար:

Պարո՛ն պատուիրակ, Ձեզ եմ յղում յարգանացս հաւաստիքը:
Դիւանագիտական ներկայացուցչութեան վարիչ



Կոստանդնուպոլսում
Հայաստանի Հանրապետութեան պատուիրակ
Պարոն Թահթաճեանին

RÉPUBLIQUE D'ARMÉNIE
MISSION DIPLOMATIQUE
EN ALLEMAGNE
BERLIN

Բերլին, 19 Դեկտեմբեր 1922

Դիւանագիտական Ներկայացուցիչ
Վսեմ[աշուք] Պ. Թահթաճեանին
Կ. Պոլիս

N° 2006

Մեծարգոյ պաշտօնակից,

Պատիւ ունեցայ ստանալու Ձեր 10 Դեկտեմբեր] թուակիր գրութիւնը: Սուքիասեանի ձերբակալութեան մանրամասնութիւնները Ձեզ արդէն յայտնի են: Այստեղի արտ[աքին] գործ[ոց] նախարարութիւնը արդէն շատոնց ստացել էր տեղիդ կոմիսիոն Ինթերալլիէ-ի կողմից mandat d'arrêt եւ demande d'extradition Սուքիասեանի մասին, սակայն հետեւանք չէր տուել առարկելով, որ այդպիսի դիմում պիտի լինի [...] պետական իշխանութեան կողմից - այսինքն կամ թուրք կառավարութեան կողմից (որովհետեւ ոճիրը գործւած է Թուրքիայի մէջ) եւ կամ ֆրանսական տեղիդ հիւպատոսարանի կողմից (որովհետեւ Սուքիասեանը ֆրանսական պրոտեժէի անցագիր ունի): Տեղիս ֆրանս[ական] դեսպանութիւնը հեռագրեց այդ իմաստով տեղիդ ֆրանս[ական] հիւպատոսարան եւ պատասխան ստացաւ, որ Սուքիասեանը ֆրանս[ական] պրոտեժէ չէ: Ուստի ամենայարմարն ու անհրաժեշտ է ուղարկուի թուրք կառավարութեան կողմից mandat d'arrêt եւ demande d'extradition-ը Գերման արտ[աքին] գործ[ոց] նախարարութեան: Հարկաւոր է շտապել որովհետեւ Սուքիասեանին երկար պահելը դժուար պիտի լինի: Նրան կարելի եղաւ ձերբակալել միայն որովհետեւ այստեղ ապրում էր առանց ոստիկանութեան յայտնած լինելու. բայց դա մեծ յանցանք չէ եւ այդ պատճառով երկար պահելը անկարելի է: Ոստիկանութիւնը մեզ այդ խնդրում շատ ընդառաջ եկաւ: Ուստի խնդրում եմ mandat d'arrêt-ն եւ demande d'extradition-ը հաճիք թուրք կառավարութեան կողմից ժամ առաջ եւ հեռագրով ուղարկել տալ:

Սուքիասեանի ձերբակալութեան առթիւ ունեցել ենք բաւականի ծախքեր եւ խնդրում եմ բարի լինէք Բանկին թելադրել որ անմիջապէս ուղարկի մեզ այդ հաշուին գոնէ հազար ֆրանկ:

Պ. Պ. Ինճիճեանը եւ Խաչատուրեանը եղան ինձ մօտ եւ շատ լաւ տպաւորութիւն թողեցին ինձ վրայ. շատ շնորհակալ եմ Ձեր սիրալիր յանձնարարութեան համար:

Ձերմ բարեկեցութիւնը եւ խորին յարգանքը
Ձ[եյմս] Գրինֆիլդ

Հայաստանի Հանրապետության
Ներկայացուցիչ
Վսեմաշուք Տիար

Սերպիա գտնող ընտանիքիս միանալու համար նոյն Տերութեան Պօլսոյ
Ներկայացուցիչին դիմեցի, Տաճկական Բաս-բօշի վիզէյի գործողութիւնը
չ'յաջողեցայ կատարել տալ, վասն զի դեռ ընդհանուր հաշտութիւն չ'կնքուած
ըլլալու պատճառաւ եւ առաջարկեցին ինձ իրենց Ներկայացնել Հայկական
Բաս-բօշ որով սիրով վիզէ ընելու պատրաստ ըլլալնին յայ[տ]նեց: Ուստի կը
խնդրեմ ինձ շնորհել վերոյիշեալ Բաս-բօշն, բարի եղէք ընդունիլ խնդրանքս

Մնամ յարգանօք
Ս. Յ. Տէմիրեան

Կ. Պօլիս 19 Դեկ[տեմբեր] [1]922

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
DÉLÉGATION
A LA CONFERENCE DE LA PAIX

34, AVENUE WAGRAM
PARIS, le 19 Դեկտեմբեր 1922

N° 6083/6

Մեծ[արգոյ] Պրն. Ֆ[երտիսանտ] Թահթաճեան
Հ[այաստանի] Հ[անրապետութեան]
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Կ. Պօլիս

Հ[այաստանի] Հ[անրապետութեան] Պատուիրակութիւնը պատիւ ունի սրան
կից ուղարկելու Ձեզ

ա) Հայաստանի միջազգային Լիգայի դրդումով համաշխարհային
եկեղեցի եւ կրօնական համայնքների կողմից հայերին «Ազգային Տան»
տրւելու առիթով Լոզանի վեհաժողովին ուղղւած կոչերի ամփոփումը:

բ) Հ[այաստանի] Հ[անրապետութեան] եւ Ազգային
պատուիրակութիւնների կողմից մեր դատի առիթով Լոզանի
վեհաժողովին տրւած գրութեան համառօտագրութիւնը:

գ) Նոյն պատուիրակութիւնների կողմից Ամերիկայի Միացեալ
Նահանգների Լոզանի վեհաժողովի ներկայացուցիչ Պ. Չայլօին
թրքահայ տարագրեալների մասին տրւած յիշատակագրի պատճենը:

դ) Պատուիրակութեանս նախագահի կողմից «Վինտիմիլ» ենթադրեալ
դաւադրութեան առթիւ Մեծն Բրիտանիա, Ֆրանսա եւ իտալական
Արտ[աքին] Գործ[երի] Նախարարներին ներկայացւած բողոք նամակի
պատճենը:

ե) Երկու պատուիրակութիւնների կողմից «Ազգերի ընկերակցութեան»
ընդի[անուր] քարտուղարին ուղղւած գրութեան պատճենը, նոյն
ընկերակցութեան հայերին Ազգային Տուն տրւելու առթիւ 1921-1922-ին
ըւէարկած բանաձեւերը յիշեցնելու մասին:

RÉPUBLIQUE ARMÉNIENNE
DÉLÉGATION
A LA CONFERENCE DE LA PAIX

34, AVENUE WAGRAM
PARIS, le 2 Յունուար 1923

N° 6104/6

Մեծ[արգոյ] Պրն. Ֆ[երտինանտ] Թահթաճեան
Հ[այաստանի] Հ[անրապետութեան]
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Կ. Պօլիս

Մեծ[արգոյ] Պարոն ներկայացուցիչ,
Ներփակ պատիւը ունիմ Ձեզ դրկելու Société générale de Belgique-ի կողմէ
Banque belge pour l'étranger-ի վրայ քաշուած հինգ հազար պելճիքական
ֆրանքի չէք մը, (N° 465,371), փոխանցուած Ձեր անունին: Ձեր գումարը մէկ
մասն է ընդհանուր փախստականներու ի նպաստ պատուիրակութեանս
խորհրդական Պ. Վահան Խորասանճեանի կողմէ Պելճիքայի մէջ
բացուած հանգանակութեան եւ պետք է յատկացուի Պօլսոյ Ազգ[ային]
Խնամատարութեան միջոցաւ Փոքր Ասիոյ Հայ աղետեալներուն եւ որբերուն:

Յոյս ունինք որ Ձեր կարելին կ'ընէք այս գումարը եւս կրկնապատկել տալու
համար Ամերիկեան նպաստամատոյցի կողմէ եւ կը խնդրենք որ հաճիք
պատկան մարմնոյ կողմէ համապատասխան ընկալագիր ուղարկէք մեզ եւ
թելադրէք որ շնորհակալութեան գիր դրկեն Պ. Խորասանճեանին՝ 436, Avenue
Louise, Bruxelles հասցեով:

Նոյն առիթով պատիւը ունինք Ձեզ յայտնել որ Պատուիրակութիւնս
հրահանգած է Եգիպտոս որ «Ոսկւոյ ֆօնտ»ի պատրաստի գումարէն 200
Անգլ[իական] ոսկի (մօտ 13000 ֆրանք) դրկեն Ձեր հասցէին՝ յատկացուելու
համար նոյն նպատակին:

Ընդունեցէք, Մեծարգոյ Պարոն ներկայացուցիչ,
խորին յարգանացս հաւաստիքը:

Վ. Հ. Հ. Պատուիրակութեան Նախագահի՝

Արտաւազդ Հանըմեան
Ընդհ. Քարտուղար

9 Յունվար 1923

N° 1844

Պատրիարքարանի Հայոց,

Սրբազան Հայր,

Պատիւ ունիմ ներկայ մատուցանելու 5000 (հինգ հազար) պելճիքական ֆրանքի մի չէք, Société générale de Belgique-ի կողմէ Banque belge pour l'étranger-ի վրայ քաշուած (N° 465,371):

Այդ չէքը մէկ մասն է ընդհանուր փախստականներու ի նպաստ, Փարիզի Հ. Հ. Պատուիրակութեան խորհրդական Պ. Վահան Խորասանճեանի կողմէ Պելճիքայի մէջ բացուած հանգանակութեան եւ պետք է յատկացուի Պօլսոյ Ազգ[ային] խնամատարութեան միջոցաւ փոքր Ասիոյ Հայ աղետեալներուն եւ որբերուն:

Չէքը ինձ ուղարկել է Փարիզի Հ. Հ. Պատուիրակութիւնը եւ իմ կողմից en-dossé է: Անշուշտ, Ձերոյ Սրբազնութիւնը պիտի հաճի այնպէս տնօրինել, որ Ամերիկեան նպաստամատոյցի մօտ արժըցուի սոյն ազգասիրական նուիրատուութիւնը որպէս զի այդ մարդասիրական հաստատութիւնը՝ ըստ իր բարի սովորութեան գումարը կրկնապատկէ:

Թոյլ տուեցէք, Սրբազան Հայր, թելադրել Ձեզ, որ լաւ կը լինէր, եթէ յարմար դատէիք շնորհակալութեան գիր մը ուղղել Պ. Խորասանճեանի, որի հասցէն է 436, Avenue Louise, Bruxelles.

Յատկապէս խնդրում եմ, Սրբազան Հայր, որ բարեհաճիք շուտով հասցնել ինձ Ձեր ընկալագիրը:

Մնամ ամենայն յարգանք եւ ակնածանք
Հ. Հ. Դիւ[անագիտական] ներկայացուցիչ

11 Յունվար 1923

N° 1845

Հ. Հ. Պատուիրակութեան,
Փարիզ

Ի պատասխան Ձեր 2 Յունվար թիւ եւ 6104/6 համար գրութեան, պատիւ ունիմ զեկուցանելու, որ ամսուս 9-ին 5000 պելճիքական ֆրանքի չէքը յանձնեցի պատրիարքական տեղապահ Արսլանեան Եպիսկոպոսին, որի ընկալագիրը կցում եմ ներկայիս:

Այդ առթիւ տեղապահ սրբազանին ուղղած նամակումս ցոյց էր տրուած վերոյիշեալ գումարի աղբիւրը եւ ինչ նպատակի յատկացուած լինելը:

Աղեքսանդրիայից, Պ. Թիւթիւնճեանից ստացած մի հեռագրիցս երեւում է, որ շուտով նա էլ կատարելու է Ձեր ծանուցած փոխադրութիւնը:

Այդ դէպքում գումարը տուրքերով կը դնեմ ազգ[ային] խնամակալութեան տրամադրութեան ներքեւ, պատրիարքարանի միջոցով:

Վստահ եմ, որ այս նուիրատուութիւններն ալ պիտի կրկնապատկուին Ամերիկեան Նպաստամատոյցի կողմից:

RÉPUBLIQUE D'ARMÉNIE
MISSION DIPLOMATIQUE
EN ALLEMAGNE
BERLIN

Բերլին, 13 Յունվար [19]23

Հ[այաստանի] Հ[անրապետութեան]
Դիւ[անագիտական] Ներկայացուցիչ
Մեծարգոյ Տիար Թահթաճեան
Կ. Պոլիս

N° 2033

Մեծարգոյ պաշտօնակից,
Պատիւ ունեցայ ստանալու Ձեր վերջին նամակները Սուքիասեանի խնդրի մասին. յոյս ունիմ շուտով Mandat-ն եւ demande-ը տեղ հասնի: Շատ շնորհակալ կը լինէի եթէ հաճէիք նոյնպէս շուտ ուղարկել տալ ծախքերի համար խնդրածս 1000 ֆրանգը:

11 Նոյ[եմբեր] թուակիր N° 1938 գրութեամբս խնդրել էի պատրիարքարանից մէկ քանի որբերի մասին, բայց ոչ մէկ պատասխան չը ստացայ: Այդ որբերը, որոնց անունը յիշած էի, Գերման մէկ միսիօնի սաներն են. միսիօնը պատրաստ է նրանց կրթութեան եւ ապրուստի համար հոգալ այստեղ եթէ ազգային միջոցներով մինչեւ այստեղ ուղարկուին: Շատ շնորհապարտ կը լինէի եթէ հաճէիք պատրիարքարանից տեղեկանալ եւ ինձ իմացնել այդ գործի մասին ինչ է վճռուած:

Հաճեցեք ընդունիլ մեծարգոյ պաշտօնակից,
ջերմ բարեկեցութիւն եւ խորին յարգանացս հաւաստիքը

Ջ[եյմս] Գրինֆիլդ

Իտալի, 29 Դուրս 1923

2

W 59

Դժբարձրաց ճանաչող շարժման
Եւրոպայի Ռ. Օ. Դ. Դ.
ՊԵՐՏԵՐ

Դժբարձրաց Զարգացում.

Դժբարձրաց ճանաչող շարժման
Եւրոպայի Ռ. Օ. Դ. Դ.
ՊԵՐՏԵՐ

Կ. Դժբարձրաց ճանաչող շարժման
Եւրոպայի Ռ. Օ. Դ. Դ.
ՊԵՐՏԵՐ

Կ. Դժբարձրաց ճանաչող շարժման
Եւրոպայի Ռ. Օ. Դ. Դ.
ՊԵՐՏԵՐ

Կ. Դժբարձրաց ճանաչող շարժման
Եւրոպայի Ռ. Օ. Դ. Դ.
ՊԵՐՏԵՐ

Կ. Դժբարձրաց ճանաչող շարժման
Եւրոպայի Ռ. Օ. Դ. Դ.
ՊԵՐՏԵՐ

Հայաստանի Հանրապետության
Մեծարգոյ Պարոն
Դիւանագիտական Ներկայացուցիչ

Խնդրագիր

Ի նկատի ունենալով, որ մինչեւ այժմ Հ. Հ. Փարիզի Պատուիրակութիւնից պատասխան չ'կայ իմ Ձեզ ուղղած խնդրագրիս եւ ի նկատի ունենալով, որ ներկայ քաղաքական տագնապալից եւ երերուն կացութեան շնորհիւ կարող եմ անելի հանդիպել, որով կեանքս իսկ վտանգուած պիտի լինի, -խոնարհաբար խնդրում եմ հաշիւս տեսնել՝ վճարելով ինձ յունուար ամսուայ ռոճիկս եւ միանուագ նպաստ տալ եռամսեայ ռոճիկս չափով, ինչպէս որ արդէն միանգամ խնդրել էի, որպէսզի կարողանամ օր առաջ դուրս գալ Պոլսից եւ գոնէ միառժամանակ, մինչեւ գործ գտնելս, հնար ունենամ ապրուստս ապահովելու:

Մինչեւ այսօր իսկ հիւպատոսարանին կապուած լինելուս շնորհիւ, այդ ուղղութեամբ չեմ կարողացել ոչ մի քայլ անել: Ուստի խնդրում եմ իմ արդար պահանջին ժամ առաջ գոհացում տալ:

Հիւպատոսարանի քարտուղար
Գր[իգոր] Անուժեան

24 Յունուարի 1923 թ.
Կ. Պոլիս

RÉPUBLIQUE D'ARMÉNIE
MISSION DIPLOMATIQUE
EN ALLEMAGNE
BERLIN

N° 2059

Բերլին, 8 Փետրվար [19]23

Մեծարգոյ Պարոն Թահթաճեան
Հ[այաստանի] Հ[անրապետութեան]
Դիւ[անագիտական] Ներկայացուցիչ
Կ. Պոլիս

Պատիւ ունիմ դժբախտաբար Ձեզ իմացնելու, որ Սուքիասեանին 2 օր առաջ արձակեցին, նրանից 3 միլիոն մարք կօսիոն առնելուց յետոյ: Ոչ մէկ հնարաւորութիւն չը կար այլեւս նրան պահելու, քանի որ Mandat-ն եւ demande-ը թուրք կառավարութեան կողմից մինչեւ այսօր տակաւին չի հասել Գերման Արտ[աքին] Գործ[ոց] Նախարարութեանը: Չը գիտեմ ինչպէս բացատրել այդ աններելի անհոգութիւնը: Բանգի վարչութեան կողմից այսպիսի մէկ կարեւոր խնդրի մէջ: Մեր բազում հեռագիրներին եւ դիմումներին երկու տող նոյն իսկ պատասխան չը ստացանք: Ինչո՞ւ չեն ուղարկում թուղթերը, եթէ պատրաստ էին արդէն ամիս առաջ:

Եթէ անմիջապէս ուղարկեն թուղթերը եւ առաքման մասին հեռագրեն մեզ եւ Գերման Արտ[աքին] Գործ[ոց] Նախարարութեան գուցէ հնարաւոր լինի Սուքիասեանին նորից ձերբակալել տալ մինչեւ որ հետքը չի կորած:

Բանգի վարչութիւնից չըստացայ նաեւ ծախքերի համար խոստացած գումարը. խնդրում եմ բարի լինեք թելադրել նրանց որ անմիջապէս ուղարկեն հազար ֆրանկ այդ նպատակի համար:

Յայտնելով Ձեզ, Մեծարգոյ պաշտօնակից, կանխաւ իմ շնորհակալութիւնս, կը մնամ ջերմ բարեկեցութեամբ խորին յարգանքօք

Ձ[եյմս] Գրինֆիլդ

15 Փետրվար 1923

N° 1867

Մեծայարգ Պ. Գրինֆիլտի,
Հ[այաստանի] Հ[անրապետութեան]
Դիւանագիտ[ական] Ներկայացուցչին
Բերլին

Մեր վերջին նամակները իրար խաչաձեւեցին: Այն ամենից յետոյ որ ես ասել եւ լսել էի, լիովին հիմք ունէի հաւատացած լինելու, որ այդ ողորմելի բանկի ողորմելի վարիչները, ինչպէս նաեւ syndic-ները, ամեն ջանք ու ճիգ ի գործ պիտի դնէին, որպէս զի չուզէնային Սուլթիասեանի extradition վերաբերեալ օրինական ձեւակերպութիւնը:

Աւելորդ իսկ է ասելը, որ իմ կողմից ես չէի խնայել ոչ մի աշխատութիւն, որպէս զի այդ պարոնները ձեռքէ չ'փախցնեն իրանց գողը:

Թէ ինչո՞վ պէտք է բացատրել ձեւակերպութեանց ձգձգումը, ցարդ կը դժուարանամ ասել:

Դեռ սրանից շատ ժամանակ յառաջ, Շուետական դեսպանատան մէջ իրանց բացատրել էին, որ extradition-ի պահանջը կարող էին տեղւոյս Անգարայի ներկայացուցչի խողովակով ուղղակի Բերլին հասցնել. Չայդ իրանց բացատրող Conseiller de légation-ը, նրանցից 1000 լիրա իբրեւ garantie վերցրել է զկնի, հեռագրել էր Բերլին, Արտ[աքին] Գործոց նախարարութեան, որ Սուլթիասեանի extraditionի վերաբերեալ ձեւակերպութիւնը կատարում էին եւ պահանջը ի մօտոյ պիտի հասներ Բերլին, ըստ պատկանելոյն, դիւնագիտական ճանապարհով:

Դրանից յետոյ երկու ամիս անցկացաւ, երբ այդ ժամանակ Բանկ գնացի, syndic-ները՝ ի ներկայութեան Պ. Քընաճեանի, ցոյց տուեցին ինձ դատական վաւերաթղթերը, ասելով թէ անմիջապէս պիտի ներկայացնէին տեղւոյս Անգարայի ներկայացուցչին:

Այդ հիման վրայ, ես էլ ուղարկել էի Ձեզ դրական մի հեռագիր:

Թէ ինչո՞ւ չարին զայդ եւ ինչո՞ւ, ինչպէս վերջերս իմացայ եւ Ձեզ գրեցի, պէտք է եղել, որ դատական ինչ որ քննիչի պահանջի վրայ, թղթերը, Անգարա ուղարկուին, այդ ամենը ես չ'հասկացայ:

Ինչ որ պետք էր, որ ես անէի, լիովին արել եմ եւ այլ եւս այդ պարոնների մօտ անելու բան չունիմ:

Սակայն Ձեր նամակը այսօր եւեթ պիտի կարդամ Պատրիարքական տեղապահ Սրբազանին, որը շատ շահագրգռուած է այդ գործով:

Գիտէի որ պահանջատերերից շատերը շարունակ պատրիարքարան են դիմում:

Այս առթիւ յայտնեմ Ձեզ եւ հետեւեալը: Հաստատ եւ պաշտօնական աղբիւրից իմացայ, որ Շուէտական դեսպանը երէկ ստիպողական nota մ'է գրել միլլի ներկայացուցիչ Անտոն Պէյի, յայտարարելու համար, որ եթէ մի շաբաթուայ ընթացքում Բերլին չ'հասնին Սուլքիասեանի extraditionի վերաբերեալ թղթերը, բանտարկեալը ազատ պիտի արձակուի:

Ինչ կը վերաբերի Ձեզ հասնելու 1000 ֆրանքին, այդ մասին, ինչպէս գիտեք, մէկից շատ աւելի անգամներ խօսել էի այդ պարոնների եւ ամեն անգամին խոստացել էին փոխադրել այդ գումարը:

Վերջերս նորից յիշեցրի, եթէ ցարդ այդքանն էլ անելու շնորհքը չունեցան, անօգուտ է, որ այլ եւս անդրադառնամ այդ հարցին:

Միջանկեալ կերպով ասեմ, որ Յունվարի մէջ գրեթէ ամեն օր պատահում էի Պ. Քայսերլեանին, որ այդ բանկի վարիչներից մին է: Եւրոպայից էր վերադարձել եւ ապրում էր Թոքաթլեանի պանդոկում: Քանի՜ քանի՜ անգամներ նրան բացատրել էի Սուլքիասեանի գործի դրուփիւնը: Խօսել էի եւ Ձեզ փոխադրելիք դրամի մասին, բայց ինչպէս երեւում է, այդ կողմից էլ j'ai prêché dans le désert:

Հիմա իմ կարգին ես էլ Ձեզանից պիտի խնդրեմ հետեւեալը: Ինչպէս պիտի տեսնէք ներփակ խնդրագրից, Պարսամեան անուն իրաւագետը որ ժամանակին երեսփոխան ալ եղել է թուրքերի խորհրդարանի մէջ, ուզում է Գերմանիա գնալ իւր հօր, մօր, եղբօր եւ երկու զաւակների հետ: Պատուական մարդիկ են եւ նիւթապէս ապահովուած: Շատ պիտի պարտաւորէիք զիս եթէ միջնորդէիք կառավարութեան մօտ եւ թոյլտուութիւն ծեռք բերէիք, որպէս զի նրանց վիզա տան:

PRÉSIDENT de l'Union des Arméniens de Russie
et du Caucase. PRINCE AMATOUNY

№ 115

16 Января, 1923.

Милостивый Государь,
Фердинандъ Петровичъ,
Асатуръ Татевосовичъ АТАМЯНЪ, какъ онъ заявляетъ, получилъ 5 мѣсяцевъ
тому назадъ изъ Армянскаго Консульства паспортъ, по каковому онъ около
2 мѣсяцевъ тому назадъ уѣхалъ в Болгарію.

Въ настоящее время АТАМЯНЪ вернулся въ Константинополь и, как онъ
заявляетъ, потерялъ свой паспортъ и квитанцію о внесеніи имъ 5 тур. лиръ
въ кассу Армянскаго Консула за паспортъ.

Его Превосходительству,
Ф. П. Тахтаджяну Господинъ АТОМЯНЪ проситъ, чтобы я выдалъ ему
свидѣтельство и выхлопоталъ у Русскаго Консула новый паспортъ. Для
производства этой операціи мнѣ необходима справка Армянскаго Консула
о томъ, что дѣйствительно АТОМЯНУ былъ выданъ паспортъ съ указаніемъ
мѣста рожденія АТОМЯНА.

Сообщая объ этомъ, покорно прошу не отказать въ срочномъ распоряженіи
секретаріату Армянскаго консульства о присылкѣ мнѣ просимой справки,
безъ чего не представляется возможность выхлопотать русскій паспортъ
для г. АТОМЯНА.

Пользуясь случаемъ , покорно прошу принять увѣреніе въ искреннемъ
уваженіи и совершенной преданности.

Ռուսաստանի եւ Կովկասի հայերի միութեան Նախագահ
ԻՇԽԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ

N 115

16 յունվարի, 1923թ.

Նորին Գերագանցութիւն
Ֆ. Պ. Թահթաշեանին,

Ձերդ մեծութիւն,
Ֆերդինանդ Պետրովիչ,

Ասատուր Թադեւոսի ԱՏԱՄԵԱՆԸ, ինչպէս ինքն է յայտարարում, 5 ամիս առաջ
Հայկական հիւպատոսութիւնից ստացել է անձնագիր, որով նա մօտ 2 ամիս
առաջ մեկնել է Բուլղարիա:

Ներկայումս ԱՏԱՄԵԱՆԸ վերադարձել է Կոստանդնուպոլիս եւ, ինչպէս ինքն
է յայտարարում, կորցրել է անձնագիրն ու անձնագրի համար Հայկական
հիւպատոսարանի դրամարկդ իր կողմից մուտքագրուած 5 թուրքական
լիրայի անդորրագիրը:

Պարոն ԱՏՈՄԵԱՆԸ խնդրում է, որպէսզի ես իրեն վկայական տամ եւ Ռուսական
հիւպատոսից նոր անձնագիր ձեռք բերեմ: Այդ գործողութիւնն իրականացնելու
համար ինձ անհրաժեշտ է հայկական հիւպատոսի տեղեկանքն այն մասին,
որ իսկապէս ԱՏՈՄԵԱՆԻՆ տրուել է անձնագիր, որտեղ նշուած է ԱՏՈՄԵԱՆԻ
ծննդավայրը:

Չեկուցելով այս մասին՝ խոնարհաբար խնդրում եմ չմերժել Հայկական
հիւպատոսութեան քարտուղարութեանն ուղղուած հրատապ
կարգադրութիւնից՝ ինձ ուղարկելու խնդրուած տեղեկանքը, առանց որի
հնարաւոր չէ ձեռք բերել պարոն ԱՏՈՄԵԱՆԻ համար ռուսական անձնագիր:

Օգտուելով առիթից՝ խոնարհաբար խնդրում եմ ընդունել անկեղծ յարգանքի
եւ կատարեալ նուիրուածութեան հաւաստիքներս:

Ներկայացուցիչ հայ հանրապետութեան

Մեծայարգ Պարոն,

Ստորագրեալս հայ հանրապետութեան հպատակ, Երեւանի բնակիչներից եմ: 1918ին իմ գինւ[որական] ծառայութեանս շրջանը լրացրած մի տարի տեղւոյս Ամերիկ[եան] նպաստամատոյցի մէջ որպէս թարգման գործելուց յետոյ որոշեցի Ամերիկա գնալ բժշկութիւն սովորելու. 1919 թ. Նոյեմբերին մեր Ներքին Գործոց մինիստրութիւնից Արտասահմանեան անցագիր ստացած, մեկնեցի Երեւանից: Կ. Պօլիս եկայ, եւ իոն մի ծանօթ Ամերիկացու հանդիպեցի որը պատմեց ինձ իմ ծնողքիս մասին, որոնք տարագրութեան թուականին, տեղահանուել էին Էրզրումի խնուս գաւառից: Այդ Ամերիկացին նրանց հանդիպել էր Խարբերդի մօտիկ մի գիւղաքաղաքում եւ հէնց ինքն էլ կրկին պատրաստուում էր այդ կողմերը դառնալ նպաստամատոյցի գործով: Ծնողքիս հանդէպ իմ որդիական պարտականութիւնս ճշշում էր սրտիս, եւ ես ստիպուած եղայ նրա հետ Խարբերդ երթալ եւ ծնողքս տեսնելուց վերջ Ամերիկա անցնել. Այդպէս էլ արի: Խարբերդ եկայ, բայց դեռ Նոր Էի հասել, երբ տեղական թուրք կառավարութիւնը քրիստոնեաների համար փակեց բոլոր ճանապարհները, եւ ես չի կարողացայ քաղաքից դուրս ելնալ: Անցան 3 տարիներ, ու ես ծնողքիս չ'տեսնելու դժբաղդութիւնից զատ, բանտարկուեցի, հալածուեցի ու մի քանի անգամ թուրքերու կողմէն սպանուելու փորձին ենթարկուեցի: Այս փորձանքներիս մէջ կարողացայ ազատուել ողջ մնալ միայն միշտ դրամ տալով թուրքերին: Ամիսներ առաջ թուրքերի կողմից տաճկահայերին արտասահման գնալու արտօնութիւնը ինձ էլ օգնեց եւ բաւական դժուարութիւններ քաշելով վերջապէս յաջողեց ինձ ազատուել - եւ ահա 2 շաբաթ է որ Պէյրութ գտնուում եմ եմ: Անհուն փափաք ունիմ իմ պաշտելի հայրենիքս Երեւան վերադառնալ այս օրերումս եւ հետեւել իոն հաստատուած «Ժողովրդական համալսարանի» Բժշկական կուրսին. սակայն չեմ իմանում թէ ի՞նչ միջոցներ պետք է գործածել իոն գնալուս համար: Դիմում եմ Ձեզ, եւ խնդրում Ձեզանից միջոցներ գործածել ինձ համար, կամ գոնէ միջոցներ ցոյց տալ ինձ որ կարողանամ շուտով մեկնել ասկէ, գնալ հայրենիքս, որուն համար այնքան տառապած ու զոհուած եմ: Մեծ յոյս ունիմ թէ խնդիրքս չպիտի մերժեք, ու իսկոյն պատասխանեք ինձ, եւ պատասխանեք ինչպէս ես սրտանց փափաքում եմ. նամակովս ուղարկում եմ Ձեզ իմ ատրեսս եւ խնդրում որ նրանով խրկեք ինձ պատասխանը, որուն հետ կանխիկ շնորհակալութիւններս եմ յայտնում:

Յարգանքներով

Սոկրատ Մխիթարեանց

Փետր[վար] 15, 1923 թ.

Պէյրութ % N. E. R. office

Ներքին Գործոց մինիստրութիւնից առածս անցագիրը վախի պատճառով չի կարողացայ հետս վերցնել, եւ Խարբերդ թողնելի մի Ամերիկացու քով որ վերջը բերե:

CONSULAT
DE LA
REPUBLIQUE ARMÉNIENNE
ANVERS
67, AVENUE PLANTIN, (OUEST
TÉLÉPHONE 2023

Anvers, le 26 Փետրուար 1923

Մեծայարգ պրն. Թահթաճեան
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Հայկ[ական] Հանրապետութեան
Կ. Պոլիս

Պելճիքական տուններու կողմէ երբեմն դիմում կը լինի մեզ Հայաստանի հետ
առեւտրական յարաբերութեան մտնելու համար, կուզէի՞ք ի վիճակի դնելու
մեզ պատասխանելու այդ կարգի դիմումներու:

Այս միջոցիս երկու նամակներ ունինք պատասխանելու:

1. Laine եւ poils de chèvres-ի ներածութեամբ զբաղող ֆիրմա մը կը
փափաքի Հայաստանի մէջ հաստատուած եւ այս ապրանքներու
արտածութիւնը ընող տուններ ճանչնալ:

2. Ուրիշ տուն մ'ալ կը հարցնէ թէ ի՞նչ ձեւակերպութեանց հարկ կայ
իր արտադրութիւնները Հայաստան մտցնելու համար, գոնէսըմանը
ի՞նչ կերպով պէտք է գրել տալ certificat d'origine եւ visa consulaire կը
պահանջուի՞:

Մասնաւորաբար կը խնդրեմ որպէսզի շուտով պահանջած տեղեկութիւնները
հաղորդէք ինձի, եթէ Դուք Հայաստանի ներկայ կառավարութեան հետ
յարաբերութիւն չունիք եւ ուրիշ ներկայացուցիչ մ'ունին իրենք Պոլսոյ մէջ,
իրեն փոխանցեցէք այս նամակը եւ խնդրեցէք որ իսկոյն պատասխանեն:

Խորին յարգանքներով
Հիւպատոս Տ[իգրան] Չամքերթեւ

RÉPUBLIQUE D'ARMÉNIE
MISSION DIPLOMATIQUE
EN ALLEMAGNE
BERLIN

Բերլին, 3 Մարտ 1923

Հ[այաստանի] Հ[անրապետութեան]
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Վսեմաշուք Պ. Ֆ. Թահթաճեան
Կ. Պոլիս

N° 2075

Մեծարգոյ պաշտօնակից,
Շնորհակալութեամբ ստացել եմ Ձեր, 15 եւ 17 փետրվարի թուակիրները ինչպէս նաեւ Ձեր հեռագիրը եւ անմիջապէս պէտք եղած դիմումները կատարուեցան Սուքիասեանին նորէն ձերբակալել տալու. նա դեռ Բերլին է, սակայն թուղթերը տակաւին չեն հասել Արտ[աքին] Գործ[ոց] Նախարարութիւն եւ հարց է արդեօք կը յաջողուի նրան ձերբակալել տալ նախ քան թուղթերի տեղ հասնիլը:

Պ. Պարսամեանի խնդրի մասին կաշխատիմ, բայց հազիւ թէ յաջողուի, այսուհետեւ Գերմանիա մտնելը՝ նամանաւանդ ընտանիքների համար՝ վերջերում չափազանց խստացրած են: Շատ անելի դիւրին է Ֆրանսիայի վրայէն անցնիլ գրաւուած տեղերը չ. ս. Վիսպատէն եւ այնտեղ ապրիլ: Նրանցմէ Պ. Պարսամեանը ցանկանայ այդպէս անելը. Վիսպատէն գեղեցիկ քաղաք է եւ ունի լաւ դպրոցներ եւ կեանքը Բերլինէն էժան է:

Ներփակ ուղարկում եմ պատրիարքարանին ուղղածս 11 Նոյ[եմբեր] [19]22 թուակիր N° 1938 գրութեան պատճենը:

Հաճեցեք ընդունիլ ջերմ բարեւներիս հետ միասին խորին յարգանացս հաւաստիքը:

Ջեյմս Գրինֆիլդ

RÉPUBLIQUE D'ARMÉNIE
MISSION DIPLOMATIQUE
EN ALLEMAGNE
BERLIN

Բերլին, 3 Մարտ 1923

Հ[այաստանի] Հ[անրապետության]
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Վսեմաշուք Պ. Ֆ. Թահթաճեան
Կ. Պոլիս

N° 2074

Մեծարգոյ պաշտօնակից,
Պատիւ ունեցայ ստանալու Ձեր 21 Փետրվար թուակիր գրութիւնը ներփակ
N° 285708 չէքով Crédit Lyonnais-ի վրայ մէկ հազար ֆրանսական ֆրանքի:
Այդ գումարը կը գործադրուի Սուքիասեանի գործից առաջացած ծախքերի
դիմաց եւ հաշիւը յետոյ կուղարկեմ Ձեզ յանձնելու Banque Com. Ottomane-ի
վարչութեան:

Հաճեցէք ընդունիլ, յարգելի պաշտօնակից, խորին յարգանացս հաւաստիքը:
Զ[եյմս] Գրինֆիլդ

REPUBLIQUE ARMÉNIENNE
MISSION DIPLOMATIQUE

Constantinople, le 5 Մարտ 1923

N° **1878**

Հայաստանի Հանրապետության
Պատուիրակության
Փարիզ

1919 թվին, Խրիմի պարպումի ժամանակ Պօլիս խուժող շոգեններից մեկին վրայ կար Հայ Կառավարության պատկանող մեկ միլիոն փամփուշտ:

Պ. Սաղաթելեանի արած ցուցմունքի վրայ, ես այն ժամանակ դիմել էի ֆրանսական բ. Զօմիսարի, խնդրելով որ այդ ռազմամթերքը փոխադրուեր անյապաղ Կովկաս, Բաթումի վրայով. իմ այդ խնդրանքը ընդունուած էր եւ Պ. P[aul] Lépiessier-ն այն ատեն ինձ յայտնել էր, բ. Զօմիսար Պ. Տըֆրանսի կողմից, որ այդ բեռը պիտի փոխադրուեր Բաթում առաջին «Բաքէի» շոգենաւով եւ կամ torpilleur-ով մը:

Սակայն դժբաղդաբար, վրայ էր հասել Ղարսի անկումն ու մեր débâcle-ը, որի պատճառաւ գործը կանգնել էր:

Այդ մասին Ձեզ տեղեկագրել էի այն ժամանակ:

Ռազմամթերքը մնաց ուրեմն ֆրանսական իշխանութեան ձեռին, որը զայն տեղաւորած կը լինէր իրանց զինւորական պահեստներից մեկին մէջ:

Չէք գիտեր թէ այդ բեռը ի՞նչ արժէք էր ներկայացնում (Պ. Սաղաթելեանից լսել եմ որ նուէր էր կամաւորական Ռուս բանակի կողմից): Չեմ գիտեր եւ այն թէ՛ այժմ տեղիք կայ հարցին անդրադառնալու, ուստի եւ բաւականանում եմ յիշեցնելով Ձեզ այդ գործը, որպէս զի գործէք ըստ Ձեր հայեցողութեան:

RÉPUBLIQUE D'ARMÉNIE
MISSION DIPLOMATIQUE
EN ALLEMAGNE
BERLIN

Բերլին, 19 Մարտ 1923

Մեծարգոյ Տիար Ֆ. Թահթաճեան
Հ[այաստանի] Հ[անրապետութեան]
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Կ. Պոլիս

N° 33

Մեծարգոյ պաշտօնակից,
Պատիւ ունեցայ ստանալու Ձեր 9 Մարտ թուակիրը: Արդէն լրագիրներից
գիտեք, որ թուղթերը վերջապէս տեղ հասնելուց յետոյ, յաջողուեց նորէն
ծերբակալել տալ Սուքիասեանին:

Այժմ կարելոր է նրա յանձնման գործը. կասկած չը կայ, որ Գերման
կառավարութիւնը նրան կը յանձնի թուրք իշխանութեան: Նա երեւի
կուղարկուի Գերման պաշտօնեայի հսկողութեան տակ գերման նաւով Պոլիս,
որովհետեւ ցամաքով նա պիտի անցնէր տարբեր երկիրներով, որ երկար
ձեւականութիւնների պէտք պիտի լինէլ: Արդ այդ փոխադրութիւնը կապուած
է խոշոր ծախքերի հետ. այդ մասին տեղիս թուրք հիւպատոսարանը գրել
է Պոլիս եւ պահանջել է դրամ. մնում է Բանգի վարչութեան այդ խնդրի
շուտափոյթ լուծման նպաստել:

Շտապում եմ Քիսմինգինի մասին Ձեր ուզած տեղեկութիւնը տալ. այդ Kurort-ը
համարում է Գերմանիայի ամենասուղերէն մէկը. առ հասարակ վերջերում
կեանքը Գերմանիայում շատ թանգացել է: Այժմ Աւստրիան շատ անելի էժան
է եւ եթէ այնտեղ կան Ձեր բժշկութեան համար յարմար ջրերը խորհուրդ կը
տայի Աւստրիա գնալ: Յամենայն դէպս միշտ պատրաստ եմ Ձեզ օգտակար
լինելու եւ եթէ ցանկանաք Ձեզ անելի մանրամասը տեղեկութիւններ տալու:

Հաճեցէք ընդունիլ ջերմ բարեկեցութիւն հետ միասին խորին յարգանացս
հաւաստիքը:

Ձ[եյմս] Գրինֆիլդ

(Ներեցէք, շատ շտապ գրեցի):

24 Մարտ 1923

Տօքթ. Գրինֆիլտի այս 19 Մարտ թիւ նամակի առաջին մասը (Սուքիասեանի վերաբերեալ) 24 Մարտ թիւ նամակով մը հաղորդեցի Պ. Քընաճեանի, որ անդամ էր Օսմանեան Առեւտրական բանկի վարչութեան ժողովին, խնդրելով նրանից, որ իմ նամակը կարդայ syndic ներքեւ:

ՖԹ

RÉPUBLIQUE D'ARMÉNIE
MISSION DIPLOMATIQUE
EN ALLEMAGNE
BERLIN

Բերլին, 9 Ապրիլ 1923

Մեծարգոյ
Տիար Թահթաճեան
Հ[այաստանի] Հ[անրապետութեան]
Դիւ[անագիտական] Ներկայացուցչին
Կ. Պոլիս

N° 87

Շնորհակալութեամբ ստացայ Ձեր 27 Մարտ թուակիր գրութիւնը եւ յոյս ունիմ Բանգի վարչութիւնը շուտով յարաբերութեան մէջ մտնի թուրք կառավարութեան հետ տրամադրելի դարձնելու Սուքիասեանին Պոլիս փոխադրելու համար անհրաժեշտ դրամը: Հարկաւոր է այդ դրամը հոգալ եւ հարկաւոր է շարունակ հետամուտ լինել, որ Սուքիասեանին շուտափոյթ փոխադրութիւնը պահանջուի: Այստեղից այլեւս ոչինչ անել չենք կարող: Ներփակ ուղարկում եմ իմ 1000 ֆրանքի հաշիւը:

Ծախքերի մեծագոյն մասը փաստաբանին տրւած վարձատրութիւնն է - 300 000 մարք: Մնացած ծախքերը եղել են հեռագրի եւ Auto-ի համար եւ մասամբ նուէրների ոստիկաններին, որ հաշւի մէջ յիշելը անյարմար էր:

Տեարք Նազարեան, Տէր Ներսեսեան եւ Խաչատուրեան ինձ այդ գործում օգնում էին:

Մնում է ինձ մօտ 339 ֆր. եւ 60 սանթ., որ խնդրեմ հաճիք գրել ո՞ր բանգին եւ ո՞ւմ հաշւին յանձնեմ այստեղ. ուղարկելը դժուար է:

Հաճեցէք ընդունիլ ջերմ բարեւներիս հետ միասին, խորին յարգանացս հաւաստիքը:

Ջ[եյմս] Գրինֆիլդ

RÉPUBLIQUE D'ARMÉNIE
Mission Diplomatique
En Allemagne
BERLIN

Բերլին, 1 Մայիս 1923

Մեծարգոյ
Պարոն Թահթաճեան
Դիւանագիտական Ներկայացուցիչ
Հայաստանի Հանրապետութեան
Կ. Պոլիս

N° 141

Մեծարգոյ Հայրենակից,
Պ. Սուքիասեանի խնդրի համար Պ. Նազարեանը այսօր գնաց Շվեյցարական
դեսպանատուն, որ պաշտպանում է այստեղ թուրքական շահերը, իմանալով
գործի դրութիւնը:

Նրա ասացին, ալ իրենք պահանջում են Սուքիասեանի յանձնումը եւ ըստ
երեւոյթին Գերման կառավարութեան կողմէն դժուարութիւն չը պիտի լինի.
միայն հարկաւոր է հոգալ ճանապարհածախսի համար, որ 5-600 ոսկի պիտի
հաշւել: Ասացին նաեւ, որ այդ գումարը թուրք կառավարութեան կողմից չը
պիտի սպասել եւ գործում շահագրգռուած հայերը իրենք պիտի վճարեն, եւ
եթէ շուտով չը վճարեն, կարող է պատահիլ, որ Գերման կառավարութիւնը
նորէն արծակի Սուքիասեանին. նա լաւ փաստաբան ունի որ իրեն համար
շարունակ մեծ կորովով աշխատում է:

Պարտականութիւն համարեցի այդ հաղորդել Ձեզ եւ շատ շնորհապարտ
պիտի լինէի եթէ հաճէիք իմացնել Բանգի վարչութեան եւ դրդէիք որ շուտով
հոգան ճանապարհածախսի համար դրամը:

Ձերմ բարեկներով եւ խորին յարգանք
Ջ[եյմս] Գրինֆիլդ

BANQUE COMMERCIALE
OTTOMANE
POUR TÉLÉGRAMMES
MERCANTBANK

Constantinople, le 10 Մայիս 1923

Տիար Ֆ. Թահթաճեան
Աստ

Տիար Սարգիս Գընաճեան մեզ հաղորդած է Ապրիլի մէջ Ձեր իրեն ուղղած նամակը, որով իրեն կիմացնէք Տոքթ. Զրէֆէլտի հաշիւը, իրեն դրկուած 1000 Ֆրանքի վերաբերմամբ, ուրկէ կը մնար իր մօտ 339,60 ֆր[ան]քի տրամադրելի գումար մը:

Նոյնպէս Տ. Գընաճեան մեզ հաղորդեց Ձեր այսօրուան նամակը, ուր ի մէջ այլոց կը տեղեկացնէիք Տոքթ. Զրէֆէլտի այն կարծիքը թէ «կարող է պատահիլ որ Սուլթասեան Նորից ազատ արձակուի եթէ ճանապարհածախսի համար պահանջուած դրամի առաքումը ուշանայ»:

Անմիջապէս ըսենք թէ մինչեւ այս վայրկեանս ալ պաշտօնապէս եւ ոչ անպաշտօն կերպով դրամ պահանջուած չէ մեզմէ ճամբու ծախքի համար: Այսու հանդերձ ժամանակին, Պոլսոյ Շուէտական դեսպանատան մէջ Գերմանական կառավարութեան ներկայացուցիչին քով թողած ենք, այս նպատակին համար, 1000 օսմ[անեան] ոսկի եւ որ, այն ատեն Պեռլին տեղեկագրուած է:

Ասկէց զատ մեր Պեռլինի թղթակցին Darmstädter und Nationalbank-ին մօտ մեր ունեցած 2 միլիոն մարքի գումարը եւս տրամադրելի ըրած ենք այս գործին: Այսօր Ձեր վերջին նամակին վրայ, մեր Նոյն թղթակցին հեռագիրով դրկեցինք յիսուն անգլ[իական] ոսկի եւս. եւ հրահանգ տուինք որպէս զի բոլոր այս գումարները ձեռնհաս իշխանութեան տրամադրութեան տակ դնէ՝ Սուլթասեանի Պօլիս փոխադրութեան ծախուց համար:

Այժմ կուգանք խնդրել որ այս տեղեկութիւնները հաճիք անմիջապէս հաղորդել Տոքթ. Զրէֆէլտի որպէս զի իր կողմանէ եւս հարկ եղած ձեռնարկը ընէ Սուլթասեանի Պօլիս փոխադրութիւնը ապահովելու համար:

Հաճեցէք ընդունիլ, Տէր, մեր ամենախորին մեծարանաց հաւատիքը:

Օսմ[անեան] Առետրական դրամատուն հաշուեյարդարութեան մէջ
H S Kenadjian Ա. Կեսլեան

БИВША КЖЩА
„САРКИС КУЮМДЖИЯН,,
Основана в 1878 година.

АНОНИМНО ДРУЖЕСТВО
„САРКИС КУЮМДЖИЯН,,
Капитал: 200,000 лири английски
СЕДАЛИЩЕ МАНЧЕСТЕР
Телефон № 22.

Boulevard Dondoneoff
Սօֆիա 16 Մայիս 1923

Վսեմապատիւ
Տիար Ֆ. Թահթաճեան
Կ. Պոլիս

Շնորհակալութեամբ ստացայ Ձեր Մայիս 12 թուակիր պատ. գրութիւնն:
Կերելայ թէ մեր նախորդ նամակով որոշապէս չենք կրցած բացատրել մեր
խնդրանքը:

1920 Հոկտեմբեր 18-ին ստացայ Ձեզմէ հայկական անցագիրը, որու փոխարէն
Ձեզյանձնեցի 1920 Ապրիլ 29 թուակիր Պարսկական անցագիրը. ահա ճիշդ այդ
պարսկական անցագիրն է որուն անհրաժեշտ պէտք ունիմ, ապացուցանելու
համար անգլիական կառավարութեան որ յիշեալ թուականին պարսկական
հպատակ էի:

Վստահ որ հաճիք այն անցագիրը դրկել կը խնդրեմ որ ընդունիք կանխաւ իմ
շնորհակալիքս եւ խորին յարգանացս հաւաստիքը:

Վաղարշակ Գույումճեան

RÉPUBLIQUE D'ARMÉNIE
Mission Diplomatique
En Allemagne
Berlin

Բերլին, 2 Յունիս 1923

Մեծարգոյ
Պարոն Ֆ. Թահթաճեան
Հ[այաստանի] Հ[անրապետութեան]
Դիւ[անագիտական] Ներկայացուցիչ
Կ. Պոլիս

N° 205

Մեծարգոյ պաշտօնակից,
Ձեր 11 Մայիս թուակիր գրութիւնը ներփակ Banque Commerciale Ottomane-ի
10 թուակրի հետ միասին շնորհակալութեամբ ստացայ եւ շատ ուրախ եմ
որ Սուլթիասեանի փոխադրութեան համար արդէն բաւականաչափ դրամ
ուղարկւած է:

Գործը արագացնելու եւ ապահովելու համար եւ Սուլթիասեանի վարձած
ազդեցիկ փաստաբանի ձեռնարկած խանգարիչ քայլերը չէզոքացնելու համար
խնդրեցի մէկ քանի ազդեցիկ անձանց աջակցութիւնը որոշ վարձատուութեամբ,
որի համար գործ կածեմ ինձ մօտ մնացած մօտ 300 ֆրանքը: Նրանց
միջամտութիւնը արդէն որոշ արդիւնք տուել է. արտ[աքին] Գործ[ոց]
Նախարարութիւնը գործը շտապեցնում է եւ միւս Նախարարութիւնների
ընթացքն էլ փոխւած է. արդէն պաշտօնական մարդ է ուղարկուել Համբուրգ
փոխադրութեանց համար բանակցելու: Յոյս ունիմ շուտով կարողանամ Ձեզ
նպաստաւոր լուր տալ:

Հաճեցէք ընդունիլ, Մեծարգոյ պաշտօնակից, ջերմ բարեւներիս հետ միասին
խորին յարգանացս հաւաստիքը:

Ջ[եյմս] Գրինֆիլդ

ARMENISCHE VERTRAUENSSTELLE
FERNRUF UHLAND 1062

N° 297

BERLIN W 15, DEN 27 Յուլիս 1923
KURFÜRSTENDAMM 175

Մեծարգոյ
Տիար Թահթաճեան
Կ. Պոլիս

Յարգելի պաշտօնակից,
Ինչպէս անցեալներում պատիւ ունէի յայտնելու Սուքիասեանը վերցրել է Տփղիս լաւագոյն փաստաբաններից մէկին, որ ամեն միջոցների դիմում է նրան յանձնման առաջն առնելու. մէկ անգամ առարկում է, որ Սուքիասեանը հայ լինելով անկարելի է նրան թուրքերին յանձնել, մէկ անգամ որ նա ֆրանսահպատակ է եւ թուրքերը իրաւունք չունին նրան պահանջելու եւ այսպէս շարունակ: Թէեւ այդ առարկութիւնների անհիմն լինիլը յաջողւում է մեզ ամեն անգամ ցուցնել բայց եւ այնպէս ամեն առարկութեան շուրջ բանակցութիւններ են տեղի ունենում որ գործը ձգձգում են: Արդէն գրել էի Ձեզ որ մէկ քանի ազդեցիկ անձերի յանձնարարել եմ գործը արագացնել եւ յաջողուել է արտ[աքին] Գործ[ոց] Նախարարութիւնը համոզել, որ բոլոր առարկութիւնները անհիմն են եւ պետք է յանձնել Սուքիասեանին եւ նա այդ մտքով մեր դրդմամբ շարունակ դիմում է ներքին գործոց Նախարարութեան:

Գործի արագացնելուն շատ պիտի նպաստեր եթէ թուրք կառավարութիւնը շարունակ եւ անդադար պնդեր եւ յանձնումը պահանջեր: Խնդրում եմ բարի լինեք այդ իմաստով թելադրութիւն անել Բանկի Վարչութեան, որ պետք եղած քայլերն անի թուրք կառավարութեան մօտ: Այստեղ մենք եւ մեր մարդիկ շարունակ հետեւում ենք գործի ընթացքին, եւ դիմումներ (համարեա ամեն օր) չեն խնայում յանձնումը արագացնելու:

Ձերմ բարեկներով եւ խորին յարգանօք

Ջ[եյմս] Գրինֆիլդ

ARMENISCHE VERTRAUENSSTELLE
FERNRUF UHLAND 1062

N° 333

BERLIN W 15, DEN 21 Օգոստոս 1923
KURFÜRSTENDAMM 175

Մեծարգոյ
Պարոն Ֆ. Թահթաճեան
Կ. Պոլիս

Մեծարգոյ Հայրենակից,
Վերջապէս յաջողուեց Սուքիասեանին այստեղից ճամբել եւ յոյս ունիմ շուտով հասնի Պոլիս: Ինչպէս արդէն Ձեզ քանիցս գրելու պատիւն ունեցել եմ նրա յանձնումը մեծ դժուարութիւնների էր հանդիպում: Նա վարձել էր այստեղի լաւագոյն փաստաբաններից մէկին, որ ամեն կերպ աշխատում էր նրա արձակումը յաջողացնել եւ յանձնումը ձգձգել: Միայն ազդեցիկ միջամտութեանց շնորհիւ հնարաւոր եղաւ այդ խաղերի առաջն առնել:

9 Ապրիլ թուակրովս արդէն ուղարկել եմ Ձեզ ինձ յանձնւած 1000 ֆրան[սական] ֆրանքի հաշիւը. ծախքերը դուրս գալուց յետոյ ինձ մօտ մնում էր 339 ֆր. 60 սանթ[իմ]: Նորից առանձին ծախքեր եղան

560.00 ֆրան[սական] ֆրանք
Ես պարտք էի 339.60
Մնում է պահանջս 220.40 ֆրանք

Խնդրում եմ հաճիք յայտնել Բանգի Վարչութեան Սուքիասեանի տեղափոխութեան լուրը եւ կարգադրել շուտով ուղարկել ինձ իմ մնացած պահանջը 220 ֆրանք 40 սանթ[իմ] որպէս որպէս զի կարողանամ այդ հաշիւը փակել:

Յուսալով Ձեր առողջութիւնը այժմ անելի լաւ է խնդրում եմ ընդունեք, Մեծարգոյ Հայրենակից, ջերմ բարեւներիս հետ միասին խորին յարգանացս հաւաստիքը:

Ջ[եյմս] Գրինֆիլդ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աբիկեան Յովակիմ ▶ 069
 Աբուլեան ▶ 036
 Աբրահամեան Յ. Յ. ▶ 177
 Աթաբեկեան ▶ 129, 180, 199, 200, 210
 Աթաբէկեան ▶ 096, 173, 183, 184, 185
 Աթապէկեան ▶ 044, 114, 129
 Ալեքսանեան Թովմաս (Տօքթ.) ▶ 158
 Ալեքսանեան Վ. (Տօքթ.) ▶ 150
 Ալթունեան (Տօքթ.) ▶ 162
 Ալիսագեան Աշոտ ▶ 112, 129
 Ալոյեան Միհրան ▶ 251
 Ակրեանց Սարգիս ▶ 177
 Ահարոնեան Աւետիս ▶ 009, 012, 013, 096, 098, 123, 135, 171, 221, 222, 224, 229, 236, 238, 254, 267, 279, 286
 Ամատունի ▶ 242
 Ամատունի Իշխան ▶ 309
 Այիջեան-Լուսինեան ▶ 040
 Այվատեան Մ. ▶ 034
 Անդրանիկ զօրավար ▶ 279, 286
 Անուփեան Գրիգոր ▶ 208, 254, 289, 293
 Անտոն Պէյ ▶ 307
 Աշճեան Արթաքի ▶ 049, 056
 Առնոլդ Դէյվիս Զ. (մայոր) ▶ 025, 026, 072, 073, 131, 166
 Ասատուրեան ▶ 178
 Ասատուրեան Լ. ▶ 177
 Ասլանեան Մ. ▶ 290
 Ասուատուրով ▶ 288
 Ասպետեանց Մկրտիչ ▶ 216
 Աստարջեան Ստեփան ▶ 025
 Արաբեան Պօղոս ▶ 038
 Արամ-Կայծակ ▶ 195
 Արապեան Մարտիրոս ▶ 120
 Արարատեան Ս. ▶ 030, 031, 231, 252, 253, 262, 268
 Արաքսի Դ. Վարուժան ▶ 068
 Արզուեան Արշակ ▶ 056, 062, 064
 Արդուրեան Յովսէփ (Իշխան) ▶ 164, 185
 Արսէնեան ▶ 173
 Արսլանեան Եպիսկոպոս ▶ 301
 Աւետեան ▶ 254
 Աւետեան Գրիգոր ▶ 254
 Աւետիսեան Մանուկ ▶ 251
 Աւետիսեան Տիգրան ▶ 243

- Աւետիքեան Ա. Ս. ▶ 066, 078, 086
 Աւետիքեան Եղբարք ▶ 062, 064, 066, 076, 095, 104, 112
 Ատալեան (Տօքթ.) ▶ 102
 Բաբաջանոֆ (գնդապետ) ▶ 231
 Բանիկեան Լեւոն ▶ 069
 Բարունակեան Օննիկ ▶ 177
 Բարսամեան Յ. ▶ 160, 161
 Բարսեղեան (Տօքթ.) ▶ 268
 Բեղեան Հաբեթ ▶ 039
 Բէգզատեան Տիգրան ▶ 099, 196, 211, 243
 Բղոյեան Թաւրէզ ▶ 047
 Բրիստոլ (Աղմիրայ) ▶ 176
 Գաբրիէլեան Ա. ▶ 177
 Գազազեան Կորիւն ▶ 243
 Գազանճեան Սերժ ▶ 049
 Գալթաքճեան դեղավաճառատուն ▶ 102
 Գալուստեան Մանուկ ▶ 251
 Գալուստեան Սարգիս ▶ 251
 Գալուստով Արկադի ▶ 264
 Գալփաքճեան Վ. ▶ 068
 Գալփաքչեան ▶ 072
 Գալփաքչեան Անտոն ▶ 131
 Գալֆաեան ▶ 162
 Գանտոյեան Աբրահամ ▶ 251
 Գարաեան Նշան [] ▶ 041
 Գարրոնի (մարքիզ) ▶ 187
 Գէորգեան Հեղինէ ▶ 251
 Գէորգեան Մնացական ▶ 254
 Գընաճեան Սարգիս ▶ 319
 Գիւլխանդանեան Աբրահամ ▶ 211, 212
 Գոչունեան Մանուկ ▶ 121
 Գումուշճեան ▶ 088
 Գույումճեան Վաղարշակ ▶ 320
 Գուշակեան Թորգոմ ▶ 109
 Գրդճելեանց Յ. ▶ 138
 Գրիգորով Հ. (Գնդապետ) ▶ 146
 Գրիգորոֆ Սարգիս (Դերգնդապետ) ▶ 160
 Գրինֆիլդ Զեյմս ▶ 173, 296, 302, 303, 305, 312, 313, 315, 317, 318, 321, 322, 323
 Գրճելեանց Յ. ▶ 223
 Դաւթեան (Բժիշկ) ▶ 012
 Դաւիդ Խան Աւան-Իւզբաշեան ▶ 055
 Դաւիթեան ▶ 254
 Դաւիթեան Գէորգ ▶ 251
 Դէմիրեան (Տէմիրեան) Ռուբէն ▶ 284
 Դէոյեան Տիգրան ▶ 253
 Դըֆրանս ▶ 090



- Դիանա-Աղաբէկ Աբգար ▶ 222
 Դիսիգեան եղբայրներ ▶ 182, 203, 204
 Դուլի (Մոնս.) ▶ 035
 Դորդեն (կապիտան) ▶ 095
 Դրօ ▶ 141, 242
 Եագիճեան Ե. ▶ 177
 Եղիշէ քահանայ Գևունի ▶ 108, 115
 Եուզբաշեան Տալիթ ▶ 194
 Եսայեան (Տիկ.) ▶ 168
 Երիցփոխանեան Գ. ▶ 093
 Զալեան Ս. (Տօթթ.) ▶ 101
 Զալիանեան ▶ 172
 Զատիկեան Արամ ▶ 251
 Զաքէեան Զաքէ ▶ 116
 Զերտելեան Արշակ Մ. ▶ 117
 Զօհրապ ▶ 103
 Էլոյեանց Գրիգոր ▶ 251
 Էմիրզէ ▶ 104
 Էյնաթեան Գալուստ ▶ 068, 069, 097, 114
 Էնֆիաջեանց Արտաշէս Յ. ▶ 264, 265
 Էնֆիաջեանց Մարի ▶ 264
 Էպիփղաթեան Մատթէոս ▶ 127, 146, 168, 171, 208, 220, 232, 233, 239, 252, 262, 269, 293
 Թագուրեան Միհաս ▶ 251
 Թադէոսեան Մաքրուհի ▶ 029, 093
 Թաթարեան Ս. ▶ 177
 Թախթաճեան Ֆերտիմանտ ▶ 019, 030, 035, 093, 216, 232, 254
 Թահթաճեան Փիլիպպոս ▶ 120
 Թահթաճեան Ֆերտիմանտ ▶ 015, 034, 041, 044, 048, 049, 054, 056, 062, 063, 065, 066, 068, 069, 088, 097, 098, 104, 106, 107, 108, 112, 113, 114, 117, 119, 120, 122, 124, 126, 128, 129, 131, 132, 137, 139, 143, 145, 146, 148, 150, 151, 154, 155, 157, 158, 159, 160, 162, 168, 171, 178, 182, 189, 195, 199, 207, 208, 210, 212, 215, 217, 218, 221, 222, 224, 227, 228, 229, 230, 233, 234, 239, 241, 242, 244, 247, 248, 252, 253, 254, 257, 260, 262, 264, 267, 268, 270, 281, 291, 295, 296, 298, 299, 302, 305, 311, 312, 313, 315, 317, 318, 319, 320, 321, 322, 323
 Թամամշեան Աղ. Միքայէլ ▶ 185
 Թանտրճեան Կոպեռնիկ ▶ 290
 Թելլալեան ▶ 096
 Թերճանեան Ա. ▶ 121
 Թիւթիւնեան ▶ 301
 Թոխմախեան Եգեկիէլ ▶ 069
 Թոմաճեան Արշակ ▶ 056

- Թորգոմեան (Բժիշկ) ▶ 103
 Թորգոմեան (դոկտոր) ▶ 040
 Թորոսեան Մուշեղ ▶ 251
 Թումանեան Արփիկ ▶ 061
 Թումանեան Իշ. Մելիք ▶ 100
 Թումանեան Իշ. Միք. ▶ 100
 Թոփալեան Լեւոն ▶ 191
 Թոքաթլեան (պանդոկ) ▶ 157, 241, 260, 267, 307
 Թոքաթլեան ▶ 055
 Թոմաճեան Արշակ ▶ 049
 Թոսպոյըճեան Գրիգոր Ա. ▶ 160
 Ժամկոչեան ▶ 099, 191, 192, 193, 213, 214
 Իզմիթլեան Պեդրակ ▶ 138
 Իզմիթլեան Պետրակ ▶ 222
 Ինճիճեան ▶ 296
 Ինճիճեան Արամ ▶ 113
 Իսկենտերեան Ե. (Օր.) ▶ 177
 Իանով Նատալի ▶ 235
 Իզբաշեան Բոգդան ▶ 187
 Իզբաշեան Դաւիդ խան աւան ▶ 055
 Իզբաշեան Դաւիթ դը Սինեաք ▶ 187, 188
 Իզբաշեան Նիկա ▶ 187
 Իթիճեան Լ. ▶ 177
 Իփլիճեան Յարութիւն ճիպրայիլ ▶ 054
 Լալայեան Աշխէն ▶ 048
 Լուկոմսկի (Գեներալ) ▶ 032
 Խախութեան ▶ 218
 Խաչատուր ▶ 251
 Խաչատուրեան ▶ 296, 317
 Խաչատուրեան Հռիփսիմէ ▶ 251
 Խաչատրեան Ա. ▶ 243
 Խաչատրեան Տիկին Բոսֆ. Ա. ▶ 243
 Խաչերեան Բերթիգ ▶ 177
 Խաչվանքեան Ա. ▶ 021
 Խատիսեան Ա. ▶ 025, 028, 064, 066, 075, 078, 107, 110, 114, 131, 171, 183, 184, 260
 Խատիսեան Ալեքսանդր ▶ 059, 126, 244, 249, 258
 Խերանեան ▶ 112
 Խերանեան Մովսէս ▶ 129
 Խինդիրեան Մարիամ ▶ 251
 Խնկունի ▶ 173
 Խորասանճեան Վահան ▶ 299, 300
 Խորիկեան Արմենակ Ա. Է. ▶ 044, 068, 069, 114, 129
 Խուդադեան Մուշեղ ▶ 253
 Խուդանեան Մուշեղ ▶ 295
 Խուրշիտեան Աբգար Բլօ ▶ 108, 139



Խուրշիտեան Երանուհի (Աբգար) ▶ 139
 Խուրշուտեան Աբգար Բլօ ▶ 043, 057
 Խուրշուտեան Երանուհի (Աբգար) ▶ 057, 115
 Ծատուրեան Աթանաս ▶ 067
 Կանայեան Դրօ ▶ 141
 Կարապետեան Արմենակ ▶ 251
 Կարապետեան Արշակ ▶ 251
 Կարապետեան Տ. Յովհան Ծ. Վարդ. ▶ 056
 Կարապետեան-Յակոբեան Խաչօ ▶ 251
 Կիտուր Արսէն ▶ 018
 Կիրակոսեան Արեւշատ ▶ 038
 Կիւլխանտանեան Յ. ▶ 168
 Կոտիկեան Միհրան ▶ 112, 129
 Կորեկեան (Բժիշկ) ▶ 128
 Կումբս (գնդապետ) ▶ 166
 Կօրրինի Ճիաքօմօ ▶ 185
 Յ. Յրաչ ▶ 168
 Յալճեան Ժ. ▶ 177
 Յայկազունեան ▶ 262
 Յայրապետեան ▶ 168
 Յայրապետեան Լեւոն ▶ 251
 Յանէսեան Ա. ▶ 287
 Յանըմեան Արտաւազդ ▶ 101, 196, 299
 Յարիկեան Գառնո ▶ 061
 Յենդերսոն Նելիլ ▶ 283
 Յոխիկեան Վահագ ▶ 047
 Յոխոյեան Ղուկաս ▶ 061
 Զամոյեան Գրիգոր ▶ 223
 Ղազարեան Աննա ▶ 239
 Ղազարեան Աւետիս ▶ 047
 Ղազարեան Մայք ▶ 239
 Ղազարոսեան Թորգոմ ▶ 129
 Ղորղանեան Ստեփան ▶ 252
 Ճէքսըն Ռ. ▶ 257, 261
 Մաթիկեան Զատիկ ▶ 190, 192, 213
 Մամիկոնեան Ն. ▶ 093
 Մայիլեան Եղբարք ▶ 194
 Մանուէլեան Փ. Ս. ▶ 239
 Մաչանեան (սպայ) ▶ 254
 Մասիս (Բժիշկ) ▶ 103
 Մավեան (Հիպատոս) ▶ 224, 232,
 Մատիկեան Զատիկ ▶ 182, 203
 Մարանեան Յարութիւն ▶ 120, 121
 Մարտիկեան Վրթանէս ▶ 030, 031, 065, 083
 Մարտիրոսեան Յ. ▶ 021
 Մաքկալլում ▶ 166

Մաքկալլում Ֆ. Վ. ▶ 203
 Մելգոնեան Գրիգոր ▶ 109
 Մելգոնեան Կարապետ ▶ 109
 Մելիքեան Գասպար ▶ 251
 Մելիքեան Գէորգ ▶ 232
 Մելիքեան Սողոմոն ▶ 047
 Մելքոնեան Կարապետ ▶ 251
 Մելքոնեան Յ. ▶ 146
 Մերեացեան Ռուբէն ▶ 251
 Մէլիք-Օհանջանեան Լ. ▶ 138
 Միլս ▶ 280
 Միլն Զ. (զօրավար) ▶ 009, 016
 Մինասեան Գէորգ ▶ 251
 Մինասեան Յակոբ ▶ 251
 Միսաքեան Շաւարշ ▶ 083
 Միքայէլեան Ա. (Օր.) ▶ 177
 Մխիթարեանց Սոկրատ ▶ 310
 Մկրեան Գ. Ա. ▶ 177
 Մկրտիչեան Յովակիմ ▶ 251
 Մկրտիչեան Սարիբէկ ▶ 251
 Մկրտչեան Սիրունեանց Մարգար ▶ 216
 Մորթածեան Իսկուհի (Տիկ.) ▶ 289
 Մուշեան Գ. (Տօքթ.) ▶ 126
 Մուշեղ ▶ 262
 Մուշեղեան Մովսէս ▶ 251
 Մուսայէլեան (սպայ) ▶ 254
 Յակոբեան ▶ 254
 Յակոբեան Գ. ▶ 154
 Յակոբեան Յ. Յ. (իրաւագէտ) ▶ 075
 Յակոբեան Յայրապետ ▶ 251
 Յակոբեան Յակոբ (իրաւագէտ) ▶ 110, 114
 Յակոբեանց Յ. ▶ 223
 Յավրումեան Կարապետ Յ. ▶ 068
 Յարութիւնեան Արուսեակ ▶ 251
 Յարութիւնեան Ենոք ▶ 047
 Յարութիւնեան Ս. Գ. ▶ 177
 Յարութիւնեան Սամսոն ▶ 303
 Յովհան Ծ. Վարդապետ ▶ 056
 Յովհաննէսեան ▶ 099, 190, 191, 214
 Յովհաննէսեան Մ. ▶ 161, 215
 Յովհաննէսեան Մելքոնեանց Յամբարձում ▶ 230
 Յովնանեան Ե. ▶ 150
 Յովնանեան Երուանդ ▶ 068, 069, 082, 097
 Նազարեան ▶ 317, 318
 Նազարեան Յ. ▶ 033
 Նազլըեան (Յովհաննէս) Գերապայծառ ▶ 221

Նաթալի Շահան ▶ 056
 Նալբանտեան Նազարէթ ▶ 029
 Նահապետեան Ս. (Օր.) ▶ 177
 Նանասեան (սպայ) ▶ 229
 Նուբարեան Մելիք ▶ 098
 Նուպար Պօղոս Փաշա ▶ 287
 Շալճեան Ա. (Տիկ.) ▶ 048
 Շախաթունի (գնդապետ) ▶ 169, 170
 Շատենոֆ Կ. ▶ 169
 Շատինոֆ ▶ 171
 Շատինոֆ ▶ 218
 Շէհիրլեան Սարգիս (Տօթթօր) ▶ 154
 Շիրինեան Գէորգ Կ. ▶ 116
 Շիրվանեան ▶ 055
 Շմաունեան Հայրիկ ▶ 251
 Ուլուբաբեան Խ. ▶ 019
 Ուշագլեան Կարօ ▶ 107
 Չամբերթէն Տիգրան (Հիւպատոս) ▶ 311
 Չայեան Տիգրան (ղեսպան) ▶ 012, 098, 099, 195, 196, 200, 210
 Չայլդ ▶ 298
 Չերազ Գասպար ▶ 110
 Չէմպէրճի ▶ 288
 Չմշկեան Յ. (հիւպատոս) ▶ 009, 036, 037, 038, 039, 046, 047, 063, 078
 Չօպանեան ▶ 279
 Պալեան Մարտիրոս ▶ 288, 289
 Պալենց ▶ 111
 Պալթաճի ▶ 195
 Պահատուրեան ▶ 254, 262
 Պապսեան ▶ 262
 Պապանանօֆ (գնդապետ) ▶ 230, 232
 Պապայեան Խոսրով ▶ 243
 Պապաջանով ▶ 235
 Պասմաճեան ▶ 113
 Պարսամեան (իրաւագէտ) ▶ 307
 Պելլէ (Զօրավար) ▶ 221, 256, 273
 Պետիկեան Աբգար ▶ 061
 Պետրովիչ Ֆերդինանտ ▶ 012, 051, 309
 Պէճիտեան տպարան ▶ 254
 Պուադրբար (կապիտան) ▶ 023
 Պուանկարէ ▶ 221
 Պոյաճեան Պ. (Օր.) ▶ 101
 Պոյաճեան Տ. Տրդատ քինյ. ▶ 284
 Ռանդալ ▶ 025
 Ռոսսէ ▶ 246
 Ռոքոսեան Յովսէփ Արքեպ. ▶ 035
 Սաաթճեան Համբարձում ▶ 234

- Սահակեան (սպայ) ▶ 229
 Սահակեան Յովսէպ ▶ 271
 Սաղաթէլեան ▶ 021, 172, 211, 314
 Սաղաթէլեան Յովհաննէս ▶ 153
 Սարգիս Ծ. Վարդապետ ▶ 132
 Սարգիսեան Ասօ ▶ 251
 Սարգիսեան Արմենակ ▶ 016, 023
 Սարգիսեան Դ. Մելիք ▶ 046
 Սարգիսեան Ռուբէն ▶ 251
 Սարգիսեան Սասունի Եփրեմ ▶ 267
 Սարինեան Յ. Վ. ▶ 035
 Սեպուհ (Զօրավար) ▶ 102, 153
 Սերոբով Գուլիաթ ▶ 251
 Սէրէնկիլեան Դ. (Տիկին) ▶ 101
 Սէֆերեան (սպայ) ▶ 229
 Սըվաճեան Գառնիկ ▶ 281
 Սիլին (կոմիսար) ▶ 141
 Սիմոնեան Պետրոս ▶ 251
 Սինաբեան ▶ 136, 142
 Սիրանուշ Պետրոսեան ▶ 251
 Սիրունեան ▶ 021
 Սմաթեան Արշակ ▶ 084
 Սուքիասեան ▶ 296
 Սուքիասեան Եղիազար ▶ 251
 Սվաճեան Ապաճեան Յարութիւն ▶ 291
 Սվաճեան Արթաքի (այլ անուամբ) Պօրունեան ▶ 281
 Սվաճեան Գառնիկ Եղբարք ▶ 281
 Ստավիցկի (Գեներալ) ▶ 032
 Ստեփանեան Մկրտիչ ▶ 251
 Վարդանեան Մարկո ▶ 251
 Վիքրի ▶ 213, 257, 260, 261
 Վուչիկո ▶ 190, 191
 Վրանկել ▶ 172
 Վրանկէլ ▶ 211
 Վրացեան Սիմոն ▶ 098, 152, 153, 196
 Տաղաւարեան (Բժիշկ) ▶ 103
 Տեփոյեան Պետրոս ▶ 242, 247
 Տէմիրեան Ս. Յ. ▶ 297
 Տէր Եղիայեան Զաւէն Արքս. ▶ 132, 137, 139, 155, 159, 164, 234, 270, 279
 Տէր Մարտիրոսեան Պետրոս ▶ 251
 Տէր Յակոբեան Ա. ▶ 030, 031
 Տէր Ներսէսեան ▶ 172, 317
 Տէր Պօղոսեան Յարութիւն (բժիշկ) ▶ 126, 207
 Տէր-Աւետիսով Արտաշէս ▶ 264
 Տէր-Գէորգեան Միքայէլ ▶ 229
 Տէր-Ղազարեան Աւետիս ▶ 061



- Տէր-Ղազարեան Տոնո ▶ 039
 Տէր-Ներսէսեան ▶ 169
 Տէր-Օսեպեանց Էլէն ▶ 264
 Տէր-Օսեպեանց Լեւոն ▶ 264
 Տէր-Օսեպեանց Ղուկաս ▶ 264
 Տընքէն (գօրավար) ▶ 016
 Տըֆրանս (Քօմիսար) ▶ 314
 Տիգրանեան ▶ 040
 Տիլսիզեան եղբարք ▶ 099, 190, 191, 192, 193, 213
 Ռէֆէթ փաշա ▶ 276, 279
 Փաշալեան ▶ 279
 Փափագեան ▶ 162
 Փափագեան Թագուր Տ. ▶ 290, 292
 Փափագեան Յ. ▶ 168
 Փափագեան Մարտիրոս ▶ 042
 Փափագեան Վ. ▶ 217
 Քայսէրլեան ▶ 307
 Քեռչօղլեան Արամ Բէյ ▶ 086
 Քէշիշեան Արմէն ▶ 177
 Քէշիշեան Պօղոս ▶ 040
 Քընաճեան ▶ 306
 Քիշմիշեան (գօրավար) ▶ 211
 Քլառա (Գրիգոր Զօհրապի այրին) ▶ 103
 Քլիջեան ▶ 199
 Քոչարեան ▶ 157
 Քրէֆէլտ (Տոքթ.) ▶ 319
 Օհանեան Սահակ ▶ 251
 Օհանջանեան ▶ 242
 Օվանէսեան ▶ 203
 Օվանէսեան Ալիգասն ▶ 177
 Ֆնտզլեան Ա. ▶ 177

Aharonian A. ▶ 133, 266, 285
 Aïdjian-Lusignian (Mr.) ▶ 040
 Aloyan Mihran ▶ 250
 Altounyan A. ▶ 126
 Antranik (Général) ▶ 285
 Apoulian ▶ 036
 Arabian Boghos ▶ 038
 Arnold D. G. (Major) ▶ 024, 026, 071, 130, 165
 Astardjian Stépan ▶ 024
 Atabékian ▶ 179, 197, 198, 209
 Avédikian ▶ 085
 Avédikian frères ▶ 062, 066, 076, 077, 094
 Avedissian Manoug ▶ 250
 Bédikian Apkar ▶ 060
 Bedrossian Siranoush ▶ 250
 Béghian Apet ▶ 039
 Bghdoyan Tavrez (Mme) ▶ 046
 Boyadjian Dertad ▶ 284
 Bristol (Amiral) ▶ 175
 Chnavonian Hairig ▶ 250
 Coombs (colonel) ▶ 165
 Defrance (Haut Commissaire) ▶ 089
 Démirian Roupen ▶ 284
 Der Martirossian Bedros ▶ 250
 Der-Ghazarian Avédis ▶ 060
 Der-Ghazarian Dono ▶ 039
 Dikranian ▶ 040
 Dilsizian frères ▶ 201, 202, 213
 Dordain (Capitaine) ▶ 094
 Dzadourian Athanas ▶ 067
 Eloyatz Krikor ▶ 250
 Enfiadjiantz (Madame) ▶ 263
 Enfiadjiantz A. ▶ 263
 Enfiadjiantz Artaches H. ▶ 263
 Galoustoff Arcadi ▶ 263
 Garabedian Armenag ▶ 250
 Garabedian Arshag ▶ 250
 Garabedian-Hagopian Hatcho ▶ 250
 Garroni (Marquis) ▶ 186
 Gazarian Avédis ▶ 046
 Gerard (ambassador) ▶ 052
 Ghiragossian Arevchad ▶ 038
 Gorrini ▶ 186
 Gumuschkian (armateur) ▶ 089
 Hagopian H. H. ▶ 074
 Hagopian Hairabed ▶ 250

▼

Hagopian Simon ▶ 250
Harighian Garno ▶ 060
Haroutiounian Arousiag ▶ 250
Haroutunian Yénovk ▶ 046
Hatchadour ▶ 250
Hatchadourian Hrpsimé ▶ 250
Hayrabedian Levon ▶ 250
Henderson Nevile ▶ 282
Hokhigian Vagharschag ▶ 046
Hokhoyan Ghougas ▶ 060
Hovnanian Yervant ▶ 081
Ivanoff Natalie ▶ 235
Kalousdian Manoug ▶ 250
Kalousdian Sarkis ▶ 250
Kalpakdjian ▶ 071
Kalpakdjian Andon ▶ 130
Kalpakdjian Antoine ▶ 165
Kalpakdjian Vagharchag ▶ 053
Kanayan Dro ▶ 140
Kandoyan Apraham ▶ 250
Kéchichian Boghos ▶ 040
Keutchoghlian Aram Bey ▶ 085
Kevorkian Heghiné ▶ 250
Khatissian A. ▶ 130, 257, 259
Khintirian Mariam ▶ 250
Khoudanian Mouchehgh ▶ 294
Kitour Arsène ▶ 017
Klidjian ▶ 209
Kotcharian ▶ 156
Kourbanoff ▶ 289
Lépissier Paul ▶ 314
MacCallum F.W. ▶ 189, 201
Matigian Zadig ▶ 181, 182, 201
Maynard Harrison A. ▶ 029
Melikian Kasbar ▶ 250
Mélikian Soghomon ▶ 046
Melkonian Garabed ▶ 250
Meryatzian Roupen ▶ 250
Mgrditchian Hovagim ▶ 250
Mgrditchian Saribeg ▶ 250
Minassian Hagop ▶ 250
Minassian Kevork ▶ 250
Mizsheghian Moses ▶ 250
Modiano Joseph ▶ 125
Ohanian Sahag ▶ 250
Ovannessian ▶ 201

Papadjanoff ▶ 235
 Papazian Mardiros ▶ 042
 Papazian Takvor ▶ 292
 Pellé (Général) ▶ 255, 272
 Poidebard (Capitaine) ▶ 022
 Ravndal (Haut-Commissaire) ▶ 024
 Rivaud ▶ 288, 289
 Rosset ▶ 246
 Sarkissian ▶ 022
 Sarkissian Aso ▶ 250
 Sarkissian H. Mélik ▶ 060
 Sarkissian Roupen ▶ 250
 Sarkissian Sassouni Ephrem ▶ 266
 Sdepanian Mgrditch ▶ 250
 Seropoff Goliath ▶ 250
 Siline ▶ 140
 Simonian Bedros ▶ 250
 Sinabian ▶ 140
 Soukiassian Yeghiazar ▶ 250
 Tahtadjian F. ▶ 147, 156, 182, 189, 197, 209, 226, 228, 240, 241, 255, 259,
 263, 266, 294
 Takvorian Minas ▶ 250
 Tavitian Kevork ▶ 250
 Tchaïan ▶ 198, 209
 Tchimischkian A. ▶ 036
 Tchobanian ▶ 285
 Ter-Avétissouf ▶ 263
 Ter-Ossépiantz Goukas ▶ 263
 Ter-Ossépiantz Hélène ▶ 263
 Ter-Ossépiantz Léon ▶ 263
 Torkomian (Dr.) ▶ 040
 Torossian Moushegh ▶ 250
 Toumanian Arpik ▶ 060
 Vartanian Margo ▶ 250
 Vilidjian N. (Dr.) ▶ 058
 Youzbachian Boghdan ▶ 186
 Youzbachian David de Signakh prince ▶ 186
 Youzbachian Nina ▶ 186
 Zadigian Aram ▶ 250

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻԻԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ՖԵՐՊԻՆԱՆՂ ԹԱՐԹԱՃԵԱՆԻ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՎԱՏԻԿԱՆԻ ԱՐԽԻՒՈՒՄ

2023 © All rights reserved by the author.

No part of this book may be reproduced or transmitted in any form or by any means, electronic or mechanical, including photocopying, recording, or by any information storage and retrieval system, without the author's written permission. Book design, cover, and illustrations are copyrighted by "NOSHNI" LLC.



Սոյն ժողովածուում բոլորովին չհրապարակուած փաստաթղթերը հնարաւորութիւն են ընծեռում Նորովի վերագնահատելու եւ վերանայելու Առաջին Հանրապետութեան տարեգրութիւնը՝ պետականակերտման բարդ ու դժուարին ընթացքը, հակասական իրողութիւնները, ներքին եւ արտաքին անուղղակի ազդեցութիւնները:

Վատիկանի գաղտնի արխիւից ծեռքբերուած հայալեզու եւ օտարալեզու փաստաթղթերը տուեալ ժամանակաշրջանի պատմական, քաղաքական, տնտեսական, ռազմական, դիւանագիտական, մարդասիրական, բարեգործական, սփիւռքագիտական աղբիւրագիտական անսպառ նիւթերի շտեմարան կարող են դառնալ հայ և օտարագգի հետազօտողների համար եւ Նոր լոյս սփռել Առաջին Հանրապետութեան մութ եւ վիճելի անցքերի վրայ:

Աշխատութիւնը արդիական է եւ բացառիկ բարոյահոգեբանական տեսանկիւնից, այն իւրօրինակ ուղեցոյց է՝ աշխարհասփիւռ հայութեան համախմբման, հայրենի պետութեանը զօրավիգ լինելու, պետականաշինութեանը մասնակից դառնալու, յանուն գաղափարի բռնկեցնելու:

Ժողովածուի հրատարակութիւնը կարելոյ է հայ ժողովրդի համար այս դժուար օրերը յաղթահարելու, սխալները չկրկնելու առումով, յետհայեացք գցելով անցեալին՝ կկարողանանք բաց աչքերով նայել ապագային եւ ուժ գտնել դիմակայելու սպառնալիքներին և մարտահրաւերներին: